Պայքար խոշտանգումների դեմ

Այս ձեռնարկն ամփոփում է դատավորների եւ դատախազների պարտականությունները եւ պատասխանատվությունը խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի կանխարգելման ու նման դեպքերի հետաքննության գործում, երաշխավորելով, որ նման գործողություններ կատարողները կկանգնեն արդարադատության առաջ, իսկ նրանց զոհերը հատուցում կստանան: Ձեռնարկը նաեւ պարունակում է ընթացակարգային մակարդակում խոշտանգումների դեմ պայքարի վերաբերյալ սկզբունքային խորհուրդներ, որոնք հիմնված են լավագույն փորձի վրա:
Թեպետ ի սկզբանե ձեռնարկն ուղղված է դատավորներին եւ դատախազներին, այն կարող է որպես աղբյուր օգտագործվել նաեւ դատապաշտպանների կողմից, որոնք վճռորոշ դեր են խաղում դատավարության ընթացքում եւ ազատությունից զրկված անձանց համար խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի դեմ կարեւորագույն պատվարներից մեկն են: Լավ տեղեկացված եւ զգայուն իրավաբանը խթանիչ ուժ է խոշտանգումների վերացման գործում, եւ այս ձեռնարկը կոչված է աջակցելու մասնագիտական գործառույթների իրականացմանը:


Ձեռնարկը պետք է դիտարկել որպես Էսեքսի համալսարանի Մարդու իրավունքների կենտրոնի *«Խոշտանգումների մասին զեկուցելու ձեռնարկի»* լրացում: Մարդու իրավունքների կենտրոնի կողմից հրատարակված այս շարքի երկրորդ ձեռնարկն է՝ *«Սպանությունների մասին զեկուցումը՝ որպես մարդու իրավունքների խախտում»*:



Լոնդոնում , Արտաքին գործերի նախարարությունում տեղի ունեցած սեմինարի մասնակիցները 2002 թ նոյեմբերի 1–ին քննարկում են ձեռնարկի առաջին տարբերակը:

Ձախից աջ՝

Եուգենիո Արգայո (Բրազիլիայի դատախազ), Վայլըրը Թեյլոր (Human Rights Watch), պրոֆեսոր Մալքոլմ Էվընս, Պարամ Կումարասվամի (ՄԱԿ–ի հատուկ զեկուցող դատավորների եւ դատախազների անկախության հարցով), Դեյիդ Գիլր (Արտաքին գործերի նախարարության մարդու իրավունքների հարցով խորհրդատու), Պրոֆեսոր սըր Նայջել Ռոդլի (Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային եւ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով ՄԱԿ-ի նախկին հատուկ զեկուցող , ՄԱԿ–ի Մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ)



Վիկտոր Վեքսլերի եւ դատավոր Մոլդոկի հանդիպումը Քոնոր Ֆոլիի

Պայքար խոշտանգումների դեմ

Ձեռնարկ դատախազների եւ դատավորների համար

Քոնոր Ֆոլի

Մարդու իրավունքների կենտրոն, Էսեքսի համալսարան

Պայքար խոշտանգումների դեմ

Ձեռնարկ
դատախազների եւ դատավորների համար

Պայքար խոշտանգումների դեմ

Ձեռնարկ դատախազների եւ դատավորների համար

Քոնոր Ֆոլի

Foreign & Commonwealth OfficeLondon

University of Essex

HUMAN RIGHTS CENTRE

apt

Առաջին տարբերակը հրատարակվել է Մեծ Բրիտանիայում 2003թ.-ին:

© Մարդու իրավունքների կենտրոն, Էսեքսի համալսարան,
Wivenhoe Park, Colchester, CO4 3SQ
հեռախոս՝ 00 44 1206 872 558, ֆաքս: 00 44 1206 873 428
էլ. հասցե՝ http://www2.essex.ac.uk/human_rights_centre
http://www2.sx.ac.uk/human_rights_centre

Բոլոր իրավունքները պահպանված են: Այս աշխատությունը կարող է վերահրատարակվել ուսուցողական, կրթական եւ հղումներ կատարելու նպատակներով, երաշխավորությամբ, որ այն կօգտագործվի ոչ առեւտրային նպատակներով եւ Էսեքսի համալսարանի Մարդու իրավունքների կենտրոնի տեղեկացված լինելու դեպքում:

ISBN: 978-2-940337-38-5

Այս շարքի այլ գրքեր՝

Խոշտանգումների մասին զեկուցելու ձեռնարկ,
ISBN 1-874635-28-5
http://www.essex.ac.uk/torturehandbook/

Սպանությունների մասին զեկուցումը՝ որպես մարդու իրավունքների խախտում,
ISBN 1-874635-37-4,
http://www.essex.ac.uk/reportingkillingshandbook/

Ձեւավորումը՝ Լուիս Անգ
louiseang@mailworks.org

Խմբագիր՝ Ալ Դոյըլ
mankf4@hotmail.com

Թարգմանությունը՝ Լիլիթ Պետրոսյան
lilit@csi.am

Հայկական տարբերակի էջադրում՝ Մարիա Մխիթարյան
maria.mkhitaryan@gmail.com

Էսեքսի համալսարանի Մարդու իրավունքների կենտրոնը պատասխանատվություն չի կրում թարգմանության համար:



Խոշտանգումների կանխարգելման ընկերակցությունը իր երախտիքն է հայտնում Նիդերլանդների Թագավորության Արտաքին գործերի նախարարությանը՝ այս հրատարակման թարգմանությանը աջակցելու համար:

The Association for the Prevention of Torture would like to thank the Ministry of Foreign Affairs of the Kingdom of the Netherlands for their kind support in translating this publication.

Նախաբան

Չնայած խոշտանգումների բացարձակ արգելքը սահմանված է միջազգային եւ ազգային գրեթե բոլոր իրավական համակարգերում, դրանց կիրառումը դեռեւս շարունակվում է: Թեպետ խոշտանգումները հրապարակայնորեն դատապարտվում են, շատ երկրներում դրանք շարունակվում են գաղտնաբար կիրառվել: Ընդ որում, խոշտանգումները սովորաբար կիրառում են պաշտոնատար հենց այն անձինք, որոնք կոչված են պաշտպանելու եւ պահպանելու օրենքը:

Դատավորները եւ դատախազները վճռորոշ դեր ունեն խոշտանգումների դեմ պայքարի գործում: Առաջին հերթին, նրանք հիմնական դերակատարություն ունեն իրավունքի գերակայության պահպանման հարցում: Ոչինչ այդքան քայքայիչ չէ իրավունքի գերակայության համար, որքան պաշտոնական ապօրինությունները, հատկապես պետական պաշտոնյաների կատարած հանցագործությունները: Երկրորդ, երբ պետությունը ներգրավվում է խոշտանգումների կանխարգելման գործում ու ձախողում այդ գործընթացը, այդպիսով նա խախտում է միջազգային պարտավորությունները: Այն անձինք, որոնք պատասխանատու են արդարադատության իրականացման համար, պետք է տեղյակ լինեն իրենց այդ դերի մասին, եւ երկիրը նման դրության մեջ չդնեն: Երրորդ, թեպետ իշխանության գործադիր եւ օրենսդիր ճյուղերը կարող են գայթակղություն ունենալ անտեսելու իրավունքի գերակայությունն ու մարդու իրավունքները՝ ի պատասխան սովորական հանցավորության եւ, 2001 թ-ի սեպտեմբերի 11-ի սարսափելի իրադարձություններից հետո, անդրազգային ահաբեկչության դեմ ածող անվտանգության առումով հասարակական ճնշումներին, դատական ճյուղը կոչված է հասարակությունը պաշտպանելու ծուղակն ընկնելուց եւ թույլ չտալու, որ կարճաժամկետ նպատակահարմարության պատճառով ոտնահարվեն երկարաժամկետ ինստիտուցիոնալ կայունությունը եւ հիմնարար արժեքները:

Խոշտանգումների դեմ պայքարը դատավորներից եւ դատախազներից պահանջում է լավ տիրապետել ինչպես իրավունքի սրին, այնպես էլ վահանին: Որպես վահան նրանք պետք է օգտագործեն ազգային եւ միջազգային երաշխիքները, որոնք ուղղված են իրավապահ մարմինների ձեռքում գտնվողներին խոշտանգումներից կամ արգելված դաժան վերաբերմունքի այլ ձեւերից պաշտպանելուն: Որպես սուր պետք է օգտագործվի պատասխանատվությունը, որի առաջ կկանգնեն նրանք, ովքեր, խախտելով օրենքը, կիրառում են խոշտանգումներ կամ այլ դաժան վերաբերմունք:

Այս ձեռնարկն ամփոփում է դատավորների եւ դատախազների պարտականությունները եւ պատասխանատվությունը խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի կանխարգելման ու նման դեպքերի հետաքննության գործում, երաշխավորելով, որ նման գործողություններ կատարողները կկանգնեն արդարադատության առաջ, իսկ նրանց զոհերը հատուցում կստանան: Ձեռնարկը նաեւ պարունակում է ընթացակարգային մակարդակում խոշտանգումների դեմ պայքարի վերաբերյալ պրակտիկ խորհուրդներ, որոնք հիմնված են լավագույն փորձի վրա:

Թեպետ ի սկզբանե ձեռնարկն ուղղված է դատավորներին եւ դատախազներին, այն կարող է որպես աղբյուր օգտագործվել նաեւ դատապաշտպանների կողմից, որոնք վճռորոշ դեր են խաղում դատավարության ընթացքում եւ ազատությունից զրկված անձանց համար խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի դեմ կարեւորագույն պատվարներից մեկն են: Լավ տեղեկացված եւ զգայուն իրավաբանը խթանիչ ուժ է խոշտանգումների վերացման գործում, եւ այս ձեռնարկը կոչված է աջակցելու մասնագիտական գործառույթների իրականացմանը:

Ձեռնարկը սկսեք է դիտարկել որպես Էսեքսի համալսարանի Մարդու իրավունքների կենտրոնի Քամիլ Գիֆարդի «Խոշտանգումների մասին զեկուցելու ձեռնարկի» լրացում: Ինչպես եւ հիշատակված ձեռնարկը, այս հրատարակումը եւս արդյունք է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ եւ ֆինանսավորմամբ իրագործվող նախագծի, որ իրականացվում է Մեծ Բրիտանիայի՝ 1998 թ-ին մեկնարկած խոշտանգումների դեմ ծրագրի շրջանակներում: Էսեքսի համալսարանի, Մարդու իրավունքների կենտրոնի եւ նախագծի իրականացման գործում իրենց ներդրումն ունեցած անձանց եւ իմ՝ այս նախագծի ղեկավարի անունից երախտագիտություն եմ հայտնում ցուցաբերած աջակցության համար:

Պրոֆեսոր սըր Նայջել Ռոդլի,

Մարդու իրավունքների կենտրոն, Էսեքսի համալսարան, մարտ, 2003թ.

Հիմնական Մասնակիցներ

Ծրագրի ղեկավար՝ Պրոֆեսոր սըր Նայջել Ռոդլի

Հեղինակ եւ հետազոտող՝ Քոնոր Ֆոլի

Վարչական եւ քարտուղարական աջակցություն՝ Էն Սլոուգրով եւ Հեյդի Վիգամ

Երախտիքի խոսք

Մենք ցանկանում ենք երախտագիտություն հայտնել հետեւյալ անձանց, որոնք ներ են դրել իրենց ժամանակը եւ ջանքերը, ընթերցել նախնական տարբերակները եւ առաջարկել իրենց մեկնաբանությունները, կամ այլ կերպ ցուցաբերել են իրենց աջակցությունը. Մեգնա Աբրահամ, Քլիֆ Բալդվին, Դեւիդ Բերգման, Ժան Նիկոլյա Բյոզ, Ջուդիթ Բուենո դե Մեսքուիտա, Յան Բյորն, Ռալֆ Քրոուշո, Պարամ Կումարասվամի, Եուգենիո Արագայո, Թինա դե Քրուզ, Ժան Դոերֆել, Գրահամ Դոսեթ, Հելեն Դաֆֆի, Մալքոլմ Էվընս, Գլաուչիա Ֆալսարելլի, Կամիլ Ժիֆար, Ջեոֆ Գիլբերտ, Լիզա Գորմլի, Գաբրելա Գոնսալես, Մել Ջեյմս, Մայքլ Քելլեթ, Մարկ Քելլի, Սեմ Քինքեյդ, Ջեյմս Լոգան, Դեբրա Լոնգ, Ջերիմի Մաքբրայթ, Դենիել Մաքովըր, Գրեգ Մեյն, Ֆիոնա Մաքքեյն, Լուտց Օտտե, Գրեյն Օ'Հարա, Ջոաննա Սալզբըրի, Յան Սեյդըրման, Հելեն Շոու, Աննա-Լենա Սվենսըն Մաքքարթի, Ուայլդըր Թեյլըր, Մարկ Թոմսըն եւ Ջոն Վադհամ:

Մենք ցանկանում ենք երախտապարտություն հայտնել նաեւ հետեւյալ կազմակերպություններին. Միջազգային ներում (Amnesty International), Խոշտանգումների կանխարգելման ընկերակցություն (Association for the Prevention of Torture), Արդարադատության իրականացման հանձնաժողով (the Committee for the Administration of Justice), Արդարադատության համաշխարհային կենտրոն Բրազիլիայում (the Global Justice Centre Brazil), Նախաքննություն (Inquest), Իրավաբանների միջազգային ընկերակցություն (the International Bar Association), Իրավաբանների միջազգային հանձնաժողով (the International Commission of Jurists) Ինթերայթս (Interights), Իրավաբանական հասարակություն (the Law Society), Ազատություն (Liberty), Սաո Պաուլոյի գլխավոր դատախազություն (the Office of the Public Prosecutor São Paulo), Փոխհատուցում (Redress), ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ եւ ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակ:

Հետեւյալ անձինք մասնակցել են մեկօրյա սեմինարի, որ անց է կացվել Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի նախարարությունում՝ քննարկելու ձեռնարկի առաջին տարբերակը: Մենք երախտապարտ ենք նրանց ներդրման եւ Արտգործնախարարությանը՝ մեզ հյուրընկալելու համար:

Սեմինարի մասնակիցներ էին Ժան-Նիկոլյա Բյոզը, Պարամ Կումարասվամին, Եուգենիո Արագաոն, Հելեն Դաֆֆին, Մալքոլմ Էվընսը, Ջեոֆ Գիլբերտը, Լիզա Գորմլին, Մել Ջեյմսը, Մարկ Քելլին, Ջերիմի Մաքբրայթը, Ջոաննա Սալզբըրին, Յան Սեյդըրմանը, Աննա-Լենա Սվենսըն Մաքքարթին, Ուայլդըր Թեյլըրը եւ Մարկ Թոմսոնը: Սեմինարին որպես զեկոցող հանդես է եկել Գաբրելա Գոնսալեսը:

Նախագծին ֆինանսապես աջակցել է Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի նախարարությունը: Մենք հատկապես շնորհակալ ենք Արտաքին գործերի նախարարության մարդու իրավունքների քաղաքականության բաժնի աշխատակիցներ Դեւիդ Գիրին եւ Ալիսդար Ուոքերին՝ իրենց անձնական նվիրվածության եւ նախագծին աջակցելու համար:

Բովանդակություն

v Նախաբան

vii Երախտիքի խոսք

xiii Ձեռնարկում օգտագործվող հասկացությունների բառարան

1 Ներածություն

1 Ո՞ւմ է ուղղված այս ձեռնարկը

4 Ինչպես օգտագործել ձեռնարկը

5 1 Խոշտանգումների արգելքը միջազգային իրավունքում

8 Ընդհանուր արգելքը

12 Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի 1984թ. կոնվենցիան

13 Խնդրին առնչվող այլ չափանիշներ

14 Իրավաբանական սահմանումներ

16 **Վերահսկողության միջազգային մեխանիզմները եւ բողոքներ ներկայացնելու ընթացակարգերը**

16 ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը

16 ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ հանձնաժողովը

17 Տարածաշրջանային մեխանիզմներ

18 Վերահսկողության այլ մեխանիզմներ

18 Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային եւ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը

19 Միջազգային քրեական դատարաններ եւ տրիբունալներ

19 Կարմիր խաչի միջազգային կոմիտե (ICRC)

23 2. Իրենց ազատությունից զրկված անձանց խոշտանգումներից պաշտպանելու երաշխիքները

26 Իրենց իրավունքների մասին մարդկանց տեղյակ պահելը
27 Ազատազրկման պաշտոնապես ճանաչված վայրերի օգտագործումը եւ գրանցամատյանների պատշաճ վարումը
29 Արտաքին աշխարհի հետ կապից զրկված լինելու պայմաններում (ինկոմունիկադո) ազատազրկումից խուսափելը
30 Ազատազրկման մարդկային պայմանները
34 Հարցաքննություն անցկացնելու սահմանափակումները
35 Փաստաբանի մատչելիությունը եւ փաստաբանի գործառույթների հանդեպ հարգանքը
37 Բժշկին դիմելու հնարավորություն /Բժշկի մատչելիություն
38 Ջերբակալության օրինականությունը վիճարկելու իրավունքը
42 **Ազատազրկվածների հատուկ կատեգորիաների համար նախատեսված երաշխիքները**
42 Ազատազրկված կանայք
43 Ազատազրկված անչափահասներ
43 Հոգեկան խնդիրներ ունեցող անձինք

47 3. Դատավորների եւ դատախազների դերը ձերբակալվածներին եւ կասկածյալներին խոշտանգումներից պաշտպանելու գործում

50 Դատավորների դերը
51 Դատախազների դերը
51 Երաշխիքները նախնական կալանքի ընթացքում
54 Հարցաքննություններ
55 Անկախ վերահսկողությունը
58 Ազատազրկման պայմանները
60 Դատական մարմնի առաջ հայտնվելը
61 Իրավաբանական օգնություն
61 Ապացույցների թույլատրելիությունը
62 Վկաների հարցաքննությունը
64 Արտաքսման դեպքում պաշտպանելու պարտավորությունը

67 4 Խոշտանգումների փաստերի հետաքննության եւ նախաքննության իրականացում

72 Արձագանքը խոշտանգումների մասին հայտարարություններին
72 Հետաքննության անցկացման սկզբունքները
77 Բժշկական ապացույցները
78 Հարցաքննությունների անցկացումը
79 Խոշտանգումների ենթադրյալ զոհերի հարցաքննությունը
83 Սեռական բռնության ենթադրյալ զոհերի հարցաքննությունը
83 Երեխաների եւ անչափահասների հարցաքննությունը

84 Կասկածյալների հարցաքննությունը
84 Այլ վկաների բացահայտումը
85 Վկաների պաշտպանության խնդիրները

89 5. Խոշտանգումների կիրառման մեջ կասկածվողների քրեական հետապնդումը եւ խոշտանգումների զոհերի փոխհատուցման ապահովումը

91 Խոշտանգումը որպես քրեական հանցագործություն
93 Խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի հանցագործություններ կատարելու մեղավորությունը
94 Պատասխանատուների հայտնաբերումը եւ նրանց նկատմամբ հետապնդման իրականացումը
98 Քրեական հետապնդում իրականացնելու պարտավորությունը
99 Արդար դատաքննություններ
99 Անձեռնմխելիությունը, համաներումները եւ քրեական հետապնդման վաղեմության ժամկետները
102 Պատիժ
102 Տուժողների փոխհատուցումը

Հավելվածներ

109 Հավելված 1.
Միջազգային փաստաթղթերի ընտրանի

109 1. Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվություն նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա, հոդվածներ 1-16
114 2. Միջազգային դաշնագիր քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների մասին, 7-րդ եւ 10-րդ հոդվածներ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա 3-րդ հոդված, Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիա, 5-րդ հոդված, Մարդու եւ ժողովուրդների աֆրիկյան խարտիա, 5-րդ հոդված
116 3. 1949 թ-ի Ժնեւի չորս կոնվենցիաների ընդհանուր 3-րդ հոդված
117 4. Հռոմի միջազգային քրեական դատարանի կանոնադրություն, 7-րդ եւ 8-րդ հոդվածներ
123 5. Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի վերաբերյալ Մարդու իրավունքների հանձնաժողովի ընդհանուր 20-րդ մեկնաբանություն
127 6. Որեւէ ձեւով ձերբակալված կամ կալանավորված բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածու
136 7. Ուղեցույցներ դատախազների դերի վերաբերյալ (հատվածներ))
138 8. Դատական մարմինների անկախության հիմնական սկզբունքները (հատվածներ)
139 9. Փաստաբանների դերի վերաբերյալ հիմնարար սկզբունքներ (հատվածներ)
141 10. Խոշտանգումների զոհով հատուկ զեկուցողի հանձնարարականները (հատվածներ)

146 11. Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների կոսլիտ խախտումների զոհերի ռեստիտուցիայի, փոխհատուցման եւ վերականգնման իրավունք, Հատուկ զեկուցող, պրոֆեսոր Մ. Շարիֆ Բասսիունիի ամփոփիչ զեկույցը

152 12. Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային եւ արժանապատվության նվաստացնող վերաբերմունքի եւ պատժի արդյունավետ հետաքննության եւ փաստագրման սկզբունքները (Ստամբուլի արձանագրություն)

155 Հավելված 2.
ԽԿԿ-ի Չափանիշները. քաղվածքներ

169 Հավելված 3.
Լրացուցիչ տեղեկություններ եւ կազմակերպություններ

175 Հավելված 4.
Մարդու իրավունքների որոշ փաստաթղթերի վավերացման կարգավիճակի աղյուսակ

181 Թեմային առնչվող լրացուցիչ գրականություն

Ձեռնարկում օգտագործվող հասկացությունների բառարան

Խոշտանգումների վերաբերյալ հայտարարություն/մեղադրանք	Հայց (դեռեւս ոչ ապացուցված, ոչ էլ հերքված) տեղի ունեցած խոշտանգման դեպքի մասին
***Amicus curiae* brief**	Դատավարության մասնակից չհանդիսացող անձի կողմից դատական ատյաններին գործին առնչվող հատուկ տեղեկությունների տրամադրում
Խնդրատու, դիմումատու	Անհատական բողոքի ընթացակարգով դիմում/հայց ներկայացնող անձ
Հայտ	Նամակ կամ այլ տեսակի դիմում դատական մարմնին՝ անհատական բողոքի ընթացակարգով գործը քննելու խնդրանքով
Ձերբակալություն	Անձին արգելանքի տակ վերցնելը՝ հանցագործություն կատարելու կասկածանքով կամ որեւէ մարմնի որոշման համաձայն
Ապաստան	Ապաստան են փնտրում այն անհատները, որոնք, որպես կանոն, չեն ցանկանում վերադառնալ իրենց սեփական երկիր, որտեղ նրանց վտանգ է սպառնում: Ապաստան տրամադրվելու դեպքում անհատին թույլատրվում է մնալ այլ, ոչ իր սեփական, երկրում: Դա կարող է ժամանակավոր կամ մշտական բնույթ կրել:
Հաղորդում	Միջազգային մարմնին նամակ կամ տեղեկություն տրամադրելու այլ միջոց: Այս եզրն հաճախ օգտագործվում է ՄԱԿ-ի շրջանակներում եւ վերաբերում է անհատական բողոքների ընթացակարգի սահմաններում ներկայացված հայտերին: Հաղորդումը գրած անձը հաճախ կոչվում է հաղորդման հեղինակ:
Բողոքարկու, հայցվոր	Անհատական բողոք ներկայացնելու ընթացակարգով բողոք ներկայացնող անձ
Հաստատում	Հայտարարության իրավացիությունը հավաստող կամ դրան աջակցող ապացույց

Դատավճիռ	Իրավաբանորեն պարտադիր ուժ ունեցող որոշում, որում դատարանը հայտնում է գործի վերաբերյալ իր եզրակացությունը
Քրեական մեղադրանք	Պաշտոնական ծանուցագիր, որ իրավասու մարմնի կողմից տրվում է անհատին այն մասին, որ նա կատարել է քրեական հանցագործություն:
Հանցագործություններ մարդկության դեմ	Կոպիտ խախտումներ, ինչպիսիք են խոշտանգումները,որոնք կատարվելենքաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերական հարձակումների ժամանակ, անկախ նրանից, թե դրանք երբ են կատարվել՝ զինված հակամարտության ժամանակ, թե ոչ:
Հռչակագիր	Հատուկ պաշտոնական բանաձեւ, սովորաբար ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից, որ որպես այդպիսին չունի պարտավորեցնող ուժ, սակայն սահմանում է չափանիշներ, որոնք պետությունները պարտավոր են պահպանել:
Արտաքսում	Որեւէ երկրից վտարում, արտաքսում
Սահմանափակել	Ժամանակավորապես դադարեցնել կամ սահմանափակել
Ազատազրկում	Անձին անհատական ազատությունից զրկելը՝ բացի այն դեպքերից, երբ դա հանցագործություն կատարելու համար դատապարտման արդյունք է
Ազգային օրենսդրություն կամ իրավական համակարգ	Ազգային օրենսդրություն կամ իրավական համակարգ. Օրենսդրություն կամ իրավական համակարգ, որ բնորոշ է տվյալ երկրին
Հարկադիր կատարում (պարտավորությունների)	Պարտավորությունների կատարումն արդյունավետ դարձնելը, դրանց կատարումն ապահովելը
Ուժի մեջ մտնել (պայմանագրի)	Այն պահը, երբ պայմանագրով նախատեսված պարտավորությունները սկսում են գործել
Փաստերի հավաքում	Փաստերի բացահայտմանն ուղղված քննության իրականացում
Մարդու իրավունքների կոպիտ խախտումներ	Մարդու իրավունքների առանձնակի ծանր խախտումներ, ինչպիսիք են խոշտանգումները եւ արտադատարանական սպանությունները
Կատարում (պարտավորությունների)	Պարտավորությունների կատարման կամ հարգման ուղի, կամ դրանց հասնելու միջոցներ

Անպատժելիություն	Անօրինական կամ ոչ ցանկալի վարքագծի դեպքում պատժից խուսափելու հնարավորություն
Ինկոմունիկադո կալանավորում	Իշխանությունների կողմից անձին պահելն առանց արտաքին աշխարհի հետ շփվելու հնարավորության
Անհատական բողոք	Անհատի կամ անհատների վրա ազդեցություն ունեցած հատուկ փաստերի վերաբերյալ բողոք
Գործիք	Ընդհանուր եզր պարտադիր եւ ոչ պարտադիր բնույթ ունեցող միջազգային իրավական փաստաթղթերի վերաբերյալ
Միջկառավարական մարմին	Մարմին կամ կազմակերպություն, որ բաղկացած է մեկից ավելի երկրների կառավարությունների ներկայացուցիչներից
Դատական գործընթաց	Գործընթաց դատական մարմնում
Իրավասություն (պետության)	Տարածք կամ անձինք, որոնց նկատմամբ պետությունն իրականացնում է իր իշխանությունը
Իրավասություն (դատական մարմնի)	Հարցեր դատական կամ կվազի դատական մարմինների իրավասության շրջանակներում, որոնք այն իրավասու է քննել
Թույլտվություն	Թույլտվություն
Իրավաբանորեն պարտադիր	Եթե որեւէ բան իրավաբանորեն պարտադիր է որեւէ պետությունում, դա նշանակում է, որ պետությունը պարտավոր է գործել դրա համաձայն եւ չկատարելու դեպքում դա կարող է իրավական հետեւանքներ ունենալ
Դատավարություն	Գործը դատարան բերելու եւ վարելու գործընթաց
Բողոքի ներկայացում	Բողոքի գրանցում
Մանդատ	Որեւէ կառույցի լիազորություններ, փաստաթուղթ, որ պարզաբանում է, թե ինչ է լիազորված անել տվյալ կառույցը
Գործի հատկանիշ	Անհատական բողոքի քննարկման փուլ, որի ընթացքում դատական կամ կվազի դատական մարմինը քննում է գործի փաստերը եւ որոշում, թե արդյոք տեղի է ունեցել խախտում
Մոնիտորինգ	Որեւէ իրավիճակի կամ խնդրի մասին զեկուցելու նպատակով տեղեկությունների որոնում եւ ստացում
Ոչ կառավարական մասնակիցներ	Մասնավոր անձինք կամ խմբեր, որոնք գործում են իշխանություններից անկախ

Դիտարկումներ	Մեկնաբանություններ, գնահատականներ
Իրավախախտ	Անօրինական գործողություն կատարած անձ
Միջնորդություն, խնդրագիր	Գործողություն կատարելու պահանջ, խընդրանք, օրինակ ՝ ինչ որ հանգամանք քննելու պահանջ
Ժամանակավոր միջոցներ	Ժամանակավոր միջոցներ, որոնք կարող է պահանջել դատական կամ կվազի դատական մարմինը մինչեւ գործի քննության ավարտը՝ չհատուցվող վնասից խուսափելու համար
Կվազի դատական ընթացակարգ	Գործի քննության ընթացակարգ մի մարմնում, որ գործը քննում է դատարանի նման, սակայն կազմված չէ դատավորներից, եւ որոշումները իրենք իրենցով իրավաբանորեն պարտադիր ուժ չունեն
Վավերացում	Գործընթաց, որով պետությունը համաձայնում է կապել իրեն պայմանագրով
Հանձնարարական	Գործողությունների առաջարկվող կարգ. հանձնարարականները իրավաբանորեն պարտադիր ուժ չունեն
Փոխհատուցում	Պատճառված վնասի վերականգնմանն ուղղված միջոցներ, օրինակ՝ հատուցում
Վերապահում	Պայմանագրին միանալու պահին պետությունը կարող է գրանցել վերապահում. հայտարարություն՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունների ինչ-որ կերպ փոփոխման մասին
Բանաձեւ	Միջազգային մարմնի պաշտոնական որոշում, հաճախ ընդունվում է քվեարկության արդյունքում: Սովորաբար այն հանձնարարական է եւ, հետեւաբար, իրավաբանորեն պարտադիր ուժ չունի
Ընթացակարգի կանոններ	Գործի քննության ընթացակարգը սահմանող մանրամասն կանոններ, որ ընդունում է դատական կամ կվազի դատական մարմինը
Պատժամիջոց	Իր իրավական պարտավորությունները չպահպանելու համար պետության վրա դրվող պատիժ
Պետության պատասխանատվությունը	Պետության պատասխանատվությունը միջազգային իրավունքի շրջանակներում
Մասնակից պետություն (պայմանագրի)	Պայմանագրին միացած պետություն

Վերահսկող մարմին	Մարմին, որ վերահսկում է պետությունների կողմից պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարումը
Փոխանցում (հայտարարության)	Հայտարարության ուղարկում, օրինակ՝ ներգրավված պետությանը
Պայմանագիր	Միջազգային իրավունքի փաստաթուղթ, որ պարտադիր ուժ ունեցող պարտավորություններ է սահմանում պետությունների համար
Պայմանագրի դրույթ	Եզր, որ օգտագործվում է պայմանագրի առանձին հատվածը նշելու համար
Պայմանագրային մարմին	Պայմանագրով ստեղծված մարմին
Խախտում (պարտավորությունների)	Միջազգային իրավունքով սահմանված պարտավորության կատարման ձախողում պետության կողմից
Ռազմական հանցագործություններ	1949թ.-ի Ժնեւի կոնվենցիաների կոպիտ խախտումներ, որոնք կատարվել են զինված հակամարտությունների ընթացքում Կոնվենցիայով պաշտպանված անհատների կամ սեփականության դեմ, ինչպես նաեւ պատերազմի կանոնների այլ խախտումներ

Ներածություն

Ո՞ւմ է ուղղված այս ձեռնարկը

0.1 Այս ձեռնարկը ստեղծվել է որպես տեղեկատվական աղբյուր աշխարհի բոլոր երկրների դատավորների եւ դատախազների համար՝ խոշտանգումների դեպքերը կանխարգելելու ու հետաքննելու գործում աջակցելու նպատակով: Հիմնվելով միջազգային չափանիշների վրա՝ այն նաեւ պարունակում է լավագույն փորձից մի շարք օրինակներ եւ խորհուրդներ, որոնք կարող են կիրառվել յուրաքանչյուր իրավական համակարգում: Հաշվի առնելով տարբեր իրավական համակարգերը, ապացուցողական իրավունքի նորմերը եւ դատական ընթացակարգերը, որոնք գոյություն ունեն տարբեր երկրներում, անհնարին է մշակել իրավական մի այնպիսի տեղեկատու, որ կիրառելի լինի իրավական բոլոր համակարգերի համար: Այս ձեռնարկը մեկ այլ նպատակ ունի. գործնական ուղեցույց լինել դատավորների եւ դատախազների համար, որոնց որոշումներն հաճախ անմիջական ազդեցություն են ունենում խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի դեպքերում:

0.2 Միջազգային իրավունքը բացարձակ արգելք է սահմանում խոշտանգումների նկատմամբ, եւ դրանց կիրառումը չի կարող արդարացվել որեւէ հանգամանքներում: Միավորված ազգերի կազմակերպությունը դատապարտել է խոշտանգումը, հայտարարելով, որ այն հակասում է իր Կանոնադրությանը եւ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներին: Խոշտանգումը նաեւ արգելված է ողջ աշխարհի ազգային օրենսդրությունների համաձայն: Նույնիսկ այն դեպքերում, երբ ազգային օրենսդրության համաձայն խոշտանգումը քրեականացված չէ, գոյություն ունեն այլ օրենքներ, որոնց համաձայն, խոշտանգումներ կիրառողները պատասխանատվության են ենթարկվում: Չնայած այս ամենին, խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի կիրառումը դեռեւս տարածում ունի ողջ աշխարհում:

0.3 Խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի կանխարգելումը առաջին հերթին քաղաքական կամ մասնագիտական կամքի եւ դրա դեմ պայքարելու պատասխանատվության դրսեւորում է: Դատավորները եւ դատախազները, հաշվի առնելով իրավունքի գերակայության սկզբունքների պահպանման հարցում նրանց կարեւոր դերը, առանձնահատուկ պատասխանատվություն են կրում խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի կանխարգելման գործում՝ արագ եւ արդյունավետ քննություն իրականացնելու, այդ գործողություններն իրականացնողներին մեղադրելու եւ պատժելու, ինչպես նաեւ խոշտանգումների զոհ դարձածներին փոխհատուցում ապահովելու միջոցով: Ենթադրյալ խոշտանգումների կանխարգելումն ու քննությունը որոշակի խնդիրներ են առաջ բերում դատավորների եւ դատախազների, ինչպես նաեւ արդարադատության իրականացման առջեւ, քանի որ հանցագործությունը սովորաբար կատարվում է նույն այն պաշտոնյաների կողմից, որ ի պաշտոնե կոչված են պահպանելու եւ կիրառելու օրենքը: Այս հանգամանքը դժվարացնում է նման հանցագործությունների հետ կապված խնդիրների լուծումը: Սակայն դատավորները եւ դատախազները իրավական պարտավորություն ունեն

երաշխավորելու, որ արդարադատությունը եւ իրենց մասնագիտության ամբողջականությունը վարկաբեկված չեն խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի հանդեպ հանդուրժողականության պատճառով:

0.4 Այս ձեռնարկում առանձնահատուկ երաշխիքների մանրամասն քննարկմանը զուգահեռ նաեւ կարեւորվում է, որ այն պաշտոնյաները, որոնք կոչված են արդարադատություն իրականացնել եւ պահպանել օրենքը, հրապարակավ դատապարտեն խոշտանգումները՝ ինչ ձեւով եւ որտեղ էլ այն դրսեւորվի: Նրանք պետք է հստակեցնեն, որ այն անձինք, որոնք կիրառել են խոշտանգումներ եւ նրանք, ովքեր ազատազրկման վայրերում ղեկավար պաշտոն են ունեցել այնտեղ խոշտանգումներ կիրառելու պահին, պետք է անձնական պատասխանատվություն կրեն այդ չարաշահումների համար:

0.5 Խոշտանգումները եւ դաժան վերաբերմունքի այլ ձեւերը կարող են տեղի ունենալ ցանկացած վայրում: Նման վտանգն ավելի մեծ է, երբ անձը զրկված է իր ազատությունից, նախնական կալանք է կրում կամ հարցաքննվում է: Այս առումով ամենավտանգավորը ձերբակալության եւ կալանավորման առաջին պահերն են, երբ անձը դեռեւս փաստաբան ներգրավելու կամ դատարանի առաջ կանգնելու հնարավորություն չունի: Հատկապես խոցելի են այն անձինք, որոնք անազատության մեջ գտնվելիս զրկված են արտաքին աշխարհի հետ կապից:

0.6 Դատավորներն ու դատախազները նաեւ պարտավոր են երաշխավորել, որ իրենց պարտականությունները կատարելիս, անուղղակիորեն կամ այլ կերպ, չեն խթանում խոշտանգումների կիրառումը: Որոշ իրավական համակարգերում դատախազները կարող են անմիջականորեն ներգրավված լինել հարցաքննության անցկացմանը, որի ընթացքում կիրառվում են խոստովանություն եւ տեղեկություն ստանալու բռնի մեթոդներ: Լինում են նաեւ դեպքեր, երբ դատախազները գործը քննելիս հիմնվում են տեղեկությունների կամ խոստովանության վրա՝ առանց համոզվելու, որ դրանք ձեռք չեն բերվել բռնի ճանապարհով:

0.7 Երբեմն դատավորներին եւ դատախազներին չի հաջողվում պահպանել այն օրենքները եւ ընթացակարգերը, որոնք մշակված են ազատությունից զրկված անձանց պաշտպանելու եւ խոշտանգումները կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերը կանխարգելելու համար: Նրանց նաեւ կարող է չհաջողվել պահանջել, որ անձը հայտարարություն կամ խոստովանություն անի իրենց ներկայությամբ, ուսումնասիրել իրենց մոտ բերված ազատազրկված անձի մոտ ֆիզիկական կամ հոգեկան վնասվածքների հետքերը, վերադարձնել ազատազրկված անձին իրավասու մարմիններում գտնվող ազատազրկման վայր, որտեղ հնարավոր է, որ այդ անձի հանդեպ կարող է դաժան վերաբերմունք կիրառվել, չհաջողվի արձագանքել այնպիսի նշաններին, որոնք ցույց են տալիս, որ անձի հանդեպ դաժան վերաբերմունք է կիրառվել, անգամ եթե պաշտոնական բողոք ներկայացված չի, բավարար լրջությամբ չվերաբերվել խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի մասին բողոքին, չանցկացնել այդ բողոքի վերաբերյալ քննություն՝ նման գործողություններ կիրառած անձանց պատժելու նկատառումով, նաեւ չկատարել ազատազրկման վայրերում վերահսկողություն կատարելու իրենց լիազորությունը:

0.8 Դրան հակառակ, դատավորները եւ դատախազները կարող են օգտագործել խոշտանգումները կանխարգելելու եւ հետաքննելու իրենց լիազորությունները: Նրանք կարող են պահանջել, որպեսզի կասկածյալն իրենց մոտ բերվի որքան հնարավոր է արագ, եւ համոզվել, որ բերված անձի նկատմամբ պատշաճ վերաբերմունք է դրսեւորվել: Իրենց տրված լիազորությունների սահմաններում դատավորները եւ դատախազները կարող են ապացույցները մերժել ընդունել խոշտանգումների կիրառման մասին բողոքների եւ այդ

ապացույցների ընդունելիության տեսանկյունից՝ այդպիսով իրավապահ մարմինների ներկայացուցիչներին ետ պահելով խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի կիրառումից կամ ուրիշների կողմից դա անելու հանդեպ թույլատրելի մոտեցումից: Նրանք նաեւ պետք է զգոն լինեն բոլոր հնարավորությունների առումով, եթե իրենց դատարանները չեն համապատասխանում խոշտանգումների կանխարգելմանը եւ հետաքննության ամենաբարձր չափանիշներին:

0.9 Միջազգային օրենսդրությունը սահմանում է հիմնական նվազագույն չափանիշները, տեղական չափանիշների մշակման ընթացքում նույնպես կարող է կիրառելի լինել տարբեր երկրների լավագույն փորձը: Այս ձեռնարկում համաշխարհային փորձի համառոտ ընտրանին ներկայացնող օրինակների ուսումնասիրության նպատակն է ավելի պատկերավոր ցույց տալ, թե ինչպես կարող են դատավորները եւ դատախազները պայքարել խոշտանգումների դեմ իրենց ազգային արդարադատության համակարգերում:

Ինչպես օգտագործել ձեռնարկը

0.10 Ձեռնարկի առաջին գլուխը համառոտ ներկայացնում է խոշտանգումների արգելքը միջազգային օրենսդրության մեջ եւ այն պարտավորությունները, որոնք բխում են այդ արգելքից: Այս գլխում նաեւ ներկայացված են վերահսկողության միջազգային մեխանիզմները: Երկրորդ գլխում նկարագրված են այն երաշխիքները, որոնք ապահովում են իրենց ազատությունից զրկված անձանց պաշտպանությունը խոշտանգումներից կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերից: Սա ներառում է ինչպես պայմանագրային, այնպես էլ ոչ պայմանագրային չափանիշներ, տարածաշրջանային եւ համաշխարհային փաստաթղթեր: Նախադեպային իրավունքի եւ միջազգային վերահսկիչ մարմինների զեկույցների հետ մեկտեղ, այդ փաստաթղթերը կարեւոր իրավական աղբյուր են եւ կարող են օգտագործվել դատավորների եւ դատախազների կողմից՝ ազգային մակարդակում աշխատելու համար:

0.11 Երրորդ գլուխը նկարագրում է դատավորների եւ դատախազների դերը գործնականում այդ չափանիշների իրականացման հարցում: Այդ գլխում ներառված են իրենց ազատությունից զրկված անձանց համար նախատեսված երաշխիքներն ու ազատազրկման վայրերում վերահսկողություն իրականացնելու հանձնարարականները: Այս հատվածում քննարկվում է նաեւ դատավորների եւ դատախազների դերն այն դեպքերում, երբ ենթադրվում է, որ խոստովանությունը կամ ապացույցները ձեռք են բերվել խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի կիրառման միջոցով: Համառոտ քննարկվում է նաեւ խոշտանգումների հնարավոր վտանգի առաջ կանգնած անձին այլ երկրներում ապաստան տրամադրելու երկրի դրական պարտավորությունը՝ արտաքսելու եւ հանձնելու որոշում ընդունելու առումով:

0.12 Չորրորդ գլխում քննարկվում է, թե ինչպես պետք է խոշտանգումների հետաքննություն անցկացնելու համար լիազորված անձինք արձագանքեն խոշտանգման վերաբերյալ բողոքներին եւ ապացույցներ հավաքեն խոշտանգումների վերաբերյալ: Այստեղ քննարկվում են այն անցկացնելու հիմնական սկզբունքները, ու թե ով պետք է իրականացնի նման հետքաննությունը: Այս գլխում նաեւ ներկայացված է խոշտանգումների հետաքննության եւ դատաքննության ընթացքում տուժողներին, վկաներին եւ կասկածյալներին հարցաքննելու վերաբերյալ խորհրդատվություն:

0.13 Հինգերորդ գլուխը վերաբերում է խոշտանգումներ եւ դաժան վերաբերմունքի այլ ձեւեր կիրառողների քրեական հետապնդմանը: Այստեղ քննարկվում են խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի այլ հանցագործությունների սահմանումները եւ որակումները, թե ով պետք է մեղադրվի նման հանցագործությունների համար, եւ ինչպես կարող են այդ անձինք հայտնաբերվել եւ ենթարկվել քրեական պատասխանատվության:

0.14 Այս ձեռնարկի հավելվածներում ներկայացված են միջազգային որոշ փաստաթղթերի տեքստեր: Ձեռնարկին նաեւ կցված է մարդու իրավունքների հիմնական պայմանագրերի վավերացման կարգավիճակի աղյուսակը:

1 Խոշտանգումների արգելքը միջազգային իրավունքում

Բովանդակություն

8 Ընդհանուր արգելքը

12 Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի 1984թ. կոնվենցիան

13 Խնդրին առնչվող այլ չափանիշներ

14 Իրավաբանական սահմանումներ

16 **Վերահսկողության միջազգային մեխանիզմները եւ բողոքներ ներկայացնելու ընթացակարգերը**

16 ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը

16 ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ հանձնաժողովը

17 Տարածաշրջանային մեխանիզմներ

18 Վերահսկողության այլ մեխանիզմներ

18 Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային եւ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը

19 Միջազգային քրեական դատարաններ եւ տրիբունալներ

19 Կարմիր խաչի միջազգային կոմիտե (ICRC)

1 Խոշտանգումների արգելքը միջազգային իրավունքում

1.1 Այս գլխում համառոտ ներկայացված է խոշտանգումների արգելքը միջազգային իրավունքում եւ դրանից բխող պարտավորությունները: Այստեղ նաեւ նկարագրվում են վերահսկիչ որոշ մարմիններ, որոնք ստեղծվել են այդ պարտավորությունների կատարումը վերահսկելու համար: Այդ մարմինների գործունեությունը կարող է օգնել դատավորներին եւ դատախազներին տեղեկանալու միջազգային չափանիշների մասին, երբ նրանք ձգտում են դրանք կիրառել ազգային մակարդակում:

1.2 Միջազգային հանրությունը մշակել է մարդկանց խոշտանգումներից պաշտպանելու չափանիշներ, որոնք կիրառելի են աշխարհի ցանկացած իրավական համակարգում: Այդ չափանիշները հաշվի են առնում գոյություն ունեցող իրավական համակարգերը եւ սահմանում նվազագույն այն երաշխիքները, որոնք պետք է ապահովվեն ցանկացած համակարգում: Դատավորները եւ դատախազները պատասխանատվություն են կրում այդ չափանիշներն իրենց իրավական համակարգերում կիրառելի դարձնելու համար: Նույնիսկ եթե այս կամ այն երկիրը չի վավերացրել խոշտանգումները արգելող որեւէ փաստաթուղթ, խոշտանգումների արգելքն այնքան հիմնարար է, որ յուրաքանչյուր երկիր, ամեն դեպքում, պարտավորություններ ունի միջազգային ընդհանուր իրավունքի սահմաններում[1]:

1.3 Շատ երկրներում դատարանները պետք է կիրառեն իրենց պետությունների կողմից վավերացրած փաստաթղթերը կամ ընդհանուր միջազգային իրավունքի սկզբունքները եւ նորմերը, կամ առաջնորդվեն այդ բոլոր գործիքներով միաժամանակ: Այդ ամենում չհաջողելը մասնագիտական պարտականությունների ճախողում է նշանակում: Նույնիսկ այն երկրներում, որտեղ միջազգային իրավունքը չի կարող անմիջականորեն կիրառվել դատարանների կողմից, ողջամիտ կլինի, եթե դատական համակարգը պետությանը չդնի միջազգային իրավունքի սահմաններում ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ խոշտանգումների արգելքը խախտելու վիճակում: Եւ սա այն պատճառով, որ միջազգային իրավունքով որեւէ պետություն չի կարող արդարացնել միջազգային իրավունքի խախտումը՝ հղում անելով սեփական օրենքներին կամ սահմանադրությանը:

1.4 Այս ձեռնարկում ներկայացված չափանիշները իրավական տարբեր կարգավիճակ ունեն: Որոշները ամրագրված են միջազգային պայմանագրերում, որոնց համաձայն այդ փաստաթղթերը ստորագրած եւ վավերացրած կամ դրանց միացած պետությունները իրավական առումով պարտավորություններ են ստանձնում: Խոշտանգումների դեմ ավելի մանրամասն երաշխիքներից շատերը ընդգրկված են խորհրդատվական բնույթ կրող «փափուկ օրենքի» փաստաթղթերում՝ հռչակագրերում, բանաձեւերում կամ սկզբունքների

1 Արդարադատության միջազգային դատարանի կանոնադրության 38-րդ հոդվածը թվարկում է այն միջոցները, որով սահմանվում են միջազգային իրավունքի կանոնները որպես միջազգային կոնվենցիաներով սահմանված նորմեր, միջազգային ավանդույթը որպես ընդհանուր պրակտիկայի վկայություն եւ ընդունված որպես օրենք, իրավունքի ընդհանուր սկզբունքներ, որոնք ճանաչված են քաղաքակիրթ երկրների կողմից, դատական որոշումներ եւ հռչակավոր գործիչների ուսմունքներ: Ընդհանուր միջազգային իրավունքը բաղկացած է այդ աղբյուրների տարբեր համադրումներից առաջացած նորմերից:

ժողովածուներում, կամ մոնիտորինգի միջազգային մարմինների եւ հաստատությունների զեկույցներում: Թեեւ թվարկված գործիքներն ուղղակիորեն պարտավորեցնող բնույթ չունեն, բայց դրանք պետք է կատարվեն, քանի որ դրանք քննարկվել են պետությունների կողմից բանակցությունների ընթացքում եւ ընդունվել քաղաքական մարմինների կողմից, ինչպիսիք են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան: Երբեմն այդ չափանիշներն ամրապնդում են պարտավորեցնող բնույթ ունեցող ընդհանուր միջազգային իրավունքի սկզբունքները: Դրանք հաճախ նաեւ մանրամասնում են անհրաժեշտ քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն բոլոր մարդկանց հիմնարար իրավունքներից մեկը՝ խոշտանգումներից պաշտպանված լինելն երաշխավորելու համար:

1.5 ՄԱԿ-ի մի շարք մարմիններ ստեղծվել են կոնկրետ կոնվենցիաներով՝ կոչված լինելով վերահսկել համապատասխանությունն այդ չափանիշներին եւ այդ չափանիշների մեկնաբանության ուղենիշներ տրամադրել: Այդ մարմինները հիմնականում ընդհանուր մեկնաբանություններ եւ հանձնարարականներ են հրապարակում, ուսումնասիրում մասնակից պետությունների զեկույցները եւ հրապարակում եզրակացություններ՝ այս կամ այն կոնվենցիայի պահանջներին պետության համապատասխանության վերաբերյալ: Որոշ մարմիններ անհատական բողոքներ են քննում անհատների իրավունքների խախտման մասին: Այդպիսով նրանք կարող են արժանահավատ մեկնաբանություններ տրամադրել պայմանագրերի դրույթների եւ մասնակից պետությունների համար՝ դրանցից բխող պարտավորությունների վերաբերյալ:

1.6 ՄԱԿ-ը նաեւ մի շարք մեխանիզմներ է սահմանում կոնվենցիաների շրջանակներից դուրս առանձնահատուկ խնդիրների կամ կոնկրետ երկրներում իրավիճակի ուսումնասիրության համար: Այդ մարմինները վերահսկում են բոլոր պետությունները, անկախ այն հանգամանքից, թե նրանք վավերացրել են այս կամ այն կոնվենցիան, թե ոչ, եւ կարող են ուշադրություն հրավիրել կոնկրետ խախտումների վրա;

Ընդհանուր արգելքը

1.7 Խոշտանգումների արգելքն ամրագրված է մարդու իրավունքների եւ մարդասիրական իրավունքին առնչվող մի շարք միջազգային պայմանագրերում եւ ընկալվում է որպես ընդհանուր միջազգային իրավունքի սկզբունք: Խոշտանգումների արգելքը հատուկ կարգավիճակ ունի ընդհանուր միջազգային իրավունքի ոլորտում, այն է *jus cogens*՝ ընդհանուր միջազգային իրավունքի «անառարկելի նորմ»[2]: Ընդհանուր միջազգային իրավունքը պարտավորեցնող է բոլոր պետությունների համար, եթե նույնիսկ այդ պետությունները չեն վավերացրել որեւե կոնկրետ պայմանագիր: Միջազգային պայմանագրերը կամ միջազգային իրավունքի այլ կանոնները չեն կարող հակասել *jus cogens* սկզբունքին:

2 Մարդու իրավունքների հանձնաժողով, Ընդհանուր եզրակացություն 24 (52), Ընդհանուր եզրակացություն Դաշնագրին կամ դրա Կամընտիր արձանագրություններին միանալիս կամ վավերացման ժամանակ արված վերապահումների հետ կապված խնդիրներին, կամ Դաշնագրի 41 Հոդվածի համաձայն արված հայտարարությունների վերաբերյալ UN Doc. CCPR/C/21/Rev.1/Add.6 (1994), պարբերություն 10. Տես նաեւ Նախկին Հարավսլավիայի գծով Միջազգային Քրեական Դատարանի *Դատախազը ընդդեմ Դելալիչի եւ մյուսների* գործ IT-96-21-T, 1998 նոյեմբերի 16-ի վճիռը, 452 եւ 454 պարբերություններ; *Դատախազն ընդդեմ Ֆուրունջիայի,* գործ IT-95-17/1-T, 1998 , դեկտեմբերի 10-ի վճիռը, պարբերություն 139 եւ 143, *Դատախազն ընդդեմ Կունարացի եւ մյուսների*, գործ IT-96-23-T & IT-96-23/I-T, պարբերություն 466

1.8 Խոշտանգումների արգելքը սահմանված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի /1948թ./ 5-րդ հոդվածում եւ մարդու իրավունքներին առնչվող միջազգային եւ տարածաշրջանային մի շարք այլ փաստաթղթերում: Պետությունների մեծ մասը վավերացրել են պայմանագրեր, որոնք խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի արգելք են պարունակում: Դրանց շարքում են՝ Քաղաքացիական եւ Քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը /1966թ./[3], Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան /1950թ./[4], Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան /1978թ./[5], Մարդու եւ ժողովուրդների իրավունքի աֆրիկյան խարտիան /1981թ./[6]: Այդ պայմանագրերում խոշտանգումներին առնչվող հոդվածների տեքստերը եւ որոշ համընդհանուր պայմանագրերի վավերացման ամսաթվերի աղյուսակները ներկայացված են այս ձեռնարկիհավելվածներում:

1.9 Բացի այդ, մշակվել են խոշտանգումների դեմ պայքարելու մի շարք այլ պայմանագրեր: Դրանք են.

* Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ մարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան, 1984թ. (Խոշտանգումների դեմ կոնվենցիա),
* Խոշտանգումների եւ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոնվենցիան, 1987թ.
* Խոշտանգումների կանխարգելման եւ դրանց կիրառման համար պատժի միջամերիկյան կոնվենցիան, 1985թ.:

Խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի բացարձակ արգելքը մարդու իրավունքների ոլորտում անառարկելի բնույթ ունի: Որեւէ պարագայում պետությունը չի կարող անտեսել կամ սահմանափակել այդ արգելքը, նույնիսկ պատերազմի կամ ազգի կյանքը վտանգող այլ իրավիճակների դեպքում, որոնք կարող են արդարացնել որոշ իրավունքների սահմանափակումը կամ ժամանակավոր դադարեցումը[7]: Պետությունները չեն կարող այնպիսի վերապահումներ կիրառել, որոնց հետեւանքով անձը կարող է խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի վտանգի ենթարկվել, օրինակ ազատազրկման ընթացքում արտաքին աշխարհի հետ կապից երկարատեւ զրկելը կամ ազատազրկված անձի համար

3 ՔՔԻՄԴ, հոդվածներ 7 եւ 10 (1)
4 ՄԻԵԿ, հոդված 3
5 ՄԻԱԿ, հոդված 5 (2)
6 Աֆրիկյան խարտիա, հոդված 5
7 Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածը եւ Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի 27-րդ հոդվածը նախատեսում են, որ պետությունները հստակ սահմանված որոշ հանգամանքներում կարող են որոշ պարտավորվածությունների կատարման վերապահումներ ունենալ այնքանով, որքանով պահանջում է իրավիճակի սրությունը: Սակայն վերապահումներ չեն նախատեսվում խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի կամ պատժի վերաբերյալ հոդվածների առնչությամբ: Օրինակ, Աֆրկյան խարտիան չի նախատեսում վերապահումներ արտակարգ իրավիճակների ժամանակ:

դատարանի անհապաղ մատչելիությունը չապահովելը[8]: Այս արգելքը գործում է՝ անկախ հանգամանքներից եւ գործի առանձնահատկությունից, ինչպիսիք են տուժողի կարգավիճակը կամ կասկածյալ լինելը[9]:

1.10 Պետական պաշտոնյաներին արգելվում է պատճառել, դրդել կամ հանդուրժել անձի խոշտանգումը կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի այլ ձեւերը: Վերադաս պետի կամ պետական իշխանության հրամանը խոշտանգումների արդարացում չի կարող համարվել[10]: Պետություններից նաեւ պահանջվում է ապահովել, որ խոշտանգումները քրեականացված լինեն, այդ դեպքերը պատշաճ քննության արժանանան, իսկ խոշտանգումներ իրականացնողները կրեն պատասխանատվություն[11]:

1.11 Հակամարտության կողմերից մեկի իրավասության տակ գտնվող ցանկացած անձի հանդեպ խոշտանգումները եւ դաժան վերաբերմունքի այլ ձեւերը նույնպես արգելված են զինված հակամարտությունների մասին օրենսդրությամբ (մարդասիրական իրավունք)՝ որպես պատերազմի ժամանակ կատարված հանցագործություն[12]: Խոշտանգումների արգելքը մարդասիրական իրավունքում նախատեսված է Ժնեւի կոնվենցիաների ընդհանուր 3-րդ հոդվածով եւ Ժնեւի չորս կոնվենցիաների տարբեր այլ դրույթներով, ներառյալ լուրջ

8 Մարդու իրավունքների հանձնաժողովի ընդհանուր եզրակացություն N 29, Արտակարգ իրավիճակ (հոդված 4), ընդունվել է 1950-րդ ժողովին 2001 թ-ի հուլիսի 24-ին, պարբերություն 16, *Ակսոյը ընդդեմ Թուրքիայի,* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1996 թ-ի դեկտեմբերի 18-ի վճիռ, *Բրանիգանը եւ Մաքքրայթը ընդդեմ Միացյալ թագավորության,* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1993 թ-ի մայիսի 26-ի վճիռ, *Բրոգան ընդդեմ Միացյալ թագավորության* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1988 նոյեմբերի 29-ի վճիռ, «Habeas Corpus արտակարգ իրավիճակներում», Հանձնարարական OC-9/87, 1987 հունվարի 30, Միջամերիկյան դատարանի տարեկան զեկույց, 1987, OAS/Ser.L/V/III.17 փաստաթուղթ.13, 1987 եւ «Դատական երաշխիքները արտակարգ իրավիճակներում», Հանձնարարական OC-8/87, 1987 թ-ի հոկտեմբերի 6, Միջամերիկյան դատարանի տարեկան զեկույց, 1988, OAS/Ser.L/V/III.19 փաստաթուղթ.13, 1988

9 Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդված: Տես նաեւ Խոշտանգումների դեմ հանձնաժողովի զեկույցները, Մուտանբոն ընդդեմ Շվեյցարիայի, (13/1993) GAOR, 49-րդ նստաշրջանի No.44 (1995) Հավելվածը, *Խանը ընդդեմ Կանադայի*, (15/1994), GAOR, 50-րդ նստաշրջանի No.44 (1995) Հավելվածը եւ *Իռլանդիան ընդդեմ Միացյալ թագավորության,* Եվրոպական դատարան, սերիա A 25, (1978), *Չահալը ընդդեմ Միացյալ թագավորության,* Եվրոպական դատարանի 1996 թ-ի նոյեմբերի 15-ի վճիռը, *Թմազին ընդդեմ Ֆրանսիայի,* Եվրոպական դատարան, սերիա A, No. 241-A (1993), Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի, 1998 թ-ի հուլիսի 28-ի վճիռը

10 Խոշտանգումների դեմ ՄԱԿ—ի կոնվենցիայի 2-րդ հոդված: Այս սկզբունքը սահմանված է նաեւ 1946 թ-ի Նյուրնբերգի եւ Տոկիոյի դատարանների կանոնադրություններում եւ հետագայում վերահաստատվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից: Այդ սկզբունքը ամրագրված է նաեւ Ռուանդայի եւ Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանների կանոնադրություններում եւ, որոշ փոփոխություններով, նաեւ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մեջ:

11 Խոշտանգումների դեմ ՄԱԿ—ի կոնվենցիայի 4, 5, 7, 12 եւ 13 հոդվածները: Տես՝ նաեւ Մարդու իրավունքների հանձնաժողովի ընդհանուր եզրակացության 20, 13 եւ 14 պարբերությունները:

12 Ռազմական հանցագործությունները ներառում են 1949 թ-ի Ժնեւի կոնվենցիայում սահմանված «լուրջ խախտումները», որոնք կատարվել են միջազգային զինված հակամարտությունների ժամանակ, ուղղված են եղել Կոնվենցիաներով պաշտպանված անձանց կամ սեփականության դեմ եւ, ինչպես հաստատված է նախկին Հարավսլավիայի գծով միջազգային քրեական դատարանի կողմից, Ժնեւի կոնվենցիայի ընդհանուր 3-րդ հոդվածի խախտում (Դատախազն ընդդեմ Տադիչի, իրավասության վերաբերյալ միջանկյալ բողոքարկման պաշտպանական կողմի միջնորդության վերաբերյալ որոշում, գործ No. IT-94-I-AR72, 1995թ. հոկտեմբերի 2, պարբերություն 134), Մարդկության դեմ հանցագործությունները այնպիսի գործողություններ են, որոնք կատարվել են քաղաքացիական բնակչության դեմ որպես լայնածավալ կամ պարբերաբար հարձակումների մի մաս, անկախ այն բանից, թե դրանք կատարվել են զինված հակամարտության ընթացքում, թե ոչ:

խախտումների մասին դրույթները[13] եւ 1977թ.-ի լրացուցիչ արձանագրությունները[14]: Խոշտանգումները եւս համարվում են մարդկության դեմ հանցագործություն, եթե դրանք կատարվել են որպես քաղաքացիական բնակչության հանդեպ իրականացված համատարած կամ սլարբերաբար հարձակումների մի մաս, անկախ այն բանից, թե դրանք իրականացվել են զինված հակամարտության ժամանակ, թե ոչ: Այսպիսով, օրինակ, Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության 7-րդ հոդվածը սահմանում է, որ խոշտանգումը եւ բռնաբարությունն ընդդատյա են դատարանին: Ժնեւի կոնվենցիայի ընդհանուր 3-րդ հոդվածը եւ Հռոմի կանոնադրության 7-րդ եւ 8-րդ հոդվածները նույնպես ներառված են այս ձեռնարկի առաջին հավելվածում:

1.12 Այս ձեռնարկում հիմնական ուշադրություն է հատկացվում պետական պաշտոնյաների, հատկապես իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի կիրառման խնդրին: Այդուամենայնիվ, վերջերս առավել մեծանում է իրենց վերահսկողության տակ գտնվող խմբերի կամ անհատների նկատմամբ մասնավոր խմբերի կամ անհատների նման վերաբերմունքից մարդկանց պաշտպանելու կարեւորությունը: Պետությունները պարտավոր են ապահովել իրենց իրավասության տակ գտնվող յուրաքանչյուր անձի իրավունքների պաշտպանությունը եւ կարող են պատասխանատվության կանչվել անհատ անձանց կողմից կատարված նման գործողությունների համար, եթե պետությունը աջակցում կամ հանդուրժում է դրանք, կամ եթե պետությանը չի հաջողվում օրենքի միջոցով արդյունավետ պաշտպանություն ապահովել[15]:

1.13 Խոշտանգումներից եւ դաժան վերաբերմունքի այլ արգելված ձեւերից պաշտպանված լինելու անհատի իրավունքը ներառում է նաեւ անհատին երկիր չվերադարձնելն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ անձը կարող է դաժան վերաբերմունքի կամ խոշտանգման ենթարկվել[16]: Անձն իրավունք ունի հարկադրաբար վերադարձված չլինել այնտեղ, ուր նա կարող է ենթարկվել խոշտանգման, անգամ եթե այդ անձը չի ճանաչվել որպես փախստական: Հանձնելու վերաբերյալ հարցում ստացած երկիրը պետք է համոզվի, որ հարցում արած երկիրը, միջազգային իրավունքի համապատասխան, կատարում է խոշտանգումներին ու դաժան վերաբերմունքի այլ ձեւերին առնչվող պարտավորությունները եւ միայն դրանից հետո փոխանցի տվյալ անձին երկրի իրավասության տակ[17]:

13 Ժնեւի 1-ին կոնվենցիայի 12-րդ եւ 50-րդ հոդվածներ, Ժնեւի 2-րդ կոնվենցիայի 12-րդ եւ 51-րդ հոդվածները, Ժնեւի 3-րդ կոնվենցիայի 13, 14, 87 եւ 130 հոդվածները, Ժնեւի 4-րդ կոնվենցիայի 27, 32 եւ 147 հոդվածները

14 Լրացուցիչ 1-ին արձանագրության հոդված 25 եւ լրացուցիչ 2-րդ արձանագրության հոդված 2

15 *Վելասկես Ռոդրիգեսի գործը,* Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի 1988 թ. հուլիսի 29 -ի վճիռ, սերիա C, No. 4; H.L.R. ընդդեմ Ֆրանսիայի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1997 թ-ի ապրիլի 29-ի վճիռ , D.ընդդեմ Միացյալ թագավորության 1997 թ-ի մայիսի 2-ի վճիռ

16 Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդված, Փախստականների կարգավիճակին առնչվող կոնվենցիայի 33-րդ հոդված, *Չահալը ընդդեմ Միացյալ թագավորության,* Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի 1996 թ-ի նոյեմբերի 15-ի վճիռ

17 *Սերինգն ընդդեմ Միացյալ թագավորության,* 1989 թ-ի հուլիսի 7 -ի վճիռ, սերիա A No. 161

Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի 1984թ. կոնվենցիան

1.14 Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1984թ.-ին: Մինչեւ 2002 թ. օգոստոս կոնվենցիայի անդամ դարձան 130 պետություն: Կոնվենցիան տալիս է «խոշտանգում» հասկացության սահմանումը եւ ընդգծում, որ մասնակից պետությունները ցանկացած հանգամանքներում պարտավոր են արգելել խոշտանգումները: Խոշտանգումները չեն կարող արդարացված լինել արտակարգ իրավիճակի կամ այլ բացառիկ հանգամանքների, ոչ էլ վերադասի հրամանի առկայության պայմաններում[18]: Ըստ կոնվենցիայի, արգելվում է հարկադրաբար երկիր վերադարձնել կամ հանձնել անձին այլ երկիր, որտեղ նա կարող է կանգնել խոշտանգման վտանգի առջեւ[19]: Պետությունները պետք է երաշխավորեն, որ խոշտանգումներն իրենց քրեական օրենսդրությամբ որակվեն որպես հանցագործություն, ներառյալ խոշտանգումներին մասնակցությունը եւ հրահրումը[20]: Պետությունները պետք է հաստատեն խոշտանգումների դեպքերում նման հանցագործությունների վրա իրենց իրավասության տարածումը, երբ ենթադրյալ հանցագործները չեն հանձնվում մեկ այլ երկրի, որտեղ նրանց մեղադրանք կառաջադրվի անկախ այն երկրից, թե որտեղ է կիրառվել խոշտանգում, որ երկրի քաղաքացի է եղել խոշտանգումներ իրականացնողը կամ տուժողը (համընդհանուր իրավասություն)[21]: Համընդհանուր իրավասություն կիրառելիս պետությունները պարտավոր են ձերբակալել խոշտանգումների կատարման մեջ կասկածվող անձանց, հետաքննել խոշտանգումների հնարավոր դեպքերը եւ դատարանին փոխանցել խոշտանգումներ իրականացնողներին[22]: Պետությունները պետք է նաեւ համագործակցեն խոշտանգումներ իրականացնողներին արդարադատության առջեւ կանգնեցնելու նպատակով[23]: Խոշտանգումների արդյունքում արված հայտարարությունները չեն կարող օգտագործվել որպես ապացույց, բացառությամբ այն դեպքերի, երբ դա խոշտանգելու մեջ մեղադրվող անձի դեմ հայտարարություն անելու ապացույց է հանդիսանում[24]: Խոշտանգումների զոհերն ունեն համարժեք փոխհատուցման իրավունք[25]:

1.15 Խոշտանգումների դեմ կոնվենցիան մասնակից պետություններին նաեւ պարտավորեցնում է խոշտանգումների դեմ պայքարելու արդյունավետ միջոցներ ձեռնարկել: Պետությունները պարտավոր են խոշտանգումների եւ այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ դասընթացներ ապահովել իրավապահ մարմինների, բուժանձնակազմերի եւ այն բոլոր անձանց համար, որոնք առնչվում են ազատազրկման վայրերի աշխատանքին, հարցաքննություններին կամ որեւէ այլ կերպ առնչվում են ազատազրկված անձանց[26]: Հարցաքննություն վարելու կանոնները եւ ազատազրկվածներին պահելու պայմանները պետք է պարբերաբար վերանայվեն՝ ապահովելով խոշտանգումների եւ դաժան վերա-

18 Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդված
19 Նույն կոնվենցիայի 3-րդ հոդված
20 Նույն կոնվենցիայի 4-րդ հոդված
21 Նույն կոնվենցիայի 5-րդ հոդված
22 Նույն կոնվենցիայի 6-8-րդ հոդվածներ
23 Նույն կոնվենցիայի 9-րդ հոդված
24 Նույն կոնվենցիայի 15-րդ հոդված
25 Նույն կոնվենցիայի 14-րդ հոդված
26 Նույն կոնվենցիայի 10-րդ հոդված

բերմունքի այլ ձեւերի կանխարգելումը[27]: Պետությունները պարտավոր են ակտիվորեն հետաքննել խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ դեպքերը, նույնիսկ եթե այդ մասին պաշտոնական բողոք չի ներկայացվել[28]: Անհատներն ունեն խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի վերաբերյալ բողոքներ ներկայացման, այդ բողոքների հետաքննության եւ հետագա սպառնալիքներից կամ դաժան վերաբերմունքից պաշտպանության իրավունք[29]: Դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեպքերը, որոնք չեն որակավորվում որպես խոշտանգում, նույնպես արգելված են: Այս պարբերության մեջ քննարկվող դրույթները կիրառելի են նաեւ նման դեպքերում[30]:

Խնդրին առնչվող այլ չափանիշներ

1.16 Ի հավելումն մարդու իրավունքների միջազգային օրենսդրության եւ զինված հակամարտությունների վերաբերյալ օրենքների, մշակվել են անձին խոշտանգումներից եւ դաժան վերաբերմունքի այլ ձեւերից պաշտպանելու մի շարք կանոններ եւ չափանիշներ: Թեպետ այդ գործիքները օրենքի պարտավորեցնող ուժ չունեն, սակայն դրանցում ներկայացված են համաձայնեցված սկզբունքներ, որոնց պետք է հետեւեն բոլոր պետությունները, եւ որոնք կարող են կարեւոր ուղեցույց լինել դատավորների եւ դատախազների համար: Դրանք են.

* Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ (1957թ., խմբագրվել է 1977թ.),
* Հոչակագիր խոշտանգումներից եւ դաժան, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժի ենթարկվելուց բոլոր անձանց պաշտպանության մասին (1975թ.),
* Իրավապահ մարմինների պաշտոնյա անձանց վարքի կանոններ (1979թ.),
* Ձերբակալվածներին եւ կալանավորվածներին խոշտանգումներից եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանող բժշկական անձնակազմի, հատկապես բժիշկների դերին առնչվող բժշկական էթիկայի սկզբունքներ (1982թ.),
* Հանցագործության եւ իշխանության չարաշահումների զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիր (1985թ.),
* Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները (1985թ.),
* ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ (Պեկինյան կանոններ) (1987թ.),
* Որեւէ ձեւով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածու (1988թ.)
* Բանտարկյալների հետ վարվեցողության հիմնական սկզբունքներ (1990թ.)
* Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ (1990թ.)
* Ուղենիշներ դատախազների դերի վերաբերյալ (1990թ.)
* Իրենց ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության կանոններ (1990թ.),

27 Նույն կոնվենցիայի 11-րդ հոդված
28 Նույն կոնվենցիայի 12-րդ հոդված
29 Նույն կոնվենցիայի 13-րդ հոդված
30 Նույն կոնվենցիայի 16-րդ հոդված

* Հակաօրինական, կամայական եւ շուտափույթ վճիռների իրականացման արդյունավետ կանխարգելման եւ հետաքննության սկզբունքները (1990թ.),
* Իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից ուժի եւ հրազենի օգտագործման վերաբերյալ հիմնարար սկզբունքները (1990թ.)
* Հոգեկան հիվանդ անձանց պաշտպանության եւ հոգեկան առողջության խնամքի սկզբունքներ (1991թ.),
* Բոլոր անձանց բռնի անհետացումից պաշտպանելու հռչակագիր (1992թ.),
* Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային եւ արժանապատվության նվաստացնող վերաբերմունքի ու պատժի արդյունավետ հետաքննության եւ փաստագրման սկզբունքները (Ստամբուլի արձանագրություն) (1999թ.):

Նշված փաստաթղթերից քաղվածքներ ներկայացված են ձեռնարկի առաջին հավելվածում:

Իրավաբանական սահմանումներ

1.17 Խոշտանգումների դեմ կոնվենցիայի 1-ին հոդվածը ամրագրում է միջազգայնորեն համաձայնեցված գործողությունների սահմանումը, որը նշանակում է «խոշտանգում»: Այն է՝

> *ցանկացած գործողություն, որի միջոցով պետական պաշտոնյա անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ եւ գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որեւէ անձի մտածված կերպով հասցնում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաեւ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անբաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատրահականորեն:*

1.18 Երբեմն դժվար է որոշել «Խոշտանգում» եւ «այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ» հասկացությունների միջեւ սահմանները, եւ այդ գնահատականը կախված է գործի հանգամանքներից եւ կոնկրետ տուժողի տվյալներից: Երկու հասկացությունները ներառում են հոգեկան եւ մարմնական դաժան վերաբերմունք, որ դիտավորությամբ պատճառվում է պետական պաշտոնյայի կողմից կամ պետական պաշտոնյայի համաձայնությամբ կամ գիտությամբ: «Խոշտանգում» հասկացության «կարեւոր տարրերն» առկա են Խոշտանգումների դեմ կոնվենցիայի 1-ին հոդվածում եւ ներառում են՝

* Ուժեղ մտավոր կամ մարմնական ցավ կամ տառապանք պատճառելը,
* Պետական պաշտոնյայի կողմից կամ նրա լռելյայն համաձայնությամբ կամ գիտությամբ,
* Հատուկ նպատակների համար, ինչպիսիք են տեղեկություն կորզելը, պատիժը կամ վախեցնելը:

1.19 *Դաժան, անմարդկային* կամ *արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը* կամ *պատիժը* նույնպես իրավաբանական սահմանումներ են: Դրանք վերաբերվում են դաժան վերաբերմունքին, որը պատճառվում է առանց հատուկ նպատակի, սակայն

մտածված կերպով, անձին դնում է այնպիսի պայմանների մեջ, որոնք բերում են դաժան վերաբերմունքի կամ ինքնին դաժան վերաբերմունք են հանդիսանում: Անձին այնպիսի պայմանների ենթարկելը, որոնք արդարացիորեն հանդիսանում են դաժան վերաբերմունք, հանգեցնում է պատասխանատվության: Նվաստացնող վերաբերմունքը կարող է պակաս ծանր ցավ կամ տառապանք պատճառել խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի ենթարկելու համեմատությամբ, այն վիրավորում եւ նվաստացնում է տուժողին: Այսպիսով, *դաժան վերաբերմունքը, որ չի նույնացվում խոշտանգում հասկացության հետ*, կարող է սահմանվել հետեւյալ հիմնական տարրերով.

* Մտածված ձեւով մտավոր կամ մարմնական զգալի ցավ կամ տառապանք պատճառելը,
* Պետական պաշտոնյաների կողմից կամ նրանց լռելյայն համաձայնությամբ կամ գիտությամբ:

Հաճախ դժվար է որոշել դաժան վերաբերմունքի տարբեր ձեւերի միջեւ սահմանները, քանի որ դա պահանջում է տառապանքի աստիճանի գնահատում, ինչը կարող է կախված լինել գործի հանգամանքներից եւ կոնկրետ տուժողի տվյալներից: Որոշ դեպքերում դաժան վերաբերմունքի որոշակի տեսակներ կամ ազատազրկման որոշակի պայմաններ, որոնք ինքնին խոշտանգում չեն, միմյանց հետ համակցությամբ կարող են համարվել խոշտանգում: *Դաժան վերաբերմունքը* արգելված է միջազգային իրավունքով, եւ նույնիսկ այն դեպքերում, երբ վերաբերմունքը հատուկ նպատակներ չի հետապնդում կամ խոսքը նվաստացնող վերաբերմունքի մասին է, որը խոշտանգում որակավորվելու համար այնքան դաժան (իրավաբանական առումով) չէ, այդուհանդերձ, այն կարող է համարվել արգելված դաժան վերաբերմունք[31]:

1.20 Մարդու իրավունքների հանձնաժողովն հայտարարել է հետեւյալը. «Դաշնագիրը չի պարունակում 7-րդ հոդվածով նախատեսված ոչ մի սահմանում, եւ Հանձնաժողովն անհրաժեշտ չի գտնում մշակել արգելված գործողությունների ցուցակ կամ հաստատել տարբեր պատիժների կամ վերաբերմունքի միջեւ հստակ տարբերակումները. տարբերակումները կախված են կիրառված վերաբերմունքի բնույթից, նպատակից եւ դաժանությունից»[32]: Նաեւ նշվում է, որ 7-րդ հոդվածում ամրագրված արգելքը վերաբերում է ինչպես մարմնական, այնպես էլ մտավոր ցավ պատճառող գործողություններին[33]: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի* գործում նշել էր. «Որոշակի գործողություններ, որոնք նախկինում որակվել են որպես «անմարդկային եւ նվաստացնող վերաբերմունք» ի հակառակ «խոշտանգում» որակավորմանը, հետագայում կարող են այլ կերպ որակավորվել… մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտում նկատվում է ավելի բարձր չափանիշների անհրաժեշտություն, ինչը ժողովրդավարական հասարակությունների հիմնարար արժեքների ոտնահարման դեպքերում անխուսափելիորեն կրերի ավելի խիստ եւ կոշտ գնահատականների[34]»:

31 Միայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանն է հստակ օգտագործում տառապանքի հարաբերական դաժանության հասկացությունը որպես «խոշտանգում» եւ «անմարդկային վերաբերմունք» հասկացությունների սահման: Ավելի ընդունված մոտեցումը հատուկ նպատակի առկայության որոշումն է, թե արդյոք տեղի է ունեցել խոշտանգում, թե ոչ:

32 Մարդու իրավունքների հանձնաժողովի ընդհանուր մեկնաբանություն 20, հոդված 7 (1992, քառասուն չորսերորդ նստաշրջան), Մարդու իրավունքների պայմանագրային մարմինները, ՄԱԿ-ի փաստաթուղթ HRI/GEN/1/Rev.1. at 30 (1994), պարբերություն 4. Ընդհանուր մեկնաբանությունների եւ ընդհանուր հանձնարարականների ժողովածու

33 Նույն փաստաթղթի 5 -րդ պարբերություն

34 *Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1999 թ-ի հուլիսի 28-ի վճիռ, պարբերություն 101

1.21 Ժնեւի կոնվենցիաների մշակողները նույնպես խուսափել են արգելված գործողությունների մանրամասն ցանկ ներկայացնելուց: Կարմիր Խաչի միջազգային կոմիտեն Ժնեւի կոնվենցիաների իր Մեկնաբանության մեջ նշել է. «Միշտ վտանգավոր է շատ մանրամասների մեջ խորանալը, հատկապես այս ոլորտում: Որքան էլ ուշադիր մշակվի սպատիժների տարբեր ձեւերի ցանկը, երբեք հնարավոր չի լինի կանխատեսել ապագա խոշտանգողների երեւակայությունը, որոնք ձգտելու են բավարարել իրենց գազանային բնազդները. որքան ճշգրիտ եւ ամբողջական են փորձում դարձնել ցանկը, այդքան այն ավելի սահմանափակ է դառնում: Ընդունված խմբագրումը ճկուն է եւ միեւնույն ժամանակ ճշգրիտ[35]»:

Վերահսկողության միջազգային մեխանիզմները եւ բողոքներ ներկայացնելու ընթացակարգերը

ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը

1.22 Մարդու իրավունքների հանձնաժողովը ստեղծվել է Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի համաձայն՝ որպես վերահսկող մարմին: Հանձնաժողովը կազմված է 18 անկախ փորձագետներից, որոնք ընտրվում են Դաշնագրի մասնակից պետությունների կողմից: Հանձնաժողովն ուսումնասիրում է զեկույցները, որոնք պարբերաբար պարտավոր են ներկայացնել մասնակից պետությունները եւ հրապարակում է եզրափակիչ դիտարկումներ՝ ուշադրություն դարձնելով անհագստացնող խնդիրներին եւ հանձնարարականներ մշակելով պետությունների համար: Հանձնաժողովն իրավասու է նաեւ քննարկել անհատներից ստացված բողոքներ այդ անձանց հանդեպ մասնակից պետության կողմից Դաշնագրի խախտումների մասին: Անհատական բողոքների ընթացակարգի կիրառման համար մասնակից պետությունը պետք է դառնա Դաշնագրի Առաջին կամընտիր արձանագրության անդամ: Հանձնաժողովը հրապարակել է մի շարք Ընդհանուր մեկնաբանություններ Դաշնագրի տարբեր հոդվածների եւ պետությունների պարտավորությունների վերաբերյալ: 7-րդ հոդվածի վերաբերյալ Ընդհանուր մեկնաբանությունը ներառված է այս ձեռնարկի Առաջին հավելվածում:

ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ հանձնաժողովը

1.23 Խոշտանգումների դեմ հանձնաժողովը մարմին է, որ կազմված է 10 անկախ փորձագետներից եւ ստեղծվել է Խոշտանգումների դեմ կոնվենցիայի համաձայն: Հանձնաժողովն ուսումնասիրում է մասնակից պետությունների կողմից ներկայացված հաշվետվությունները կոնվենցիայի պահանջների կատարման մասին եւ մշակում եզրափակիչ դիտարկումներ: Հանձնաժողովը կարող է քննարկել անհատական բողոքներ, եթե մասնակից պետությունը համաձայն է այդ ընթացակարգի հետ եւ արել է համապատասխան հայտարարություն կոնվենցիայի 22-րդ հոդվածի համաձայն: Գոյություն ունի նաեւ կոնվենցիայի 20-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգ, որի համաձայն հանձնաժողովը կարող է նշանակել հետաքննություն, եթե գտնի, որ «առկա են հիմնավոր տվյալներ՝ մասնակից պետության տարածքում խոշտանգումների պարբերաբար կիրառվելու առնչությամբ»:

35 Ժան Պիկտ *Մեկնաբանություն՝ Ժնեւի 4-րդ կոնվենցիա պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ*

1.24 2002 թ-ի դեկտեմբերին Գլխավոր ասամբլեան ընդունել է նոր Կամընտիր արձանագրություն: Ըստ արձանագրության, ստեղծվում է ազատազրկման վայրերի պարբերական այցելությունների երկու տարր պարունակող համակարգ՝ խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի կանխարգելման նպատակով: Առաջին մարմինը միջազգային այցելող մեխանիզմն է կամ տասը անկախ փորձագետներից կազմված «ենթահանձնաժողովը», որի շրջանակներում փորձագետները կանոնավոր այցելում են ազատազրկման վայրեր: Երկրորդ տարրը պարտավորեցնում է մասնակից պետություններին նշանակել, ստեղծել կամ պահպանել մեկ կամ մի քանի այցելություն իրականացնող ազգային մեխանիզմ(ներ), որ ավելի հաճախակի այցելություններ կիրականացնի: Միջազգային եւ ազգային մեխանիզմները պետք է մշակեն հանձնարարականներ պետություններին՝ ազատազրկված անձանց հետ վարվեցողության եւ ազատազրկման պայմանների բարելավման վերաբերյալ:

Տարածաշրջանային մեխանիզմներ

1.25 Մարդու իրավունքների մի շարք տարածաշրջանային պայմանագրեր մշակվել են Եվրոխորհրդի, Ամերիկյան պետությունների կազմակերպության եւ Աֆրիկյան Միության կողմից[36]: Այդ պայմանագրերով երաշխավորված իրավունքները բխում են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված իրավունքներից եւ նման են դրանց: Սակայն յուրաքանչյուր պայմանագրի շրջանակներում մշակվել են այդ սկզբունքների իրականացման բացառիկ մոտեցումներ: Այդ ոլորտի հիմնական գործիքներն են.

* Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան
* Խոշտանգումների եւ անմարդկային, նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման եվրոպական կոնվենցիան,
* Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան,
* Խոշտանգումների կանխարգելման եւ պատժման միջամերիկյան կոնվենցիան,
* Մարդկանց եւ ժողովուրդների աֆրիկյան խարտիան:

1.26 Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը, Մարդու իրավունքների աֆրիկյան հանձնաժողովը եւ առաջիկայում ստեղծվելիք Մարդու իրավունքների աֆրիկյան դատարանը պարտավոր են վերստուգել, թե արդյոք մասնակից պետությունները կատարում են պայմանագրերը: Այդ մարմինները խոշտանգումների, ինչպես նաեւ մարդու իրավունքների այլ խախտումների վերաբերյալ հայտարարությունների քննություն են իրականացնում: Եվրոխորհուրդը նույնպես ստեղծել է խոշտանգումների կանխարգելման մարմին՝ իրեն անդամակցող երկրների շրջանակում:

1.27 Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեն (ԽԿԿ) (CPT) ստեղծվել է 1987թ.-ին՝ Խոշտանգումների եւ անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիայի համաձայն: Կոմիտեն կազմված է Կոնվենցիային միացած պետությունների թվին համապատասխան անկախ ու անաչառ անդամներից եւ կարող է իր աշխատանքներին ներգրավել *ad hoc* (ժամանակավոր) փորձագետների: Ներկայումս Եվրոխորհրդին անդամակցող բոլոր պետությունները վավերացրել են Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոնվենցիան: ԽԿԿ-ն պլանային եւ *ad hoc* այցելություններ է իրականացնում Կոնվենցիան վավերացրած պետության իրավասության տակ գտնվող ցանկացած վայր, որտեղ կարող են գտնվել

36 Նախկինում Աֆրիկայի միասնության կազմակերպություն (OAU)

պետության կողմից ազատազրկված անձինք: Անդամ պետությունները պարտավոր են ապահովել ԽԿԿ-ի մուտքը իրենց տարածք եւ տեղաշարժվելու իրավունքն առանց խոչընդոտի. ազատազրկման վայրերի վերաբերյալ լիարժեք տեղեկություններ, ցանկացած ազատազրկման վայր անարգել եւ անսահմանափակ մուտքի իրավունք, ներառյալ այդ վայրերի ներսում ազատ տեղաշարժի իրավունքը, ներառյալ այլ տեղեկությունների տրամադրումը, որ անհրաժեշտ է ԽԿԿ-ին իր առաքելությունն իրականացնելու համար[37]: ԽԿԿ-ն իրավասու է նաեւ առանձնազրույցներ ունենալ ազատազրկված անձանց հետ եւ հաղորդակցվել ցանկացած անձի հետ, որ, Կոմիտեի համոզմամբ, կարող է համապատասխան տեղեկություններ հաղորդել: Այցելության վերաբերյալ զեկույցը եւ մանրամասն հանձնարարականները, որոնք ուղարկվում են կառավարություններին, փակ են մինչեւ այն պահը, երբ տվյալ պետությունը կորոշի, որ դրանք կարող են հարսպարակվել: Մինչ օրս զեկույցների մեծամասնությունը հրապարակվել է:

Վերահսկողության այլ մեխանիզմներ

1.28 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը մշակել է մի շարք մեխանիզմներ, որոնք կոչված են ուսումնասիրելու մարդու իրավունքների ոտնահարման առանձին տեսակները, որտեղ էլ դրանք տեղի ունենան: Այդ մեխանիզմները, որոնք բաժանված են ըստ ոլորտների եւ երկրների, ներառում են հատուկ զեկուցողներ, ներկայացուցիչներ եւ անկախ փորձագետներ կամ աշխատանքային խմբեր: Այս մեխանիզմները ստեղծված են բանաձեւի հիման վրա՝ ի պատասխան խորքային ուսումնասիրություն պահանջող մտահոգիչ իրավիճակների: Այդ մեխանիզմների աշխատանքի բաց զեկույցներն ամեն տարի ուղարկվում են Մարդու իրավունքների հանձնաժողովին, իսկ որոշ զեկույցներ ուղարկվում են նաեւ Գլխավոր ասամբլեային:

1.29 Ջեռնարկում քննարկվող խնդիրներին առնչվող հիմնական թեմատիկ մեխանիզմներ են Խոշտանգումների հարցերով հատուկ զեկուցողը, Կանանց հանդեպ բռնության հարցերով հատուկ զեկուցողը, Իրավաբանների եւ դատավորների անկախության հարցերով հատուկ զեկուցողը, Բռնի անհետացումների հարցերով հատուկ զեկուցողը եւ Կամայական ձերբակալությունների հարցերով աշխատանքային խումբը: Գոյություն ունեն նաեւ թեմատիկ մի շարք այլ մեխանիզմներ: Այս մարմինների աշխատանքը չի բացառում մեկը մյուսին, եւ նույն խնդիրների վերաբերյալ նրանք կարող են աշխատել թե միասնաբար, թե միմյանցից զատ:

Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային եւ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը

1.30 Խոշտանգուների հարցերով հատուկ զեկուցողի ինստիտուտը ստեղծվել է 1985 թ-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից: Այդ մարմինը ստեղծվել է ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա, որի նպատակը ցանկացած պետությունում, անկախ այդ պետության կողմից վավերացրած պայմանագրերից, խոշտանգումների հետ կապված իրավիճակի ուսումնասիրությունն է: Ստացված տեղեկությունների հիման վրա հատուկ զեկուցողը կարող է կապ հաստատել պետության հետ եւ պահանջել պետության մեկնաբանությունները՝ տեղի ունեցած դեպքերի առնչությամբ: Նա կարող է նաեւ օգտվել «անհապաղ գործողություն» կոչվող ընթացակարգից եւ պահանջել պետությունից՝ մարդ-

37 Խոշտանգումների ու անմարդկային եւ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդված

կային վերաբերմունք ապահովել կոնկրետ անձի կամ անձանց խմբի հանդեպ: Հատուկ զեկուցողը կարող է նաեւ այցելություններ կատարել պետության հրավերով կամ թույլտվությամբ: Այդ առաքելությունների մասին զեկույցները սովորաբար հրապարակվում են որպես Հատուկ զեկուցողի հիմնական զեկույցի հավելված, որ ուղարկվում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողով:

1.31 Հատուկ զեկուցողը տարեկան զեկույցներ է ներկայացնում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողով եւ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա: Հանձնաժողովին ուղղված զեկույցները պարունակում են Հատուկ զեկուցողի կողմից պետություններին փոխանցած եւ պետություններից ստացված նամակագրության ամփոփումը: Զեկույցները կարող են ներառել ընդհանուր դիտարկումներ այս կամ այն երկրում խոշտանգումների հետ կապված խնդիրների վերաբերյալ, սակայն չեն պարունակում խոշտանգումների մասին անհատական հայտարարությունների վերաբերյալ եզրակացություններ: Զեկույցները կարող են անդրադառնալ խոշտանգումների վրա ազդող կամ դրանց նպաստող առանձնահատուկ խնդիրներին կամ զարգացումներին՝առաջարկելով ընդհանուր եզրակացություններ եւ հանձնարարականներ:

Միջազգային քրեական դատարաններ եւ տրիբունալներ

1.32 Ազգային քրեական դատարանները առաջին ատյաններն են, որոնք իրականացնում են խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի քրեորեն պատժելի այլ ձեւերի հետաքննությունը: Վերջին տարիներին ստեղծվել են մի շարք *ad hoc* միջազգային քրեական դատարաններ, այդ թվում՝ Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանը (ICTY) եւ Ռուանդայի միջազգային քրեական դատարանը (ICTR): Խոշտանգումների, ինչպես նաեւ մարդկության դեմ ուղղված հանցագործություններն ու ռազմական հանցագործությունները ներառված են ՀՄՔԴ-ի[38] եւ ՌՄՔԴ-ի[39] կանոնադրություններում, ինչպես նաեւ Միջազգային քրեական դատարանի (ICC)[40] Հռոմի կանոնադրությունում: Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունն ընդունվել է 1998թ-ին եւ վավերացվել 60 երկրների կողմից, ինչը թույլ տվեց ուժի մեջ մտնել 2002թ-ին: Միջազգային քրեական դատարանն ապագայում հնարավորություն կունենա քննել խոշտանգումների այն դեպքերը, որոնք չեն կարողացել կամ չեն ցանկացել քննել ազգային դատարանները:

Կարմիր խաչի միջազգային կոմիտե (ICRC)

1.33 Կարմիր խաչի միջազգային կոմիտեն անկախ եւ անաչառ մարդասիրական կազմակերպություն է, որ միջազգային մարդասիրական իրավունքի, մասնավորապես Ժնեւի չորս կոնվենցիաների համաձայն, օժտված է առանձնահատուկ լիազորություններով: Կոմիտեն ակտիվորեն օժանդակում է զինված հակամարտությունների զոհերին, ինչպես նաեւ աջակցում ազգամիջյան բախումների իրավիճակներում: Ժնեւի կոնվենցիաների մասնակից պետությունների միջեւ ծագած միջազգային զինված հակամարտությունների դեպքում ԿԽՄԿ-ն իրավասու է այցելել ներկալման վայրեր, կալանավայրեր եւ աշխատանքային ճամբարներ, որտեղ պահվում են ռազմագերիները կամ քաղաքացիական ներկալված անձինք: Միջազգային բնույթ չկրող զինված հակամարտությունների կամ ներքին լարվածությունների դեպքում Կոմիտեն կարող է իր ծառայություններն առաջարկել հակամարտող

38 ICTY, 5-րդ հոդված.
39 ICTR, 3-րդ հոդված
40 ICC, 7-րդ եւ 8-րդ հոդվածներ

կողմերին եւ, նրանց համաձայնության դեպքում, մուտքի իրավունք ստանալ ազատազրկման վայրեր: Կոմիտեի անդամներն այցելում են կալանավորներին նրանց նյութական եւ հոգեբանական վիճակը գնահատելու, անհրաժեշտության դեպքում, բարելավելու համար, նաեւ խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի կանխարգելման նպատակով: Այցելությունների ընթացակարգը պահանջում է, որպեսզի Կոմիտեի անդամների համար հասանելի լինեն բոլոր ազատազրկվածներն ու ազատազրկման վայրերը, առանց հաճախականության եւ տեւողության սահմանափակումների, առանց վկաների ցանկացած ազատազրկված անձի հետ զրուցելու իրավունքով: Կոմիտեի այցելությունների ընթացակարգը նաեւ ենթադրում է ծանոթացում եւ հետեւում առանձին ազատազրկվածների տեղափոխություններին: Կոմիտեի այցելությունները եւ հաշվետվությունները գաղտնի են, թեպետ Կոմիտեն հրապարակում է իր սեփական մեկնաբանությունները, եթե պետությունը հրապարակավ մեկնաբանում է զեկույցները կամ այցելությունները:

Նամունյեպոն եւ Օրսն ընդդեմ Բանրապեսի, Վինդոեկի բանտ եւ Անոր, Նամիբիա, Գերագույն դատարան, 1999թ-ի հուլիսի 9, 2000 (6) BCLR (NmS); [2000] 3 LRC 360; (1999) 2 CHRLD 331 (Նամիբիա)

Բողոքարկուները նախնական կալանքում գտնվող 5 կալանավոր են, որոնք շղթայվել են, երբ նրանցից 4-ը փախուստի փորձ են կատարել, իսկ 5-րդին կասկածել են փախուստի փորձ կատարելու մեջ: Նրանք բողոք էին ներկայացրել այն մասին, որ խախտվել է արժանապատվության նկատմամբ հարգանքի եւ խոշտանգումներից, դաժան, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրենց սահմանադրական իրավունքը:

Գերագույն դատարանը գործը քննելիս կիրառել էր միջազգային չափանիշներ, այդ թվում՝ ՄԱԿ-ի Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները եւ Եվրոպայի բանտարկյալների հետ վարվեցողության վերանայված ստանդարտ նվազագույն կանոնները: Դատարանը նաեւ հայտարարել էր, որ Նամիբիայի կողմից Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ կոնվենցիայի եւ Քաղաքական ու քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի վավերացումը կարեվոր է: Դատարանը «հստակ սահմանում է, որ բանտարկյալները պահպանում են իրենց արժանապատվության եւ մարդկային բնույթի հանդեպ հարգալից վերաբերմունք ստանալու իրավունքը»: Դատարանը նաեւ նշել էր, որ նախադեպային իրավունքը եւ այլ երկրների օրենսդրությունը գնալով խուսափում են ֆիզիկական զսպման միջոցների կամայական եւ ոչ անհրաժեշտ օգտագործումից: Երկրների մեծամասնությունն այդ միջոցները կիրառում է միայն չափազանց անհրաժեշտ դեպքերում, խիստ վերահսկողության պայմաններում եւ կարճ ժամանակահատվածում, որոշ երկրներում հատուկ միջոցների կիրառումն արգելված է:

Դատարանը որոշել էր, որ «Ցանկացած հանգամանքների դեպքում, փախուստն անհնար դարձնելու նպատակով անհատի շարժունակությունը սահմանափակող ձեռնաշղթաների եւ ոտնաշղթաների օգտագործումը նվաստացնող է եւ անհատին իջեցնում է կենդանական մակարդակի: Բացի այդ, նման միջոցները հիշեցնում են այն օրերի մասին, երբ այս մայրցամաքի բնակիչները վաճառվում էին որպես ստրուկներ: Շղթայված անձն ի վիճակի չէ հոգալ անձնական հիգիենայի կարիքները, հագուստ փոխել, ինչն առանձնացնում է նրան այլ մարդկանցից. դա ինքնին նվաստացուցիչ է եւ վիրավորում է արժանապատվությունը»:

2 Իրենց ազատությունից զրկված անձանց խոշտանգումներից պաշտպանված լինելու երաշխիքները

Բովանդակություն

26 Իրենց իրավունքների մասին մարդկանց տեղյակ պահելը
27 Ազատազրկման պաշտոնապես ճանաչված վայրերի օգտագործումը եւ գրանցամատյանների պատշաճ վարումը
29 Արտաքին աշխարհի հետ կապից զրկված լինելու պայմաններում (հնկոմունիկադո) ազատազրկումից խուսափելը
30 Ազատազրկման մարդկային պայմանները
34 Հարցաքննություն անցկացնելու սահմանափակումները
35 Փաստաբանի մատչելիությունը եւ փաստաբանի գործառույթների հանդեպ հարգանքը
37 Բժշկին դիմելու հնարավորություն /Բժշկի մատչելիություն
38 Ձերբակալության օրինականությունը վիճարկելու իրավունքը
42 Ազատազրկվածների հատուկ կատեգորիաների համար նախատեսված երաշխիքները
42 Ազատազրկված կանայք
43 Ազատազրկված անչափահասներ
43 Հոգեկան խնդիրներ ունեցող անձինք

2 Իրենց ազատությունից զրկված անձանց խոշտանգումներից պաշտպանված լինելու երաշխիքները

2.1 Այս գլխում նկարագրված են խոշտանգումներից եւ դաժան վերաբերմունքի այլ ձեւերից ազատազրկված անձանց պաշտպանելու միջազգային օրենսդրության մեջ գոյություն ունեցող երաշխիքները:

2.2 Յուրաքանչյուր ոք ազատության եւ անձնական անվտանգության իրավունք ունի, այդ թվում՝ կամայական ձերբակալումից եւ կալանավորումից ազատ լինելու իրավունքը[1]: Երբ պետությունն անձին զրկում է ազատությունից, պարտավոր է հոգալ այդ անձի անվտանգության եւ բարեկեցության մասին: Ազատազրկված անձինք չպետք է ենթարկվեն զրկանքների եւ հարկադրանքի, բացի նրանցից, որոնք բխում են ազատազրկումից[2]: Այս իրավունքները երաշխավորված են Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 7-րդ եւ 10 (1) հոդվածներով, որոնք արգելում են խոշտանգումներն ու դաժան վերաբերմունքը եւ երաշխավորում ազատազրկված անձանց իրավունքները: Այդ երաշխիքները նաեւ ամրագրված են մարդու իրավունքներին առնչվող միջազգային մի շարք այլ պայմանագրերում[3]: Խոշտանգումների արգելքը կիրառվում է բոլոր մարդկանց նկատմամբ, ցանկացած ժամանակ: Պայմանագրերով նախատեսված որոշ իրավունքներ, ինչպիսիք են, օրինակ, կամայական կալանավորման չենթարկվելու իրավունքը, որոշ դեպքերում կարող են սահմանափակվել, ասենք, արտակարգ իրավիճակի պայմաններում: Սակայն նույնիսկ այդ ժամանակ պետք է ապահովվեն խոշտանգումներից պաշտպանված լինելու երաշխիքները, ինչպիսիք են առանց արտաքին աշխարհի հետ կապի (հնկոմունիկադո) ազատազրկման մեջ գտնվելու սահմանափակ ժամկետները[4]:

1 Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 9-րդ հոդված, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդված, Մարդու եւ ժողովրդի իրավունքների աֆրիկյան խարտիայի 6-րդ հոդված, Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի 7-րդ հոդված

2 Մարդու իրավունքների հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն 21, հոդված 10 (1992 թ-ի քառասուն չորսերորդ նստաշրջան), Ընդհանուր մեկնաբանությունների եւ հանձնարարականների ժողովածու, որ ընդունվել է Մարդու իրավունքների պայմանագրային մարմինների կողմից, ՄԱԿ-ի փաստաթուղթ HRI\GEN\1\Rev.1 at 33 (1994), պարբերություն 3

3 Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը, Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի 5-րդ հոդվածը, Մարդու եւ ժողովրդի իրավունքների աֆրիկյան խարտիայի 5-րդ հոդվածը, Երեխայի իրավունքների կոնվենցիայի 37-րդ հոդվածը, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիայի 1-ին հոդվածը, Կանանց հանդեպ բռնության կանխարգելման, բացառման եւ պատժի մասին միջամերիկյան կոնվենցիայի 2-րդ եւ 4-րդ հոդվածներ, Երեխայի բարեկեցության եւ իրավունքների մասին աֆրիկյան խարտիայի XVI հոդված

4 Մարդու իրավունքների հանձնաժողովի Ընդհանուր մեկնաբանություն 29, Արտակարգ իրավիճակներ (հոդված 4), ընդունվել է 1950-րդ ժողովում, 2001 թ-ի հուլիսի 24-ին, պարբերություն 16: Տես նաեւ *Ակսոյը ընդդեմ Թուրքիայի,* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 18-րդ որոշում, 1996-ի դեկտեմբեր, *Բրանիգանը եւ Մաքքրիջը ընդդեմ Միացյալ թագավորության,* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 26-րդ որոշում, 1993 թ-ի մայիս, *Բրոգանը ընդդեմ Միացյալ թագավորության,* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 29-րդ որոշում, 1988 թ-ի նոյեմբեր, «*Habeas Corpus*-ը արտակարգ իրավիճակների դեպքում» խորհրդատվական եզրակացություն OC-8/87, 1987 թ-ի հունվարի 30, Միջամերիկյան դատարանի տարեկան զեկույց, 1987 OAS/Ser.L/V/III.17 doc.13, 1987; եւ «Դատական երաշխիքները արտակարգ իրավիճակներում», Խորհրդատվական եզրակացություն OC-9/87 1987թ-ի հոկտեմբերի 6, Միջամերիկյան դատարանի տարեկան զեկույց, 1988, OAS/Ser.L/V/III.19 doc.13, 1988.

2.3 Անհատները կարող են խոշտանգման կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի ենթարկվելու վտանգի առաջ կանգնել մինչեւ պաշտոնական կալանավորումը եւ մեղադրանքի առաջադրումը[5]: Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեն (ԽԿԿ) ընդգծել է, որ խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի ենթարկվելու առավելագույն վտանգն առաջանում է ազատությունից զրկելուն անմիջապես հետեւող ժամանակահատվածում[6]: Այդ պատճառով ստորեւ շարադրված միջազգային չափանիշները կիրառելի են անձին ազատությունից զրկելու առաջին իսկ պահից:

Իրենց իրավունքների մասին մարդկանց տեղյակ պահելը

2.4 Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի իմանալու ձերբակալության եւ կալանավորման պատճառը: Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 9(1) հոդվածն ասում է. «Յուրաքանչյուր մարդ ունի ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել քմահաճ ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով եւ այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով:» Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 9 (2) հոդվածն ասում է. «Յուրաքանչյուր անձ ձերբակալման ժամանակ պետք է տեղեկացվի ձերբակալության պատճառների եւ ներկայացվող մեղադրանքի մասին»: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը սահմանել է, որ բավարար չէ պարզապես հայտնել ձերբակալված անձին ձերբակալման մասին, անհրաժեշտ են նաեւ պարզաբանումներ ներկայացվող մեղադրանքի էության վերաբերյալ[7]: Նույնիսկ «ազգային անվտանգության հետ կապված դեպքերում», ոստիկանության եւ ազգային անվտանգության ներկայացուցիչները պարտավոր են գրավոր ներկայացնել ձերբակալության պատճառները, որոնք պետք է ներկայացվեն դատարանի քննարկմանը[8]:

2.5 Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ պետք է «ձերբակալված ցանկացած անձին պարզ, ոչ մասնագիտական, նրան հասկանալի լեզվով բացատրվեն իր ձերբակալության հիմնական օրենսդրական եւ փաստացի հիմքերը, որպեսզի, ցանկության դեպքում, այդ անձը կարողանա վիճարկել ձերբակալության

5 Որեւէ ձեւով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուն օգտագործում է հետեւյալ տերմինները. (a) «Ձերբակալություն» նշանակում է անձի ձերբակալում՝ որեւէ իրավախախտում կատարելու կասկածանքով կամ որեւէ մարմնի որոշմամբ, (b) «ձերբակալված անձ» նշանակում է ցանկացած անձ, որն անձնական ազատությունից զրկվել է կատարած իրավախախտման համար դատապարտված չլինելու հետեւանքով, (c) «կալանավորված անձ» նշանակում է ցանկացած անձ, որն անձնական ազատությունից զրկվել է՝ կատարած որեւէ իրավախախտման համար դատապարտվելու հետեւանքով, (d) «ձերբակալում» նշանակում է ձերբակալված անձի վիճակ, որի բնորոշումը բերված է վերը, (e) «կալանք» նշանակում է բանտարկված անձի վիճակ, որի բնորոշումը բերված է վերը, (f) «դատական կամ այլ մարմին բառերը» նշանակում են օրենքին համապատասխան դատական կամ այլ մարմին, որի կարգավիճակն ու դիրքն ապահովում են իրավասության, անաչառության եւ անկախության հնարավոր առավելագույն երաշխիքներ:

6 Խոշտանգումների եւ անմարդկային եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե, *ԽԿԿ Չափանիշներ, ԽԿԿ Ընդհանուր զեկույցի էական հատվածներ*, Եվրոխորհուրդ, 2001թ. հոկտեմբեր, CPT/Inf/E(2002), էջ 12, պարբերություն 41.

7 *Աղոլֆո Գրեշեր Կալդասը ընդդեմ Ուրուգվայի*, Հաղորդում համար 43/1979, (1979 թ-ի հունվարի 11), ՄԱԿ-ի փաստաթուղթ Supp. No. 40 (A/38/40) at 192 (1983)

8 Մարդու իրավունքների հանձնաժողովի եզրափակիչ դիտարկումներ, Սուդան, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add.85 , 1997 թ-ի նոյեմբերի 19, պարբերություն 13

օրինականությունը դատարանում[9]: ԽԿԿ-ն իր հանձնարարականներից մեկում նշել է, որ իր ազատությունից զրկված ցանկացած անձ պետք է տեղեկացվի՝ իր ազատազրկման մասին իր ընտրությամբ ցանկացած անձի հայտնելու, փաստաբան ունենալու, բժշկի, նաեւ իր ընտրությամբ բժշկի մատչելիության իրավունքների մասին: Այս իրավունքները պետք է երաշխավորվեն ձերբակալության առաջին իսկ պահից (այսինքն՝ այն պահից, երբ նրանք պարտավոր են մնալ ոստիկանության ծառայողի հետ)[10]: ԽԿԿ-ն նաեւ առաջարկում է, որ «այդ իրավունքների վերաբերյալ ազատազրկված անձին հուշաթերթիկ տրամադրվի ազատազրկման առաջին իսկ պահից»: Այդ փաստաթուղթը պետք է մատչելի լինի տարբեր լեզուներով: Բացի այդ, ազատազրկված անձը պետք է արձանագրություն ստորագրի իր իրավունքներին տեղեկանալու վերաբերյալ[11]:

2.6 Որեւէ ձեւով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության սկզբունքների ՄԱԿ-ի ժողովածուն նախատեսում է, որ «Ցանկացած անձի, կալանավորման պահին եւ ձերբակալման կամ կալանավորման սկզբում կամ անմիջապես դրանից հետո, կալանավորման, ձերբակալման կամ բանտարկման համար պատասխանատու մարմինը համապատասխանաբար իրազեկ է պահում եւ պարզաբանում նրա իրավունքները եւ թե ինչպես նա կարող է իրականացնել այդ իրավունքները»[12]:

Ազատազրկման պաշտոնապես ճանաչված վայրերի օգտագործումը եւ գրանցամատյանների պատշաճ վարումը

2.7 Մարդու իրավունքների հանձնաժողովը նշել է, որ ազատազրկված անձանց արդյունավետ պաշտպանությունն երաշխավորելու համար անհրաժեշտ են պայմաններ, որոնց համաձայն ազատազրկված անձինք կպահվեն պաշտոնապես ճանաչված ազատազրման վայրերում, նրանց անունները եւ ազատազրկման վայրերի անվանումները, ինչպես նաեւ ձերբակալության համար պատասխանատվություն կրող անձանց անունները կպահվեն գրանցամատյաններում, որոնք մատչելի կլինեն շահագրգիռ անձանց՝ ներառյալ հարազատների եւ բարեկամների համար[13]: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծում է, որ անձի ձերբակալությունն առանց ծանուցման Եվրոպական կոնվենցիայում ամրագրված ազատության եւ պաշտպանված լինելու իրավունքից կամայականորեն զրկելու դեմ երաշխիքների «ամբողջական հերքում է»[14]:

2.8 ԽԿԿ-ն իր հանձնարարականներում նշում է, որ յուրաքանչյուր ազատազրկված անձի համար պետք է գրանցամատյան լինի, որում պետք է արձանագրվեն «ազատազրկման մեջ պահելու բոլոր մանրամասները եւ կիրառված գործողությունները (երբ է տեղի ունեցել ազատազրկումը, պատճառները, երբ է ծանոթացվել իր իրավունքներին, վնասվածքների

9 *Ֆոքս, Քեմբել եւ Հարթլի*, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, գործ համար 18/1989/178/234-236, 1990 թ-ի օգոստոսի 30-ի որոշում, պարբերություն 40

10 ԽԿԿ, /Inf/E (2002) 1, «Հատվածներ 12 -րդ ընդհանուր զեկույցից» , պարբերություն 12, պարբերություն 40 եւ էջ 13, պարբերություն 42

11 Նույն փաստաթղթի էջ 13, պարբերություն 44

12 Սկզբունք 13

13 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն 20, հոդված 7 (1992 թ-ի 44-րդ նստաշրջան), Ընդհանուր մեկնաբանությունների եւ հանձնարարականների ժողովածու, ընդունվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների պայմանագրային մարմինների կողմից, ՄԱԿ, փաստաթուղթ, HRI/GEN/1/Rev.1. at 30 (1994), պարբերություն 11.

14 *Կակիչին ընդդեմ Թուրքիայի*, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 1999 թ-ի հուլիսի 8-ի որոշում, պարբերություն 104

հետքերը, հոգեկան հիվանդությունները եւ այլն, երբ են տեղեկացվել հարազատները, հյուսլատոսարանը, փաստաբանը, երբ են նրանք այցելել, երբ է ազատազրկված անձին սնունդ առաջարկվել, երբ է հարցաքննվել, երբ է տեղափոխվել կամ ազատ արձակվել եւ այլն)»: Հետագայում փաստաբանը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու այդ գրանցամատյաններին եւ արձանագրություններին[15]:

2.9 ՄԱԿ-ի կողմից ընդունված Որեւէ ձեւով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուն փաստում է, որ իշխանությունները ազատազրկված բոլոր անձանց վերաբերյալ պետք է նորացվող պաշտոնական գրանցամատյաններ վարեն եւ պահպանեն ինչպես ամեն մի հաստատությունում, այնպես էլ կենտրոնացված[16]: Գրանցամատյաններում առկա տեղեկությունները պետք է մատչելի լինեն դատարաններին եւ իրավասու այլ մարմիններին, ձերբակալված անձին կամ նրա ընտանիքին[17]: Այդ սկզբունքները նաեւ սահմանում են, որ «Համապատասխան օրենքների եւ կանոնների խստիվ կիրառմանը հետեւելու նպատակով կանոնավոր կերպով կալանավայրեր են այցելում որակյալ եւ փորձառու անձինք, որոնք նշանակվում են իրավասու իշխանության կողմից եւ հաշվետու են նրան: Այդ իշխանությունը տարբեր է այն իշխանություններից, որոնց անմիջական տնօրինության ներքո են գտնվում ձերբակալության կամ բանտարկության վայրերը: Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձն իրավունք ունի ազատորեն եւ լիակատար գաղտնիության պայմաններում շփվելու այն անձանց հետ, որոնք ձերբակալության կամ բանտարկության վայրեր են այցելում… նման վայրերում անվտանգության եւ կարգուկանոնի ապահովման անհրաժեշտ խելամիտ պայմանների պահպանմամբ»[18]:

2.10 Խոշտանգումների գծով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողն իր հանձնարարականներից մեկում նշել է, որ «հարցաքննությունը պետք է տեղի ունենա բացառապես պաշտոնական հաստատություններում, եւ ազատազրկման գաղտնի կամ ոչ պաշտոնական վայրերը պետք է արգելվեն օրենքով: Անձին ազատազրկման գաղտնի կամ ոչ պաշտոնական վայրում պահելը պետք է պատժելի արարք համարվի ցանկացած պաշտոնատար անձի համար, որը դա իրականացնում է: Ազատազրկման ոչ պաշտոնական վայրում անձից ստացված ցանկացած տեղեկություն, որ հետագայում չի հաստատվել այդ անձի կողմից ազատազրկման պաշտոնական վայրում հարցաքննության ընթացքում, դատարանի կողմից չպետք է ընդունվի որպես ապացույց: Ազատազրկված անձի կողմից արված խոստովանական ոչ մի հայտարարություն, բացի հայտարարությունից, որ արվել է դատավորի կամ փաստաբանի ներկայությամբ, չի կարող օգտագործվել դատարանի կողմից որպես ապացույց, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հանդիսանում է ապացույց այն անձանց դեմ, որոնք մեղադրվում են անօրինական ճանապարհով ցուցմունքներ ստանալու մեջ»:[19]

15 ԽԿԿ/ Inf/E (2002) 1, էջ 7, պարբերություն 40
16 Սկզբունք 12
17 Նույն սկզբունքը
18 Սկզբունք 29
19 ՄԱԿ-ի խոշտանգումների գծով հատուկ զեկուցողի զեկույցը, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/56/156, 2001 թ-ի հուլիս, պարբերություն 39(d).

Արտաքին աշխարհի հետ կապից զրկված լինելու պայմաններում (ինկոմունիկադո) ազատազրկումից խուսափելը

2.11 Միջազգային չափանիշներն ուղղակիորեն եւ անվերապահորեն չեն արգելում առանց արտաքին աշխարհի հետ կապի (ինկոմունիկադո) ազատազրկումը: Սակայն միջազգային չափանիշները սահմանում են, որ բժշկի եւ փաստաբանի մատչելիության, որեւէ մեկին ձերբակալության մասին տեղեկացնելու հետաձգումները եւ սահմանափակումները թույլատրելի են միայն բացառիկ հանգամանքների դեպքում եւ շատ կարճ ժամանակով:

2.12 Մարդու իրավունքների հանձնաժողովը հաստատել է, որ արտաքին աշխարհից կտրված լինելու պայմաններում (ինկոմունիկադո) ազատազրկումը նպաստում է խոշտանգումների կիրառմանը[20] եւ ինքնին խախտում է Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի 7-րդ եւ 10-րդ հոդվածները:[21] Հանձնաժողովը փաստել է, որ պետք է մշակվեն ինկոմունիկադո ազատազրկումը բացառող դրույթներ՝ որպես խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի կանխարգելման երաշխիք:[22] Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովը փաստել է, որ ինկոմունիկադո ազատազրկումը չի համապատասխանում մարդու իրավունքների պաշտպանությանը, քանի որ «նպաստավոր պայմաններ է ստեղծում այլ պրակտիկայի, այդ թվում՝ խոշտանգումների համար», ինչպես նաեւ անարդար կերպով պատժում է ձերբակալված անձի ընտանիքին:[23] Միջամերիկյան հանձնաժողովը նաեւ գտնում է, որ հարազատների հետ հանդիպելը «հիմնարար պահանջ է», որը երաշխավորում է ազատազրկված անձի իրավունքների պահպանումը:[24] Հանձնաժողովը փաստել է, որ տեսակցություններ ունենալու իրավունքը պետք է կիրառվի ազատազրկված բոլոր անձանց նկատմամբ՝ անկախ նրանց մեղսագրվող կամ իրենց կողմից կատարված հանցագործության բնույթից: Հանձնաժողովը նաեւ նշել է, որ կարճ եւ հազվադեպ տեսակցությունների ցուցումներն ու ազատազրկվածներին հեռավոր հիմնարկներ ուղարկելը կամայական պատժամիջոցներ են[25]:

2.13 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը հայտարարել է, որ «արտաքին աշխարհի հետ կապից կտրված պայմաններում ազատազրկման երկարաձգումը կարող է նպաստել խոշտանգումների իրականացմանը եւ ինքնին կարող է հանդիսանալ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք»[26]:

20 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի նախնական դիտարկումներ, Պերու, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add.67, պարբերություններ 18 եւ 24, 1996 թ-ի հուլիսի 25

21 *Ալբերտ Վամախ Մուկոնգը ընդդեմ Կամերունի,* (458/1991), 1994 թ-ի հուլիսի 21, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/51/D/458/1991, *Էլ Մեգրեսին ընդդեմ Լիբանանյան Արաբական Ջամահիրիայի*, (440/1990), 1994, մարտի 23, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/50/D/440/1990

22 Մարդու իրավունքների հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն 20 , պարբերություն11

23 Միջամերիկյան հանձնաժողով, Տասը տարվա գործունեություն 1971-1981, at 318, տես Բոլիվիայում մարդու իրավունքների իրավիճակի մասին զեկույցը, OEA/Ser.L/V/II.53, փաստաթուղթ 6, rev.2, 1981 թ-ի հուլիսի 1, էջ 41- 42; եւ Միջամերիկյան հանձնաժողովի տարեկան զեկույց, 1982 - 1983, OEA/Ser.L/V/II/61, փաստաթուղթ 22, rev.1; Միջամերիկյան հանձնաժողովի տարեկան զեկույց, 1983 - 1984, OEA/Ser.L/V/II/63, փաստաթուղթ22.

24 *Տիկին X-ն ընդդեմ Արգենտինայի,* գործ 10.506, զեկույց համար 38/96, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարան, OEA/Ser.L/V/II.95 Doc. 7 rev. at 50 (1997)

25 Միջամերիկյան հանձնաժողով, տարեկան զեկույց, 1983-1984, OEA/Ser.L/V/II/63, doc.10, Ուրուգվայ, Կուբայում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ յոթերորդ զեկույց, 1983, OEA/Ser.L/V/II.61, doc.29, rev.1.

26 Բանաձեւ 1997/38, պարբերություն 20

Խոշտանգումների գծով հատուկ զեկուցողը փաստել է, որ «խոշտանգումները ավելի հաճախակի են կիրառվում արտաքին աշխարհի հետ կտրված լինելու պայմաններում: Նման ազատազրկումը պետք է անօրինական ճանաչել, եւ արտաքին աշխարհի հետ կտրված լինելու պայմաններում ազատազրկված անձինք պետք է անհապաղ ազատ արձակվեն»[27]:

2.14 Որեւէ ձեւով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության սկզբունքների ՄԱԿ-ի ժողովածուն սահմանում է, որ կալանավորված, ձերբակալված կամ բանտարկված ցանկացած անձ իրավունք ունի ինքնուրույն կամ պաշտոնատար անձի միջոցով հարազատներին տեղեկացնել իր գտնվելու վայրի մասին:[28] Տեղեկությունները պետք է ներառեն կալանավորման կամ ձերբակալության փաստը եւ այդ անձի գտնվելու վայրը: Եթե ձերբակալված կամ կալանավորված անձը տեղափոխվել է այլ հաստատություն, այդ մասին պետք է հայտնեն նրա հարազատներին: Հարազատին կամ բարեկամին տեղեկացնելը պետք է իրականացվի անհապաղ կամ առնվազն առանց ձգձգումների:[29]

2.15 Օտարերկրացիներն իրավունք ունեն տեղյակ պահել իրենց հյուպատոսարաններին կամ դիվանագիտական ներկայացուցիչներին[30]: Եթե նրանք փախստականներ են կամ գտնվում են ներպետական կազմակերպությունների պաշտպանության ներքո, ապա նրանք իրավասու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ տեսակցելու եւ հաղորդակցվելու իրավունք ունեն: [31]

Ազատազրկման մարդկային պայմանները

2.16 Մարդու իրավունքների հանձնաժողովը փաստել է, որ ազատազրկվածների նկատմամբ նրանց ներհատուկ արժանապատվության հանդեպ հարգանքով վերաբերվելու պարտավորությունը համընդհանուր կիրառման հիմնարար չափանիշ է: Պետությունները չեն կարող արդարացնել անմարդկային վերաբերմունքը նյութական կամ ֆինանսական միջոցների պակասով: Պետությունները պարտավոր են բոլոր ձերբակալվածներին եւ կալանավորվածներին ապահովել իրենց հիմնական կարիքները բավարարելու բոլոր ծառայություններով[32]: Համապատասխան սնունդ եւ հանգստի ու ժամանցի սենյակներ ապահովելու ձախողումը Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի 10-րդ հոդվածի խախտում է, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պայմանավորված է հատուկ հանգամանքների առկայությամբ[33]: Հանձնաժողովն ընդգծել է, որ երկարատեւ մեկուսի բանտարկությունը կարող է դիտարկվել որպես Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածով նախատեսված խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի արգելքի խախտում[34]:

27 Խոշտանգումների գծով հատուկ զեկոցողի զեկույց, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/56/156, 2001 թ-ի հուլիս, պարբերություն 39(f).

28 Սկզբունք 16

29 Սկզբունք 15

30 Որեւէ ձեւով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի 16(2) սկզբունքը: Տես նաեւ Լա Գրանդ (*Գերմանիան ընդդեմ ԱՄՆ-ի*) Միջազգային դատարան, 2000 թ-ի հունիսի 27-ի որոշում http://www.icj-cij.org

31 Որեւէ ձեւով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի 16(2) սկզբունքը

32 *Քելլին ընդդեմ Յամայկայի,* (237/1987), ապրիլի 8, 1991, Մարդու իրավունքների հանձնաժողովի զեկույց (A/46/40), 1991, *Պարկանին ընդդեմ Հունգարիայի* (410/1990), 27 հուլիսի, 1992 Մարդու իրավունքների հանձնաժողովի զեկույց (A/47/40), 1992

33 *Քելլին ընդդեմ Յամայկայի*

34 Մարդու իրավունքների հանձնաժողովի Ընդհանուր մեկնաբանություն 20, 6-րդ պարբերություն

2.17 Մարդու իրավունքների հանձնաժողովը ցուցումներ է ուղղել պետություններին, պահանջելով, որպեսզի վերջիններն երաշխավորեն ազատազրկման բոլոր վայրերից այն բոլոր սարքավորումների հեռացումը, որոնցով հնարավոր է իրականացնել խոշտանգումներ կամ դաժան վերաբերմունք[35]: Խոշտանգումների դեմ հանձնաժողովը հանձնարարական է ուղղել պետություններին, որպեսզի նրանք արգելեն էլեկտրաշոկային գոտիների եւ զսպաթոռների կիրառումը որպես ազատազրկված անձանց զսպման միջոց, քանի որ դրանց կիրառումը «գրեթե միշտ» բերում է այնպիսի սրրակտիկայի, որը համարվում է դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ[36]:

2.18 Որեւէ ձեւով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության սկզբունքների ՄԱԿ-ի ժողովածուն փաստում է, որ ցանկացած կալանավորված կամ բանտարկված անձ իրավունք ունի իր հանդեպ վերաբերմունքի բարելավում պահանջել կամ իր հանդեպ վերաբերմունքի մասին բողոք ներկայացնել: Իշխանությունները պետք է անմիջապես արձագանքեն նման բողոքին եւ, եթե բողոքը կամ պահանջը մերժվում է, այն կարող է ներկայացվել դատարան կամ այլ ատյան[37]:

2.19 Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները սահմանում են, որ զսպման միջոցները, ինչպիսիք են ձեռնաշղթաները, շղթաները, ոտնաշղթաները եւ զսպաշապիկները, ձերբակալված կամ կալանավորված անձի նկատմամբ կարող են կիրառվել միայն անվտանգության նկատառումներով եւ ոչ որպես պատժի միջոց[38]: Զսպամիջոցները կարող են կիրառվել միայն այնքան ժամանակ, որքան դա խիստ անհրաժեշտ է: Զսպամիջոցների կիրառման մեթոդների եւ տեսակների մասին որոշումը պետք է կայացնի բանտային կենտրոնական վարչությունը[39]: Ազատազրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժ կարելի է կիրառել այն դեպքերում, երբ դա ծայրաստիճան անհրաժեշտ է հիմնարկի անվտանգության եւ կարգի պահպանման համար, փախուստի փորձերի դեպքերում, երբ առկա է օրինական պահանջին չենթարկվելու փաստ կամ վտանգված է անձնական անվտանգությունը: Ցանկացած պարագայում ուժ կարող է կիրառվել միայն այն ժամանակ, երբ ոչ ուժային մեթոդները բավարար չեն հանդիսացել[40]:

2.20 ԽԿԿ-ն ընդգծել է, որ «այն կալանավորվածը, որի նկատմամբ ուժային միջոցներ են կիրառվել, իրավունք ունի անհապաղ հետազոտվել եւ անհրաժեշտության դեպքում ստանալ բժշկական օգնություն»: Այն հազվադեպ դեպքերում, երբ անհրաժեշտ է կիրառել զսպման ֆիզիկական միջոցներ, կալանավորված անձը պետք է գտնվի մշտական եւ համապատասխան վերահսկողության տակ: Զսպման միջոցները պետք է հեռացվեն հնարավորինս արագ, եւ դրանք չեն կարող երբեւէ կիրառվել որպես պատիժ: Ուժի կիրառման ցանկացած դեպք պետք է գրանցվի հատուկ մատյաններում[41]:

35 Նույն փաստաթուղթ, պարբերություն 11
36 Խոշտանգումների դեմ հանձնաժողովի եզրակացություններ եւ հանձնարարականներ, ԱՄՆ, 2000 թ-ի մայիսի 15, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/55/44, պարբերություն 180
37 Սկզբունք 33
38 Կանոն 33
39 Կանոն 34
40 Կանոն 54
41 ԽԿԿ/Inf/E(2002) 1, p. 19 պարբերություն, 53(2)

2.21 Իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից ուժի եւ հրազենի օգտագործման հիմնարար սկզբունքների համաձայն, ուժ կարող է կիրառվել միայն այն դեպքերում, երբ այլ միջոցները բավարար չեն եղել[42], պետք է համապատասխան օգնություն ցուցաբերվի վնասը նվազեցնելու նպատակով եւ պետք է ապահովվի հնարավորինս արագ բուժօգնություն[43]: Իրավապահ մարմինների ծառայողների կողմից հրազեն կարող է կիրառվել միայն որպես մահվան կամ լուրջ վնասվածքի անմիջական վտանգի դեմ պաշտպանություն, որպես կյանքի լուրջ վտանգ առաջացնող հանցագործության կանխարգելում, նման վտանգ ներկայացնող անձին ձերբակալելու կամ փախուստը կանխելու համար եւ միայն այն դեպքերում, երբ նվազ ծայրահեղ միջոցները բավարար չեն: Ոչնչացմանն ուղղված հրազենի կիրառումը հնարավոր է միայն, եթե դա անխուսափելի է եւ ծայրաստիճան անհրաժեշտ՝ կյանքը պաշտպանելու համար[44]:

2.22 Բանտարկյալների հետ վարվեցողության հիմնական սկզբունքները սահմանում են մեկուսի բանտարկությունը որպես պատիժ արգելելու կամ դրա կիրառումը սահմանափակելու միջոցներ ձեռնարկելու պետությունների պարտավորությունը:[45] Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններն ընդգծում են, որ «մարմնական պատիժները, մութ խցում պահելը եւ բոլոր դաժան, անմարդկային կամ նվաստացնող պատիժների տեսակները պետք է ամբողջապես արգելվեն որպես պատիժ կարգապահական զանցանքների համար:[46] ԽԿԿ-ն ընդգծել է, որ մեկուսի բանտարկությունը կարող է «չափազանց վնասակար հետեւանքներ ունենալ նման պատժին ենթարկված անձանց համար», եւ որոշ հանգամանքներում մեկուսի բանտարկությունը կարող է «որակվել որպես անմարդկային եւ դաժան վերաբերմունք», եւ ցանկացած դեպքում պետք է կիրառվի հնարավորինս կարճ ժամանակահատվածում:[47]

42 Սկզբունք 4
43 Սկզբունք 5
44 Սկզբունք 9
45 Բանտարկյալների հետ վարվեցողության հիմնական սկզբունքներ, սկզբունք 7
46 Կանոն 31
47 ԽԿԿ/Inf/E(2002)1 էջ 20, պարբերություն 56(2)

Հարդինգն ընդդեմ բանտերի պետի եւ Անոր, Սուրբ Լուսիա, Գերագույն դատարան, 2000թ. հուլիսի 31, (2000) 3 CHRLD 128 (Սուրբ Լուսիա)

Հ-ն, որ դատապարտվել էր հրազենի կիրառմամբ հանցագործություն կատարելու համար, երկարատեւ մեկուսի բանտարկության մեջ է պահվել խիստ ռեժիմային գոտում, որտեղ պահվում էին նաեւ մահապարտները: Մեկուսացման ընթացքում նրան 10 ամիս եւ 15 օր շարունակաբար պահել են ոտնաշղթաներով, իսկ դրանից հետո ոտնաշղթաները օգտագործում էին ամեն անգամ, երբ նա գնում էր բաղնիք կամ հանդիպում իր փաստաբանին: Նրան չէին թույլ տալիս ամենօրյա մաքուր օդին վարժությունների դուրս գալ, արեւի լույսը նրա համար հասանելի չէր եւ նրան տեսակցություններ թույլ չէին տալիս: Նա երկու անգամ աստմայի սրացում է ունեցել, ենթադրաբար երկու ամիս շարունակ իր խցի թաց գետնին քնելու հետեւանքով: Հ-ն համարում է, որ այս գործողությունները խախտել են Սուրբ Լուսիայի սահմանադրական արգելքը խոշտանգումների, անմարդկային եւ նվաստացնող պատժի վերաբերյալ, ինչպես նաեւ Բանտային կանոնները, որոնցով արգելվում է մեխանիկական զսպման միջոցների կիրառումը՝ բացառությամբ չափազանց սահմանափակ դեպքերի: Պատասխանողները չեն ժխտել մեխանիկական զսպման միջոցների շարունակական օգտագործումը, սակայն վիճարկել են այն փաստը, որ դա դարձել է կոճերի եւ ոտնաթաթերի լուրջ վնասվածքների պատճառ: Դատարանը հաշվի է առել Իռլանդիան ընդդեմ Միացյալ թագավորության գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից տրված խոշտանգում, անմարդկային եւ նվաստացնող պատիժ սահմանումները: Դատարանը նաեւ փաստել է, որ «Բանտային կանոնների ոչ մի կետում նշված չէ, որ կարելի է ոտնաշղթաներ օգտագործել վտանգավոր կամ սրտենցիալ վտանգավոր բանտարկյալի նկատմամբ երկար ժամանակով: Այս դեպքում, Հ-ի նկատմամբ ոտնաշղթաների երկարատեւ կիրառումը ամեն օր 24 ժամով, ներառյալ, երբ նա լողանում էր, սնունդ ընդունում եւ քնում, հանդիսանում է կոպիտ եւ լուրջ հարձակում նրա անձի եւ հոգեկան վիճակի վրա, ինչը միանշանակ Բանտային կանոնների խախտում է եւ խոշտանգում: Բացի այդ, Հ-ի երկարատեւ մեկուսի բանտարկությունը, առանց ֆիզիկական վարժություններ անելու հնարավորության եւ բնական լույսի մատչելիության, անհիմն պատիժ է, անմարդկային է եւ հակասում է քաղաքակիրթ ցանկացած հասարակության արժեքներին: Ըստ Բանտային կանոնների, մեկուսի բանտարկությունը սովորաբար չի թույլատրվում կիրառել որպես պատիժ եւ կարող է թույլատրված լինել միայն ժամանակավորապես՝ Վերահսկողություն իրականացնող դատավորների խորհրդի կողմից: Ընդ որում, այդ որոշումը պետք է ամեն ամիս վերանայվի, հաշվի առնելով հիմնավոր պատճառները, ինչպիսիք են՝ անվտանգությունը, կարգապահությունը կամ արդարադատության իրականացումը: Տվյալ գործում այդ պահանջներից ոչ մեկը չէր կատարվել»:

2.23 Խոշտանգումների դեմ կոնվենցիայի 11-րդ հոդվածը պահանջում է, որ պետությունները պարբերաբար վերանայեն հարցաքննության կանոնները, հրահանգները, մեթոդները եւ կիրառությունը, ինչպես նաեւ ձերբակալված, կալանավորված եւ դատապարտված անձանց պահելու պայմանները եւ վերաբերմունքը նրանց հանդեպ: Մարդու իրավունքների հանձնաժողովը փաստել է, որ «հարցաքննության կանոնների, հրահանգների, մեթոդների եւ կիրառության, ինչպես նաեւ ձերբակալված, կալանավորված եւ դատապարտված անձանց պահելու պայմանների եւ նրանց հանդեպ վերաբերմունքի պարբերաբար վերանայումը խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի կանխարգելման արդյունավետ միջոց է»:[48] Հանձնաժողովը նաեւ նշել է, որ «14(3)(g) հոդվածի տեքստը՝ ոչ ոք պարտադրված չէ իր դեմ ցուցմունքներ տալ կամ իրեն մեղավոր ճանաչել, պետք է հասկանալ որպես մեղադրյալի նկատմամբ հետաքննությունն իրականացնող մարմնի կողմից՝ մեղավոր ճանաչելուն ուղղված ուղղակի կամ անուղղակի մարմնական կամ հոգեբանական ճնշման բացակայություն: A fortiori, անթույլատրելի է խոստովանություն կորզելու նպատակով մեղադրյալի հետ վարվել Դաշնագրի 7-րդ հոդվածով արգելված ձեւով»: [49]

2.24 ԽԿԿ-ն գտնում է, որ պետք է հարցաքննության անցկացման հստակ կանոններ եւ ցուցումներ գոյություն ունենան: Ձերբակալված անձը պետք է տեղեկություններ ունենա հարցաքննությանը գտնվող բոլոր անձանց մասին: Անհրաժեշտ է մշակել նաեւ հստակ կանոններ հարցաքննության թույլատրելի տեւողության, հանգստի ժամանակահատվածների ու ընդմիջումների, հարցաքննության անցկացման վայրերի վերաբերյալ, արդյոք ձերբակալված անձը պետք է կանգնած լինի հարցաքննության ընթացքում, ինչպես նաեւ թմրանյութերի եւ ալկոհոլի ազդեցության տակ գտնվող անձանց հարցաքննելու կարգը: Անհրաժեշտ է գրանցել հարցաքննության սկզբի եւ ավարտի ժամերը, հարցաքննությանը ձերբակալվածների կողմից ներկայացված պահանջները եւ հարցաքննությանը ներկա գտնվող անձանց ցուցակը: [50]

2.25 Դատախազների դերի վերաբերյալ ՄԱԿ-ի ուղենիշներում ասվում է. «Երբ դատախազների տրամադրության տակ կասկածյալների դեմ այնպիսի ապացույցներ են, որոնք, դատախազների գիտությամբ կամ ողջամիտ դատողությամբ, ձեռք են բերվել մարդու իրավունքների կոպիտ խախտում հանդիսացող անօրինական մեթոդներով, հատկապես ներառելով խոշտանգումներ կամ դաժան անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ կամ այլ չարաշահումներ մարդու իրավունքների նկատմամբ, նրանք պետք է հրաժարվեն նման ապացույցներն օգտագործել որեւէ այլ անձի դեմ, քան նրանց, ովքեր նման մեթոդներ են կիրառել կամ համապատասխան կերպով տեղեկացնեն դատարանին, որպեսզի անհրաժեշտ բոլոր քայլերը ձեռնարկվեն դատական պատասխանատվության ենթարկելու այդ մեթոդներն օգտագործած անձանց»:[51]

48 Մարդու իրավունքների հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն 20, պարբերություն 11

49 *Քելլին ընդդեմ Յամայկայի* /253/1987/, 1991, ապրիլի 8, Մարդու իրավունքների հանձնաժողովի զեկույց, (A/46/40), 1991, *Կոնտերիսը ընդդեմ Ուրուգվայի*, (139/1983), 17 հուլիսի, 1985, 2 Sel. Dec. 168, , Էստրելլան ընդդեմ Ուրուգվայի ,(74/1980), 29 մարտի 1983, 2 Sel. Dec 93

50 ԽԿԿ/Inf/E(2002) 1, էջ 7, պարբերություն 39

51 Ուղենիշ 16

2.26 Որեւէ ձեւով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության սկզբունքների ՄԱԿ-ի ժողովածուն ասում է, որ ոչ ոք չպետք է հարկադրվի «խոստովանության կամ որեւէ այլ ինքնամերկացման կամ ցանկացած այլ անձի դեմ ցուցմունքներ տալու... Ոչ մի ձերբակալված անձ հարցաքննության ժամանակ չպետք է բռնության, սպառնալիքների կամ հետաքննության այնպիսի եղանակների ենթարկվի, որոնք խախտում են որոշումներ ընդունելու կամ դատողություններ անելու նրա ընդունակությունը»:[52]

2.27 ՄԱԿ-ի Խոշտանգումների գծով հատուկ զեկուցողն ասել է, որ «բոլոր հարցաքննությունները պետք է ձայնա- եւ տեսագրվեն, հարցաքննությանը ներկա գտնվող բոլոր անձանց վերաբերյալ տեղեկությունները նույնպես պետք է գրանցվեն: Չարձանագրված հարցաքննությունների քննարկումը դատաքննության ընթացքում պետք է բացառվի»:[53]

Փաստաբանի մատչելիությունը եւ փաստաբանի գործառույթների հանդեպ հարգանքը

2.28 Ձերբակալված կամ կալանավորված անձանց հիմնական իրավունքներից է իրավաբանական խորհրդատվություն ստանալու հնարավորությունը, որ նախատեսված է Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածով, ինչպես նաեւ արդար դատավարության իրավունքին առնչվող այլ գործիքներով: Փաստաբանի անհապաղ ներգրավումը հատկապես կարեւոր է խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի կանխարգելման տեսանկյունից: Մարդու իրավունքների հանձնաժողովն ընդգծել է, որ ձերբակալվածի պաշտպանությունը պահանջում է բժշկի եւ փաստաբանի անհապաղ ներգրավում[54] եւ «որ ձերբակալված եւ կալանավորված բոլոր անձինք պետք է հնարավորություն ունենան դիմելու փաստաբանին»՝ իրենց իրավունքների ավելի հիմնարար պաշտպանության նպատակով:[55] Փաստաբանը պետք է հնարավորություն ունենա մեղադրյալի հետ հաղորդակցվել այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են այդ հաղորդակցման լիարժեք գաղտնիությունը:[56] Իշխանությունները պետք է նաեւ երաշխավորեն, որպեսզի փաստաբանները խորհրդատվություն իրականացնեն եւ իրենց պաշտպանյալի շահերը ներկայացնեն պրոֆեսիոնալ չափանիշների համապատասխան, ազատ լինեն սպառնալիքներից, խոչընդոտներից, ոտնձգություններից եւ անպատեհ միջամտություններից: [57]

2.29 Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մտահոգություն է հայտնել, որ երկարատեւ ձերբակալության ընթացքում իրավաբանական խորհրդատվություն չտրամադրելը կարող է խախտել արդար դատաքննության իրավունքը:[58] Դատարանը նաեւ

52 Սկզբունք 21

53 Խոշտանգումների գծով հատուկ զեկուցողի զեկույց, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/56/156, 2001-ի հուլիս, պարբերություն 39(f)

54 Մարդու իրավունքների հանձնաժողովի Ընդհանուր մեկնաբանություն 20, պարբերություն 11

55 Մարդու իրավունքների հանձնաժողովի եզրափակիչ դիտարկումներ՝ Վրաստան, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add74, ապրիլի 9, 1997, պարբերություն 28

56 Մարդու իրավունքների հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն 13, հոդված 14 (1984 թ-ի 22-րդ նստաշրջան), Ընդհանուր հանձնարարականների եւ մեկնաբանությունների ժողովածու, ընդունվել է Մարդու իրավունքների մասին պայմանագրի շրջանակներում, ՄԱԿ-ի փաստաթուղթ HRI\GEN\\1\Rev.1 at 14 (1994), պարբերություն 9

57 Նույն փաստաթուղթը

58 *Մուռեյն ընդդեմ Միացյալ թագավորության,* ՄԻԵԴ, 1996 թ-ի փետրվարի 8-ի վճիռ

նշել էր, որ երկարատեւ ձերբակալության[59] ժամանակ փաստաբան ունենալու հնարավորությունը «չարաշահումներից պաշտպանված լինելու հիմնական երաշխիքներից է», եւ որ երկարատեւ ձերբակալության ընթացքում նման երաշխիքների բացակայությունը ձերբակալված անձին դնում է «նրան ձերբակալողների գթասրտությունից» բացարձակ կախվածության մեջ:[60]

2.30 Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովը համարում է, որ մեղքը հարկադրաբար խոստովանելուց պաշտպանված եւ խոշտանգումներից ազատ լինելու իրավունքը երաշխավորելու համար անձը պետք է հարցաքննվի բացառապես իր փաստաբանի կամ դատավորի ներկայությամբ:[61] Հանձնաժողովը նաեւ եզրակացրել է, որ պաշտպան ունենալու իրավունքը կիրառելի է առաջին իսկ հարցաքննության ժամանակ:[62] ԽԿԿ-ն գտնում է, որ այս իրավունքը պետք է իրականացվի ձերբակալության առաջին իսկ պահից, այսինքն՝ այն պահից, երբ անձը պարտավորվում է մնալ ոստիկանի իրավասության տակ, եւ դա սկզբունքորեն ներառում է «փաստաբանի ներկայությամբ հարցաքննվելու անձի իրավունքը»:[63] Այն դեպքերում, երբ կոնկրետ փաստաբանի ներգրավումը անհնարին է անվտանգության նկատառումներով, ԽԿԿ-ն առաջարկում է ներգրավել վստահելի փաստաբանի, որը չի վտանգի քրեական հետաքննության շահերը: [64]

2.31 Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքները նշում են, որ «Ձերբակալված, կալանավորված կամ բանտարկված անձինք պետք է փաստաբանի անհապաղ մատչելիություն ունենան[65], եւ այդ անձանց տրամադրվում են պատշաճ հնարավորություններ, ժամանակ ու պայմաններ փաստաբանի այցելության, նրա հետ առնչվելու ու խորհրդակցելու համար՝ առանց ձգձգման, միջամտության կամ գրաքննության եւ լիակատար գաղտնիության պահպանմամբ: Նման խորհրդատվություններ կարող են անցկացվել իրավապահ մարմինների պաշտոնակատար անձանց ներկայությամբ, բայց առանց նրանց կողմից լսվելու հնարավորության»[66]:

2.32 Սկզբունքները նաեւ սահմանում են, որ պետությունը պարտավոր է ապահովել , որպեսզի փաստաբանները

ա) կարողանան իրականացնել իրենց մասնագիտական պարտականությունները սպառնալիքներից, խոչընդոտներից, ահաբեկումներից կամ անարդարացի միջամտություններից զերծ մթնոլորտում, բ) կարողանան ուղեւորություններ կատարել եւ իրենց պաշտպանյալի հետ անարգել խորհրդակցվել երկրի ներսում եւ նրա սահմաններից դուրս, գ) դատական հետապնդման կամ վարչական, տնտեսական կամ այլ պատժամիջոցների չենթարկվեն՝ ընդունված մասնագիտական պարտականություններին, նորմերին ու բարոյականությանը համապատասխան ցանկացած գործողության համար, ինչպես նաեւ չենթարկվեն նման հետապնդման եւ պատժամիջոցների սպառնալիքի:[67] Այն դեպքերում, երբ իրենց

59 *Բրանիգանը եւ Մաքքրիջընն ընդդեմ Միացյալ թագավորության*, ՄԻԵԴ, 1993 թ-ի մայիսի 26 վճիռ, պարբերություն 66

60 *Ակույն ընդդեմ Թուրքիայի*, ՄԻԵԴ, 1996 թ-ի դեկտեմբերի 18-ի վճիռ, պարբերություն 83

61 Նիկարագուայի ազգությամբ միսկիտոներով բնակեցված հատվածում մարդու իրավունքների վերաբերյալ իրավիճակի մասին զեկույց OEA Ser.L/V/11.62, doc.10, rev. 3, 1983, at 100

62 Միջամերիկյան հանձնաժողովի տարեկան զեկույց, 1985-1986, OEA/Ser.L/V/II.68, փաստաթուղթ. 8 rev. 1, 1986, էջ 154, Էլ Սալվադոր

63 ԽԿԿ/Inf/E(2002) 1, էջ 6, պարբերություն 38

64 Նույն փաստաթղթի 9-րդ էջ, պարբերություն 15

65 Սկզբունք 7

66 Սկզբունք 8

67 Սկզբունք 16

գործառույթների կատարման հետեւանքով սպառնալիք է ծագում փաստաբանների անվտանգության համար, իշխանությունները պետք է ապահովեն նրանց պատշաճ պաշտպանությունը:[68] Իրենց գործառույթների կատարման արդյունքում փաստաբանները չեն նույնացվում իրենց պաշտպանյալների կամ նրանց շահերի հետ:[69]

2.33 Դատավորների եւ փաստաբանների անկախության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողն իր հանձնարարականներից մեկում նշել է, որ «ցանկալի է, որ փաստաբանը ներկա գտնվի ոստիկանական հարցաքննությանը որպես մեղադրյալի իրավունքների պաշտպանության երաշխիք: Փաստաբանի բացակայությունը մեծացնում է չարաշահումների հնարավորությունը»:[70] Խոշտանգումների հարցերով հատուկ զեկուցողը փաստել է, որ «բացի այն դեպքերից, երբ փաստաբանի անհապաղ ներգրավումը կարող է անվտանգության հետ կապված խնդիրներ առաջացնել եւ երբ փաստաբանի հետ հաղորդակցության սահմանափակումը հաստատված է դատական կարգով, մնացյալ դեպքերում անհրաժեշտ է տեսակցություն ապահովել անկախ փաստաբանի հետ, որին, օրինակ, կտրամադրի փաստաբանների միությունը»: [71]

Բժշկին դիմելու հնարավորություն /Բժշկի մատչելիություն

2.34 Մարդու իրավունքների հանձնաժողովը նշել է, որ ձերբակալվածների պաշտպանության սկզբունքներից ելնելով անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ձերբակալված անձ հնարավորություն ունենա արագ եւ պարբերաբար դիմելու բժշկի:[72]

2.35 Որեւէ ձեւով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության սկզբունքների ՄԱԿ-ի ժողովածուն սահմանում է. «Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձին հնարավորություն է ընձեռվում պատշաճ բուժզննում անցնել ձերբակալության կամ բանտարկության վայր ժամանելուց հետո ամենակարճ ժամկետում. հետագայում նրան բուժսպասարկում եւ բուժում է տրամադրվում ամեն անգամ, երբ դրա անհրաժեշտությունը ծագում է: Բուժսպասարկումն ու բուժումը տրամադրվում են անվճար»:[73] Ձերբակալված անձինք իրավունք ունեն պահանջելու կրկնակի բժշկական եզրակացություն իրենց ընտրած բժշկից եւ ստանալու իրենց առողջական վիճակի վերաբերյալ արձանագրություններ:[74] Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները սահմանում են, որ հատուկ բուժման կարիք ունեցող ձերբակալված կամ դատապարտված անձը պետք է տեղափոխվի մասնագիտացված հաստատություն կամ քաղաքացիական հիվանդանոց բուժում ստանալու համար:[75]

2.36 ԽԿԿ-ն ընդգծել է, որ նույնիսկ այն դեպքում, երբ ազատազրկված անձի բուժման համար պետության կողմից բժիշկ է նախատեսված, ցանկալի է, որ ազատազրկված անձինք հնարավորություն ունենան դիմելու իրենց ընտրած բժշկին:[76]

68 Սկզբունք 17
69 Սկզբունք 18
70 Հատուկ զեկուցողի զեկույցը Միացյալ թագավորություն կատարած առաքելության վերաբերյալ , ՄԱԿ-ի փաստաթուղթ. E/CN.4/1998/39/add.4, պարբերություն 47, 5 մարտի 1998
71 Խոշտանգումների գծով հատուկ զեկուցողի զեկույց, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/56/156, 2001-ի հուլիս, պարբերություն 39(f)Մարդու իրավունքների հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն 20, պարբերություն 11
72 Մարդու իրավունքների հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն 20, պարբերություն 11
73 Սկզբունք 24
74 Սկզբունք 25
75 Նվազագույն ստանդարտ կանոնների Կանոն 22(2)
76 ԽԿԿ/Inf/E (2002) 1, էջ 6, պարբերություն 36 եւ հղում 1

2.37 ՄԱԿ-ի Խոշտանգումների հարցերով հատուկ զեկուցողը իր հանձնարարականներից մեկում նշել է. «Կալանավորման ժամանակ անձը պետք է բուժզննություն անցնի, ընդ որում՝ բուժզննությունը պետք է պարբերաբար կրկնվի եւ պարտադիր կատարվի ազատազրկման այլ վայր տեղափոխելու դեպքում»:[77] Նա նաեւ նշել է, որ «կառավարությունը եւ բժշկական միությունները պետք է խիստ միջոցներ ձեռնարկեն ուղղակիորեն կամ անուղղակի կերպով խոշտանգումներին մասնակցություն ունեցած բուժանձնակազմի դեմ: Այդ արգելքը պետք է տարածվի նաեւ այն դեպքերի վրա, երբ բուժզննություն է անցկացվում՝ պարզելու ազատազրկված անձի «մասնակցելու հնարավորությունը հետագա հարցաքննությանը», խոշտանգումներ կամ դաժան վերաբերմունք ներառող գործողություններին, ինչպես նաեւ դեպքերը, երբ խոշտանգված անձին բուժօգնություն է ցուցաբերվում՝ հետագա բռնություններին դիմանալու համար:[78]

Ձերբակալության օրինականությունը վիճարկելու իրավունքը

2.38 Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի 9 (3) հոդվածը ասում է. «Քրեական մեղադրանքով ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձ շտապ կարգով հասցվում է դատավորի կամ պաշտոնակատար այլ անձի մոտ, որին օրենքով վերապահված է դատական իշխանության իրականացման իրավունքը, եւ որն ունի պատշաճ ժամկետում դատական քննություն վարելու կամ ազատելու իրավունք»: Մարդու իրավունքների հանձնաժողովը նշել է, որ ազատազրկման օրինականությունը վիճարկելու իրավունքը կիրառվում է ազատազրկված բոլոր անձանց նկատմամբ եւ ոչ միայն նրանց, որոնք կասկածվում են քրեական հանցագործություն կատարելու մեջ:[79]

2.39 Այս խնդիրը արժանացել է Մարդու իրավունքների հանձնաժողովի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ Մարդու եւ ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովի լայնածավալ քննարկմանը: Այդ կազմակերպությունները սահմանել են, որ իշխանական համապատասխան մարմնի դերում պետք է հանդես գա պաշտոնապես նշանակված դատարանը, որն իրավասու է ազատ արձակելու որոշում կայացնել:[80] Ընդ որում, այդ մարմինը պետք է որոշումներ կայացնի առանց ուշացման, անաչառ լինի եւ կախում չունենա այն կառույցից, որն ազատազրկելու որոշումներ է կայացնում:[81]

77 Խոշտանգումների հարցերով հատուկ զեկուցողի զեկույցը, ՄԱԿ-ի փաստաթուղթ, A/56/156, հուլիս, 2001, պարբերություն 39(f)

78 Նույն փաստաթուղթ, պարբերություն 39(f)

79 Մարդու իրավունքների հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն 8, հոդված 9 (66-րդ նստաշրջան , 1982), Ընդհանուր մեկնաբանությունների եւ հանձնարարականների ժողովածու, որ ընդունվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների պայմանագրային մարմինների կողմից, ՄԱԿ-ի փաստաթուղթ HRI\GEN\1\Rev.1 at 8 (1994), պարբերություն 1

80 *Բրինկատն ընդդեմ Իտալիայի*, ՄԻԵԴ, 1992 թ-ի նոյեմբերի 26-ի վճիռ, *Դե Յոնգը, Բայեքը եւ Վան դեն Բրինկը*, ՄԻԵԴ, 1994—ի մայիսի 22-ի վճիռ, 77 Ser. A 23, Մարդու իրավունքների հանձնաժողովի եզրափակիչ դիտարկումներ, Բելառուս, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add.86, 19 նոյեմբերի 1997, պարբերություն 10, *Մարդու իրավունքների պաշտպանության ուղղված աֆրիկյան հանդիպում ընդդեմ Զամբիայի* (71/92), Աֆրիկյան հանձնաժողովի10-րդ տարեկան զեկույցը, 1996 -1997, ACHPR/RPT/10-րդ

81 *Վուալանեն ընդդեմ Ֆինլանդիայի*, (265/1987), 1989թ. Ապրիլի 7, Մարդու իրավունքների հանձնաժողովի զեկույցը, (A/44/40), 1989; *Թորեսեն ընդդեմ Ֆինլանդիայի*, (291/1988), 1990թ. Ապրիլի 2, Մարդու իրավունքների հանձնաժողովի զեկույց vol II, (A/45/40), 1990, պարբերություն. 7; *Չահալն ընդդեմ Միացյալ թագավորության* 1996թ. նոյեմբերի 15, ՄԻԵԴ-ի վճիռ; *Նավառան ընդդեմ Ֆրանսիայի*, ՄԻԵԴ, 23 նոյեմբերի 1993-ի վճիռ

2.40 Ազատազրկման որոշումը վիճարկելու իրավունքը, առաջին հերթին հանդիսանալով կամայական ազատազրկումից պաշտպանված լինելու երաշխիք, նաեւ այլ իրավունքների պաշտպանության միջոց է: Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը փաստել է, որ թեպետ *habeas corpus* եւ *amparo* ընթացակարգերը հիմնականում նախատեսված են սահմանափակվող ազատության իրավունքի պաշտպանության համար, դրանք նաեւ կարեւոր գործիք են ազատազրկված անձանց այլ իրավունքները պաշտպանելու համար, ինչպիսիք են կյանքի անբեկանելի իրավունքը եւ ազատությունը խոշտանգումներից: Այդպիսով, Դատարանը վճռել է, որ դատական պաշտպանության *habeas corpus* եւ *amparo* միջոցներով պաշտպանվելու իրավունքը երբեւե չի կարող դադարեցվել, քանի որ դրանք պաշտպանվելու կարեւոր միջոցներ են այն իրավունքների պաշտպանության հարցում, որոնց սահմանափակումն արգելված է:[82]

2.41 Միջամերիկյան հանձնաժողովը սահմանել է, որ եթե դատարանը պաշտոնապես տեղեկացված չէ կալանավորման մասին կամ տեղեկացվում է ուշացումով, կալանավորված անձի իրավունքները պաշտպանված չեն: Հանձնաժողովը նաեւ նշել է, որ նման իրավիճակները հանգեցնում են այլ չարաշահումների, վնասում դատարանի հանդեպ հարգանքին եւ բերում անօրինականության ինստիտուցիոնալացմանը:[83] Աֆրիկյան հանձնաժողովը փաստել է, որ երկրում ապօրինի գտնվող օտարերկրացի կալանավորված անձանց ազգային դատարաններում բողոքարկելու հնարավորությունից զրկելը հակասում է Աֆրի-կյան խարտիային:[84] Եվրոպական դատարանը նշել է, որ կալանավորման օրինականության վերահսկողությունը պետք է երաշխավորի, որ ազատազրկումն իրականացվի ազգային օրենսդրության համապատասխան եւ ազատազրկման հիմքերը քույլատրված լինեն ազգային օրենսդրությամբ:[85] Կալանավորումը պետք է համապատասխանի ազգային օրենսդրության նյութաիրավական եւ ընթացակարգային նորմերին: Դատարանները պետք է երաշխավորեն, որ, միջազգային չափանիշների համաձայն, կալանավորումը չի եղել կամայական:[86] Մարդու իրավունքների հանձնաժողովը եւ Մարդու իրավունքների եվրո-պական դատարանը նշել են, որ անհապաղ դատարան դիմելու հնարավորությունը կարեւորագույն երաշխիք է խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի դեմ նույնիսկ արտակարգ իրավիճակներում:[87]

82 «Habeas Corpus-ը արտակարգ իրավիճակներում» , Խորհրդատվական կարծիք, 1987-ի հունվարի 30 OC-8/87, Միջամերիկյան դատարանի տարեկան զեկույց, 1988, OAS/Ser.L/V/III.19 doc.13, 1988 Միջամերիկյան հանձնաժողով, Սուրինամում մարդու իրավունքների իրավիճակին նվիրված երկրորդ զեկույց, OEA/Ser. L/V/II.66, doc. 21 rev. 1, 1985, at 24

83 Միջամերիկյան հանձնաժողով, Սուրինամում մարդու իրավունքների իրավիճակին նվիրված երկրորդ զեկույց, OEA/Ser. L/V/II.66, doc. 21 rev. 1, 1985, at 24

84 *Մարդու իրավունքների պաշտպանության ուղղված աֆրիկյան հանձնախում ընդդեմ Զամբիայի* (71/92), Աֆրիկյան հանձնաժողովի10-րդ տարեկան զեկույցը, 1996 -1997, ACHPR/RPT/10-րդ

85 *Նավառան ընդդեմ Ֆրանսիայի*, 1993 թ-ի նոյեմբերի 23-ի ՄԻԵԴ վճիռ, պարբերություն 26

86 Նույն փաստաթուղթը

87 Մարդու իրավունքների հանձնաժողովի ընդհանուր մեկնաբանություն No. 29, Արտակարգ իրավիճակներ (art. 4), ընդունվել է 1950-րդ նիստին, 2001թ.-ի հուլիսի 24-ին, պարբերություն. 16; *Ակոյն ընդդեմ Թուրքիայի*, ՄԻԵԴ 1996, App. No. 21987/93

2.42 ԽԿԿ-ն նշել է իր հանձնարարականներում, որ «ոստիկանության կողմից ձերբակալված բոլոր անձինք, որոնց հանդեպ նախնական կալանք է կիրառվում, պետք է ֆիզիկապես բերվեն դատավորի մոտ, որն էլ պետք է որոշում կայացնի... Անձին դատավորի մոտ բերելը դաժան վերաբերմունքի ենթարկված կասկածյալին ժամանակին բողոք ներկայացնելու հնարավորություն կտա: Նույնիսկ բողոքի բացակայության դեպքում, դատավորը հնարավորություն կունենա ժամանակին քայլեր ձեռնարկել, եթե առկա են դաժան վերաբերմունքի մասին վկայող հետքեր (օրինակ, տեսանելի վնասվածքներ, անձի ընդհանուր տեսքը եւ պահելաձեւը)»:[88]

Պետություն ընդդեմ Վիլյամսի եւ մյուսների, [1995] 2 LRC 103, Հարավային Աֆրիկայի Սահմանադրական դատարան, 1995 (Հարավային Աֆրիկա)

Տվյալ գործի բողոքարկուները վեց անչափահաս տղաներ էին, որոնք դատապարտվել էին «միջին ուղղման»՝ բարակ ճիպոտի մի քանի հարվածի տեսքով: Դատարանը պետք է քննարկեր, թե արդյոք անչափահասներին հարվածելու տեսքով պատիժը համապատասխանում է Հարավային Աֆրիկայի Սահմանադրությանը:

Դատարանը փաստել էր, որ պատիժ սահմանելիս պետությունը պետք է առաջնորդվի որոշակի չափանիշներով, որոնք արտացոլում են Սահմանադրության մեջ ամրագրված արժեքները: Դատարանները կարեւոր դեր ունեն «մարդու իրավունքների ճանաչման վրա հիմնված» նոր մշակույթի ձեւավորման եւ սատարելու հարցում: Նոր կարգի հաստատման հետեւանքներից մեկն այն է, որ հին օրենքները եւ նորմերը չեն կարող ընկալվել որպես ինքնաբերաբար գոյություն ունեցող, դրանք շարունակական վերագնահատման առարկա պետք է լինեն՝ համապատասխանեցվելով Սահմանադրության դրույթներին:

Դատարանը նաեւ որոշել էր, որ «Ոչ մի ակնհայտ օգուտ չի ապացուցվել, որ կարդարացներ անչափահասների նկատմամբ հարվածների տեսքով պատիժը: Նաեւ ցույց չէր տրվել, որ գոյություն չունեն պատժի այլ տեսակներ, որ կարող էին համապատասխանել տվյալ պատիժը կիրառելու նպատակներին: Ինչպես նաեւ չէր ապացուցվել, որ կիրառված պատիժն արդյունավետ զսպման միջոց է: Այն ավելի շուտ կրել է կոպիտ եւ նվաստացնող, քան վերականգնող բնույթ: Ավելին, այն անհրաժեշտ չէր: Հարավային Աֆրիկայի արդարադատության համակարգը բավարար պատժատեսակներ է նախատեսում, եւ հարվածներին դիմելն անիմաստ էր: Մենք գրեթե 21-րդ դար ենք մտել եւ անչափահասներին ծեծի ենթարկելը դաժան, անմարդկային եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք է»:

Մարմնական պատժի օրինականությունը քննարկելիս դատարանն ուսումնասիրել է «դաժան», «անմարդկային» եւ «նվաստացնող» սահմանումները միջազգային իրավագիտության մեջ՝ մարմնական պատժի օրինականության տեսանկյունից: Դատարանը հայտարարել է, որ «Թեպետ այդ հասկացությունների վերջնական սահմանումները պետք է արտացոլեն մեր սեփական փորձն ու Հարավային Աֆրիկայի հասարակության ներկա վիճակը, անկասկած, կարելի է արժեքավոր կարծիքներ եւ ընկալումներ գտնել այս հասկացությունների վերաբերյալ միջազգային

88 ԽԿԿ/Inf/E (2002) 1, էջ 14, պարբերություն 45

հասարակական եւ նախադեպային իրավունքն ուսումնասիրելիս»: Դատարանը նշել է, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովն անհրաժեշտ չի գտել արգելված գործողությունների ցանկի մշակումը կամ տարբեր տեսակի պատիժների կամ վերաբերմունքի միջեւ հստակ տարբերությունների սահմանումը. այդ տարբերությունները կախված են կիրառված վերաբերմունքի բնույթից, նպատակից եւ դաժանությունից: Դատարանը նաեւ նշել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տարբերում է հասկացությունները, ամենից առաջ, պատճառված տառապանքի աստիճանի հիման վրա: Դատարանը մեջ է բերել Եվրոպական դատարանի *Թայրերն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործի վճիռը. «Դատական կարգով սահմանված մարմնական պատժի բնույթն այն է, որ այդ դեպքում ներգրավվում է մեկ այլ մարդ՝ մյուսին ֆիզիկական բռնության ենթարկելու մեջ: Ավելին, դա օրինականացված բռնություն է, որ տվյալ դեպքում թույլատրված է օրենքով, սահմանվել է պետության դատական իշխանության կողմից եւ իրականացվել պետության ոստիկանական իշխանությունների կողմից... Այս բռնության օրինականացված բնույթն ընդգծված է պատժի իրականացման օրինական ընթացակարգի մթնոլորտով եւ այն փաստով, որ պատիժ իրականացնողները ծանոթ չէին հանցագործներին»:

Դատարանը հանգել է հետեւյալ եզրակացության. «Ցավով փաստում ենք, որ 1980-ականների կեսերից ի վեր մեր հասարակությունը ենթարկվել է բռնությունների աննախադեպ ալիքի: Ցանկացած տեսակի վեճեր՝ քաղաքական, արդյունաբերական, թե անձնական, հաճախ ավարտվում են բռնություններով: Ավելին, նույն ժամանակահատվածում արձանագրվել է այնպիսի հանցագործությունների աճ, ինչպիսիք են զինված ավազակային հարձակումները եւ սպանությունները: Քաղաքական բանակցությունների գործընթացը, որ սկսվեց Սահմանադրության ընդունմամբ, բռնության մերժում է: Այս համատեքստում, կասկած չի կարող լինել, որ անչափահասների հանդեպ բռնության օրինականացված կիրառումը, որ թույլատրված է Օրենքի 294-րդ հոդվածով, հանդիսանում է դաժան, անմարդկային եւ նվաստացնող պատիժ: Կառավարությունը հատուկ պատասխանատվություն է կրում Սահմանադրության մեջ ամրագրված արժեքների պահպանման եւ պաշտպանության համար: Եթե պետությունը չգտի այդ արժեքների ճանաչմանը, Սահմանադրությունը կխարխլվի: Բռնություններն օրինականացնող իշխանությունների մշակույթը հակասում է Սահմանադրությամբ ամրագրված արժեքներին»:

Ազատազրկվածների հատուկ կատեգորիաների համար նախատեսված երաշխիքները

2.43 Ազատազրկման մեջ գտնվող բոլոր անձինք հավասար վերաբերմունքի իրավունք ունեն՝ առանց ռասայի, գույնի, սեռի, սեռական կողմնորոշման, լեզվի, դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, սեփականության, դասակարգի կամ այլ կարգավիճակի հիման վրա խտրականության: Սակայն առանձին ուշադրություն պետք է հատկացնել ազատազրկման մեջ գտնվող անձանց հատուկ կատեգորիաներին, որոնց շարքում են կանայք, անչափահասները, տարեցները, օտարերկրացիները, ազգային փոքրամասնությունները, տարբեր սեռական կողմնորոշում ունեցող, որեւէ հիվանդությամբ տառապող, հոգեկան կամ սովորելու հետ կապված խնդիրներ ունեցող մարդիկ եւ մարդկանց խմբերը, որոնք ազատազրկման մեջ գտնվելիս կարող են հատկապես զգայուն լինել: Որոշ խմբերը կարող են խտրականության վրա հիմնված չարաշահումների թիրախ լինել այն հաստատությունների անձնակազմի կողմից, որտեղ նրանք պահվում են: Նրանք կարող են չարաշահումների ենթարկվել նաեւ ազատազրկված այլ անձանց կողմից:

Ազատազրկված կանայք

2.44 Մարդու իրավունքների հանձնաժողովը մտահոգություն է հայտնել, որ որոշ դեպքերում արական սեռի բանտային ծառայողները կարող են մուտք գործել կանանց համար նախատեսված ազատազրկման վայրեր, ինչը հանգեցնում է կանանց հանդեպ սեռական բռնությունների եւ նրանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության խախտման լուրջ մեղադրանքների:[89] Հանձնաժողովը նաեւ նշել է, որ իգական սեռի անձնակազմ պետք է ներկա գտնվի նաեւ կալանավորված ու ձերբակալված կանանց հարցաքննության ժամանակ, եւ ֆիզիկական զննությունը պետք է իրականացնեն բացառապես անձնակազմի իգական սեռի ներկայացուցիչները:[90]

2.45 Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները նշում են, որ ազատազրկման մեջ գտնվող կանանց վերահսկողությունը պետք է իրականացվի իգական սեռի անձնակազմի կողմից:[91] Հնարավորության դեպքում կանանց եւ տղամարդկանց պետք է պահել առանձին հիմնարկներում: Եթե կանայք եւ տղամարդիկ պահվում են նույն հիմնարկում, ապա կանանց պետք է տեղավորել կատարելապես առանձին մասնաշենքերում: Արական սեռի անձնակազմը չպետք է մուտք գործի կանանց համար նախատեսված գոտի՝ առանց իգական սեռի անձնակազմի ուղեկցության:[92] Այն հաստատությունները, որտեղ պահվում են կանայք, պետք է ապահովված լինեն հղի կանանց եւ ծննդկաններին խնամելու հատուկ մասնաշենքերով:[93] Այնտեղ, որտեղ հնարավոր է, հարկ է հոգալ, որ ծննդաբերությունը լինի ոչ թե բանտային, այլ սովորական հիվանդանոցում:[94]

89 Մարդու իրավունքների հանձնաժողովի դիտարկում, ԱՄՆ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add.50, 1995 թ-ի ապրիլի 7, պարբերություն.20

90 Մարդու իրավունքների հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն 16, (23-րդ նստաշրջան, 1988), Ընդհանուր մեկնաբանությունների եւ հանձնարարականների ժողովածու, որ ընդունվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների պայմանագրային մարմինների կողմից, ՄԱԿ-ի փաստաթուղթ HRI\GEN\1\Rev.1 at 21 (1994), պարբերություն 8

91 Նվազագույն ստանդարտ կանոններ 8(a) եւ 53

92 Նույն տեղը

93 Կանոն 23

94 Նույն տեղը

Խոշտանգումների գծով հատուկ զեկուցողը նշել է, որ պետությունները պարտավոր են գենդերային խնդիրների վերաբերյալ հատուկ դասընթացներով ապահովել դատական եւ իրավապահ մարմինների, ինչպես նաեւ պետական այլ կառույցների ներկայացուցիչներին:[95]

Ազատազրկված անչափահասներ

2.46 Երեխաների նախնական կալանքի վերաբերյալ հատուկ պարտավորությունները ամրագրված են Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում: Կոնվենցիան կիրառելի է մինչեւ 18 տարեկան երեխաների նկատմամբ, որոնք արդարադատության բոլոր համակարգերում սովորաբար դասվում են անչափահասների շարքին: 37-րդ հոդվածը շեշտում է, որ երեխայի կալանավորումը, լինի դա նախնական կալանք, թե արգելանքի որեւե այլ տեսակ, պետք է կիրառվի որպես ծայրահեղ միջոց եւ օգտագործվի հնարավորինս կարճ ժամանակի ընթացքում: Այն պահանջում է, որ ազատազրկման մեջ գտնվող երեխաների կարիքներին հատուկ ուշադրություն դարձվի, եւ որ նրանք անջատ պահվեն մեծերից, բացառությամբ այն դեպքերի, երբ համարվում է, որ անչափահասի շահերից ելնելով նրան ավելի լավ է պահել մեծերի հետ: 39-րդ հոդվածը պետություններին պարտավորեցնում է նաեւ նպաստել ֆիզիկական ու հոգեբանական վերականգնմանը եւ խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի զոհ դարձած, ինչպես նաեւ անտեսված եւ չարաշահումների զոհ դարձած երեխայի սոցիալական ինտեգրմանը:

2.47 ԽԿԿ-ն որոշ առանձնահատուկ երաշխիքներ է սահմանել երեխաներին դաժան վերաբերմունքից պաշտպանելու համար: ԽԿԿ-ն ընդգծել է, որ ձերբակալվելուց հետո, հատկապես սկզբնական շրջանում, խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի վտանգը առավելագույնն է: Հետեւաբար կարեւոր է, որ ազատազրկված բոլոր անձինք (այդ թվում՝ անչափահասները) ոստիկանության կողմից ձերբակալվելու առաջին իսկ պահից իրավունք ունենան իրենց ազգականին կամ որեւէ երրորդ անձի հայտնելու իրենց ազատազրկման փաստի մասին, ինչպես նաեւ հնարավորություն ունենան դիմելու փաստաբանի ու բժշկի օգնությանը: Բացի նշված երաշխիքներից եւ դրանց հետ մեկտեղ, որոշ իրավական համակարգեր պնդում են, որ անչափահասներին ներհատուկ անպաշտպանության պատճառով պետք է լրացուցիչ նախազգուշական միջոցներ ձեռք առնել: Դա ենթադրում է ոստիկանական ծառայողների պաշտոնական պարտականություն, որի համաձայն նրանք համապատասխան անձանց պետք է հայտնեն անչափահասի ձերբակալման մասին (անկախ այն բանից, դիմել է անչափահասը այդպիսի խնդրանքով, թե ոչ): Կարող են լինել նաեւ դեպքեր, երբ ոստիկանները իրավունք չունենան հարցաքննել անչափահասին առանց համապատասխան անձի եւ/կամ փաստաբանի ներկայության:[96]

Հոգեկան խնդիրներ ունեցող անձինք

2.48 Հոգեկան հիվանդ անձանց պաշտպանության եւ հոգեկան առողջության խնամքի սկզբունքները փաստում են, որ «Հոգեկան խնդիրներ ունեցող բոլոր անձինք կամ նրանք, ովքեր համարվում են այդպիսին, պետք է արժանանան մարդկային վերաբերմունքի, որը հիմնված է նրանց անձնական ամբողջականությունը եւ մարդկային արժանապատվությունը հարգելու վրա»:[97] «Հոգեկան հիվանդություններով տառապող անձինք կամ նրանք, ովքեր համարվում են այդպիսին, իրավունք ունեն պաշտպանված լինել տնտեսական, սեռական

95 ՄԱԿ-ի Խոշտանգումների գծով հատուկ զեկուցողի զեկույցը, ՄԱԿ-ի փաստաթուղթ, E/CN.4/1995/34, էջ 8
96 ԽԿԿ/Inf/E (2002) 1, էջ 57, պարբերություն 23
97 Սկզբունք 2

կամ շահագործման այլ ձեւերից, մարմնական կամ այլ չարաշահումներից եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից»։[98]

2.49 Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները նշում են, որ հոգեկան խնդիրներ ունեցող անձինք չպետք է պահվեն բանտերում եւ «պետք է հսկողության տակ գտնվեն ու համապատասխան բուժում ստանան մասնագիտացված հաստատություններում՝ բժշկական վերահսկման տակ»։[99]

2.50 ԽԿԿ-ն սահմանել է, որ «Հոգեկան հիվանդություն ունեցող բանտարկյալը պետք է պահվի եւ բուժում ստանա հիվանդանոցային պայմաններում, որտեղ առկա են համապատասխան սարքավորումներ եւ մասնագետների անձնակազմ։ Այդ հաստատությունը պետք է քաղաքացիական հոգեբուժարան լինի կամ մասնագիտացված հոգեբուժական հաստատություն բանտային համակարգում»։[100] Հոգեկան անհավասարակշիռ եւ ագրեսիվ վարքագիծ ունեցող բանտարկյալի բուժումը պետք է իրականացվի խիստ հսկողության տակ՝ ապահովելով նրա խնամքը։ Թեպետ հանգստացնող դեղամիջոցները որոշ դեպքերում կիրառելի են, ֆիզիկական զսպման միջոցները պետք է չափազանց հազվադեպ կիրառվեն, եւ պետք է առկա լինի դրանք կիրառելու բժշկի թույլատվությունը։ Այդ միջոցների կիրառումը պետք է դադարեցվի առաջին իսկ հնարավորության դեպքում եւ երբեք չկիրառվի որպես պատիժ։ Զսպման միջոցների կիրառման բոլոր դեպքերը պետք է գրանցվեն հատուկ մատյաններում։[101]

Դ.Կ. Բասուն ընդդեմ Արեւմտյան Բենգալիայի. Աշոկ Կ. Ջոնն ընդդեմ Ուտար Պրաշեդ նահանգի, Հնդկաստան, Գերագույն դատարան, 1996 (1997) 1 SCC 416, AIR 1997 SC 610; (1996) 2 CHRLD 86 (Հնդկաստան)

Այս գործը ծագել է գրանցված ոչ քաղաքական կազմակերպության բողոքի հիման վրա, որ ներկայացվել է Հնդկաստանի Գերագույն դատարանի նախագահին։ Դատարանը վճռել էր, որ, չնայած անձի իրավունքների պաշտպանության սահմանադրական եւ ընթացակարգային երաշխիքների առկայությանը, նկատելի են այդ իրավունքների շարունակական ոտնահարման օրինակներ։ Դատարանը նաեւ նշել էր, որ խոշտանգումների կիրառման եւ ձերբակալության ժամանակ մահվան դեպքերի հետ կապված հանցագործությունների հետապնդումը խոչընդոտվում է հիմնավոր կասկածից դուրս գտնվող ապացույցներին չափազանցված հակվածության պատճառով։ Դատարանը փաստում էր, որ այդպիսով անտեսվում են իրականությունն ու գործին առնչվող հանգամանքները, եւ գործը հաճախ ավարտվում է դատական սխալներով։ Դատարանը խորհրդարանի ուշադրությունը հրավիրել էր ապացույցներ ձեռք բերելու կանոններում անհապաղ լրացումներ կատարելու անհրաժեշտությանը, երբ դա վերաբերում է ձերբակալության ընթացքում բռնություններ կիրառելու համար իրավապահ մարմինների ծառայողներին պատասխանատվության ենթարկելուն։ Մասնավորապես նկատի են ունեցել Հնդկաստանի օրենսդրական

98 Սկզբունք 3
99 Նվազագույն ստանդարտ կանոններ, պարբերություն 82
100 ԽԿԿ/Inf/E (2002) 1, էջ 33, պարբերություն 43
101 Նույն փաստաթուղթը, էջ 33, պարբերություն 44

հանձնաժողովի 113-րդ զեկույցում տեղ գտած հանձնարարականները, որոնք վերաբերում են ապացույցների պարտականությունը տեղափոխելուն, ներմուծելով ձերբակալության ընթացքում բռնության կանխավարկածը այն դեպքում, երբ ապացույցներ կան, որ ձերբակալված անձը վնասվածքներ է ստացել անազատության մեջ գտնվելու ժամանակ, երաշխավորելով, որ դատարանը կքննարկի գործի բոլոր հանգամանքները:

Դատարանը հայտարարել էր, որ ի լրացումն վերը նշված օրենսդրական եւ սահմանադրական պահանջների, օգտակար եւ արդյունավետ կլինի ձերբակալման եւ կալանավորման բոլոր դեպքերի միաժամանակյա գրանցման եւ տեղեկացման համապատասխան մեխանիզմի ստեղծումը, ինչը կնպաստի թափանցիկության եւ պատասխանատվության բարձրացմանը: Դատարանը փաստել էր, որ մինչեւ իրավական դրույթների ուժի մեջ մտնելը, որպես կանխարգելման միջոց, ձերբակալման եւ կալանավորման բոլոր դեպքերում պետք է կատարվեն հետեւյալ պահանջները.

(i) ձերբակալությունը եւ հարցաքննությունը իրականացնող ոստիկանության ծառայողները պարտավոր են կրել ճշգրիտ, տեսանելի եւ հստակ պիտակներ, որտեղ նշված է նրանց անունը եւ պաշտոնը եւ այն մանրամասները, որոնք պետք է նշվեն գրանցամատյաններում,

(ii) ձերբակալություն իրականացնող ոստիկանը պարտավոր է կազմել ձերբակալության արձանագրությունը, որտեղ պետք է նշվի ձերբակալության ամսաթիվը եւ ժամը: Արձանագրությունը պետք է հաստատվի առնվազն մեկ վկայի ներկայությամբ (ձերբակալված անձի հարազատի կամ հարգանք վայելող անձնավորության) եւ ստորագրվի ձերբակալված անձի կողմից,

(iii) ձերբակալված անձի մեկ բարեկամ կամ հարազատ (կամ մեկ այլ անձ, որ հայտնի է ձերբակալվածին եւ մտահոգված է նրա վիճակով) հնարավորինս շուտ պետք է տեղեկացվի ձերբակալման եւ կալանավորման մասին,

(iv) եթե ձերբակալված անձի բարեկամը կամ հարազատը ապրում է այն քաղաքից կամ շրջանից դուրս, որտեղ պահվում է ձերբակալվածը, ապա նա ոստիկանության կողմից պետք է տեղեկացվի ձերբակալման ժամի, վայրի եւ հիմնարկի մասին ձերբակալումից հետո 8-ից 12 ժամվա ընթացքում,

(v) ձերբակալված անձը պետք է տեղեկացվի իր այս իրավունքի մասին ձերբակալումից ու կալանավորումից անմիջապես հետո,

(vi) ձերբակալման վայրում պետք է համապատասխան գրանցում արվի անձի ձերբակալության մասին, ներառյալ տեղեկացված բարեկամի անունը եւ այն ծառայողի անունը, որի հիմնարկում գտնվում է ձերբակալված անձը,

(vii) ձերբակալված անձի պահանջի հիման վրա նա պետք է ձերբակալության պահին վնասվածքների առկայության զննություն անցնի եւ նրան պետք է տրամադրվի զննման եզրակացության պատճենը, որը ստորագրված է ձերբակալված անձի եւ ոստիկանի կողմից,

(viii) ձերբակալված անձը պետք է բուժզննություն անցնի 48 ժամը մեկ՝ հաստատված բժշկի կողմից,

(ix) ձերբակալության վերաբերյալ բոլոր փաստաթղթերի պատճենները պետք է ուղարկվեն համապատասխան տեղական դատական մարմին՝ նրա գործին կցելու նպատակով,

(x) ձերբակալված անձը կարող է տեսակցել իր փաստաբանի հետ հարցաքննության ընթացքում, թեպետ փաստաբանը կարող է ներկա չգտնվել հարցաքննության ողջ ընթացքում,

(xi) վերահսկողության սենյակներ պետք է ստեղծվեն ոստիկանության բոլոր բաժիններում եւ կենտրոնակայաններում, որոնց, ձերբակալությունից ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, կտրամադրվի ձերբակալության մասին տեղեկություններ, որն էլ պետք է տեղադրվի տեսանելի տեղում գտնվող հայտարարության տախտակների վրա,

(xii) Այս պահանջները լրացնում են գոյություն ունեցող երաշխիքները եւ չեն նվազեցնում այս հարցի վերաբերյալ դատարանների կողմից մշակված այլ ցուցումները եւ որոշումները: Դրանք կիրառելի են նաեւ պետական այլ մարմինների համար, որոնք իրավասու են ձերբակալել եւ հարցաքննել մարդկանց: Տվյալ պահանջները պետք է անվերապահորեն կատարվեն, չկատարելու դեպքում պետք է հետեւի պատասխանատվություն ծառայողական զանցանքի կամ դատարանի որոշումների հանդեպ անհարգալից վերաբերմունքի համար:

Դատարանը նաեւ որոշել էր, որ հիմնարար իրավունքների ոտնահարման դեպքերում դատարանը չի կարող սահմանափակվել միայն հայտարարություններով, այն պետք է ընթացք տա գործին եւ սահմանի փոխհատուցում, ընդ որում ոչ թե որպես քաղաքացիական հայցի, այլ հասարակական իրավունքի իրավասության սահմաններում իր քաղաքացու կյանքի հիմնարար իրավունքը չպաշտպանած պետության կողմից իրավական պարտավորության չկատարման հետեւանքով հասցված վնասի փոխհատուցում սահմանելով: Միայն իրավախախտին պատժելը չի կարող համապատասխան աջակցություն տալ տուժողի ընտանիքին, եւ հասցված վնասի դիմաց փոխհատուցման վերաբերյալ քաղաքացիական հայցը բարդ եւ ծանր դատական գործընթաց է: Այդ իսկ պատճառով, կյանքի իրավունքի ոտնահարման դիմաց դրամական փոխհատուցումը օգտակար եւ, որոշ դեպքերում, միակ արդյունավետ միջոցն է զոհված տուժողի ընտանիքի անդամների համար, որը, հնարավոր է, ընտանիքի կերակրողն էր: Նման իրավունքների ոտնահարման գործողություններ կատարած պետական ծառայողների գործողությունների համար պետության պատասխանատվությունը ընդունված է գրեթե բոլոր իրավական համակարգերում:

Փոխհատուցումը գնահատելիս շեշտը պետք է դրվի ավելի շուտ հատուցման, այլ ոչ պատժի վրա: Հանցագործության համար համապատասխան պատժի սահմանումը (անկախ փոխհատուցումից) պետք է մնա քրեական դատարանների իրավասության տակ, ինչը պետք է իրականացնի ցանկացած իրավական պետություն: Հասարակական իրավունքի շրջանակներում փոխհատուցման սահմանումը չպետք է վնասի ցանկացած այլ հայցերի բավարարմանը, որոնք օրենքով նախատեսված են տուժողի (կամ նրա իրավահաջորդի) համար եւ վերաբերում են նույն գործին: Փոխհատուցման չափը յուրաքանչյուր գործում կախված է փաստերից, եւ հնարավոր չէ մեկ հստակ բանաձեւ մշակել: Դատարանի կողմից սահմանված (պետության կողմից վճարվող) փոխհատուցման չափը, որ նախատեսված է խախտումների դեպքում, կարող է որոշվել այն գումարով, որը կարող է տրամադրվել հայցվորին որպես վնասի փոխհատուցում՝ քաղաքացիական հայցի ներկայացման դեպքում: 3. Դատավորների եւ դատախազների դերը ձերբակալվածներին եւ կասկածյալներին

3 Դատավորների եւ դատախազների դերը ձերբակալվածներին եւ կասկածյալներին խոշտանգումներից պաշտպանելու գործում

Բովանդակություն

50 Դատավորների դերը
51 Դատախազների դերը
51 Երաշխիքները նախնական կալանքի ընթացքում
54 Հարցաքննություններ
55 Անկախ վերահսկողությունը
58 Ազատազրկման պայմանները
60 Դատական մարմնի առաջ հայտնվելը
61 Իրավաբանական օգնություն
61 Ապացույցների թույլատրելիությունը
62 Վկաների հարցաքննությունը
64 Արտաքսման դեպքում պաշտպանելու պարտավորությունը

3 Դատավորների եւ դատախազների դերը ձերբակալվածներին եւ կասկածյալներին խոշտանգումներից պաշտպանելու գործում

3.1 Մարդու իրավունքներին առնչվող միջազգային օրենսդրությունը պետություններից պահանջում է պարբերաբար վերանայել հարցաքննության կանոնները, մեթոդները եւ կիրառումը, ինչպես նաեւ ձերբակալության, կալանավորման կամ բանտարկության ենթարկված անձանց ազատազրկման պայմանները եւ նրանց նկատմամբ վերաբերմունքը՝ որպես խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի կանխարգելման արդյունավետ միջոց:[1] Պետությունները նաեւ պարտավորված են հետաքննել ազատազրկված անձանց բողոքները՝ դաժան վերաբերմունքի վերաբերյալ եւ ստեղծել ազատազրկվածների վերահսկողության անկախ մեխանիզմներ:[2]

3.2 Այս գլուխը կենտրոնանում է ազատազրկված անձանց խոշտանգումներից եւ դաժան վերաբերմունքի այլ ձեւերից պաշտպանելու գործում դատավորների եւ դատախազների դերի վրա: Մասնավորապես, անդրադառնում է այն խնդրին, թե ինչպես պետք է կիրառվեն երկրորդ գլխում սահմանված երաշխիքները: Այստեղ ներկայացված են պրակտիկ խորհուրդներ, թե ինչպես կարող են դատավորները եւ դատախազները համոզվել, որ իրենց ներկայացված ազատազրկված անձը չի ենթարկվել խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի արգելված այլ ձեւերի: Այստեղ նաեւ ընդգծվում է դատախազների պարտավորությունը երաշխավորելու, որ քրեական գործով քննության ընթացքում ստացված ապացույցները ձեռք են բերվել օրենքի սահմաններում, եւ որ այդ ընթացքում խոշտանգումներին եւ այլ դաժան վերաբերմունքին չենթարկվելու կասկածյալի հիմնարար իրավունքը չի ոտնահարվել: Նման վերաբերմունքի վտանգը շատ ավելի մեծ է, եթե իրավական համակարգը դատավճիռ կայացնելիս հիմնականում եւ զգալիորեն հիմնվում է խոստովանության եւ նախնական կալանքի ժամանակ ստացված ապացույցների վրա:

3.3 Իրավական տարբեր համակարգերում դատավորները եւ դատախազները տարբեր գործառույթներ են իրականացնում եւ նրանց դերը կարող է տարբերվել (a) ապացույցների թույլատրելիությունը որոշելու, (b) վկային հարցաքննելու եւ (c) գործն ամփոփելու հարցերում: Դատավորների եւ դատախազների գործողությունների ազատությունը իրենց գործառույթների իրականացման ընթացքում մասնակիորեն կախված կլինի այն իրավական համակարգից, որում վերջիններս գործում են: Օրինակ, քաղաքացիական կամ ընդհանուր իրավունքի համակարգերում, քրեական արդարադատությունը կարող է հետեւել կամ ինկվիզիցիոն կամ մրցակցային մոդելներին: Դատավարությունները նույնպես կարող են տարբեր ձեւերով ընթանալ՝ կախված նրանից, թե դրանք տեղի են ունենում ատենակալների, թե սովորական դատավորի առջեւ: Ստորեւ նկարագրված սկզբունքները անհրաժեշտ է մեկնաբանել՝ հաշվի առնելով տարբեր երկրների քրեական արդարադատության համակարգերը:

1 Մարդու իրավունքների հանձնաժողովի ընդհանուր մեկնաբանություն 20, պարբերություն 11

2 Մարդու իրավունքների հանձնաժողովի եզրափակիչ դիտարկումներ. Ֆրանսիա, ՄԱԿ-ի փաստաթուղթ. CCPR/C/79/Add.80, 1997, օգոստոսի 4, պարբերություն 16

Դատավորների դերը

3.4 Դատավորների հիմնական դերն ազգային օրենսդրության, այդ թվում՝ դրանում ներառված միջազգային իրավունքի կիրառումն ու սահպանումն է, ինչպես նաեւ արդարադատության իրականացման հանդեպ անկախ եւ անաչառ վերահսկողության իրականացումը: Անձի մեղավորությունը կամ անմեղությունը որոշելիս, ինչպես նաեւ անձի եւ պետության միջեւ հայցերն ըստ էության քննելիս, դատավորները պետք է հիմնվեն բացառապես ճշտված փաստերի, յուրաքանչյուր կողմի դիրքորոշման էության եւ համապատասխան օրենսդրության վրա: Սակայն արդարադատությունը նաեւ պահանջում է, որ դատավորները հասկանան իրենց կողմից քննվող իրավիճակին առնչվող բոլոր գործոնները, այդ թվում՝ նրանք, որոնք կարող են ազդել դատարանի դահլիճում ներկա գտնվողների պահելաձեւի եւ դատավարության ընկալման վրա: Դա ներառում է ոչ միայն վերահսկողություն, իրավունքի հիման վրա որոշումների կայացում, գործերի ամփոփման, դատական որոշումների կայացում կամ դատավճիռներ, այլ նաեւ պահանջում է, որ դատավորն ապահովի արդար դատավարություն, եւ դա ընկալվի որպես արդար դատավարություն:

3.5 Դատավորները պարտավոր են ապահովել ամբաստանյալների, վկաների եւ տուժողների հանդեպ արդարացի վերաբերմունք եւ արդար դատավարություն քրեական հանցագործություն կատարածների հանդեպ: Դա ենթադրում է նրանց իրավունքների պաշտպանություն ցանկացած պահին եւ միայն այն ապացույցների թույլատրելիություն, որոնք ձեռք են բերվել օրինական ճանապարհով: Սա նաեւ նշանակում է, որ օրենքը պահպանելու համար պատասխանատուները նույնպես պարտավորված են ենթարկվելու այդ օրենքներին: Այդպիսով, դատավորը վճռորոշ դեր կարող է ունենալ, ապահովելով, որ վկայությունները եւ ապացույցները տրված լինեն ազատ կամքի հիման վրա եւ ձեռք բերված չլինեն բռնի ճանապարհով: Դատավորները միշտ պետք է զգոն լինեն, գիտակցելով, որ ամբաստանյալները եւ վկաները կարող են ենթարկված լինել խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի: Եթե, օրինակ, ձերբակալված անձը ձերբակալության վերջում դատավորին հայտարարում է, որ ենթարկվել է դաժան վերաբերմունքի, դատավորը պարտավոր է գրանցել այդ հայտարարությունը, անհապաղ դատաժբժշկական քննություն նշանակել եւ ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները այդ հայտարարության քննության համար:[3] Դա պետք է կատարվի նաեւ արտահայտված բողոքի կամ հայտարարության բացակայության դեպքում, եթե ներգրավված անձի մոտ կան մարմնական կամ հոգեկան խանգարումների կամ վնասվածքների տեսանելի հետքեր:

3.6 Չնայած իրավական համակարգերը տարբերվում են միմյանցից, օրենքով նախատեսված խոշտանգումների արգելքը համընդհանուր բնույթ է կրում: Այդպիսով, դատավորների առաջնային դերն է կանխարգելել խոշտանգումները եւ մշտապես ապահովել օրենքի պահպանումը:

3 ԽԿԿ/Inf/E (2002) 1, էջ 14, պարբերություն 45.

Դատախազների դերը

3.7 Դատավորները եւ դատախազները կարող են էապես տարբեր դեր ունենալ քրեական արդարադատության տարբեր համակարգերում՝ կախված նրանից, թե այդ համակարգերը հիմնված են ինկվիզիցիոն, թե մրցակցային ընթացակարգերի վրա: Բազմաթիվ երկրներում դատավորների դերին եւ պատասխանատվությանը վերաբերող դրույթները կիրառելի են նաեւ դատախազների համար:

3.8 Դատախազները նաեւ պարտավոր են երաշխավորել, որ քրեական գործի քննության ընթացքում ստացված ապացույցները ձեռք բերվեն պատշաճ կերպով եւ որ այդ ընթացքում կասկածյալի հիմնարար իրավունքները չոտնահարվեն: Երբ դատախազների տրամադրության տակ կասկածյալների դեմ այնպիսի ապացույցներ են, որոնք, դատախազների գիտությամբ կամ ողջամիտ դատողությամբ, ձեռք են բերվել մարդու իրավունքների կոպիտ խախտում հանդիսացող անօրինական մեթոդներով, հատկապես՝ ներառելով խոշտանգումներ կամ դաժան անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ կամ այլ չարաշահումներ մարդու իրավունքների նկատմամբ, նրանք պետք է հրաժարվեն նման ապացույցներն օգտագործել որեւէ այլ անձի դեմ, քան նրանց, ովքեր նման մեթոդներ են կիրառել կամ համապատասխան կերպով տեղեկացնեն դատարանին, որպեսզի անհրաժեշտ բոլոր քայլերը ձեռնարկվեն դատական պատասխանատվության ենթարկելու այդ մեթոդներն օգտագործած անձանց:[4] Յուրաքանչյուր ապացույց, որ ձեռք է բերվել խոշտանգման կամ այլ դաժան վերաբերմունքի միջոցով, որպես ապացույց կարող է միայն օգտագործվել այդ խոշտանգումներն իրականացնողների դեմ: [5]

3.9 Որոշ իրավական համակարգերում դատախազները պետք է թույլտվություն ստանան քննություն իրականացնող դատավորներից՝ նախքան հետաքննություն սկսելը: Այդպիսով, շատ կարեւոր է, որ դատախազները լուրջ վերաբերվեն այդ պարտավորությանը, երբ դա ներառում է իրավապահ մարմինների կողմից խոշտանգման հանցագործություն կատարելու հնարավորությունը: Իրավական համակարգերից շատերում պարտադիր չէ, որ դատախազը հանցագործության վերաբերյալ ապացույցները քննելու պաշտոնական բողոք ստանա: Նրանք, ամեն դեպքում, իրավական պարտավորություն ունեն քայլեր ձեռնարկելու, եթե նման տեղեկություն են ստացել:

Երաշխիքները նախնական կալանքի ընթացքում

3.10 Դատախազները եւ դատավորները պարտավոր են պահպանել ներքեւում բերված ցանկի դրույթները, որոնք նկարագրվել էին նախորդ գլխում: Այդ ցանկը հիմնված է միջազգային իրավունքի երաշխիքների վրա: Սակայն միջազգային չափանիշներն ապահովում են հիմնական նվազագույն սկզբունքները: Պետություններից շատերը առաջարկում են ավելի մեծ աստիճանի պաշտպանվածություն, եւ դա կարող է համարվել լավագույն փորձ: Այն դեպքերում, երբ այդ չափանիշները չեն որդեգրվել, վտանգ կա, որ ազատազրկված անձինք կարող են ենթարկվել խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի: Որոշ չափանիշներ չընդունելու փաստը կարող է հետագայում դժվարացնել նման գործողություններ իրականացնողների հայտնաբերումը եւ պատասխանատվության ենթարկելը:

4 ՄԱԿ-ի ուղենիշներ Դատախազների դերի մասին, ուղենիշ 16

5 ՄԱԿ-ի Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա, հոդված 15

* **Իրենց իրավունքների մասին մարդկանց տեղյակ պահելը**: Իրենց ազատությունից զրկված բոլոր անձինք իրավունք ունեն տեղեկանալ իրենց կալանավորման կամ ձերբակալության պատճառների եւ ազատազրկման ժամանակ իրենց իրավունքների մասին: Նրանք իրավունք ունեն տեղեկացնելու, կամ պահանջելու, որ լիազոր մարմինը տեղեկացնի նրանց ընտանիքի անդամներին կամ բարեկամներին ազատազրկման փաստի եւ նրանց գտնվելու վայրի մասին: Եթե անձը տեղափոխվում է այլ հիմնարկ, նրա ընտանիքի անդամներն ու բարեկամները պետք է կրկին տեղեկացվեն այդ մասին: Տեղեկացումը պետք է տեղի ունենա անհապաղ: Նախնական կալանքի տակ գտնվող անձինք պետք է բոլոր ողջամիտ հնարավորություններն ունենան տեսակցելու եւ հաղորդակցվելու իրենց հարազատների եւ բարեկամների հետ:
* **Ազատազրկման պաշտոնապես ճանաչված վայրերի օգտագործումը եւ ձերբակալության գրանցամատյանների պատշաճ վարումը**: Իր ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ պետք է պահվի այնպիսի վայրերում, որոնք պաշտոնապես նախատեսված են նման նպատակների համար եւ հայտնի են հանրությանը: Հարցաքննությունը պետք է տեղի ունենա պաշտոնական կենտրոններում եւ յուրաքանչյուր ապացույց, որ ազատազրկված անձից ձեռք է բերվել ոչ պաշտոնական վայրերում եւ չի հաստատվել պաշտոնական վայրերում հարցաքննության ժամանակ, որպես ապացույց պետք է բացառվի դատարանում, բացի այն դեպքերից, երբ այդ ապացույցները կարող են օգտագործվել հավանական խոշտանգողների դեմ: Ձերբակալության ճշգրիտ եւ ժամանակին արված գրանցումները, որոնք պահվում են հանրորեն մատչելի տեղերում, խոշտանգումներից եւ այլ դաժան վերաբերմունքից անձի պաշտպանության կարեւորագույն տարրերից են: Իշխանությունները պարտավոր են վարել եւ պահպանել պարբերաբար նորացվող պաշտոնական գրառումներ ազատազրկված բոլոր անձանց վերաբերյալ՝ ինչպես յուրաքանչյուր հիմնարկում, այնպես էլ կենտրոնացված: Այդ գրառումները պետք է ներառեն ազատազրկված անձանց անունները, ազատազրկման վայրը եւ այն անձանց ինքնությունը, որոնք պատասխանատու են նրանց պահման համար: Խցերը պետք է համարակալված լինեն: Այն խուցը, որում տեղավորել են ազատազրկվածին, պետք է նույնպես նշված լինի գրառումներում: Պետք է պահվեն նաեւ ազատազրկված անձի հետ հաղորդակցման ամբողջական արձանագրությունները, ներառյալ ազատազրկված անձի ներկայացրած դիմումները, իշխանությունների պատասխանները եւ ազատազրկվածի առնչությամբ կայացված որոշումները: Ազատազրկման գրառումները պետք այնպես պահվեն, որ ցանկացած միջամտություն հնարավոր լինի հայտնաբերել, օրինակ՝ համարակալված էջերով միմյանց կցված մատյաններ, որոնք կարող են պահվել մի քանի տարի:
* **Արտաքին աշխարհի հետ կապից զրկված լինելու (ինկոմունիկադո) պայմաններում ազատազրկումից խուսափելը**: Մարդիկ առավել ենթակա են խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի վտանգին, երբ ազատազրկված են ինկոմունիկադո, այսինքն՝ չեն կարող հաղորդակցվել իրենց ընտանիքի, փաստաբանի կամ անկախ բժշկի հետ: Այդ վտանգն աճում է նման ազատազրկման երկարատեւ ժամանակահատվածի դեպքում, երբ հնարավոր է վնասվածքներ հասցնել եւ կա բավարար ժամանակ դրանց տեսանելի հետքերի անհետացման համար: Դատավորները պարտավոր են օգտագործել իրենց տրամադրության տակ գտնվող բոլոր

հնարավորությունները եւ ապահովել, որ ազատազրկված անձանց նկատմամբ կիրառված արտաքին աշխարհի հետ շփման սահմանափակումներն ու ուշացումները նվազագույնը լինեն:

* **Փաստաբանի մատչելիությունը եւ հարգանքը նրա գործառույթների հանդեպ**: Ազատազրկված անձինք անհապաղ իրավաբանական խորհրդատվություն ստանալու իրավունք ունեն: Նրանք պետք է ձերբակալության դեպքում փաստաբանի հետ առանձին խորհրդակցելու, հարցաքննությանը փաստաբանի ներկայության եւ դատարանում փաստաբանի միջոցով իրենց շահերը ներկայացնելու հնարավորություն ունենան: Փաստաբանները պետք է խորհրդատվություն իրականացնեն եւ ներկայացնեն իրենց պաշտպանյալներին մասնագիտական չափանիշներին համապատասխան՝ ազատ լինելով սպառնալիքներից, խոչընդոտներից, ոտնձգություններից կամ որեւէ կողմից անպատեհ միջամտություններից:
* **Բժշկի մատչելիությունը**: Ազատազրկված անձինք պետք է բուժզննության ենթարկվեն հնարավորինս շուտ ազատազրկումից հետո եւ ազատազրկման բոլոր փուլերում: Նրանք լրացուցիչ իրավունք ունեն զննության ենթարկվելու իրենց ընտրությամբ՝ անկախ եւ որակյալ բժշկի կողմից: Բուժզննությունը պետք է իրականացվի ոստիկանության ծառայողների լսելիությունից եւ, գերադասելի է, տեսանելիությունից դուրս: Յուրաքանչյուր զննության արդյունքները, ինչպես նաեւ ազատազրկված անձի հայտարարությունները եւ բժշկի եզրակացությունները, պաշտոնապես պետք է գրանցվեն բժշկի կողմից եւ մատչելի լինեն ազատազրկված անձի ու նրա փաստաբանի համար:
* **Ազատազրկվածների հատուկ կատեգորիաների համար նախատեսված երաշխիքներ**: Ազատազրկված բոլոր անձինք հավասար վերաբերմունքի իրավունք ունեն՝ առանց ռասայի, գույնի, սեռի, սեռական կողմնորոշման, լեզվի, դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, սեփականության, ծննդի հետ կապված կամ այլ կարգավիճակի հիման վրա խտրականության: Սակայն հատուկ ուշադրություն պետք է դարձնել ազատազրկված խոցելի անձանց՝ կանանց, անչափահասների, տարեցների, օտարերկրացիների, ազգային փոքրամասնությունների, տարբեր սեռական կողմնորոշում ունեցող, հիվանդություններով տառապող, հոգեկան եւ սովորելու հետ կապված խնդիրներ ունեցող եւ այլ խոցելի խմբերի ներկայացուցիչների կարիքներին: Որոշ խմբերը կարող են խտրականության վրա հիմնված չարաշահումների թիրախ լինել այն հաստատությունների անձնակազմի կողմից, որտեղ նրանք պահվում են: Նրանք կարող են չարաշահումների ենթարկվել նաեւ ազատազրկված այլ անձանց կողմից:

3.11 Դատախազները պարտավոր են ապահովել, որ իրենք չեն մասնակցում այնպիսի հարցաքննությունների, որոնց ընթացքում խոստովանություններ կամ տեղեկություններ կորզելու բռնի մեթոդներ են կիրառվում: Նրանք պետք է նաեւ համոզվեն, որ նման մեթոդներն իրավապահ մարմինների կողմից չեն կիրառվել կասկածյալի դեմ մեղադրանք առաջադրելու համար ապացույցներ ձեռք բերելիս: Այն դեպքերում, երբ կասկածյալը կամ վկան բերվում են դատախազի մոտ, վերջինս պետք է համոզվի, որ ներկայացված ցանկացած տեղեկություն կամ խոստովանություն ազատ կամքի հիման վրա է կատարվել: Դատախազը պետք է նաեւ ուշադրություն դարձնի հոգեկան եւ մարմնական վնասվածքների նշաններին, լրջորեն վերաբերվի խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի մասին հայտարարություններին եւ թույլ չտա անձի վերադարձն այն հիմնարկ, որտեղ նա կարող է նման վերաբերմունքի ենթարկվել:

3.12 Հարցաքննությանը խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի ենթարկվելու վտանգն առավել մեծ է, եթե իրավական համակարգը վճիռ կայացնելիս հիմնականում հիմնվում է խոստովանության եւ նախնական կալանքի ժամանակ ձեռք բերված ապացույցների վրա, հատկապես, երբ հարցաքննությունն անց է կացվում առանց փաստաբանի ներկայության: Ցանկացած դեպքում անհրաժեշտ է խստագույնս հետեւել ընթացակարգերին՝ ապահովելով հարցաննության պատշաճ անցկացումը, եւ որ ազատազրկված անձը չարաշահումների չի ենթարկվել հարցաքննության ժամանակ: Հատկապես կարեւոր է արձանագրել բոլոր հարցաքննությունների մանրամասները եւ տպագրել հարցաքննությունները: Այդ տվյալները պետք է մատչելի լինեն դատական եւ վարչական վարույթների համար:

3.13 Դատախազները եւ դատավորները պետք է երաշխավորեն հետեւյալ պահանջների պահպանումը, որոնք վերաբերում են հարցաքննությունների իրականացման լավագույն փորձին եւ հիմնված են ԽԿԿ-ի եւ խոշտանգումների գծով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի հանձնարարականների վրա.[6]

* Հարցաքննությունները պետք է տեղի ունենան բացառապես պաշտոնական կենտրոններում, եւ ցանկացած ապացույց, որ ձեռք է բերվել ազատազրկված անձից ոչ պաշտոնական վայրում եւ ազատազրկված անձի կողմից չի հաստատվել պաշտոնական վայրում անցկացրած հարցաքննության ժամանակ, չպետք է ընդունվի դատարանի կողմից որպես ապացույց ազատազրկված անձի դեմ:
* Ազատազրկված անձն իրավունք ունի հարցաքննվելու փաստաբանի ներկայությամբ:
* Ցանկացած հարցաքննության սկզբում ազատազրկված անձը պետք է տեղեկացվի ներկա գտնվող բոլոր անձանց ինքնության մասին (անուն եւ/կամ համարը):
* Ներկա գտնվող բոլոր անձանց ինքնությունը պետք է նշվի մշտական գրանցամատյանում, որտեղ նշվում է նաեւ հարցաքննության սկզբի եւ ավարտի ժամը, ինչպես նաեւ ազատազրկված անձի ներկայացրած ցանկացած պահանջ:
* Ազատազրկված անձը պետք է տեղեկացվի հարցաքննության թույլատրելի տեւողության եւ հարցաքննությունների միջեւ ընկած ժամանակահատվածի ու ընդմիջումների ընթացակարգի, հարցաննությունն անցկացնելու համար նախատեսված վայրի

6 ԽԿԿ Inf/E (2002) 1, էջ 10-16, պարբերություն 33-50; Խոշտանգումների գծով հատուկ զեկուցողի զեկույց, 2001, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/56/156, 2001թ.-ի հուլիս, պարբերություն 39

մասին եւ արդյոք ազատազրկված անձը պարտավոր է կանգնել հարցերին պատասխանելու ժամանակ: Բոլոր այս ընթացակարգերը պետք է ամրագրված լինեն օրենսդրությամբ եւ կանոնակարգերով եւ խստորեն պահպանվեն:

* Արգելվում է կապել հարցաքննության ենթարկվող անձի աչքերը կամ ծածկել նրա դեմքը եւ գլուխը, քանի որ դա կարող է խոցելի դարձնել հարցաքննվող անձին, սահմանափակել նրա զգայունությունը, եւ դա կարող է ինքնին որակավորվել որպես խոշտանգում կամ դաժան վերաբերմունք: Դա կարող է նաեւ անհնարին դարձնել խախտումներ իրականացնող անձանց պատասխանատվության ենթարկելը նրանց ինքնությունը պարզելու դժվարացման հետեւանքով:
* Հարցաքննության բոլոր փուլերը պետք է արձանագրվեն կամ տեսագրվեն, եւ ազատազրկված անձը կամ օրենքով նախատեսված դեպքերում նրա պաշտպանը պետք է հնարավորություն ունենան վերցնել այդ արձանագրությունները
* Իշխանությունները պետք է մշակեն եւ պարբերաբար վերանայեն թմրանյութերի, ալկոհոլի կամ դեղամիջոցների ազդեցության տակ գտնվող կամ շոկային վիճակում գտնվող անձանց հարցաքննության ընթացակարգերը:
* Հատկապես խոցելի անձանց (կանանց, անչափահասների եւ հոգեկան խնդիրներ ունեցող անձանց) համար անհրաժեշտ է մշակել հատուկ երաշխիքներ:

3.14 Հարցաքննությունների էլեկտրոնային ձայնագրությունն էապես նպաստում է խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի կիրառման վտանգը փոքրացնելուն եւ իշխանությունների կողմից կարող է օգտագործվել՝ կեղծ մեղադրանքներից պաշտպանվելու համար: Կեղծիքներից պաշտպանվելու համար ձայնագրության մեկ օրինակը պետք է կնքվի ձերբակալված անձի ներկայությամբ, իսկ մյուսը օգտագործվի որպես աշխատանքային: Այս ընթացակարգերի պահպանումը նաեւ օգնում է երաշխավորել երկրի սահմանադրությամբ եւ օրենսդրությամբ նախատեսված խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի արգելքը պահպանումն ու վերահսկումը:

3.15 «Հարցաքննություն» տերմինը չի վերաբերում միայն այն ժամանակահատվածին, երբ անձը պաշտոնապես հարցաքննվում է: Դա կարող է ներառել հարցաքննությանը նախորդող ժամանակը, հարցաքննության ընթացքը եւ դրան հաջորդող ժամանակը, երբ ֆիզիկական եւ հոգեբանական ճնշումներ են գործադրվում անձի նկատմամբ՝ պաշտոնական հարցաքննության ժամանակ նրան ապակողմնորոշելու եւ ստիպելու լինել ավելի հնազանդ: Բոլոր նման դեպքերը պետք է բացառապես արգելված լինեն:

Անկախ վերահսկողությունը

3.16 Ազատազրկման վայրերի անկախ վերահսկողությունը, հատկապես, երբ այն իրականացվում է որպես պարբերական այցելությունների մի մաս, խոշտանգումների կանխարգելման արդյունավետ միջոցներից մեկն է: ԽԿԿ-ն փաստել է, որ «դա հատուկ կարեւորություն է տալիս յուրաքանչյուր ազատազրկման վայր անկախ մարմնի (օրինակ՝ դիտորդական խորհուրդներ կամ վերահսկողություն իրականացնող դատավորների) պարբերական այցելություններին, ընդ որում, այդ մարմինը պետք է իրավունք ունենա լսելու (եւ, անհրաժեշտության դեպքում, արձագանքել) ազատազրկված անձանց կողմից ներկայացված բողոքներն ու հիմնարկների բոլոր տարածքների վերահսկողություն իրականացնի: Այդ մարմինները կարող են նաեւ կարեւոր դեր ունենալ ազատազրկված անձանց եւ հիմնարկների անձնակազմերի միջեւ առաջացող տարաձայնությունները եւ հակասու-

թյունները հարթելու գործում։»[7] ԽԿԿ-ն նաեւ ողջունել է ոստիկանական հիմնարկների վերահսկողության նախատեսված մեխանիզմների գոյությունը՝ դա «կարեւոր ներդրում համարելով ոստիկանական հաստատություններում պահվող անձանց հանդեպ դաժան վերաբերմունքի կանխարգելման եւ ձերբակալության ընդհանուր պայմանների բարելավման գործում»։[8] Խոշտանգումների գծով հատուկ զեկուցողը հայտարարել է, որ «ոստիկանական բաժիններ, նախնական կալանքի վայրեր եւ ուղղիչ հիմնարկներ առանց նախազգուշացման այցելությունները խոշտանգումների դեմ արդյունավետ երաշխիքներ են տալիս»։[9]

3.17 Ազգային օրենսդրությունը հաճախ նախատեսում է դատական մարմինների եւ դատախազների կողմից իրականացվող վերահսկողություն։ Վերահսկողության մեջ կարող են ներգրավված լինել իրավապահ մարմինների պաշտոնյաներ, փաստաբաններ եւ բժիշկներ, ինչպես նաեւ անկախ փորձագետներ եւ քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչներ։ Օմբուդսմենը եւ մարդու իրավունքների կառույցները, Կարմիր Խաչի միջազգային կոմիտեն եւ հասարակական անկախ կազմակերպությունները նույնպես պետք է, անհրաժեշտության դեպքում, իրավունք ունենան մուտք գործել ազատազրկման վայրեր։

3.18 Այցելություններն ազատազրկման վայրեր պետք է պարբերական բնույթ կրեն եւ իրականացվեն առանց նախազգուշացման, ձեռնարկվեն բոլոր հնարավոր միջոցներն ազատազրկված անձանց հետ անմիջականորեն եւ առանձին հաղորդակցվելու համար։ Այցելությունների ենթակա վայրերից են ոստիկանական խցերը, նախնական կալանքի կենտրոնները, անվտանգության ծառայության, վարչական կալանքի եւ ուղղիչ հիմնարկները։ Վերահսկողություն իրականացնող խմբերը պետք է հնարավորություն ունենան հրապարակելու այցելությունների արդյունքում մշակված զեկույցները, եթե նրանք որոշում են դա անել։

3.19 Խոշտանգումների կանխարգելման ընկերակցությունն (APT), որ ոչ կառավարական կազմակերպություն է, զեկույց է մշակել՝ հիմնված այցելության ազգային մեխանիզմների վերաբերյալ ԽԿԿ-ի մի շարք զեկույցների եւ հանձնարարականների վրա։ Այն վերահսկողություն իրականացնող դատավորների եւ դատախազների համար պարունակում է հետեւյալ հիմնական ցանկը.[10]

* **Անկախություն.** Այցելություններ իրականացնող մարմինը պետք է ցուցաղրի իր անկախությունն ու անաչառությունը եւ տարբերությունը՝ ազատազրկման վայրի անձնակազմից ու ղեկավարությունից։ Այն պետք է հստակ ներկայացնի, որ իր միակ նպատակն ազատազրկման մարդկային պայմաններն են եւ ազատազրկվածների հանդեպ մարդկային վերաբերմունքը։
* **Փորձագետներ.** Վերահսկողություն իրականացնող անձինք պետք է տիրապետեն հատուկ գիտելիքների եւ մասնագիտացում ունենան այն ազատազրկման վայրերի վերաբերյալ, որտեղ նրանք իրականացնում են վերահսկողությունը։
* **Ազատազրկված անձանց հետ անմիջական եւ անհատական հաղորդակցություն.** Այցելություն իրականացնող մարմինը պետք է աշխատի անմիջական եւ անհատական հաղորդակցություն հաստատել ազատազրկված անձանց հետ։ Ազա-

7 ԽԿԿ-ի գործունեության երկրորդ ընդհանուր զեկույց, 1991, պարբերություն 54

8 ԽԿԿ/Inf/E (99) 1 (REV. 2), պարբերություն 97

9 Խոշտանգումների գծով հատուկ զեկուցողի զեկույցը, 2001թ., ՄԱԿ-ի փաստաթուղթ A/56/156, պարբերություն 39(c)

10 *ԽԿԿ-ի հանձնարարականներն այցելության ազգային մեխանիզմների վերաբերյալ*, Խոշտանգումների կանխարգելման ընկերակցություն, 2000 թ-ի հունիս

տազրկված այն անձինք, որոնք չեն դիմել դիտորդական մարմնի հետ զրույց ունենալու համար, պետք է պատահականորեն ընտրվեն եւ նրանց հետ պետք է հարցազրույց վարվի ընդհանուր պարբերաբար այցելությունների շրջանակներում: Ազատազրկված անձինք պետք է իրավունք ունենան արձանագրել իրենց բողոքները թե հիմնարկի ներսում, թե հիմնարկից դուրս:

* **Գաղտնիություն**. Այցելությունն իրականացնող մարմինը պետք է հնարավորություն ունենա հաղորդակցվել ազատազրկված անձանց հետ՝ հիմնարկի անձնակազմի տեսանելությունից եւ լսելիությունից դուրս:
* **Կանոնավոր այցելություններ**. Ուղղիչ հիմնարկներ եւ ազատազրկման այլ վայրեր այցելություններն ամեն շաբաթ ամենաարդյունավետն են: Ամենամսյա այցելությունները նույնպես կարող են ընդունելի տարբերակ լինել: Այցելություններ իրականացնող մարմինը պետք է համապատասխան միջոցներ եւ ժամանակ ունենա արդյունավետությունը ապահովող հաճախականությամբ այցեր կատարելու համար:
* **Առանց նախազգուշացման**. Այցելություն իրականացնող մարմինը պետք է լիազորություններ եւ հնարավորություն ունենա ցանկացած ազատազրկման վայր այցելելու ցանկացած օր եւ ցանկացած ժամի՝ իր ընտրությամբ:
* **Հիմնարկի բոլոր տարածքները եւ շինությունները**. Այցելություն իրականացնող մարմինը պետք է մուտքի իրավունք ունենա հիմնարկի բոլոր տարածքներ եւ շինություններ:
* **Կանոնավոր զեկույցներ**. Այցելություն իրականացնող մարմինը պետք է պատրաստի կանոնավոր զեկույցներ եւ հնարավորություն ունենա դրանք ներկայացնելու համապատասխան ազգային կառույցներին:

3.20 Ազատազրկված անձի հետ զրուցելը եւ նրա ֆիզիկական վիճակի, ընդհանուր պահեստաձեւի եւ անձնակազմի հետ հարաբերությունների դիտարկման հետ մեկտեղ, այցելություն իրականացնող մարմինը պետք է ուշադիր լինի այնպիսի սարքավորումների կամ միջոցների առկայությանը, որոնցով կարող են խոշտանգումներ կամ դաժան վերաբերմունք կիրառվել: Ազատազրկման վայրի անձնակազմը նման առարկաների վերաբերյալ պետք է հարցազրույցի ենթարկվի, ազատազրկված անձանց հետ եւս պետք է հարցազրույց անցկացնել այդ առումով՝ անձնակազմից առանձին:

Ազատազրկման պայմանները

3.21 Թեպետ ազատազրկման պայմանները կարող են տարբեր լինել, ԽԿԿ-ն մշակել է գործոնների ընդհանուր ցանկ[11], որ պետք է հաշվի առնվի *կարճաժամկետ* ազատազրկման համար նախատեսված վայրերի համապատասխանությունը գնահատելիս.

* Խցերը պետք է մաքուր լինեն, դրանց չափը պետք է համապատասխանի այնտեղ պահվող անձանց քանակին, պետք է ապահովված լինի համապատասխան լուսավորությամբ (որ բավարար է կարդալու համար՝ բացառությամբ քնելու համար նախատեսված ժամերի) եւ օդափոխության համակարգով, գերադասելի է, որ խցերը ապահովված լինեն բնական լույսով:
* Խցերում պետք է տեղադրված լինի հանգստի համար նախատեսված կահույք (ամրեցված աթոռ կամ նստարան), իսկ այդ վայրում գիշերող անձինք պետք է ապահովված լինեն մաքուր ներքնակներով եւ վերմակներով:
* Ազատազրկման մեջ գտնվող անձինք իրավունք ունեն իրենց բնական կարիքները բավարարել մաքուր եւ բարեկիրթ պայմաններում, նրանց պետք է տրամադրվեն լվացք անելու հարմարություններ:
* Ազատազրկման մեջ գտնվող անձանց համար պետք է ապահովված լինի խմելու ջրի մատչելիությունը եւ նրանց համապատասխան ժամերին պետք է տրվի սնունդ, նեբառյալ՝ օրական առնվազն մեկ լրիվ կերակուր (ավելի էական, քան բուրտերբրոտը):
* Անձինք, որոնք ազատազրկման մեջ են երկար՝ 24 ժամ եւ ավելի ժամանակով, ունեն մաքուր օդին զբոսանքի իրավունք:

Վերը թվարկվածը նվազագույն կանոններ են: Ավելի երկար ժամկետների դեպքում ազատազրկումը պետք է իրականացվի երկարաժամկետ ազատազրկման համար նախատեսված հիմնարկներում, ուր չափանիշները ավելի խիստ են: Ազատազրկումն այնպիսի պայմաններում, որոնք չեն համապատասխանում այդ չափանիշներին, կարող է որակավորվել որպես անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, ինչը նաեւ հակասում է մարդու իրավունքների միջազգային նորմերին:[12]

Բլանշարը եւ մյուսներն ընդդեմ արդարադատության նախարարի, իրավական եւ խորհրդարանական գործեր եւ Անոր, Գերագույն դատարան, Զիմբաբվե, 1999թ. հուլիսի 9-ը, 1999 (10) BCLR 1169 (ZS), [2000] 1 LRC 671; (1999) 2 CHLRD 326 (Զիմբաբվե)

Բողոքարկուները մեղադրվել էին մի քանի լուրջ հանցագործություն կատարելու մեջ, այդ թվում՝ սաբոտաժ եւ ահաբեկչություն, եւ պահվում էին խիստ ռեժիմի բանտում: Նրանք բողոք էին ներկայացրել Գերագույն դատարան, հայտարարելով, որ պատասխանողները ոտնահարել են խոշտանգումներից կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրենց սահմանադրական իրավունքը՝ իրենց երկար ժամանակ պահելով փակ, անընդհատ լուսավորվող մենախցերում, ստիպել էին կրել բանտային հագուստ, ամեն գիշեր

11 ԽԿԿ/Inf/E (2002) 1, էջ.8, պարբերություն 42

12 *Պիրսն ընդդեմ Հունաստանի*, ՄԻԵԴ, 2001 թ-ի ապրիլի 19-ի որոշում, *Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի*, 2002թ-ի հուլիսի 15-ի որոշում

մերկացրել էին, ոտնաշղթաներ օգտագործել եւ արգելել սնունդ ստանալ բանտից դուրս գտնվող աղբյուրներից:

1999 թ-ի հուլիսին Ջիմբաբվեի Գերագույն դատարանը իրավունքը հաստատող հրաման էր ընդունել այն մասին, որ բողոքարկուների խցերը պետք է բաց մնան օրվա ընթացքում, արհեստական լուսավորությունը պետք է անջատվի գիշերվա ժամերին, եւ, քանի դեռ նրանց չեն դատապարտել, նրանք իրենց հագուստը կրելու եւ բանտից դուրս սնունդ ստանալու իրավունք ունեն:

Դատարանը հաշվի էր առել միջազգային դատական պրակտիկան, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Իռլանդիան ընդդեմ Միացյալ թագավորության* եւ *Կոսկինեն ընդդեմ Ֆինլանդիայի* գործերը, նաեւ հղում էր կատարել ՄԱԿ-ի Նվազագույն ստանդարտ կանոնների վրա: Դատարանը դատապարտել էր բանտի անձնակազմի կողմից ոտնաշղթաների եւ ձեռնաշղթաների կիրառումը, բացառությամբ արդյունավետ այլ միջոցների բացակայության պայմաններում տեղափոխելու ժամանակ փախուստը կանխելու կամ ագրեսիվ վարքագիծը կանխելու համար: Դատարանը փաստել էր, որ թեպետ ազատազրկված անձինք չեն օգտվում ազատության մեջ գտնվող անհատների բոլոր ազատություններից, սակայն նրանց նկատմամբ կիրառվող զսպման ցանկացած միջոց պետք է սահմանափակված եւ ծայրաստիճան անհրաժեշտ լինի: Դրանք պետք է համապատասխանեն այդ անձանց դատարանի առաջ կանգնեցնելու պետության միակ նպատակին եւ պետք է գնահատվեն օրենքի աչքերում անմեղ մարդու նկատմամբ կիրառելի հիմնական մարդկային չափանիշներով, այլ ոչ աբստրակտ ուղղիչ չափանիշներով: Պատիժները, սպառնալիքները եւ վրիժառությունը չեն կարող համատեղվել անմեղության կանխավարկածի հետ: Թեպետ հնարավոր են այնպիսի հանգամանքներ, որոնք պահանջում են նախնական կալանքում ավելի խիստ պայմանների կիրառում, դա պետք է հիմնավորվի հիմնարկի անձնակազմի կողմից: Տվյալ գործում պատասխանողները չեն հայտարարել, որ հայցվորները սպառնալիք են ներկայացրել բանտի անվտանգությանը: Այդպիսով, հայցվորներին մերկացնելը եւ ոտնաշղթաներ կիրառելը նրանց նկատմամբ ակնհայտորեն անմարդկային էր: Անընդհատ արհեստական լույսի կիրառումն անիմաստ էր եւ վատթարացնում էր մեկուսացման ազդեցությունը՝ դարձնելով այն հնարավորինս ոչ հարմարավետ եւ խիստ, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազատազրկվածները պահվում էին մեկուսի բանտարկության մեջ:

Դատարանը նաեւ նշել էր, որ Ջիմբաբվեի Սահմանադրությունը ուղղված է պաշտպանելու անձի ֆիզիկական եւ հոգեկան ամբողջականությունը, եւ այդ պաշտպանությունը համապատասխանում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի եւ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի դրույթներին: Դաժան վերաբերմունքի երկարատեւ կիրառումը, որին ենթարկվել էին բողոքարկուները, ինչպես նաեւ դրա հետեւանքով առաջացած ֆիզիկական եւ հոգեկան ազդեցությունը հասել էին դաժանության այն նվազագույն մակարդակին, որ խախտում է այդ իրավունքը: Դատարանը նաեւ նշել էր, որ խոշտանգումների եւ այլ դաժան վերաբերմունքի սահմանադրական արգելքն ուղղված է պաշտպանելու անձին այնպիսի գործողություններից, որոնք պատճառում են ոչ միայն ֆիզիկական, այլեւ հոգեկան տառապանք: Դատարանը պատասխանողներին ստիպել էր բարձրագույն չափերի տուգանքներ վճարել՝ ի նշան Դատարանի կողմից բողոքարկուների նկատմամբ վերաբերմունքի կամայական խստացման դատապարտման:

3.22 Ազատազրկված բոլոր անձինք իրավունք ունեն բողոքարկելու ազատազրկման օրինականությունը: Որոշ դեպքերում դա վերաբերում է *habeas corpus* ընթացակարգին, որ նշանակում է անձի տեղափոխումը դատարան: Այդպիսով ապահովվում են խոշտանգումների դեմ կարեւորագույն երաշխիքը, ինչպես նաեւ կամայական ազատազրկման դեմ բողոքարկելու միջոցները, թեպետ երբեմն դատավորները սահմանափակում են այդ ընթացակարգը, համոզվելով միայն, որ ազատազրկումը ինքնին օրինաչափ է եւ չեն քննարկում ազատազրկման պայմանների համապատասխանությունն օրենքին:

3.23 Ազատազրկումը բողոքարկելու դիմումը կարող է ներկայացվել կամ ազատազրկված անձի կամ նրա անունից այլ անձի միջոցով: Ազատազրկման օրինականության քննարկումները պետք է հնարավորինս արագ իրականացվեն: Եթե դա մտնում է դատավորի իրավասության մեջ, դատավորը պետք է պահանջի անձի ներկայությունը դատարանում եւ այդ ընթացքում ապահովի ազատազրկված անձի առանձին հաղորդակցությունը իր փաստաբանի հետ:

3.24 Ամեն անգամ, երբ ազատազրկված անձը դատարանի առջեւ է կանգնում ձերբակալությունից հետո, դատավորները պետք է հատկապես ուշադիր լինեն այդ անձի վիճակի հանդեպ: Անհրաժեշտության դեպքում դատավորները պետք է մարմնական վնասվածքների հետքերի տեսողական զննություն անցկացնեն կամ բուժզննություն նշանակեն: Զննությունը կարող է ներառել կապտուկների առկայության ստուգում, որոնք հնարավոր է չերեւան հագուստով ծածկված լինելու պատճառով: Խոշտանգումների շատ տեսակներ չեն թողնում տեսանելի հետքեր, որոշ խոշտանգումներ կիրառելիս օգտագործվում են այնպիսի մեթոդներ, որոնք դժվար է հայտնաբերել: Այդ իսկ պատճառով դատավորները պետք է ուշադիր լինեն եւ այլ ապացույցներ գտնեն, ինչպիսիք են անձի ֆիզիկական եւ հոգեկան վիճակը եւ ընդհանուր վարքը, գործի մեջ ներգրավված ոստիկանների եւ պահակախմբի անդամների պահելաձեւը եւ ազատազրկված անձի վերաբերմունքը նրանց հանդեպ: Դատավորները պետք է հստակորեն արտահայտեն խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի մասին հայտարարությունները լուրջ ընդունելու եւ նման վտանգներից պաշտպանելուն ուղղված քայլեր ձեռնարկելու իրենց պատրաստակամությունը:

3.25 Եթե կասկածյալը չգիտի այն լեզուն, որով ընթանում է դատական նիստը, արդար դատավարության պահանջների համաձայն, ամբաստանյալը պետք է ապահովված լինի թարգմանության բոլոր հնարավորություններով:[13] Դա նաեւ կարեւոր երաշխիք է, որ հնարավորություն կտա կասկածյալին հայտնել խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի այլ դեպքերի մասին:

3.26 Այն անձինք, որոնք ապահովում են անվտանգությունը դատարանում եւ հսկում ազատազրկված անձանց, պետք է առանձնացված եւ անկախ լինեն ազատազրկված անձանց հանդեպ ազատազրկման վայրերում հսկողություն իրականացնող եւ անվընտանգություն ապահովող ու կասկածյալին մեղսագրվող արարքի հետաքննություն իրականացնող մարմիններից: Նախնական կալանքում գտնվող անձինք առավել վտանգված են, եթե նրանց պահպանությունը իրականացնում են քննություն իրականացնող մարմինները, կամ ազատազրկման վայր տեղափոխվելիս նրանք գտնվում են քննություն իրականացնող մարմինների ենթակայության տակ: Դատարանում կասկածյալը պետք է

13 Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր, հոդված 14 (3)(զ)

պահվի գործի մեջ ներգրավված ոստիկաններից կամ քննիչներից անջատ: Եթե կասկածներ կան, որ անձը ենթարկվել է խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի, այդ անձը պետք է անհապաղ տեղափոխվի այն վայրից, որտեղ նրան ենթադրաբար ենթարկել են խոշտանգումների:

3.27 Խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի հետքերի հայտնաբերման համար դատավորները պետք է ուշադրություն դարձնեն դատական նիստերի դահլիճի դասավորմանը:

* Կարո՞ղ է արդյոք դատավորը հստակ տեսնել եւ լսել մեղադրյալին՝ վերջինիս դատարանի դահլիճում գտնվելու ամբողջ ընթացքում եւ արդյոք տեսանելիությունը բավարա՞ր է մարմնական կամ հոգեկան վնասվածքների հետքերը հայտնաբերելու համար:
* Համապատասխանո՞ւմ է արդյոք անվտանգության ապահովման աստիճանը անձի իրական վտանգավորության աստիճանին:
* Կարող՞ է արդյոք անձն առանձին հաղորդակցվել իր պաշտպանի հետ:
* Կարո՞ղ է արդյոք անձն ազատորեն հաղորդակցվել դատարանի հետ՝ առանց սպառնալիքների եւ վտանգի:

Իրավաբանական օգնություն

3.28 Դատավորները պետք է համոզվեն, որ մեղադրյալները տեղյակ են իրենց ընտրությամբ փաստաբան ունենալու իրենց իրավունքի մասին: Փաստաբանները պետք է իրենց մասնագիտական պարտականություններն առանց սպառնալիքի, խոչընդոտների, ոտնձգությունների կամ անարդարացի միջամտությունների իրականացնելու հնարավորություն ունենան, այդ թվում՝ ազատորեն խորհրդակցեն իրենց պաշտպանյալների հետ:[14] Նրանց չպետք է նույնացնեն իրենց պաշտպանյալների կամ պաշտպանյալներին մեղսագրվող արարքների հետ: Փաստաբանները չպետք է ենթարկվեն դատական հետապնդման կամ վարչական, տնտեսական կամ այլ պատժամիջոցների՝ ընդունված մասնագիտական պարտականություններին, նորմերին ու բարոյականությանը համապատասխան ցանկացած գործողության համար: Երբ մասնագիտական պարտականություններն իրականացնելիս վտանգված է փաստաբանների անվտանգությունը, իշխանությունները պարտավոր են համապատասխան ավտանգություն ապահովել:[15]

Ապացույցների թույլատրելիությունը

3.29 Իրավական համակարգերից շատերում դատավորներն առանցքային դեր ունեն ապացույցների ներկայացման հարցում որոշելու, թե որ ապացույցները կարող են ներկայացվել հիմնական դատաքննությանը կամ ատենակալներին եւ որոնք պետք է թույլատրելի համարվեն: Ակնհայտ է, որ խոշտանգմամբ կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերով

14 Մարդու իրավունքների հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն 13, հոդված 14 (21-րդ նստաշրջան, 1984), Ընդհանուր մեկնաբանությունների եւ ընդհանուր հանձնարարականների ժողովածու, որ ընդունվել է Մարդու իրավունքների պայմանագրային մարմինների կողմից, ՄԱԿ-ի փաստաթուղթ HRI\GEN\1\Rev.1 at 14 (1994), պարբերություն. 9; Իրավաբանների դերի վերաբերյալ հիմնական սկզբունքներ, 16-18.

15 Նույն տեղը

ստացված ապացույցները պետք է անթույլատրելի համարվեն:[16] Սովորաբար նման պահանջը ամրագրված է ազգային օրենսդրության մեջ, թեպետ ֆիզիկական եւ հոգեկան դաժան վերաբերմունքի որոշ ձեւեր երբեմն չեն ընդգրկվում ազգային օրենսդրության շրջանակներում: Եթե գրված օրենքը մեկնաբանություն չի ենթադրում, դատավորները պետք է մեկնաբանեն այն խոշտանգումներին եւ դաժան վերաբերմունքին առնչվող միջազգային չափանիշների եւ լավագույն փորձի տեսանկյունից:

3.30 Դատարանը պարտավոր է համոզվել, որ ներկայացված ապացույցները եւ վկայությունները թույլատրելի են: Այդ իսկ պատճառով դատավորը պետք է համոզվի, որ խոստովանությունը կամ այլ ապացույցները ձեռք չեն բերել խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի միջոցով: Եթե անգամ մեղադրյալը չի ներկայացրել բողոք, դատավորը պետք է պատրաստ լինի պահանջելու, որ մեղադրող կողմը ողջամիտ կասկածից դուրս ապացուցի, որ խոստովանությունը տրվել է կամովի:

3.31 Ապացույցները կարող են ընդունելի համարվել դատարանում, նույնիսկ եթե առկա է հայտարարություն դրանց ձեռքբերման բռնի ճանապարհների մասին, քանի որ նման ոչ բոլոր հայտարարություններն են համապատասխանում իրականությանը: Որոշ դեպքերում դատավորները կարող են առանձին դատաքննություն նշանակել, այսպես կոչված «դատավարություն դատավարության շրջանակներում», եւ դրանից հետո որոշել ապացույցների թույլատրելիությունը: Այն դեպքերում, երբ դատաքննությունը իրականացվում է ատենակալների մասնակցությամբ, նրանք կարող են չներգրավվել այդ հարցի քննարկմանը: Սակայն կարող են լինել դեպքեր, երբ հիմնական դատավարության ժամանակ ուսումնասիրվում են ապացույցներ, որոնց վերաբերյալ պաշտպանական կողմը հայտարարել է դրանց՝ խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի արգելված այլ ձեւերի միջոցով ձեռքբերման մասին: Նման դեպքերում դատավորները պարտավոր են ապահովել վկաների պատշաճ հարցաքննությունը նման հայտարարության վերաբերյալ եւ լուրջ ուշադրություն դարձնել այդ հայտարարություններին խորհրդակցական սենյակում եւ դատավարությունը եզրափակելիս:

Վկաների հարցաքննությունը

3.32 Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ցանկացած վկայի, որ գուցե ենթարկվել է մարմնական կամ հոգեկան բռնության կամ դրա վկան է եղել ձերբակալության ժամանակ: Նման վնասվածքները եւ տրավմաները կարող են խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի արդյունք չլինել, եւ վատ վերաբերմունքի մասին ոչ բոլոր հայտարարություններն է պետք բառացի ընկալել: Թեպետ պետք է հաշվի առնել, որ նման վկայություն տվող վկան կարող է հատկապես խոցելի, վախեցած եւ ապակողմնորոշված լինել: Պետք է քայլեր ձեռնարկել, որպեսզի այդ վկան կրկին չվնասվի հարցաքննության արդյունքում եւ նրա տված վկայության որակը հնարավորինս քիչ տուժի նրա խոցելիության պատճառով: Հաշվի պետք է առնվի նաեւ այն փաստը, որ վկան կարող է հետտրավմատիկ սթրես տանել կամ հոգեկան դժվարություններ ունենալ, որոնք կապված չեն հնարավոր դաժան վերաբերմունքի հետ, բայց կարող են ազդել նրա հիշողության, հաղորդակցվելու կարողության եւ որպես ագրեսիա ընկալվող հարցերի պատասխանների վրա:

16 *Քելլին ընդդեմ Յամայկայի* 253/1987), 1991-ի ապրիլի 8, Մարդու իրավունքների հանձնաժողովի զեկույցը, (A/46/40), 1991, *Կոնտերհան ընդդեմ Ուրուգվայի*, (139/1983),1985-ի հուլիսի 17, 2 Sel. Dec. 168; *Էստրելան ընդդեմ Ուրուգվայի*, (74/1980), 1983-ի մարտի 29, 2 Sel. Dec. 93.

3.33 Հարցաքննության ժամանակ անհրաժեշտ է պահպանել հետեւյալ կանոնները եւ անհրաժեշտության դեպքում դատարանին բացատրել դրանց պատճառները.

* **Հարցերի կրկնում.** Հնարավոր է անհրաժեշտ լինի կրկնել կամ վերաձեւակերպել հարցերը, քանի որ կան մարդիկ, որոնց համար ավելի շատ ժամանակ է պահանջվում ինֆորմացիան ընկալելու, հասկանալու եւ վերհիշելու համար:
* **Հարցերի պարզ ձեւակերպում.** Հարցերը պետք է պարզ լինեն, քանի որ որոշ մարդիկ կարող են դժվարություններ ունենալ բարդ ձեւակերպված հարցերը հասկանալու եւ պատասխանելու ընթացքում: Նրանք կարող են նաեւ սահմանափակ բառապաշար ունենալ եւ դժվարանա բացատրել ինչ որ բան այնպես, ինչպես ուրիշները հեշտությամբ կանեին:
* **Բաց եւ առանց սպառնալիքի հարցերի ձեւակերպում.** Հարցերը չպետք է սպառնալիք պարունակեն, քանի որ որոշ մարդիկ կարող են ագրեսիվ արձագանքել կոպիտ ձեւակերպված հարցերին կամ փորձել հաճոյանալ հարց տվողին: Հարցերը պետք է բաց լինեն (չպարունակեն պատասխաններ), քանի որ կան մարդիկ, որոնք հակված են կրկնելու իրենց տրամադրված տեղեկությունը կամ հարց տվողի առաջարկածը:

3.34 Դատավորները եւ դատախազները պետք է տեղյակ լինեն, որ ֆիզիկական եւ հոգեկան խոշտանգումները կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերը կարող են կիրառվել որոշակի սոցիալական, մշակութային կամ քաղաքական առանձնահատկություններ ունեցող միջավայրում, եւ վկան կարող է դժվարություններ ունենալ դա դատարանին բացատրելու հարցում: Գործողությունը, որ կարող է սովորական եւ անվնաս թվալ մի միջավայրում, կարող է խորապես վիրավորական եւ վնասող լինել մեկ այլ միջավայրում: Մի մեկնաբանություն, որ կարող է բացառապես անմեղ թվալ կրկնելու դեպքում եւ հեշտ հասկացվել, կարող է որպես մտադրված սպառնալիք ընկալվել առաջին անգամ արտահայտելիս: Դա կարող է տեղի ունենալ որոշակի մշակութային զգայունության կամ տաբուների պատճառով, ինչպիսիք են «պատիվ» եւ «ամոթ» հասկացությունները: Նման իրավիճակ նաեւ հնարավոր է այն պատճառով, որ սոցիալական եւ քաղաքական որոշ խմբեր ոստիկանության գործելակերպը համարում են դժվար ընկալելի: Օրինակ, հնարավոր է, որ վկայի կամ նրա ընտանիքի հասցեին կողավորված սպառնալիքներ են արվել ոստիկանների կողմից, եւ վկան դժվարանում է բացատրել դա դատարանին: Դատավորները պետք է փորձեն ճշտել այդ նրբությունները, եթե դա չի հաջողվել փաստաբաններին վկայի հարցաքննության ժամանակ:

3.35 Իրավական շատ համակարգերում, եթե մեղադրող կողմի վկան կասկածելի է, նա պարտավոր է այդ մասին հայտնել պաշտպանության կողմին: Որոշ երկրներում իրավապահ մարմիններից կարելի է պահանջել առանձին ծառայողներին կարգապահական կամ քրեական տույժերի ենթարկելու մասին արձանագրությունները, որպեսզի պաշտպանական կողմը կարողանա խաչաձեւ հարցաքննություն անցկացնել այն դեպքերում, երբ արժանահավատության պակաս կա: Այն դեպքերում, երբ դատավորի իրավասությունը թույլ է տալիս, նա պետք է ապահովի մեղադրող կողմի վկա հանդես եկած իրավապահ մարմինների ներկայացուցիչների՝ նախկինում քրեական կամ կարգապահական հանցանքների վերաբերյալ արձանագրությունների հայտնիությունը պաշտպանական կողմի համար: Դա հատկապես կարեւոր է այն դեպքերում, երբ առկա է խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի մասին հայտարարություն, հատկապես, եթե ծառայողը նախկինում ենթարկվել է պատասխանատվության նման վարքի համար: Դա կարող է նման գործողություններում չներգրավվելու զսպող գործոն դառնալ ծառայողների համար, քանի որ հետագայում նրանք կարող են արժեքազրկվել որպես մեղադրող կողմի վկա:

3.36 Երբ դատավորը եզրափակում է դատաքննությունը կամ ներկայացնում որոշման հիմքերը եւ պատճառները, կարեւոր է երաշխավորել, որ խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի մասին հայտարարությունները եւ վկայությունները հաշվի են առնվել: Այն դեպքերում, երբ դատավարությանը մասնակցում են ատենակալներ, անհրաժեշտ է մանրամասն բացատրել, թե ինչու են արգելված խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի բոլոր ձեւերը, անկախ իր նկատմամբ խոշտանգումներ կիրառելու մասին հայտարարություն արած անձից կամ նրան մեղսագրվող արարքից: Սա հատկապես կարեւոր է այն դեպքերում, երբ նման հայտարարություն անող անձը պատկանում է այլ ռասայի, սեռի, սեռական այլ կողմնորոշում ունի կամ այլ ազգության է պատկանում, ունի տարբերվող քաղաքական եւ կրոնական հայացքներ, կամ ունի ատենակալներից տարբերվող սոցիալական, մշակութային, էթնիկական ծագում: Դա նաեւ կարեւոր է, եթե նման հայտարարություն արած անձը մեղադրվում է հատկապես ծանր կամ խիստ դատապարտելի հանցագործություն կատարելու մեջ:

3.37 Այնպիսի հասարակություններում, որտեղ որոշակի սոցիալական խմբեր բացասական են ընկալվում կամ այդ խմբերի անդամներ նույնականացվում են որոշակի տեսակի հանցագործությունների հետ, ատենակալները չպետք է վերապահումներ ունենան ու եզրակացնեն, թե տուժողն «արժանի է խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի եւ տառապանքի»: Նմանապես, եթե դատավարության ընթացքում հետազոտված ապացույցները մատնանշում են ամբաստանյալի մեղավոր լինելը, ատենակալները ենթադրական խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի կիրառումը չպետք է ընկալեն ավելի թեթեւ ու համարեն, թե ոստիկանությունն ընդամենը փորձում էր «շտկել վիճակը»: Ատենակալներին ուղղություն ցույց տալիս դատավորը պետք է ընդգծի բոլոր պարագաներում խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի բացարձակ անընդունելիությունը:

3.38 Դատավորները պետք է նաեւ հիշեցնեն ատենակալներին, որ վերջիններս հաշվի առնեն «մշակութային» գործոնները, երբ նման հայտարարությունների վերաբերյալ իրենց «ողջամտությունն» են կիրառում: Ատենակալները չպետք է կանխակալ կարծրատիպեր կիրառեն որոշակի խմբերի նկատմամբ կամ բնազդաբար համարեն, որ մի խմբի վկայություններն ավելի արժանահավատ են, քան մեկ այլ խմբինը, եւ պետք է փորձեն հասկանալ, թե ինչ ազդեցություն կարող են ունենալ ֆիզիկական կամ հոգեկան դաժան վերաբերմունքի տարբեր ձեւերը իրենցից տարբերվող տուժողի վրա:

Արտաքսման դեպքում պաշտպանելու պարտավորությունը

3.39 Որոշ դեպքերում դատավորներից կարող է պահանջվել անձին ուղարկել կամ վերադարձնել այնտեղ, ուր վերջինս կարող է խոշտանգումների իրական վտանգի առաջ կանգնել: Նման իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, պահանջվող հանձնման կապակցությամբ կամ արտաքսման որոշման բողոքարկումը քննարկելիս:

3.40 Անձի իրավունքը ուղարկված չլինելու այն երկիր, որտեղ բավարար հիմքեր կան մտածելու, որ անձը կկանգնի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վտանգի առաջ, հստակ ամրագրված է մարդու իրավունքներում: Այդ իրավունքը կիրառելի է բոլոր անձանց համար ցանկացած ժամանակ: Այդ իրավունքը ճանաչվել է որպես խոշտանգումներից կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերից պաշտպանվելու իրավունքի մի մաս, որն ամրագրված է Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում (1966թ.), Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում (1950թ.), Մարդու իրավունքների

ամերիկյան կոնվենցիայում (1978թ.), Մարդու եւ ժողովուրդների իրավունքների աֆրիկական խարտիայում (1981թ.), ՄԱԿ-ի Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայում (1984թ.) եւ Խոշտանգումների եւ անմարդկային եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի եւ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիայում (1987թ.):

3.41 Մարդու իրավունքների հանձնաժողովն ու Եվրոպական դատարանը հայտարարել են, որ անձին անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի իրական վտանգի առաջ կանգնեցնելը խախտում է անձի՝ նման գործողություններից պաշտպանված լինելու իրավունքը:[17] Մարդու իրավունքների հանձնաժողովը փաստել է, որ մասնակից պետությունները հանձնման, արտաքսման կամ վերադարձնելու արդյունքում անձի երկիր վերադառնալուց հետո չպետք է անձանց կանգնեցնեն խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի առաջ:[18] Եվրոպական դատարանը փաստել է, որ խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի բացարձակ արգելքը կիրառելի է անկախ տուժողի կատարած արարքից եւ չի կարող անտեսվել՝ ելնելով ազգային շահերից կամ երբ հարցը վերաբերում է կասկածվող ահաբեկիչներին:[19] Նույնիսկ այն դեպքերում, երբ մասնավոր խմբերից, օրինակ, զինված ապստամբներից կամ հանցագործներից վտանգ կա, եթե պետությունը ի վիճակի չէ կամ չի ցանկանում պաշտպանել անձանց նման վերաբերմունքից, դա կարող է որակավորվել որպես խախտում:[20] Բացառիկ դեպքերում Եվրոպական դատարանը համարել է, որ անձին համապատասխան բժշկական հաստատություններ չունեցող երկիր վերադարձնելու վտանգը կարող է որակավորվել որպես 3-րդ հոդվածի խախտում:[21] Խոշտանգումների դեմ հանձնաժողովը պահանջել է, որպեսզի Կոնվենցիային անդամակցող երկրները չարտաքսեն անձին, որը կարող է ապացուցել նման վերաբերմունքի ենթարկվելու «իրական եւ անձնական վտանգը»:[22] Հանձնաժողովն ընդգծել է, որ այդ պաշտպանությունը պետք է բացարձակ բնույթ կրի «անկախ այն բանից՝ կատարել է ներգրավված անձը հանցագործություն, թե ոչ եւ անկախ հանցագործության ծանրությունից»:[23]

17 *Սոերինգ ընդդեմ Միացյալ թագավորության*, 1989թ., ՄԻԵԴ, Սերիա A, No. 161: Տես նաեւ *Քրուզն ընդդեմ Շվեյցարիայի*, 1981թ., ՄԻԵԴ, Սերիա A no.201, *Վիլվարայան ընդդեմ Միացյալ թագավորության*, 1991թ. ՄԻԵԴ, Սերիա A, No. 215, *H.L.R ընդդեմ Ֆրանսիայի*, 1997թ. ՄԻԵԴ , *Սերիա A, D ընդդեմ Միացյալ թագավորության*, 1997թ., մայիսի 2-ի որոշում, *Ջաբարին ընդդեմ Միացյալ թագավորության*, 2000թ., նոյեմբերի 11-ի որոշում, Մարդու իրավունքների հանձնաժողովի որոշումը *Ng ընդդեմ Կանադայի* բողոքի վերաբերյալ (469/1991), Մարդու իրավունքների հանձնաժողովի զեկույցը, Vol II, GAOR, 49-րդ Նստաշրջան, Լրացում No. 40 (1994), Հավելված IX CC եւ Մարդու իրավունքների հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն 2, Զեկույցների վերաբերյալ ձեռնարկ (13-րդ նստաշրջան, 1981թ.), Ընդհանուր մեկնաբանությունների եւ ընդհանուր հանձնարարականների ժողովածու, որ ընդունվել է Մարդու իրավունքների պայմանագրային մարմինների կողմից, ՄԱԿ-ի փաստաթուղթ HRI\GEN\1\Rev.1 at 3 (1994) պարբերություն 3

18 Մարդու իրավունքների հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն 20, պարբերություն 9

19 *Չահալն ընդդեմ միացյալ թագավորության*, ՄԻԵԴ 1996թ., նոյեմբերի 15-ի որոշում

20 *Ահմեդն ընդդեմ Ավստրիայի*, ՄԻԵԴ, 1996-ի դեկտեմբերի 17-ի որոշում; H.L.R.ընդդեմ Ֆրանսիայի, ՄԻԵԴ 1997 թ-ի ապրիլի 29-ի որոշում

21 *D. ընդդեմ Միացյալ թագավորության*, ՄԻԵԴ, 1997-ի մայիսի 2 որոշում

22 Տես, օրինակ, Խոշտանգումների դեմ հանձնաժողովի զեկույցը, *Մուրսաևրոն ընդդեմ Շվեյցարիայի*, (13/1993) GAOR, 49-րդ նստաշրջանի Լրացում No.44 (1994) *Խանը ընդդեմ Կանադայի*, (15/1994), GAOR, 50-րդ նստաշրջանի Լրացում No.44 (1995)

23 Նույն տեղում

3.42 Փախստականների կարգավիճակի մասին 1951թ.-ի կոնվենցիան եւ 1967 թ-ի Արձանագրությունը հատուկ դրույթներ ունեն փախստականների վերաբերյալ, որոնք պետք է պահպանվեն տեղական դատարանների կողմից: Փախստականի եւ ապաստան խնդրողի կարգավիճակի կարեւոր տարրերից է նրանց պաշտպանությունն այն երկիր վերադարձից, որտեղ այդ անձին կարող են հետապնդել: Այդ պաշտպանության իրավունքը արտացոլվել է հարկադիր վերադարձի անթույլատրելիության սկզբունքում (principle of *non-refoulement*)՝ անձի իրավունքը չվերադարձվել այն երկիր, որտեղ անձի կյանքը կամ ազատությունը կարող է վտանգված լինել: Այդ սկզբունքը լայնորեն ընդունված է պետությունների կողմից: *Չվերադաձնելու* սկզբունքն ամրագրվել է փախստականների մասին մի շարք միջազգային փաստաթղթերում, ինչպես համընդհանուր, այնպես էլ ազգային մակարդակում:

3.43 Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի 33(1) հոդվածը ասում է. «Ոչ մի մասնակից պետություն չպետք է արտաքսի կամ վերադարձնի փախստականներին այն տարածքներ, որտեղ անձի կյանքին կամ ազատությանը սպառնալիք կա՝ ելնելով որոշակի ռասայի, դավանանքի, ազգության, սոցիալական խմբի պատկանելուց կամ քաղաքական հայացքներից»: Չվերադարձնելու սկզբունքը կազմում է 1951թ.-ի Կոնվենցիայի հիմնական հոդվածներից մեկը: Այդ սկզբունքը նաեւ ամրագրված է Կոնվենցիայի 1967թ.-ի Արձանագրության մեջ: Ի տարբերություն Կոնվենցիայի այլ դրույթների, այս սկզբունքի կիրառումը կախված չէ երկրի տարածքում փախստականի բնակության օրինականությունից: Այն կիրառելի է անկախ այն հանգամանքից, թե անձը պաշտոնապես ճանաչվել է փախստական, թե այդ կարգավիճակը դեռեւս պետք է քննարկվի: Համընդհանուր մակարդակում ընդունված լինելու պատճառով սա դառնում է ընդհանուր կամ սովորութային միջազգային իրավունքի սկզբունք եւ նույնիսկ *jus cogens*՝ այդպիսով պարտադիր դառնալով բոլոր պետությունների համար: Ուստի ոչ մի պետություն չպետք է արտաքսի անձին այս հանգամանքներում:

4 Խոշտանգումների փաստերի հետաքննության եւ նախաքննության իրականացում

Բովանդակություն

72 Արձագանքը խոշտանգումների մասին հայտարարություններին
72 Հետաքննության անցկացման սկզբունքները
77 Բժշկական ապացույցները
78 Հարցաքննությունների անցկացումը
79 Խոշտանգումների ենթադրյալ զոհերի հարցաքննությունը
83 Սեռական բռնության ենթադրյալ զոհերի հարցաքննությունը
83 Երեխաների եւ անչափահասների հարցաքննությունը
84 Կասկածյալների հարցաքննությունը
84 Այլ վկաների բացահայտումը
85 Վկաների պաշտպանության խնդիրները

4 Խոշտանգումների փաստերի հետաքննության եւ նախաքննության իրականացում

4.1 Այս գլխում քննարկվում է, թե դատախազներն ու դատավորները ինչպես պետք է անցկացնեն խոշտանգումների փաստերի հետաքննությունն ու նախաքննությունը: Այստեղ քննարկվում է, թե ինչպես նրանք պետք է արձագանքեն հայտարարություններին եւ ապացույցներ հավաքեն: Այս գլխում նաեւ ներկայացված են խորհուրդներ տուժողների, վկաների եւ կասկածյալների հարցաքննության եւ հետաքննության ու դատական փուլերում վկաների պաշտպանության վերաբերյալ:

4.2 Նման հետաքննությունների եւ նախաքննությունների իրականացման պարտավորությունն հստակորեն ամրագրված է միջազգային իրավունքում: Խոշտանգումների դեմ կոնվենցիան մասնակից պետություններից պահանջում է իրենց իսկ նախաձեռնությամբ իրականացնել խոշտանգումների դեպքերի հետաքննություն, անգամ եթե պաշտոնական բողոք չի եղել, ապահովել անձանց բողոք ներկայացնելու, այդ բողոքների հիման վրա հետաքննություն եւ պաշտպանություն ունենալու, որպես հետեւանք առաջացած սպառնալիքներից կամ դաժան վերաբերմունքից պաշտպանվելու իրավունքները:[1] Նույն պարտավորությունները կիրառվում են դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի առնչությամբ:[2]

4.3 Մարդու իրավունքների հանձնաժողովն իր մեկնաբանություններում նշել է, որ խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի դեմ բողոք ներկայացնելու իրավունքը պետք է ամրագրված լինի ազգային օրենսդրության մեջ: Բողոքները պետք է անհապաղ եւ անաչառ կերպով քննարկվեն իրավասու մարմնի կողմից: Պետությունը պետք է նաեւ պատասխանատվության ենթարկի այն անձանց, որոնք ներգրավված են եղել նման գործողություններում՝ «հրահրելով այդ գործողությունները, կարգադրելով, որ դրանք իրականացվեն, լռելյայն համաձայնությամբ կամ կատարելով այդ գործողությունները»:[3] Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրակացրել է, որ պետությունները պարտավոր են քննության ենթարկել խոշտանգումների վերաբերյալ բոլոր «վիճելի բողոքները» եւ դա ներառում է ինչպես արդյունավետ դատական պաշտպանության սկզբունքը, այնպես էլ խոշտանգումներից պաշտպանված լինելու իրավունքը:[4] Դատարանը նաեւ փաստել է, որ «այն դեպքերում, երբ անձը ոստիկանություն է տեղափոխվել նորմալ առողջական վիճակում, սակայն նրա վրա վնասվածքներ են հայտնաբերվել ազատվելու ժամանակ, պետությունը պարտավոր է համոզիչ բացատրություններ տալ այդ

1 Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ եւ 13-րդ հոդվածներ

2 Նույն փաստաթուղթը, հոդված 16

3 Մարդու իրավունքների հանձնաժողովի Ընդհանուր մեկնաբանություն 20, պարբերություններ 13 եւ 14

4 *Ասանով եւ մյուսներն ընդդեմ Բուլղարիայի*, ՄԻԵԴ, 1998թ-ի հոկտեմբերի 28-ի որոշում, *Ակսոյն ընդդեմ Թուրքիայի*, 1996 թ-ի դեկտեմբերի 18-ի որոշում

վնասվածքների սպառճառների վերաբերյալ»:[5] Այն դեպքերում, երբ անձը վիճելի բողոք է ներկայացնում, որ լուրջ դաժան վերաբերմունքի է ենթարկվել պաշտոնատար անձի կողմից, պետությունը պարտավոր է արդյունավետ եւ անկախ պաշտոնական հետաքննություն անցկացնել, այդ թվում՝ վկաներից ցուցմունք վերցնել եւ դատաբժշկական ապացույցներ հավաքագրել, ինչը կհանգեցնի պատասխանատվություն կրող անձանց հայտնաբերմանը եւ պատժի ենթարկելուն:[6] Դատարանը նշել է, որ առանց հետաքննություն անցկացնելու պարտավորության «խոշտանգումների եւ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի եւ պատժի ընդհանուր իրավական արգելքն անարդյունավետ կլինի, եւ որոշ դեպքերում պաշտոնատար անձանց համար հնարավոր կլինի, առանց պատժվելու վտանգի, ոտնահարել իրենց հսկողության տակ գտնվող անձանց իրավունքները»:[7] Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը նույնպես եզրակացրել է, որ հետաքննություն անցկացնելու ձախողումը խոշտանգումներից եւ անմարդկային վերաբերմունքից պաշտպանված լինելու իրավունքի խախտում է:[8]

4.4 Խոշտանգումների գծով հատուկ զեկուցողը նշել է, որ «այն դեպքում, երբ ազատազրկված անձը կամ նրա հարազատը կամ փաստաբանը բողոք են ներկայացնում խոշտանգումների վերաբերյալ, անհրաժեշտ է անցկացնել համապատասխան քննություն... Խոշտանգումների վերաբերյալ բողոքները պետք է քննարկվեն անհապաղ եւ այնպիսի մարմնի կողմից, որն անկախ է ենթադրվող տուժողի դեմ մեղադրանք ներկայացնող եւ հետաքննություն իրականացնող մարմնից»:[9]

5 *Ռիքիչն ընդդեմ Ավստրիայի*, ՄԻԵԴ, 1995թ.-ի դեկտեմբերի 4-ի որոշում, *Ակսոյն ընդդեմ Թուրքիայի*, 1996 թ.-ի դեկտեմբերի 18-ի որոշում, *Աասենով եւ մյուսներն ընդդեմ Բուլղարիայի*, ՄԻԵԴ, 1998թ.-ի հոկտեմբերի 28-ի որոշում, *Կուրտն ընդդեմ Թուրքիայի*, ՄԻԵԴ , 1998թ.-ի մայիսի 25 -ի որոշում, *Կակիչին ընդդեմ Թուրքիայի*, ՄԻԵԴ, 1999 թ.-ի հուլիսի 8-ի որոշում, *Ակդենիզը եւ մյուսներն ընդդեմ Թուրքիայի* ՄԻԵԴ, 2001 թ.-ի մայիսի 31-ի որոշում

6 Նույն տեղը: Տես նաեւ *Սեւսաին ընդդեմ Թուրքիայի*, ՄԻԵԴ 2000 թ.-ի ապրիլի 11-ի որոշում; *Քելլին եւ մյուսներն ընդդեմ Միացյալ թագավորության*, ՄԻԵԴ, 2001 թ-ի մայիսի 4-ի որոշում

7 Նույն տեղը, տես նաեւ *Սեյմունին ընդդեմ Ֆրանսիայի*, ՄԻԵԴ, 1999թ.-ի հուլիսի 28-ի որոշում

8 *Վելասկես Ռոդրիգեսի գործը*,1988թ.-ի հուլիսի 29-ի որոշում, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարան, սերիա C, No. 4

9 Խոշտանգումների գծով հատուկ զեկուցողի զեկույց, ՄԱԿ-ի փաստաթուղթ, A/56/156, 2001թ.-ի հուլիս, պարբերություն 39(d)

Գործ համար 0002.00.049085 9-00, Վառա 19, Սան Պաուլոյի Քրեական դատարան, 2002թ.-ի օգոստոսի 15 (Բրազիլիա)

Երկու տղամարդ ձերբակալվել էին 2000թ.-ի հունվարի 10-ին եւ նրանց ապօրինի զենք կրելու մեղադրանք էր առաջադրվել: Նրանց տարել էին Jardim Ranieri՝ ռազմական ոստիկանությունում նոր բացված բազա Սան Պաուլոյի հարավում, որտեղ նրանց հարցաքննել էին նաեւ կողոպուտի առնչությամբ, որի ընթացքում սպանվել էր անվտանգության ծառայության անդամներից մեկը:

Անվտանգության ծառայության անդամը նաեւ ոստիկան էր, որ ծառայությունից ազատ ժամանակ աշխատում էր մասնավոր ընկերությունում: Սպանությունը հետաքննող ոստիկանական ծառայողը ստացել էր տեղեկություններ այն մասին, որ երկու ձերբակալված տղամարդիկ ներգրավված էին կողոպուտի մեջ: Նրանք շարունակում էին ձերբակալվածների հարցաքննությունը մեղքի խոստովանություն ստանալու կամ իրենց գործընկերոջ սպանության մեջ մեղավորների անունները պարզելու նպատակով:

Տուժողները հայտնել էին, որ Jardim Ranieri-ում ձերբակալության ընթացքում նրանց կրկնվող խոշտանգումների էին ենթարկում: Նրանք պնդում էին, որ նրանց հարվածել են բռունցքներով եւ ոտքերով եւ խեղդել գլխներին պոլիէթիլենային տոպրակներ հագցնելով: Նրանցից մեկին ենթարկել էին էլեկտրական շոկով խոշտանգումների՝ միացնելով հոսանքալարը նրա մատնեմատին: Դրա հետեւանքով նա կորցրել է իր մատնեմատը: Բժշկական եզրակացությունները փաստել էին, որ ստացված վնասվածքները համապատասխանում էին հայտարարված խոշտանգումներին: Խոշտանգումների արդյունքում տուժողները մատնանշել էին մեկ այլ անձի՝ «Պեզինո» մականունով, որն իբր ներգրավված էր եղել կողոպուտի մեջ: «Պեզինոյին» բերման էին ենթարկել Jardim Ranieri-ի ոստիկանական բաժին՝ առանց նրան պաշտոնապես ձերբակալելու: Նա իր հերթին մատնանշել է մեկ այլ անձի «Ալեմաո» մականունով, որն, ըստ հայտարարության, անմիջականորեն կատարել էր սպանությունը: Հետագայում «Ալեմաոյին» սպանել են՝ «ձերբակալության ժամանակ դիմադրություն ցույց տալու ընթացքում»: Այս գործը հայտնի դարձավ այն բանից հետո, երբ Սան Պաուլոյի քաղաքապետին հրավիրել էին Jardim Ranieri ոստիկանության նոր բաժնի բացմանը մոտավորապես նույն ժամանակ: Կատարվածի վերաբերյալ տարբեր ասեկոսեներ լսելուց հետո քաղաքապետը լիարժեք հետաքննություն նշանակեց, ինչի արդյունքում մեղադրանք առաջադրվեց պատասխանատվություն կրող ոստիկանության ծառայողներին: Երկու ոստիկան դատապարտվեցին խոշտանգումների անմիջական կիրառման համար՝ համապատասխանաբար ութ եւ ինը տարվա ազատազրկման: Երրորդ անձը՝ ոստիկանապետը, հանցագործությունը չկանխարգելելու կամ հետաքննություն չիրականացնելու համար դատապարտվեց երկու տարի ազատազրկման: Դատավորը մեկնաբանել է, որ վերջինս ձախողել էր քննության արժանացնելու իր ստորադասների գործողությունները, չնայած բազմաթիվ խախտումներին, որոնց մասին նա պարտավոր էր տեղյակ լինել: Խոշտանգումներ կիրառելու համար դատապարտված երկու ոսիտկաններին նաեւ արգելվել է պետական պաշտոններ զբաղեցնել պատիժը կրելուց հետո:

Արձագանքը խոշտանգումների մասին հայտարարություններին

4.5 Եթե ազատազրկված անձը կամ նրա հարազատը կամ փաստաբանը խոշտանգումների վերաբերյալ բողոք են ներկայացնում, անհապաղ պետք է իրականացվի քննություն: Ազատազրկման վայրերում կամ ազատվելուց անմիջապես հետո մահվան դեպքերի վերաբերյալ դատական մարմնի կամ անաչառ այլ կառույցի կողմից պետք է ճշանակվի նախաքննություն:

4.6 Բողոքն արձանագրելու ընթացակարգը պետք է պարզ լինի եւ սկզբնական շրջանում՝ գաղտնի: Բողոքարկման մեխանիզմի առկայությունը պետք է լայնորեն հրապարակվի, մարդկանց հորդորելով, որ նրանք հայտնեն խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ դեպքերի մասին: Եթե բողոք ներկայացնելու համար անհրաժեշտ է դիմումի ձեւ լրացնել, այդ դիմումի ձեւերը պետք է մատչելի լինեն հանրության համար՝ երկրում օգտագործվող հիմնական լեզուներով: Պետք է հնարավոր լինի բողոքը փոխանցել համապատասխան մարմնին փակ ծրարով, որպեսզի ազատազրկման վայրի անձնակազմը, որ շփում ունի ազատազրկված անձի հետ, հնարավորություն չունենա կարդալու բողոքը: Բողոքը ստացող մարմինը պետք է անհապաղ հաստատի դրա ստացումը: Եթե բողոքը վերաբերում է ներկային եւ տվյալ անձը վտանգի տակ է, պետք է անհապաղ քայլեր ձեռնարկվեն: Բոլոր դեպքերում պետք է սահմանվեն քննության անցկացման եւ բողոքին արձագանքման խիստ ժամկետներ: Տուժողները եւ նրանց օրինական ներկայացուցիչները պետք է հնարավորություն ունենան տեղեկանալու քննության ընթացքի մասին:

4.7 Տուժողները եւ վկաները պետք է պաշտպանված լինեն քննության ընթացքում եւ դրանից հետո: Այն անձինք, որոնց նկատմամբ քննություն է իրականացվում, պետք է բողոքարկողների, վկաների կամ նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաեւ քննություն իրականացնողների նկատմամբ ուղղակի կամ անուղղակի վերահսկողություն կամ իշխանություն իրականացնելու հնարավորություն չունենան: Եթե բողոքն ակնհայտորեն վատ չէ հիմնավորված, քննության ենթարկվող պաշտոնյաների լիազորությունները ժամանակավորապես պետք է կասեցվեն՝ մինչեւ քննության ավարտը եւ հետագա դատական կամ կարգապահական վարույթը: Այն դեպքերում, երբ տվյալ պահից ազատազրկվածները վտանգված են, նրանց անհրաժեշտ է տեղափոխել այլ հիմնարկ, որտեղ նրանց անվտանգության համար հատուկ քայլեր կձեռնարկվեն: Անհրաժեշտության դեպքում, խոշտանգումների զոհերը եւ վկաները պետք է ներառվեն վկաների պաշտպանության ծրագրերում: Վկաների պաշտպանության ծրագրերը պետք է բաց լինեն խոշտանգումների զոհերի եւ վկաների համար՝ անկախ նրանց դատապարտված լինելուց:

Հետաքննության անցկացման սկզբունքները

4.8 Երկրի իրավական համակարգի բնույթից ելնելով՝ նախաքննությունը եւ հետաքննությունը կարող են իրականացնել դատախազները, հաշտարար դատավորները եւ դատավորները, մարդու իրավունքների ազգային ինստիտուտները (ինչպիսիք են Օմբուդսմենը եւ մարդու իրավունքների հանձնաժողովները) կամ տեսչական կառույցները: Որոշ երկրներ Գլխավոր դատախազության կամ այլ կառույցի ներսում կարող են ստեղծել «խոշտանգումների հետաքննության բաժիններ»:

4.9 Նախաքննությունը կարող է նաեւ ընդունել ոստիկանության կամ այլ իրավապահ մարմինների ներքին քննության ձեւ՝ հնարավոր կարգապահական պատժամիջոցներ կիրառելու կամ դատախազությանը գործը փոխանցելու նպատակով. որպես դատական քննություն կամ կորոների կողմից իրականացվող քննություն՝ մահով ավարտված դեպքերում, բռնությունների որոշակի դեպքերում քննություն իրականացնող հատուկ դատական հանձնաժողով, բողոքների քննություն իրականացնող մարմին, որ անմիջականորեն պատասխանատու է ոստիկանության կողմից բռնությունների դեպքերի կամ ներքին քննությունների վերահսկողություն իրականացնելու համար: Այն դեպքերում, երբ հայտնաբերվում են հանցագործության *prima facie*՝ առաջին հայացքից ապացույցներ, դրան անպայման պետք է հետեւի քրեական հետաքննություն:

4.10 Դատախազներն ու դատավորները, որոնք ներգրավված են հետաքննության իրականացման մեջ, պետք է հնարավորինս ապահովեն հետեւյալ սկզբունքների պահպանումը.

* Հետաքննությունը պետք է իրականացվի իրավասու, որակավորում ունեցող եւ անաչառ փորձագետի կողմից, որն անկախ է կասկածվող իրավախախտներից եւ այն կառույցներից, որոնցում նրանք աշխատում են:
* Քննություն իրականացնողները պետք է հնարավորություն ունենան ծանոթանալու անհրաժեշտ բոլոր տեղեկություններին, բյուջետային տեխնիկական միջոցներին՝ բողոքի բոլոր կետերի լիարժեք հետաքննություն իրականացնելու համար:
* Քննություն իրականացնողները պետք է ազատազրկման վայրեր անսահմանափակ մուտքի, բոլոր փաստաթղթերին ծանոթանալու եւ բոլոր անձանց հետ հաղորդակցվելու հնարավորություն ունենան: Քննություն իրականացնող մարմինը պետք է վկաներին կանչելու, ապացույցներ պահանջելու եւ գործին առնչվող բոլոր հրամանների, հանձնարարությունների եւ նյութերի վրա կալանք դնելու իրավասություն ունենա: Բոլոր հետաքննությունների արդյունքները պետք է հրապարակվեն:

4.11 Անգամ եթե խոշտանգումների եւ այլ դաժան վերաբերմունքի մասին բողոքները հետաքննության արդյունքում չեն հաստատվել, կարեւոր է ապահովել հետաքննության պատշաճությունը եւ ցույց տալ, որ այն պատշաճ է իրականացվել: Բողոքի վերաբերյալ պետք է տալ պատճառաբանված գրավոր որոշում, որում նշվում են ապացույցները, ինչպես նաեւ հետաքննության ավարտին ձեռք բերված փաստերը: Պետք է սահմանել հստակ եւ վերահսկվող ընթացակարգ, ցույց տալու, որ իրականացվել է լիարժեք, անաչառ եւ անհապաղ հետաքննություն եւ բացատրել, ինչու են արվել տվյալ եզրակացությունները: Յուրաքանչյուր հետաքննության իրականացման ընթացքը պետք է պարբերաբար վերլուծվի, եւ արդյունքները պետք է արձանագրվեն՝ լավագույն մեթոդները եւ փորձը պարզելու համար, իսկ «քաղված դասերը» կօգնեն բարելավել ապագա հետաքննողների աշխատանքը:

4.12 Հետաքննությունների արդյունքում անհրաժեշտ է պարզել խոշտանգումների վերաբերյալ հայտարարությունների փաստերը, պարզել խոշտանգումների կիրառմանն առնչվող բոլոր դեպքերը եւ առաջարկել նման պրակտիկայի կրկնությունը կանխարգելող միջոցներ: Հետաքննության նպատակը պետք է լինի ոչ միայն խոշտանգողների, այլեւ այդ ժամանակ ազատազրկված անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձանց, ինչպես նաեւ ենթադրվող խոշտանգումներին կամ դաժան վերաբերմունքին առնչվող օրինակների հայտնաբերումը:

4.13 Նման հետաքննության նպատակն է բացահայտել բողոքի հետ կապված իրականությունը: Եթե բողոքը հիմնավորված է, հետաքննության ընթացքում անհրաժեշտ է ապացույցներ հավաքել երեք տարբեր նպատակների համար.

* Կարգապահական գործողություններ պատասխանատու անձանց նկատմամբ,
* Քրեական հետապնդում պատասխանատու անձանց նկատմամբ,
* Փոխհատուցում տուժողին եւ պետության կողմից լիարժեք բավարարում եւ հատուցում:

4.14 Ապացուցման չափանիշները վերոնշյալ յուրաքանչյուր կետի համար կարող են տարբեր լինել նույնիսկ այն դեպքերում, երբ քննությունն անհապաղ է իրականացվել, քննության տարբեր փուլերի միջեւ կարող է զգալի ժամանակ անցնել: Չափազանց կարեւոր է, որ վերոնշված նպատակներին հասնելու համար հավաքված ապացույցների որակը բարձր լինի եւ կիրառելի ցանկացած հայտարարություն հերքելու կամ հաստատելու համար՝ պահանջված չափանիշների մակարդակով:

4.15 Խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի ցանկացած հետաքննության կարեւոր տարրերից մեկն այն է, որ կանոնավոր արձանագրություններ տարվեն քննության այս կամ այն ուղղությունը դադարեցնելու կամ շարունակելու վերաբերյալ: Բնականաբար, պետք է վարել այդ որոշումների եւ դրանց հիմնավորումների մանրամասն արձանագրություն: Անհրաժեշտ է ճշգրիտ եւ անսխալ գրանցել անցկացվող բոլոր միջոցառումները եւ ստացված բոլոր տեղեկությունները, վերջնական փաստաթուղթը պետք է պահվի հետագայում դատարանի կողմից օգտագործվելու համար:

4.16 Ստորեւ բերված է հետաքննություն իրականացնող անձանց համար կանոնների հիմնական ցանկը.

* Բոլոր միջադեպերը պետք է քննության առնվեն որպես խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի հետ կապված հնարավոր հանցագործություններ, մինչեւ չի ապացուցվել հակառակը:
* Քննությունը պետք է ծրագրվի եւ կառուցվի այնպես, որ ապահովվի ստացված բոլոր տեղեկությունների ուսումնասիրությունը, իսկ նախաքննությունը պետք է իրականացվի անհապաղ՝ փաստերն արագ եւ ճշգրիտ բացահայտելու համար:
* Հանգամանքների քննությունը պետք է լիարժեք եւ անաչառ լինի: Ողջ տեղեկատվությունը պետք է գրանցվի եւ արձանագրվի՝ դատարանի համար բարձր որակի ապացույցներ պահովելու համար:
* Բոլոր կողմերին անհրաժեշտ է տրամադրել համապատասխան մակարդակի տեղեկատվություն, սակայն պետք է նաեւ քայլեր ձեռնարկել քննության ընթացքը չխոչընդոտելու համար:
* Տուժողները եւ վկաները քննության ընթացքում պետք է պաշտպանված լինեն, անհրաժեշտ բոլոր քայլերը ձեռնարկելով, որպեսզի խոշտանգումների կիրառման հետ առնչություն ունեցողները չկարողանան խանգարել եւ վտանգել նախաքննության ընթացքը
* Խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի զոհերի հետ անհրաժեշտ է զգուշորեն վարվել եւ համապատասխան աջակցություն ապահովել: Պետք է քայլեր ձեռնարկել քննության ընթացքում նրանց կրկին չվնասելու համար:
* Այն դեպքերում, երբ խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի հետեւանքով անձը մահացել է, նույն աջակցությունը եւ վերաբերմունքը պետք է ցուցաբերել նրա հարազատների, ընկերների եւ ընտանիքի անդամների նկատմամբ:

* Քննության ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել ներգրավված անձանց խոցելիությունը:
* Քննության ընթացքում պետք է զգուշություն դրսեւորել այնպիսի գործոնների նկատմամբ, ինչպիսիք են խոշտանգումներից տուժածների կամ հանցագործների սեռը, սեռական կողմնորոշումը, ռասան եւ ազգությունը, քաղաքական եւ կրոնական հայացքները, սոցիալական, մշակութային կամ էթնիկ ծագումը:

4.17 Խոշտանգումների բացահայտմանն ուղղված հետաքննության ընթացքում անհրաժեշտ է հետեւել նույն սկզբունքներին, որոնց հիման վրա իրականացվում են այլ լուրջ հանցագործությունները բացահայտելու քննությունները: Հիմնական տարբերությունն այն է, որ ենթադրյալ հանցագործությունը իրականացվել է իրավապահների կամ այլ պետական պաշտոնյայի կողմից, ինչը դժվարացնում է ընթացքը՝ ի տարբերություն հացագործության այլ տեսակների բացահայտման: Խոշտանգումների հետ կապված հանցագործությունները հաճախ կատարվում են արտաքին աշխարհի համար փակ վայրերում, ուր չկան անկախ վկաներ: Ապացույցները կարող են քանդվել կամ թաքցվել, եւ իրավապահները կամ այլ պետական պաշտոնյաներ գուցե պահպանեն լռության ավանդույթը: Տուժողներին եւ վկաներին նույնպես կարող են ահաբեկել՝ լռություն պահպանելու նպատակով:

4.18 Ցանկացած քննության իմաստն է ձեռք բերել, գրանցել, ճշգրտել եւ մեկնաբանել հավաքված ապացույցները: Նյութերի հավաքագրումը, պահպանումը եւ մշակումը քննիչի հիմնական գործն է: Դատարանը պետք է գնահատի այդ նյութերի ապացուցողական արժեքը: Ցանկացած քննության համար հույժ կարեւոր են հետեւյալ կետերը.

* **պարզել** «հանցագործության վայրը»,
* **պաշտպանել** «հանցագործության վայրը»,
* **պահպանել** «հանցագործության վայրը»:

Խոշտանգումները հիմնականում տեղի են ունենում այն վայրերում, որտեղ անձանց ազատությունը սահմանափակված է, այդ իսկ պատճառով ֆիզիկական ապացույցների պահպանումը կամ հանցագործության վայրի մատչելիությունը կարող են դժվարանալ: Քննիչին պետք է լիազորություն տրվի մուտք գործելու ցանկացած վայր եւ շինություն, որտեղ ենթադրաբար տեղի է ունեցել խոշտանգում, եւ ապահովվի հանցագործության վայրը պահպանելու հնարավորությունը: Հակառակ դեպքում, քննությունը կարող է վարկաբեկվել առարկաների տեղաշարժման, ապացույցների վերացման կամ լրացուցիչ ապացույցների կորստի հետեւանքով:

4.19 Քննիչները պետք է գրանցեն ֆիզիկական ապացույցների հայտնաբերման եւ պահպանման հետ առնչվող ազատազրկման վայրերի հերթականությունը, որպեսզի հետագայում այդ ապացույցները կիրառելի լինեն դատական վարույթի եւ հնարավոր քրեական հետապնդման ժամանակ: Քննիչը պետք է բացահայտի ենթադրվող հանցագործությունը հերքող կամ ապացուցող տարրերի առկայությունը կամ բացակայությունը եւ նման գործողությունների շարունակական պրակտիկայի վերաբերյալ ցանկացած ապացույցները:

4.20 Քննիչները պետք է պահպանեն ազգային օրենքները եւ կանոնները, այդ թվում՝ անմեղության կանխավարկածը եւ, անհրաժեշտության դեպքում, այդ մասին տեղյակ պահեն քննությանը ենթակա անձանց: Քննիչները պետք է օբյեկտիվ եւ համբերատար լինեն, լսեն այն, ինչ իրենց ասվում է, զգայունություն եւ նրբանկատություն դրսեւորեն, հատկապես, երբ առնչվում են խոշտանգումների զոհերի հետ:

4.21 Ստորեւ բերված է խոշտանգումների հետ կապված «հանցագործության վայրի» հետազոտման հիմնական դրույթները.

* Քննության տակ գտնվող ցանկացած շենք կամ տարածք պետք է փակ լինի՝ ցանկացած հավանական ապացույց կորցնելու հնարավորությունը բացառելու համար: Քննության տակ առնվելուց հետո այդ տարածքներ մուտքի իրավունքը կարող են ունենալ միայն քննիչները եւ նրանց աշխատակազմի անդամները:
* Իրեղեն ապացույցները պետք է պատշաճ կերպով հավաքվեն, մշակվեն, փաթեթավորվեն, դրանց վրա պետք է պիտակներ փակցվեն, հանձնվեն պահման՝ ապացույցների աղտոտումը, վնասումը կամ կորուստը բացառելու համար: Եթե ենթադրվող խոշտանգումը վերջերս է տեղի ունեցել եւ ապացույցները կարող են արդիական լինել, օրգանիզմի հեղուկների ցանկացած հայտնաբերված նմուշ (արյուն կամ սպերմա), մազեր, մանրաթելեր, պետք է հավաքվի, պիտակավորվի եւ հանձնվի համապատասխան պահպանության:
* Ցանկացած գործիք, որ կարող էր օգտագործվել խոշտանգումներ իրականացնելու համար, պետք է առգրավվի եւ պահպանվի:
* Եթե իրադարձությունը վերջերս է տեղի ունեցել, անհրաժեշտ է վերցնել եւ պահպանել ցանկացած մատնահետք:
* Անհրաժեշտ է կատարել ենթադրվող խոշտանգումների կատարման շինությունների կամ վայրի ուրվանկարն այնպես, որ երեւան գործին առնչվող բոլոր մանրամասները, ինչպիսիք են շենքում հարկերի տեղադրումը, տարբեր սենյակներ, մուտքեր, լուսամուտներ, կահույք, հարակից տարածքներ եւ այլն:
* Որտեղ հնարավոր է, լուսանկարահանումը պետք է կատարվի պոլարոիդ ֆոտոխցիկով, ինչը թույլ կտա զննման ժամանակ ընդգծել եւ նշել անհրաժեշտ մանրամասները:
* Հանցագործության վայրի լուսանկարահանումն անհրաժեշտ է կատարել սովորական ֆոտոխցիկի միջոցով, ինչը թույլ կտա պահպանել նեգատիվները եւ բազմացնել լուսանկարները հետագայում որպես ապացույց օգտագործելու համար:
* Անհրաժեշտ է կատարել հայտնաբերված վնասվածքների գունավոր լուսանկարահանում, օգտագործելով քանոն եւ գույների աղյուսակ՝ այդ վնասվածքների չափը եւ ծանրությունը ցույց տալու համար:
* Անհրաժեշտ է գրանցել ենթադրվող խոշտանգումների հետ կապ ունեցող հանցագործության վայրում գտնվող բոլոր անձանց տվյալները, ներառյալ նրանց անունները, հասցեները եւ հեռախոսի համարները եւ այլ կոնտակտային տվյալներ:
* Եթե հնարավոր է, անհրաժեշտ է վերցնել ենթադրվող խոշտանգումների զոհի հագուստը եւ անցկացնել լաբորատոր հետազոտություն՝ մարմնի հեղուկների եւ այլ ֆիզիկական ապացույցների առկայությունը պարզելու համար:
* Ենթադրվող խոշտանգումների համար պատասխանատու անձի հագուստը նույնպես պետք է վերցվի՝ դատաբժշկական փորձաքննության համար:
* Գործին առնչություն ունեցող ցանկացած փաստաթուղթ, արձանագրություն, տեղեկանք պետք է պահպանվի՝ որպես ապացույց օգտագործելու եւ ձեռագրի վերլուծություն կատարելու համար:

Բժշկական ապացույցները

4.22 Բժշկական ապացույցները շատ կարեւոր են խոշտանգումների դեպքերի քննության համար: Խոշտանգումները հաճախ չեն թողնում ֆիզիկական հետքեր կամ երկարատեւ նշաններ: Հակառակը, ազատազրկված անձանց ստացած ոչ բոլոր հետքերն ու վնասվածքներն են խոշտանգումների հետեւանք, դրա պատճառները կարող են այլ լինել: Սակայն բժշկական ապացույցները կարող են ցույց տալ, որ վնասվածքները կամ որոշակի վարքի դրսեւորումները, որ արձանագրվել են խոշտանգման զոհի մոտ, համապատասխանում են նրա կողմից նկարագրված խոշտանգմանը: Բժշկական նորագույն սարքավորումները կարող են հայտնաբերել փափուկ հյուսվածքների կամ նյարդի վնասում, որ անզեն աչքով կարող է տեսանելի չլինել: Որակյալ դատաբժշկական փորձագետը կարող է բացահայտել վնասվածքների նույնիսկ շատ չնչին նշանները, եթե նա հնարավորություն է ունեցել զննելու խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի զոհին դեպքից քիչ ժամանակ անց:

4.23 Խոշտանգումները սովորաբար հոգեբանական տրավմա է պատճառում, եւ դրա ապացույցները նույնպես կարելի է հավաքագրել: Խոշտանգումների հոգեբանական ախտանիշները հաճախ սուբյեկտիվ են եւ կապված են վարքի փոփոխության կամ սթրեսի առկայության հետ, ինչը կարող է տարբեր պատճառներ ունենալ: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում անհրաժեշտ է կատարել հոգեբանական գնահատում: Արված հայտարարությանը համապատասխանող հոգեբանական եւ ֆիզիկական ապացույցների համակցումն ավելացնում է բժշկական ապացույցների արժեքը:

4.24 Երբ բուժզննությունը կատարվում է ազատազրկման վայր անձին բերելու ժամանակ, կարեւոր է հատկապես պահանջել առաջին եւ բոլոր նախորդ բժշկական հետազոտությունների եզրակացությունները: Բժիշկներին եւ բուժանձնակազմի մյուս անդամներին անհրաժեշտ է հարցաքննել անցկացված զննությունների պարագաների վերաբերյալ: Օրինակ՝

* Որտե՞ղ նրանք կարող էին անկախ բուժզննություն անցկացնել:
* Որեւէ մեկը ներկա եղե՞լ է բուժզննության ժամանակ:
* Կազմվե՞լ է արդյոք բժշկական եզրակացություն:
* Ի՞նչ է գրված այդ եզրակացության մեջ:
* Տուժողի վրա զննության պահին առկա՞ էին վնասվածքների ակնհայտ հետքեր:
* Որեւէ միջամտություն կատարվե՞լ է եզրակացություն կազմելու ընթացքում կամ բժշկի վրա ճնշումներ գործադրվե՞լ են հայտնաբերված փաստերը փոփոխելու նպատակով:

4.25 Շատ երկրներում սովորական բուժզննությունը եւ դատաբժշկական փորձաքննությունն իրականացնում են առողջապահության ոլորտի նույն մասնագետները: Հիվանդների ախտանիշների բուժման վրա ավելի կենտրոնացած թերապեւտիկ բժշկական զննությունների դժվարություններից մեկն այն է, որ վնասվածքները նկարագրվում են առանց դրանց պատճառների: Դատաբժշկական զննության նպատակն է պարզել վնասվածքների պատճառները եւ ծագումը, ինչը հատուկ մասնագիտացում է պահանջում: Պատշաճ դատաբժշկական փորձաքննությունը միշտ պետք է իրականացվի ենթադրվող խոշտանգումների քննության ժամանակ: Այդ փորձաքննության եզրակացությունը պետք է ներառի.

* բուժզննության առնչությամբ տուժողի կողմից արված բոլոր (այդ թվում՝ տուժողի առողջական վիճակի եւ դաժան վերաբերմունքի մասին ցանկացած հայտարարություն) հայտարարությունների լիարժեք հաշվետվությունը,

* տվյալ անձի բուժզննության հիման վրա արված բժշկական հայտնաբերումների լիարժեք հաշվետվությունը,
* բժշկական օբյեկտիվ հայտնաբերումների եւ առաջադրվող մեղադրանքի միջեւ համապատասխանության աստիճանը մատնանշող եզրակացություն:

4.26 Խոշտանգումներին առնչվող բժշկական ապացույցների ձեռք բերման ժամանակ նաեւ շատ կարեւոր է, որ քննիչը հարգանք ցուցաբերի բժշկական էթիկայի նորմերի եւ տուժողի գաղտնիության հանդեպ: Այս եւ ենթադրվող խոշտանգումների փաստագրման ու քննության հետ կապված այլ խնդիրներ ավելի մանրամասն քննարկվում են Ստամբուլի արձանագրությունում՝ Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արդյունավետ քննության եւ փաստագրման ձեռնարկում:[10]

Հարցաքննությունների անցկացումը

4.27 Խոշտանգումների դեպքերի քննության ընթացքում կիրառելի են քրեական կամ կարգապահական ցանկացած հետաքննության ժամանակ տուժողների, վկաների եւ կասկածյալների հարցաքննության անցկացման ընդհանուր կանոնները: Քննչական հարցաքննության խնդիրը կասկածյալներից, վկաներից կամ տուժողներից ճշգրիտ եւ արժանահավատ տեղեկությունների ձեռք բերումն է: Հարցաքննություն անցկացնելիս կարեւոր է վստահելի եւ պրոֆեսիոնալ հարաբերություններ հաստատել հարցաքննողի եւ հարցաքննվողի միջեւ, հաշվի առնել հարցաքննության անցկացման վայրը եւ իրավիճակը, լինել համբերատար եւ հետեւողական: Այս հարցը մանրամասն քննարկվում է Ստամբուլի արձանագրությունում:[11]

4.28 Հարցաքննությունները կարող են տեղեկությունների արժեքավոր աղբյուր լինել, սակայն հանդիսանում են ապացույցներ հավաքելու գործընթացի միայն մի մասը, եւ քննիչները չպետք է չափից ավել հենվեն հարցաքննությունների վրա: Նրանք պետք է նաեւ գիտակցեն խոստովանությունների վրա չափազանց շատ հիմնվելու վտանգները: Հատուկ ջանքեր են անհրաժեշտ հնարավոր կասկածյալի իրավունքները հարգելու համար: Ոչ մի դեպքում չի կարելի հարցաքննություն անցկացնել մի անձի հետ, որին հետագայում հնարավոր է քննության հետ կապված մեղադրանք առաջադրվի այնպիսի պայմաններում, որ արված հայտարարությունները անընդունելի համարվեն որպես ապացույց:

4.29 Հարցաքննությունները պետք է անկողմնակալ կերպով անցկացվեն, եւ ստացված տեղեկությունները միշտ պետք է գնահատվեն հարցաքննությունն իրականացնող անձի կողմից արդեն ստացված կամ դեռ ստացվելիք տեղեկությունների համեմատությամբ: Հարցաքննողը պետք է անաչառ եւ օբյեկտիվ լինի ցանկացած գործ քննելիս, սակայն նա սահմանափակված չէ դատարանում փաստաբանի նկատմամբ կիրառվող կանոններով: Հարցաքննություն անցկացնողները պարտավոր չեն ընդունել առաջին իսկ պատասխանը, եւ հարցաքննությունը չի կարող անարդար համարվել միայն այն պատճառով, որ այն համառորեն շարունակվում է: Նույնիսկ այն դեպքերում, երբ կասկածյալը օգտվում է լռության իրավունքից, հարցաքննողը պետք է իրավունք ունենա հարցեր տալ եւ գրանցել ցանկացած պատասխան կամ պատասխանի բացակայություն:

10 Ստամբուլի արձանագրություն, *Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արդյունավետ քննության եւ փաստագրման ձեռնարկ*, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, Նյու Յորք եւ Ժնեւ, 2001թ.

11 Նույն տեղը

4.30 Հարցաքննողը պետք է ծանոթ լինի հարցաքննվողի մշակութային եւ կրոնական հայացքներին եւ առանձնահատկություններին: Այդպիսով հնարավոր կլինի խուսափել անձի սպահվածքի հիման վրա արված սխալ ենթադրություններից: Հարցաքննողը պետք է նաեւ խուսափի իր սեփական մշակութային առանձնահատկությունների պատճառով արվող սխալ ենթադրություններից: Խոցելի անձանց հետ, լինեն դրանք տուժողներ, վկաներ կամ կասկածյալներ, պետք է վարվել առավել զգուշությամբ եւ պահպանել նրանց հետ վարվելու բոլոր կանոնները:

4.31 Ստորեւ բերված է հարցաքննություն անցկացնողի համար անհրաժեշտ հիմնական պահանջների ցանկը.

* Որքան հնարավոր է շատ տեղեկություն ունենալ ենթադրվող հանցագործության եւ հանգամանքների մասին,
* Տեղյակ լինել, թե ինչ ապացույցներ են արդեն առկա,
* Իմանալ, թե ինչ բացատրություններ են անհրաժեշտ հարցաքննվողից,
* Իմանալ, թե ինչը պետք է ապացուցվի գործի շրջանակներում,
* Որքան հնարավոր է շատ տեղեկություններ ունենալ հարցաքննվող անձի մասին:

Անհրաժեշտ է գրանցել հարցաքննության հանգամանքները, իսկ հարցաքննության տարրերը՝ հարցեր, պատասխաններ եւ ցանկացած իրադարձություն, հարցաքննության ժամանակ պետք է տպագրվեն բառացի (ձեռքով գրանցվեն, եթե այլ միջոցներ չկան) կամ ձայնագրվեն:

Խոշտանգումների ենթադրյալ զոհերի հարցաքննությունը

4.32 Խոշտանգումների ենթադրյալ զոհերի հարցաքննությունը կարեւորագույն նշանակություն ունի քննության համար, քանի որ շատ դեպքերում այդ անձի վկայությունը եւ բժշկական ապացույցները դառնում են հիմնական ապացույց:

4.33 Հարցաննքությունները պետք է անցկացվեն նրբանկատորեն, հաշվի առնվեն հարցաքննվողի ֆիզիկական եւ հոգեկան վիճակը: Հատուկ քայլեր պետք է ձեռնարկվեն հարցաքննվողին կրկին չվնասելու եւ հետագայում չվտանգելու համար: Հարցաքննությունն անհրաժեշտ է անցկացնել մի քանի փուլերով, եւ որոշ ժամանակ կարող է պահանջվել, քանզի կատարվածի որոշ մանրամասներ կարող են ի հայտ չգալ, քանի դեռ հարցաքննողը չի կարողացել շահել հարցաքննվողի վստահությունը: Հարցաքննողին խորհուրդ է տրվում որոշ ժամանակ հատկացնել ենթադրվող դաժան վերաբերմունքից զատ այլ խնդիրների քննարկման համար՝ «վստահության մթնոլորտ» ստեղծելու նպատակով, ինչը դյուրին կդարձնի զգայուն հարցերի քննարկումը:

4.34 Հարցաքննության հիմնական նպատակն է ստանալ որքան հնարավոր է մանրամասն եւ փաստացի տեղեկություններ հետեւյալի վերաբերյալ.

* Ի՞նչ է կատարվել:
* Ե՞րբ է դա կատարվել:
* Որտե՞ղ է դա կատարվել:
* Ո՞վ է դա կատարել:
* Որքա՞ն հաճախ է դա կատարվել:
* Ինչո՞ւ է դա կատարվել:
* Ի՞նչ հետեւանքներ են եղել:

4.35 Որքան անմիջական է տեղեկության աղբյուրը, որքան մանրամասն է այն տեղեկացնում եւ որքան շատ են ցուցմունքները համապատասխանում, այդքան ավելի արժանահավատությունը մեծանում է: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ հնարավոր են որոշ անհամապատասխանություններ: Օրինակ, տուժողը կարող է վախեցած կամ շփոթված լինել կամ տառապել հետտրավմատիկ սթրեսից: Հարցաքննվողը կարող է նաեւ վախեցած լինել նախկինում կեղծ հայտարարություններ անելու պատճառով: Նա կարող է ուշացնել բողոքի ներկայացումը, մինչեւ ապահովություն չզգա: Անհամապատասխանությունների առկայությունը միշտ չէ, որ նշանակում է, թե արված հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը: Հարցաքննվողի համար որոշ հարցեր ըմբռնման առումով կարող են բարդ լինել: Անհամապատասխանությունները ճշտելու համար երբեմն անհրաժեշտ է վերաձեւակերպել հարցը կամ նույն հարցին վերադառնալ մեկ այլ հարցաքննության ժամանակ:

4.36 Էսեքսի համալսարանի մարդու իրավունքների կենտրոնը խոշտանգումների ենթարկյալ զոհերի հետ հարցաքննություն անցկացնող քննիչների համար մշակել է հետեւյալ ցանկը.[12]

* Խոշտանգումներին պատճառ դարձած հանգամանքները, այդ թվում՝ ձերբակալությունը, կալանավորումը կամ առեւանգումը: Ձերբակալությունից առաջ արդյոք հարցաքննվողին ահաբեկե՞լ են: Ինչպե՞ս են անձին ձերբակալել, նրա մոտ վնասվածքներ կա՞ն: Եղե՞լ են արդյոք ձերբակալության վկաներ: Հարցաքննվողին արդյոք ենթարկե՞լ են դաժան վերաբերմունքի ձերբակալման վայր բերելուց առաջ:
* Վայրը, որտեղ պահվել է հարցաքննվողը, ներառյալ հիմնարկի տեղը եւ անվանումը,
* Որքան է տեւել հարցաքննությունը,
* Արդյոք հարցաքննվողին տեղափոխե՞լ են մի հիմնարկից մյուսը: Եթե այո, ապա ո՞ւր են տեղափոխել, ո՞վ է տեղափոխել եւ մոտավոր ամսաթիվը: Ինչպե՞ս է անձը հասել այնտեղ: Արդյոք տեղափոխելու պատճառը բացատրվե՞լ է: Եթե դա ժամանակավոր էր, որքա՞ն ժամանակ է տեւել:
* Ենթադրվող խոշտանգումների մոտավոր ամսաթվերը, ներառյալ վերջին միջադեպը,
* Ձերբակալությանը, կալանավորմանը եւ ենթադրվող խոշտանգումներին մասնակցող անձանց մանրամասն նկարագիրը,
* Հարցաքննվողին ասվածի կամ նրան տրված հարցերի բովանդակությունը,
* Ազատազրկման վայրի օրակարգի նկարագրությունը եւ ենթադրվող խոշտանգման օրինակը,
* Ենթադրվող խոշտանգման փաստերի նկարագրությունը, ներառյալ խոշտանգումների մեթոդները եւ օգտագործված զենքերի կամ այլ ֆիզիկական առարկաների նկարագրությունը,
* Ցանկացած առանձնահատկություն ենթադրվող խոշտանգումների կատարման սենյակի վերաբերյալ: Եթե հնարավոր է, խնդրեք հարցաքննվողին, որ նա նկարի այն սենյակի գծագիրը, որում կատարվել է ենթադրվող խոշտանգումը,
* Արդյոք հարցաքննվողը ենթարկվել է սեռական բռնության,
* Ենթադրվող խոշտանգումների ժամանակ ստացված մարմնական վնասվածքները,
* Այդ իրադարձությունների ցանկացած այլ վկաների հայտնաբերում, օրինակ, ազատազրկված այլ անձինք կամ հիմնարկի քաղաքացիական աշխատակազմի անդամներ,

12 Քամիլ Գիֆարդ, *Խոշտանգումների մասին զեկուցելու ձեռնարկ*, Էսեքսի համալսարանի մարդու իրավունքների կենտրոնը՝ Միացյալ թագավորության հետ համատեղ, 2000թ.

* Բուժանձնակազմի ներկայացուցիչներից որեւէ մեկն արդյոք ներկա գտնվե՞լ է ենթադրվող խոշտանգումներից առաջ, դրանց ժամանակ կամ հետո, ներառյալ ազատումից հետո. եթե այո, ապա իրենք իրենց հայտնի դարձրե՞լ են եւ ո՞րն էր նրանց դերը,
* Հարցաքննվողին բժշկական օգնություն ցուցաբերվե՞լ է անհապաղ կամ որոշ ժամանակ անց, ներառյալ ազատումից հետո: Բժիշկն անկախ բուժզննություն անցկացնելու հնարավորություն ունեցե՞լ է: Որեւէ մեկը ներկա գտնվե՞լ է բուժզննությանը: Կազմվե՞լ է արդյոք բժշկի կողմից եզրակացություն: Ի՞նչ է այնտեղ նշված:
* Հարցաքննվողը որեւէ մեկին բողոքե՞լ է իր հանդեպ ցուցաբերած վերաբերմունքի մասին կամ նման բողոքով դիմե՞լ է որեւէ պաշտոնյա անձի: Ի՞նչ պատասխան է հետեւել: Քննություն անցկացվե՞լ է այդ առնչությամբ: Ի՞նչ է արվել քննության ընթացքում: Հարցաքննվե՞լ է որեւէ վկա: Հարցաքննվե՞լ են արդյոք ենթադրվող հանցագործները:
* Հարցաքննվողը միջադեպից հետո որեւէ կերպ հաղորդակցվե՞լ է իրեն ձերբակալման վայր բերած ծառայողների հետ (կամ նույն մարմնի կամ ծառայության այլ պաշտոնյաների հետ):

4.37 Դատաքննության ժամանակ օգտագործվելու համար հայտարարությունը պետք է արվի առաջին դեմքով եւ կարող է պարունակել մանրամասներ այն մասին, թե ինչպես է զգացել իրեն տուժողը տարբեր փուլերում: Երբ դա հնարավոր է, հարցաքննվողին պետք է խնդրել, որ նա ցույց տա կատարվածի եւ ամենօրյա փորձառության միջեւ կապը, ներառյալ իր համար ծանոթ ցանկացած զգացողություն: Օրինակ՝ ինչպե՞ս է հարցաքննվողը իմացել սենյակի ճշգրիտ չափերը: Ի՞նչ է հիշեցնում նրան որոշակի հոտը: Ո՞ւմ է նման ծառայողներից մեկը (օրինակ՝ ինչ-որ հեռուստահաղորդման կերպարի կամ այլ հայտնի մեկի): Նման հարցերը լրացուցիչ տեղեկություններ կտան եւ կօգնեն հաստատել ստացված տեղեկությունները, ինչպես նաեւ կնպաստեն անհամապատասխանությունների հայտնաբերմանը եւ կօգնեն, որ հարցաքննվողը ավելի արագ վերհիշի իր հետ կատարվածը: Անհրաժեշտ է տեսողությունից բացի ուշադրություն դարձնել նաեւ հարցաքննվողի այլ զգայարանների վիճակին. ինչպես են գործում նրա լսողության, հոտառության եւ շոշափելու ունակությունները: Դա հատկապես կարեւոր է այն դեպքերում, երբ հարցաքննվողի աչքերը կապված են եղել ազատազրկման ընթացքում եւ հարցաքննության ժամանակ:

4.38 Արձանագրման ենթակա տեղեկությունները ներառում են.

* **Սենյակի տեղակայումը տվյալ հաստատության ներսում.** Արդյոք հարցաքննվողը բարձրանո՞ւմ, թե՞ իջնում էր դեպի սենյակ գնալիս. եթե այդպես է, ապա մոտավորապես քանի՞ աստիճան էր նա անցնում, ի՞նչ կարող էր նա լսել կամ զգալ հոտառությամբ այդ ընթացքում, արդյոք հարցաքննվողը նկատե՞լ էր որեւէ կողմնորոշող նշաններ այդ ճանապարհին, արդյոք սենյակում կա՞ր լուսամուտ, որտեղից երեւում էր արտաքին աշխարհը:
* **Սենյակի նկարագրությունը.** Ի՞նչ չափի էր սենյակը, ինչի՞ց էին սարքված սենյակի պատերը, հատակը, առաստաղը եւ դուռը, ի՞նչ ձեւ ուներ սենյակը եւ կա՞ր արդյոք այնտեղ ինչ-որ անսովոր կամ յուրահատուկ բան:
* **Սենյակում պահվող այլ անձինք.** Արդյոք սենյակում այլ անձինք պահվո՞ւմ էին: Եթե այո, քանի՞ հոգի եւ արդյոք նրանցից որեւէ մեկը կարող է հանդես գալ որպես վկա՞: Հնարավո՞ր է արդյոք, որ նրանք ինչ-որ բան նկատեին խոշտանգումների ենթադրվող զոհի առողջական վիճակի վերաբերյալ: Ի՞նչ առողջական վիճակ ունեին այլ անձինք:

* **Մեկուսացում**. Արդյոք հարցաքննվողը պահվե՞լ է մեկուսացման մեջ, որքա՞ն ժամանակ եւ ինչպե՞ս:
* **Սենյակի պարունակությունը**. Ի՞նչ կար սենյակում՝ անկողնային պարագաներ, կահույք, զուգարան, լվացարան:
* **Սենյակի կլիման**. Ի՞նչ ջերմաստիճան էր սենյակում, արդյոք օդափոխության համակարգ կա՞ր, արդյոք սենյակում կա՞ր խոնավություն:
* **Լուսավորությունը**. Արդյոք սենյակում լո՞ւյս կար, դա լուսամուտից թափանցող բնական լո՞ւյս էր, թե՞ էլէկտրական լուսավորություն, եթե լուսավորությունը էլեկտրական էր, որքա՞ն ժամանակ էր այն միացրած լինում, ի՞նչ տեսակի էր այդ լուսավորությունը, ինչպե՞ս էր այն ընկալվում (գույնը, ուժգնությունը):
* **Հիգիենա**. Արդյոք առկա՞ էին անձնական հիգիենայի համար անհրաժեշտ հարմարություններ, որտե՞ղ եւ ինչպե՞ս էր հարցաքննվողը օգտվում զուգարանից եւ բաղնիքից, ինչպիսի՞ն էր այդ վայրի ընդհանուր հիգիենայի վիճակը եւ արդյոք այնտեղ մակաբույծներ կայի՞ն:
* **Հագուստը**. Ի՞նչ հագուստ էր կրում հարցաքննվողը, եւ արդյոք նա կարո՞ղ էր լվանալ եւ փոխել իր հագուստը:
* **Սնունդը եւ խմելու ջուրը**. Ի՞նչ հաճախականությամբ եւ որքա՞ն սնունդ եւ ջուր էր տրվում, ի՞նչ որակի, ո՞վ էր տալիս այն, արդյոք այն անվճա՞ր էր տրամադրվում:
* **Զբոսանք**. Արդյոք հնարավորություն կա՞ր դուրս գալու խցից, եթե այո, ապա որքա՞ն ժամանակով եւ ի՞նչ հաճախականությամբ:
* **Ռեժիմ**. Արդյոք հատուկ խստություններ կամ միասլաղաղություն կա՞ր ռեժիմի մեջ:
* **Բժշկական հարմարություններ**. Արդյոք բժիշկ կամ այլ մասնագիտական բուժօգնության հնարավորություն կա՞ր, արդյոք հարցաքննվողը բուժզննություն կամ բուժում էր անցնում բժշկական հաստատությունո՞ւմ, օրինակ՝ ընտանեկան բժշկի մոտ կամ հիվանդանոցում, արդյոք դեղամիջոց ստանալու հնարավորություն կա՞ր, ո՞վ էր այն տրամադրում:
* **Ընտանիքի անդամների այցելություններ**. Արդյոք հարցաքննվողը հնարավորություն ունե՞ր տեսակցելու ընտանիքի հետ: Եթե այո, ապա որտե՞ղ էին անցկացվում տեսակցությունները, արդյոք խոսակցությունները լսելի՞ էին, արդյոք ընտանիքի անդամները տեղյա՞կ էին, թե որտեղ է գտնվում հարցաքննվողը:
* **Իրավաբանական ներկայացուցչություն**. Արդյոք հարցաքննվողը իրավաբանի հնարավորություն ունե՞ր, ե՞րբ էր տրվել առաջին հնարավորությունը, այսինքն ազատազրկումից որքա՞ն ժամանակ անց, որքա՞ն հաճախ նա կարող էր դիմել իրավաբանական օգնության, որտե՞ղ էր նա տեսակցում իրավաբանի հետ, արդյոք նրանց զրույցները լսելի՞ էին:
* **Դատական պաշտոնյայի առաջ հայտնվելը**. Արդյոք հարցաքննվողը հայտնվե՞լ էր դատական մարմնի առաջ, ե՞րբ է դա տեղի ունեցել, ազատազրկումից որքա՞ն ժամանակ անց է դա տեղի ունեցել:
* **Դիմումներ**. Արդյոք հարցաքննվողը լրացուցիչ դիմումներ ներկայացրե՞լ է, եթե այո, ապա ո՞ւմ եւ ի՞նչ արդյունք է հետեւել:
* **Կաշառքներ**. Արդյոք հարցաքննվողը ստիպվա՞ծ է եղել կաշառք տալ որեւէ ծառայությունից օգտվելու համար եւ արդյոք նրանից երբեւիցէ կաշառք պահանջե՞լ են:

Պետք է նկատի ունենալ, որ խոշտանգումները եւ այլ դաժան վերաբերմունքը կարող են տեղի ունենալ ազատազրկման վայրից դուրս եւ հարցաքննություն անցկացնողը պետք է համոզվի, որ հարցաքննությունը ներառել է ենթադրվող դաժան վերաբերմունքի մասին լիարժեք հաշվետվություն, անկախ նրանից, թե որտեղ է այն տեղի ունեցել:

Սեռական բռնության ենթադրյալ զոհերի հարցաքննությունը

4.39 Հատուկ նուրբ մոտեցում է անհրաժեշտ դրսեւորել սեռական բռնության ենթադրյալ զոհերի հարցաքննության ժամանակ: Նման խնդիրների քննարկումը շատ հասարակություններում տաբու է կամ չափազանց զգայուն, եւ հարցաքննվողի համար այդ իրադարձությունների նկարագրությունը կարող է իսկական փորձություն լինել: Գերադասելի է, որ քննությունը վարի ենթադրյալ տուժողի նույն սեռի ներկայացուցիչը՝ կախված անձի սեփական ցանկությունից, իսկ գաղտնիության սկզբունքներն այս դեպքում ավելի մեծ կարեւորություն են ստանում: Սակայն խնդիրը չպետք է անտեսվի եւ դրանից պետք չէ խուսափել, անհրաժեշտ է գործադրել բոլոր ջանքերը կատարվածի լիարժեք հաշվետվությունը կազմելու եւ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար:

4.40 Մարդկանցից շատերը, պատասխանելով «սեռական բռնության» իմաստի վերաբերյալ հարցին, ավելի շուտ կասեն, որ դա բռնաբարություն է կամ սողոմիա: Քննիչները պետք է հաշվի առնեն, որ բանավոր վիրավորանքը, մերկացնելը, շոշափելը, կծելը, հարվածելը, սանձարձակ եւ նվաստացնող գործողությունները կամ սեռական օրգանների հատվածում էլեկտրաշոկի կիրառումը հաճախ չեն ընկալվում տուժողների կողմից որպես սեռական բռնություն: Սակայն բոլոր նկարագրված գործողությունները խախտում են անձի ինտիմությունը եւ պետք է ընկալվեն որպես սեռական բռնության մի մաս: Արդարացի է նաեւ հակառակը. նման գործողությունները հաճախ ուղեկցվում են ֆիզիկական բռնաբարությամբ եւ սողոմիայով եւ կարող են ծառայել որպես այդ գործողությունների «հանցանշան»: Հաճախ սեռական բռնության զոհերը սկզբում ոչինչ չեն ասի եւ նույնիսկ կարող են հերքել սեռական բռնության փաստը: Հաճախ ամբողջ պատմությունը կարող է ի հայտ գալ միայն երկրորդ կամ երրորդ հանդիպման ժամանակ, եթե առաջին հանդիպմանը կարեկցանք եւ հարգանք է ցուցաբերվել տուժածի նկատմամբ: Քննիչները պետք է նրբանկատություն եւ համբերություն դրսեւորեն նման հարցաքննությունների ժամանակ:

4.41 Ենթադրյալ սեռական բռնության բոլոր դեպքերում ինտիմ բուժզննությունը կարող է անցկացվել միայն տուժողի համաձայնությամբ եւ միայն որակյալ՝ գերադասելի է տուժողի հետ նույն սեռի բուժանձնակազմի կողմից:

Երեխաների եւ անչափահասների հարցաքննությունը

4.42 Երեխաները կարող են ենթարկվել խոշտանգումների կամ նրանց ստիպեն դառնալ այլ անձանց, հատկապես իրենց ծնողների կամ ընտանիքի այլ անդամների խոշտանգումների վկա: Դա կարող է ծանր հետեւանքներ ունենալ երեխաների համար, եւ պետք է հատուկ ջանքեր գործադրվեն հարցաքննության ժամանակ երեխաներին կրկին չվնասելու համար: Երեխաների հարցաքննությունը զգալիորեն տարբերվում է չափահասների հարցաքննությունից եւ հատուկ մոտեցում է պահանջում: Հարցաքննություն անցկացնողները պետք է երեխաների հետ աշխատելու որոշակի փորձ ունենան եւ վերապատրաստված լինեն երեխաների հետ հարցաքննություն անցկացնելու համար, հակառակ դեպքում հարցաքննության ազդեցությունը կարող է ավելի շատ վնասել, քան օգուտ բերել: Երեխան պետք է հարցաքննվի

իր ծնողի, հարազատի կամ խնամակալի ներկայությամբ: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել ոչ բանավոր նշանների վրա: Բանավոր արտահայտվելու երեխաների ունակությունը կախված է նրանց տարիքից եւ զարգացման փուլից, եւ նրանց պահեպանելը կարող է ավելի շատ բան բացահայտել կատարվածի մասին, քան նրանց խոսքերը: Երեխաները շուտ են հոգնում եւ նրանց պետք չէ ճնշել հարցաքննության ընթացքում: Հարցաքննությունից անմիջապես հետո երեխային անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել:

Կասկածյալների հարցաքննությունը

4.43 Հարցաքննություն անցկացնելու հիմնական կանոնները կիրառելի են նաեւ խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի գործողությունների կատարման մեջ կասկածվող անձանց հարցաքննության ժամանակ: Հաշվի առնելով, որ նման գործողություններում ներգրավված անձինք, ամենայն հավանականությամբ, պետական՝ ավելի հաճախ քրեական արդարադատության ոլորտում զգալի փորձ ունեցող պաշտոնյաներ են, հատուկ ուշադրություն է պետք հատկացնել հարցաքննության պլանավորմանը եւ կառուցվածքին, ինչպես նաեւ այն հարցերին, որ տրվելու են կասկածյալին կամ կասկածյալներին: Պատշաճ հարցաքննությունը պետք է ներառի ոչ միայն խոշտանգումներին անմիջական մասնակցություն ունեցած կասկածյալների հետ հարցաքննություն, այլեւ ցանկացած այն անձի հետ, որն ազատազրկման վայրում պատասխանատու պաշտոն է զբաղեցրել, իմացել է, որ նման բաներ են կատարվում եւ քայլեր չի ձեռնարկել դրանք կանխարգելելու կամ դրանց մասին զեկուցելու համար:

4.44 Հարցաքննությունները պետք է անցկացվեն հստակորեն անկախ, անաչառ եւ պրոֆեսիոնալ կերպով: Պետք է հաշվի առնել, որ քննարկվող հարցերը կարող են շատ էմոցիոնալ լինել եւ հարցաքննության ենթարկվող պաշտոնյաները կարող են արժանանալ իրենց գործընկերների կարեկցանքին: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ընթացակարգեր, որոնք կօգնեն հաղթահարել բողոքների, բարեկեցության, շահերի բախումների եւ քննության վրա հնարավոր ազդեցություն գործող այլ գործոնների հետ կապված խնդիրները:

4.45 Կասկածյալներին պետք է առանձին հարցաքննել եւ թույլ չտալ նրանց շփումը հարցաքննությունների միջեւ ընկած ժամանակահատվածում: Եթե անհրաժեշտ է, նրանք պետք է ժամանակավոր դադարեցնեն իրենց պարտականությունների իրականացումը՝ ծառայողների միջեւ գաղտնի համաձայնությունները բացառելու համար: Պետք է նաեւ ուշադրություն դարձնել հնարավոր կասկածյալի իրավունքները հարգելու վրա եւ թույլ չտալ, որ նրանցից ստացված ցուցմունքները որպես ապացույց դառնան անթույլատրելի:

Այլ վկաների բացահայտումը

4.46 Այն վկաները, որոնք տեսել են ազատազրկված անձին ձերբակալումից առաջ կամ ձերբակալման պահին, կարող են նկարագրել ձերբակալումից առաջ նրա ֆիզիկական վիճակը, ձերբակալման հանգամանքները, ինչպես է կատարվել ձերբակալումը եւ ձերբակալումն իրականացնող ծառայողներին:

4.47 Մյուս ազատազրկվածները, որոնք չեն հանդիսացել ենթադրվող խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի անմիջական վկաներ, կարող են տեղեկություններ տալ, թե երբ են ազատազրկված անձին տարել հարցաքննության, նկարագրել նրա վիճակը տանելուց առաջ եւ բերելուց հետո կամ հաստատել, որ այդ անձին այլեւս չեն վերադարձրել: Նրանք գուցե կարող են պատմել, թե ինչ ձայներ են լսել, օրինակ՝ ճիչ կամ գոռոց, կամ պատմել

արյան հետքերի կամ խոշտանգումների գործիքների մասին: Նրանք կարող են նաեւ տեղյակ լինել նոր վնասվածքների մասին, որոնք տեսանելի են դարձել, երբ անձին բերել են ազատազրկման վայր կամ արդեն առկա վնասվածքների վատթարացման մասին ազատազրկման մեջ լինելու ընթացքում: Նրանք կարող են տեղեկություններ հայտնել ենթադրվող խոշտանգումների հետ առնչություն ունեցող փաստերի վերաբերյալ՝ անուններ, վայրեր, ժամանակ կամ ամսաթիվ:

4.48 Նրանք նաեւ կարող են հայտնել իրենց կամ այլ անձանց խոշտանգումների ենթարկելու մասին, որի վկան նրանք եղել են, ինչը թույլ կտա պարզելու, որ տվյալ հիմնարկում խոշտանգումներ են կիրառվում կամ որ որոշակի ոստիկանության ծառայող կամ բանտապահ նախկինում ներգրավված են եղել խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի իրականացման մեջ:

4.49 Քաղաքացիական անձնակազմը կամ այլ ոստիկանության ծառայողներ կամ բանտի անձնակազմը ոստիկանական բաժնում կամ ազատազրկման վայրում կարող են տեսած կամ լսած լինել ազատազրկված անձին ազատազրկման մեջ գտնվելու տարբեր փուլերում: Հնարավոր է, որ նրանք տեսել կամ լսել են խոշտանգումները կամ դաժան վերաբերմունքը, լսել են դրա մասին քննարկումներ անձնակազմի այլ անդամների կամ մյուս ազատազրկվածների կողմից: Հնարավոր է՝ նրանցից պահանջել են մաքրել այն վայրը, որտեղ տեղի են ունեցել խոշտանգումները կամ մասնակցել ապացույցները թաքցնելու գործին:

4.50 Այն դեպքերում, երբ տուժողն ինքը չի ներկայացրել խոշտանգումների վերաբերյալ բողոքը մահացած կամ «անհետացած» լինելու կամ դեռեւս ազատազրկման մեջ գտնվելու պատճառով, նրա ընտանիքի անդամը, հարեւանը կամ համայնքի ներկայացուցիչը կարող են հնարավոր վկաներին առաջարկել կամ հենց իրենք հաղորդել անհրաժեշտ տեղեկություններ:

Վկաների պաշտպանության խնդիրները

4.51 Մեղադրանքի կողմի վկաները, հատկապես նրանք, ում ամենայն հավանականությամբ դատական վարույթում վկայություն տալու համար կկանչեն դատարան, կարող են նման հեռանկարը բավականին վախեցնող եւ սթրեսային համարել: Վկաները հաճախ շանտաժի են ենթարկվում, բանավոր սպառնալիքների կամ ֆիզիկական բռնության ենթարկվում այն անձանց կողմից, որոնք փորձում են նրանց հետ պահել դատարանում ցուցմունքներ տալուց: Ի պատասխան այդ սպառնալիքներին՝ մշակվել են վկաների պաշտպանության տարբեր տեսակներ: Ամենասպարզ մակարդակում մեղադրանքի վկան կարող է դատարան գալ ինչ-որ մեկի ուղեկցությամբ, ով պատրաստ կլինի դատարանում սպասել մինչեւ վկան ցուցմունք տալը, քանի որ այդ ժամանակահատվածը ամենալարվածն է վկայի համար: Վկաների պաշտպանության այլ տեսակները ներառում են.

* անձնական անվտանգության վերաբերյալ խորհրդատվություն,
* վկայի տանը ֆիզիկական անվտանգության ապահովման միջոցների տեղադրում, ինչպիսիք են տագնապի ազդանշանային համակարգը, կողպեքները եւ փականքը,
* բնակավայրի կամ աշխատավայրի փոխելը,
* անձնական տվյալների ամբողջական փոփոխություն եւ անձի տեղափոխում,
* անձի պաշտպանություն այնպիսի իրավիճակից, երբ նրա դեմ կարող են կեղծ «հակափաստարկ» ներկայացնել,
* ֆիզիկական պաշտպանության ապահովում թիկնապահներ վարձելու միջոցով:

4.52 Հաշվի առնելով նշված կետերը եւ գործելով իրենց լիազորությունների շրջանակներում՝ դատախազները եւ դատավորները վկաների հետ սկսած է քննարկեն նրանց պաշտպանության տարբեր տեսակների հնարավորությունը: Սակայն սկսած է զգուշություն դրսեւորել, որպեսզի դա չընկալվի որպես ցուցմունք տալու խրախուսանք: Նման իրավիճակները կանխելու համար անհրաժեշտ է մանրակրկիտ ֆինանսական գրառումներ վարել, ներկայացնել բոլոր ոստիկանական որոշումները եւ, անհրաժեշտության դեպքում, պայմանագրեր ստորագրել վկաների հետ:

4.53 Վկաների պաշտպանությունը կարեւորագույն նշանակություն ունի խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի կիրառման համար կասկածվող անձանց դատավարությունից առաջ եւ դրա ընթացքում: Այդ հանցագործությունների բնույթն այնպիսին է, որ տուժողների եւ վկաների ցուցմունքները կարող են վճռորոշ դեր ունենալ դատական հետապնդման համար: Այդուհանդերձ, տուժողները եւ վկաները, ամենայն հավանականությամբ, կարող է որոշակի ճնշումների ենթարկվեն, մասամբ քննվող հանցագործության արդյունքում իրենց վրա ունեցած ազդեցության պատճառով, իսկ մասամբ՝ ելնելով հետագա սպառնալիքների եւ վտանգների վախից: Այն փաստը, որ խոշտանգումների կատարման մեջ մեղադրվողները պետական պաշտոնյաներ են կամ իրավապահ մարմինների ծառայողներ, կարող է տուժողներին եւ վկաներին խոցելի դարձնել, եթե նրանք վկայություն տան:

4.54 Որոշ դեպքերում վկաները կամ տուժողները կարող են ազատազրկման մեջ գտնվել այլ հանցանքներ կատարելու համար դատավարությունից առաջ կամ դատավարության ժամանակ, որի ընթացքում նրանք պետք է ցուցմունք տան: Այդ հանգամանքը նրանց ավելի խոցելի է դարձնում իրենց վկայություն տալուց զերծ պահելու նպատակով վախեցնելու կամ դաժան վերաբերմունքի ենթարկվելու առումով: Այն դեպքերում, երբ ներկայիս ազատազրկված անձինք վտանգի տակ են, նրանց կարելի է տեղափոխել այլ հիմնարկ, որտեղ հատուկ քայլեր կձեռնարկվեն նրանց անվտանգության համար: Այլ դեպքերում վկաները եւ տուժողները, հնարավոր է, նախկին դատվածություններ ունենան, ինչը կարող է բացառել վկաների պաշտպանության որոշ տեսակները: Այդ դեպքում չափազանց կարեւոր է ապահովել նման վկաների պաշտպանությունը եւ անհրաժեշտ քայլեր ձեռնարկել նրանց անվտանգությունը երաշխավորելու համար:

4.55 Դատավարությունը կարող է սկսվել միջադեպից կամ քննության ավարտից որոշ ժամանակ անց, կամ հնարավոր են հետաձգումներ այլ պատճառներով: Դա կարող է հատկապես անհանգստացնել մեղադրանքի վկաներին: Վկաները պետք է տեղյակ պահվեն գործի ընթացքի մասին եւ ցանկացած պահի կարողանան հաղորդակցվել քննչական խմբի հետ: Եթե վկան անհանգստություն է արտահայտում իր անձնական անվտանգության համար կամ ենթարկվում է սպառնալիքների, պետք է նրա պաշտպանության անհրաժեշտ քայլեր ձեռնարկվեն, իսկ մեղավորները ենթարկվեն պատասխանատվության:

4.56 Եթե առկա են խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի հետեւանքով մահվան դեպքեր եւ ամենայն հավանականությամբ որպես վկա կհրավիրվեն մերձավոր ազգականները կամ ընտանիքի անդամներից որեւէ մեկը, անհրաժեշտ է հաշվի առնել, որ նրանք լրացուցիչ ապրումներ եւ հոգեկան տրավմա կարող են ունենալ դատավարության ժամանակ եւ նույնիսկ դատավարությունից հետո: Հատուկ ուշադրություն է պետք նաեւ դարձնել խոցելի վկաների վրա, ինչպիսիք են անչափահասները, հատկապես, երբ նրանք ստիպված են դատարանում վկայություն տալ: Եթե կա տեխնիկական հնարավորություն, կարելի է հաղորդել երեխայի վկայությունը տեսաալիքով, ինչը թույլ կտա ազատել երեխային ավե-

լորդ ճնշումներից եւ անհրաժեշտ միջավայր ապահովել լիարժեք եւ կապակցված վկայություններ ստանալու համար՝ չվտանգելով ամբաստանյալի արդար դատավարության իրավունքը: Հնարավոր է, որ որոշ վկաներին աջակցություն պահանջվի վկայություն տալու նպատակով դատարան ներկայանալու համար՝ իրենց ռասայի, սեռի, սեռական կողմնորոշման, ազգության, քաղաքական կամ կրոնական հայացքների կամ սոցիալական, մշակութային կամ էթնիկ ծագման պատճառով:

4.57 Նույնիսկ եթե խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի մասին բողոքը չհաստատվի քննության կամ դատաքննության ընթացքում, դա չպետք է ինքնաբերաբար հանգեցնի գործի կարճմանը: Որոշ դեպքերում տուժողները կամ վկաները կարող են հրաժարվել իրենց ցուցմունքներից՝ լինելով սպառնալիքների կամ այլ ճնշումների տակ: Սակայն, ինչպես եւ այլ հանցագործությունների դեպքում, ոչինչ չի խանգարում գործը շարունակել այլ ապացույցների հիման վրա:

Վ-ն ընդդեմ պարոն Վիժեզեկարի եւ մյուսների, Գերագույն դատարան, Շրի Լանկա, 2002 թ-ի օգոստոսի 24, SC App. No. 186/2001 (Շրի Լանկա)

Վ-ն 27-ամյա թամիլյան կին է Կայտայից, որ հրաժարվել է դասավորված ամուսնության գնալ, երբ իմացել է, որ նրա ամուսինն արդեն ամուսնացած է եւ երկու երեխա ունի: Նա փախուստի է դիմել, երբ ամուսինը սպառնացել է, որ իր կապերը կօգտագործի նրան որպես «Թամիլի վագրեր» կազմակերպության ինքնասպան ահաբեկչի կասկածյալ ներգրավելու համար: 2000թ-ի հունիսի 21-ին քաղաքացիական հագուստով մի խումբ ոստիկաններ նրան ձերբակալել են Տրինկոմալիում: Նրա եղբայրը նունպես ձերբակալվել է, եւ նրանց տարել են Նեգոմբո ոստիկանական բաժին:

Հունիսի 21-ից 26-ը կնոջը բազմիցս ենթարկել են խոշտանգումների ոստիկանության բաժնում: Նրան ծեծի են ենթարկել եւ ծածկել նրա գլուխը կարմիր բիբարի փոշով եւ բենզինով լցված պարկով, ինչը բերել է շնչահեղձության: Այնուհետեւ նրան մերկացրել են, կախել դաստակներից եւ ծեծի ենթարկել: Դրանից հետո հեռել են սեղանին եւ բռնաբարել՝ ներքին վնասվածքներ հասցնելով: Խոշտանգումների արդյունքում նա համաձայնվել է ստորագրել հայտարարություն, որը չի կարողացել կարդալ կամ հասկանալ, քանի որ այն գրված է եղել սինհալի լեզվով: Այնուհետեւ հունիսի 26-ին նրան տեղափոխել են Ահաբեկչական գործողությունների քննչական վարչություն Կոլոմբոյում եւ պահել այնտեղ մինչեւ 2000 թ-ի սեպտեմբերի 20-ը: Այստեղ նույնպես նրան ենթարկել են բռնությունների եւ ստիպել մի շարք թելադրված հայտարարություններ գրել Թամիլի լեզվով, խոստովանելով, որ «Թամիլի վագրեր» կազմակերպության անդամ է: 2000 թ-ի հուլիսի 21-ին նա կանգնել է Կոլոմբոյի մագիստրատի դատարանի առաջ, որտեղ փորձել է հայտնել Դատարանին իր նկատմամբ կիրառված վերաբերմունքի մասին, սակայն նրան խոչընդոտել է իրեն ուղեկցող Ահաբեկչական գործողությունների քննչական վարչության ծառայողը: Նա կրկին Դատարանի առաջ է կանգնել 2000թ.-ի սեպտեմբերի 21-ին, եւ նրան խիստ հրահանգներ էին տրվել խոսելու փորձեր չկատարելու վերաբերյալ: Հետո նրան տեղափոխել են կալանավայր: Հոկտեմբերի 23-ին նրա փաստաբանը բժշկական քննության մասին դիմում է ներկայացրել եւ նրան երեք օրով տեղափոխել են Ռագամայի պետական հիվանդանոց: Կալանավայրում գտնվելու ժամանակ նա թերթում տեսած լուսանկարով ճանաչել է իրեն խոշտանգումների ենթարկած տղամարդկանցից մեկին: Նոյեմբերի 4—ին Վ-ն անցել է անկախ բժշկական քննություն:

Պատասխանողները, որոնք ոստիկանության ծառայողներ էին, առարկել էին, որ բողոքը չէր ներկայացվել դատարանի առաջ առաջին անգամ կանգնելուց մեկ ամսվա ընթացքում կամ փաստաբանի հետ առաջին տեսակցությունից հետո, ինչպես դա պահանջվում է Շրի Լանկայի Սահմանադրությամբ: Վ-ն ներկայացրել էր գրավոր հակացուցմունք, հայտարարելով, որ նրան զգուշացրել էին, որ բողոք չներկայացնի, իսկ նրա առաջին հանդիպումը փաստաբանի հետ տեղի է ունեցել չորս ոստիկանի ներկայությամբ: Նա նաեւ ասել էր, որ չէր կարող բողոք ներկայացնել ձերբակալության ընթացքում՝ վախենալով ճնշումներից եւ հետապնդումներից, եւ մինչեւ 2001 թ-ի մարտի 12-ը նա չէր ստացել դատաբժշկական փորձաքննության արդյունքները, որից հետո յոթ օրվա ընթացքում նա ներկայացրել էր բողոքը:

Թեպետ բժշկական եզրակացությունն այս դեպքում որոշիչ չէր, դատարանը նկատել էր մի շարք հակասություններ տարբեր պատասխանողների վկայություններում եւ փաստել, որ առաջին բժշկական քննությունն անց էր կացվել Վ-ի ոստիկանությունում գտնվելու ընթացքում: Երկրորդ բժշկական քննությունը, որ կատարվել էր ազատվելուց հետո, ավելի բազմակողմանի էր եղել եւ հայտնաբերվել էին ֆիզիկական եւ հոգեկան վնասվածքների հետքեր, որոնք համապատասխանում են խոշտանգումների վերաբերյալ Վ-ի տված ցուցմունքներին: Դատարանը որոշել էր, որ Վ-ն ենթարկվել է խոշտանգումների եւ սահմանել բարձրագույն ֆինանսական փոխհատուցում, որ երբեւիցե սահմանվել էր նմանատիպ դեպքերում: Դատարանը նաեւ ցուցում էր հղել գլխավոր դատախազին, որում ասվում էր. «քննարկել եւ միջոցներ ձեռնարկել պատասխանողների եւ բողոքարկուի նկատմամբ խոշտանգումների գործողությունների համար այլ պատասխանատու անձանց նկատմամբ՝ հիմնվելով 1994 թ-ի No 22 ակտի եւ Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի պահանջների վրա»:

5 Խոշտանգումների կիրառման մեջ կասկածվողների քրեական հետապնդումը եւ խոշտանգումների զոհերի փոխհատուցման ապահովումը

Բովանդակություն

91 Խոշտանգումը որպես քրեական հանցագործություն

93 Խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի հանցագործություններ կատարելու մեղավորությունը

94 Պատասխանատուների հայտնաբերումը եւ նրանց նկատմամբ հետապնդման իրականացումը

98 Քրեական հետապնդում իրականացնելու պարտավորությունը

99 Արդար դատաքննություններ

99 Անձեռնմխելիությունը, համաներումները եւ քրեական հետապնդման վաղեմության ժամկետները

102 Պատիժ

102 Տուժողների փոխհատուցումը

5 Խոշտանգումների կիրառման մեջ կասկածվողների քրեական հետապնդումը եւ խոշտանգումների զոհերի փոխհատուցման ապահովումը

5.1 Այս գլխում քննարկվում է խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի կիրառման մեջ ներգրավված անձանց հետապնդման ենթարկելու հետ կապված խնդիրները: Այստեղ բացատրվում է, թե ում կարելի է մեղավոր ճանաչել նման հանցագործությունների համար եւ նկարագրվում են քրեական հետապնդում իրականացնելու իրավական ու ընթացակարգային քայլեր: Օրենքները եւ ընթացակարգերն իրավական տարբեր համակարգերում, իհարկե, տարբեր են: Այս գլխում նաեւ քննարկվում են համաներման եւ համընդհանուր իրավասության հետ կապված խնդիրներ, եւ ընդգծվում է խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի ձեւերի զոհերի փոխհատուցման կարեւորությունը:

5.2 Պետության հիմնական խնդիրն է ապահովել քրեական օրենսդրության կատարումը: Իրավական տարբեր համակարգերում դատավորների եւ դատախազների դերն այդ օրենքների պահպանման գործում տարբեր է: Խոշտանգումը եւ դաժան վերաբերմունքն արդեն իսկ արգելված են աշխարհում գոյություն ունեցող գրեթե բոլոր ազգային իրավական համակարգերում: Նույնիսկ այնտեղ, որտեղ ազգային օրենսդրությունը որպես հանցագործություն չի որակում խոշտանգումը կամ դաժան վերաբերմունքը, գոյություն ունեն այնպիսի օրենքներ, որոնց համաձայն մեղավորները ենթարկվում են պատասխանատվության, ինչպիսիք են անձի դեմ ուղղված հանցագործությունները: Սակայն այն դեպքերում, երբ նման գործողությունները կատարվել են պետական պաշտոնյայի կամ իրավապահ մարմինների ներկայացուցչի կողմից, դա պետք է համարվի ծանրացուցիչ հանգամանք, քանի որ պաշտոնյան դավաճանում է իր մասնագիտական պարտականություններին, որոնց համաձայն պարտավոր է ծառայել այդ երկրի քաղաքացիներին եւ ապահովել նրանց պաշտպանությունը:

Խոշտանգումը որպես քրեական հանցագործություն

5.3 ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոնվենցիան ասում է.

> * *Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որպեսզի խոշտանգումների բոլոր դեպքերը դիտվեն իբրեւ հանցագործություններ՝ իր քրեական օրենսդրության համաձայն: Նույնը վերաբերում է խոշտանգման ենթարկելու փորձին, ինչպես նաեւ խոշտանգմանը գործակցություն կամ մասնակցություն ունեցած ցանկացած անձի գործողություններին: Յուրաքանչյուր մասնակից պետություն սահմանում է համապատասխան պատիժներ այդօրինակ հանցանքների համար՝ հաշվի առնելով դրանց բնույթի ծանրությունը:*[1]

1 Հոդված 4, ՄԱԿ-ի կոնվենցիա խոշտանգումների եւ դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձեւերի դեմ, 1984թ.

5.4 Ոչ մի բացառիկ իրադրություն, ինչպիսին էլ այն լինի՝ պատերազմի առկայություն կամ պատերազմի վտանգ, ներքին քաղաքական անկայունություն կամ ցանկացած այլ արտակարգ իրավիճակ, չի կարող լինել խոշտանգումների արդարացում: Վերադաս պետի կամ պետական իշխանության հրամանը չի կարող համարվել խոշտանգումների արդարացում:[2] Մարդու իրավունքների հանձնաժողովը փաստել է. «Մասնակից պետությունները հաշվետվություն ներկայացնելու ժամանակ պետք է մատնանշեն իրենց քրեական օրենսդրության այն դրույթները, որոնց համաձայն սահմանվում է խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի համար պատիժ, անկախ այն բանից, թե դրանք կատարվել են պետական պաշտոնյայի կամ պետության անունից գործող այլ անձանց կամ մասնավոր անձանց կողմից: Այն անձինք, որոնք խախտում են 7-րդ հոդվածը՝ արգելված գործողություններ հրահրելով, կարգադրելով, հանդուրժելով կամ կատարելով դրանք, պետք է ենթարկվեն պատասխանատվության: Հետեւաբար անձինք, որոնք հրաժարվել նման հրահանգներին ենթարկվելուց, չպետք է պատժվեն կամ հետապնդվեն»:[3]

5.5 Խոշտանգումների կանխարգելման եւ դրանց կիրառման համար պատիժ սահմանող միջամերիկյան կոնվենցիան ասում է. «Մասնակից պետությունները պետք է երաշխավորեն, որ խոշտանգումների կիրառումը կամ կիրառման փորձերը դիտարկվում են որպես հանցանք իրենց քրեական օրենսդրությամբ եւ նման գործողությունների համար պետք է սահմանվի խստագույն պատիժ, որը հաշվի կառնի այդ գործողությունների բնույթի լրջությունը»:[4] Կոնվենցիան նաեւ ասում է. «Պետական ծառայողը կամ այդ պաշտոնում գործող աշխատողը հրահանգում է, հրահրում կամ ստիպում է կիրառել խոշտանգում կամ անմիջականորեն իրականացնում է խոշտանգումը, կամ կարող է այն կանխարգելել եւ չի կանխարգելում, նույնպես մեղավոր են «խոշտանգում» կոչվող հանցագործության համար: Այն անձը, որ պետական ծառայողի կամ այդ պաշտոնում գործող աշխատողի հրահրմամբ, հրահանգով կամ ստիպելով կիրառել է խոշտանգում, անմիջականորեն կատարել է նման գործողություններ կամ մասնակցել դրանց կատարմանը, նույնպես մեղավոր է այդ հանցանքը կատարելու մեջ»: [5]

2 Նույն փաստաթուղթ, հոդված 2: Այս սկզբունքը նաեւ ընդգրկվել է 1946 թ-ի Նյուրնբերգի եւ Տոկիոյի տրիբունալների կանոնադրություններում եւ հետագայում հաստատվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից: Այն տեղ է գտել նաեւ Ռուանդայի եւ նախկին Հարավսլավիայի գործով միջազգային տրիբունալների կանոնադրություններում, ինչպես նաեւ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մեջ:

3 Մարդու իրավունքների հանձնաժողով, ընդհանուր մեկնաբանություններ 20, պարբերություն 13

4 1985թ., Խոշտանգումների կանխարգելման եւ դրանց կիրառման համար պատիժ սահմանող միջամերիկյան կոնվենցիա, հոդված 6

5 Նույն փաստաթուղթը, հոդված 3

Խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի հանցագործություններ կատարելու մեղավորությունը

5.6 Երբ պետությունը զրկում է անձին ազատությունից, այն պարտավոր է միջոցներ ձեռնարկել անձի անվտանգությունն ու բարեկեցությունը երաշխավորելու համար: Սա պարտավորեցնում է բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են անձին ազատությունից զրկելու եւ ազատազրկվածի մասին հոգ տանելու համար:[6] Այն դեպքերում, երբ տեղի են ունեցել խոշտանգումներ կամ այլ դաժան վերաբերմունք, դատախազները պարտավոր են մեղադրանք առաջադրել բոլոր այն անձանց, որոնք չեն կատարել իրենց պարտականությունները:

5.7 Մեղավորությունը պետք է տարածվի ցանկացած անձի վրա, որ ազատազրկված անձի պահվելու հիմնարկում պատասխանատու պաշտոն է զբաղեցնում եւ որը գիտեր կամ կարող էր գիտենալ խոշտանգում կամ դաժան վերաբերմունքի այլ տեսակ կիրառվելու մասին ու չի կանխել դրանք կամ չի զեկուցել այդ մասին: Այդ անձինք կարող են լինել ոստիկանության բաժինների պետեր կամ նրանց տեղակալներ, ձերբակալվածներին պահելու վայրերի ծառայողներ, բժիշկներ կամ բուժանձնակազմի անդամներ, ինչպես նաեւ այլ ծառայողներ: Նրանց շարքում կարող են լինել նաեւ դատախազներ, դատավորներ կամ ազատազրկման վայրերում վերահսկողություն իրականացնող այլ պատասխանատու անձինք, եթե նրանք մտադրաբար անտեսել կամ հաշվի չեն առել խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ տեսակների ապացույցները եւ փաստերը այն վայրերում, որոնք նրանք այցելել են, կամ անտեսել են խոշտանգումների հետքերի առկայությունն այն մարդկանց մոտ, որոնք բերվել են նրանց մոտ:

5.8 Մեղքն ապացուցելու համար դատախազը հիմնականում պետք է ցույց տա, որ մեղադրյալը ինքնուրույն կամ մեկ այլ անձի հետ միասին կամ մեկ այլ անձի միջոցով կատարել կամ փորձել է կատարել հանցանք, հրահանգել, ստիպել կամ հրահրել է հանցագործության կատարումը կամ կատարման փորձը կամ այլ կերպ է նպաստել հանցագործության կատարմանը կամ կատարման փորձին: Դա կարող է ներառել խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի գործողությունների անմիջական մասնակցություն, կամ որեւէ կերպ աջակցություն հանցանք կատարելուն: Դա կարող է վերաբերել նաեւ այն դեպքերին, երբ ղեկավար անձը կամ աշխատակազմի ներկայացուցիչն իր ենթակայության տակ գտնվող անձանց չի արգելել կիրառել խոշտանգումներ, կամ եթե անձը գիտեր կամ հանգամանքների բերումով պետք է իմանար խոշտանգումների կիրառման մասին, բայց դրանք կանխելու համապատասխան միջոցներ չի ձեռնարկել կամ չի ներկայացրել այդ դեպքը համապատասխան իրավասու մարմիններին՝ հետաքննություն եւ հետապնդում իրականացնելու համար:

5.9 Հանցագործությունների մասին զեկույց չներկայացնելը, նույնիսկ այն դեպքերում, երբ անձը պատասխանատվություն չի կրել հանցանքի կատարման համար, նույնպես համարվում է հանցանք, թեպետ ավելի մեղմ բնույթի:

6 Մարդու իրավունքների հանձնաժողով, ընդհանուր մեկնաբանություն 21, հոդված 10 (1992 թ, 44-րդ նստաշրջան), Ընդհանուր մեկնաբանությունների եւ ընդհանուր հանձնարարականների ժողովածու, որ ընդունվել է Մարդու իրավունքների պայմանագրային մարմինների կողմից, ՄԱԿԻ փաստաթուղթ HRI\GEN\1\Rev.1 at 33 (1994), պարբերություն. 3

Պատասխանատուների հայտնաբերումը եւ նրանց նկատմամբ հետապնդման իրականացումը

5.10 Քրեական մեղադրանքները սովորաբար պետք է առաջադրվեն բացահայտված անձանց: Դա կարող է դժվար լինել խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ դեպքերի ժամանակ, քանի որ այդ գործողությունների համար պատասխանատուները գուցե թաքցրել են իրենց ինքնությունը տուժողից եւ հույս են դնում իրենց գործընկերների ստեղծած պաշտպանիչ «լռության պատի» կամ նրանց հետ միասին հնարած կեղծ պատմության վրա: Եթե տուժողը ճանաչում է նրանց, հանցագործները կարող են վիճել, ասելով, որ դա «մեկ անձի բառերն են մյուսի դեմ» եւ դա բավարար չէ մեղքն ապացուցելու համար:

5.11 Եթե ծառայողի անունը, նրա ֆիզիկական նկարագրությունը հայտնի են դարձել կամ նրան բացահայտել են վկայականի համարի միջոցով, հնարավոր է դառնում տեղեկություններ ստանալ այդ ծառայողի մասին պաշտոնական արձանագրությունների եւ գրանցումների միջոցով: Եթե տուժողը պահվել է պաշտոնապես ճանաչված ազատազրկման վայրում, ապա այդ հիմնարկի արձանագրությունների միջոցով հնարավոր է գտնել հիմնարկի պատասխանատուներին եւ ցանկացած անձի, որ այդ ժամանակահատվածում հաղորդակցվել է տուժողի հետ: Ոստիկանական բաժիններում եւ ազատազրկման այլ վայրերում պահվող այլ գրանցամատյաններում նույնպես կարող է լինել անհրաժեշտ տեղեկություն: Դրանք կարող են ներառել գրանցումների մատյանը, հերթապահության ժամանակացույցը, որով հնարավոր է պարզել, թե որ ծառայողը որտեղ է իրականացրել հերթապահություն, հեռախոսազրույցների եւ ռադիոհաղորդագրությունների գրանցամատյաններ, որտեղ նշվում են հեռախոսային եւ ռադիո հաղորդակցությունները կոնկրետ բաժնում, հանցագործությունների մասին զեկույցներ եւ մատյաններ, որոնցում գրանցվում են առանձին ոստիկանների կոնկրետ գործողություններն իրենց հերթափոխի ողջ ընթացքում: Եթե այս փաստագրությունը պատշաճ կերպով է վարվում եւ պահվում, ապա այդ տեղեկությունները կարող են օգտագործվել որպես ապացույց, ինչը կարող է նպաստել խոշտանգումների կատարման մեջ մեղավորների բացահայտմանը: Դա կարող է նաեւ օգնել կոնկրետ հայտարարությունը կամ բողոքը հաստատելու կամ հերքելու գործում:

5.12 Այն դեպքերում, երբ չկան անկախ վկաներ, դատախազներին կարող է թվալ, որ գործ հարուցելու համար դատապարտելու հիմքերը բավարար չեն: Որոշները կարծում են, որ եթե ապացույցները հիմնականում կապված են տարբեր անձանց իրարամերժ վկայությունների հետ, ապա քրեական գործ հարուցելու համար ապացույցների պահանջվող չափանիշը («հիմնավոր կասկածից դուրս», *«intime conviciton»*) չի բավարարված: Ենթադրությունը, որ իրավապահ մարմինների ծառայողը, որ հանցանք է կատարել իր պարտականությունները կատարելու ժամանակ, արդարացվելու ավելի մեծ հավանականություն ունի, քան միջին հանցագործը, նույնպես կարող է ընդաստել, որ դատախազը չուզենա գործ հարուցել: Սակայն այս գործոնները պետք է գնահատվեն ելնելով հասարակության պաշտպանության շահերից, երաշխավորելով, որ իշխանության ներկայացուցիչները չեն չարաշահի իրենց դիրքն ու դա կարող է հիմք հանդիսանալ գործ հարուցելու համար նույնիսկ, եթե արդարացման հավանականությունը ավելի մեծ է, քան սովորական դեպքերում: Այն դեպքերում, երբ առկա են հստակ ապացույցներ, որ ինչ-որ մեկն ազատազրկման ժամանակ տուժել է դաժան վերաբերմունքի արգելված գործողություններից, եւ բացահայտված ծառայողը կամ ծառայողների խումբը ներկա է եղել այդ գործողությունների ժամանակ, նրանք կարող են մեղադրվել դաժան վերաբերմունք կիրառելու կամ դրան աջակցելու միասնական հանցանքի համար կամ անհատապես՝ իրենց պատասխանատվության տակ գտնվող անձին համապատասխան պաշտպանությամբ չապահովելու համար:

5.13 Այն դեպքերում, երբ անվիճելի է, որ բացահայտված ծառայողը ուժ է կիրառել, որի արդյունքում ազատազրկված անձը ստացել է վնասվածքներ, գործը կարող է կանգ առնել (եթե ենթադրյալ տուժողը չի գտնվել այդ ծառայողի վերահսկողության տակ) մինչեւ բացահայտումը, թե արդյոք ուժի կիրառումը անհրաժեշտ էր, հիմնավոր եւ համաչափ: Ազատազրկված անձանց նկատմամբ ուժի կիրառումը կարգավորող օրենքները տարբեր երկրներում տարբեր են: Սակայն խոշտանգումների արգելքը բացարձակ բնույթ է կրում: Ոչ ազատազրկված անձի վտանգավոր խառնվածքը, ոչ էլ ազատազրկման վայրում անվտանգության պակասը չեն կարող խոշտանգումների արդարացում լինել:[7] Ըստ միջազգային չափանիշների, ազատազրկված անձանց նկատմամբ ուժ կարող է կիրառվել միայն եթե դա խիստ անհրաժեշտ է հիմնարկի անվտանգությունը եւ կարգը պահպանելու համար, փախուստի փորձերի դեպքում, երբ առկա է օրինական հրամանին դիմադրություն կամ երբ վտանգված է սնձնական անվտանգությունը: Ցանկացած դեպքում ուժ պետք է կիրառվի միայն երբ ոչ ուժային միջոցները անարդյունավետ են եղել:[8]

5.14 Քրեական մեղադրանք պետք է առաջադրվի նաեւ պատասխանատու այն անձանց, որոնք տեղյակ են եղել կամ գիտակցաբար անտեսել են իրենց ստորադասների կողմից խոշտանգում կամ դաժան վերաբերմունք կիրառելու մասին տեղեկությունները եւ դրանք կանխարգելելու համապատասխան միջոցներ չեն ձեռնարկել կամ դրանց մասին չեն զեկուցել համապատասխան մարմնին: Երբ բացահայտվում են խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի կրկնվող դեպքեր կամ առկա են դրանք կանխարգելելու կամ մեղավորներին պատասխանատվության կանչելու կրկնվող ձախողումներ, դա պետք է դիտարկվի որպես ապացույց, որ պատասխանատու անձինք ակտիվորեն նպաստում են եւ թույլ տալիս նման երեւույթների կիրառումը:

5.15 Ենթադրությունն այն մասին, թե ազատազրկված անձի վնասվածքները խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ արգելված ձեւերի արդյունք են, կարող է հերքվել, եթե առկա է հիմնավորված այլ բացատրություն, սակայն այդ դեպքում ղեկավարությունն ու ենթադրվող հանցագործները պետք է ներկայացնեն բողոքն անհիմն ճանաչելու համոզիչ փաստարկներ: Հաշվի առնելով խոշտանգումների մասին ենթադրություններն ազատազրկման պայմաններում ապացուցելու դժվարությունը՝ համապատասխան նշանակություն պետք է տրվի անուղղակի ապացույցներին: Դատավորները չպետք է ապացույցների չափանիշներն այնքան բարձրացնեն, որ ապացուցելն անիրական դառնա: Դա հատկապես կարեւոր է փոխհատուցման հայցերը քննարկելիս (տես՝ ստորեւ): Գործոնները, որոնք կարող են օգտագործվել որպես խոշտանգումների վերաբերյալ ենթադրության հիմնավորության ապացույց, ներառում են հետեւյալ իրավիճակները.

7 ՄԱԿ-ի խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա, հոդված 2: Տես՝ նաեւ Խոշտանգումների դեմ հանձնաժողովի զեկույցը, *Մուրամբոն ընդդեմ Շվեյցարիայի* (13/1993) GAOR, 49-րդ նստաշրջան, Լրացում No.44 (1994), *Խանն ընդդեմ Կանադայի* (15/1994), GAOR, 50-րդ նստաշրջան, Լրացում No.44 (1995թ.) եւ *Իռլանդիան ընդդեմ Միացյալ թագավորության*, ՄԻԵԴ, սերիա A 25, (1978թ.), *Չահալն ընդդեմ Միացյալ թագավորության*, ՄԻԵԴ 1996թ-ի նոյեմբերի 15-ի որոշում, *Թոմազին ընդդեմ Ֆրանսիայի*, ՄԻԵԴ, սերիա A, No. 241-A (1993թ.), *Սեյմունին ընդդեմ Ֆրանսիայի*, ՄԻԵԴ, 1999 թ-ի հուլիսի 28-ի որոշում

8 Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ, կանոն 54, Իրավապահ պաշտոնյաների կողմից ուժի եւ հրազենի կիրառման հիմնական սկզբունքները, սկզբունք 4, 5 եւ 9

* երբ ազատազրկված անձը սլահվել է ազատազրկման ոչ սլաշտոնական կամ գաղտնի վայրում,
* երբ ազատազրկված անձը որեւէ ժամանակահատվածի ընթացքում սլահվել է ինկոմունիկադո սլայմաններում,
* երբ ազատազրկված անձը երկար ժամանակահատվածով սլահվել է մեկուսացված կամ մեկուսի բանտարկության մեջ,
* երբ չեն կազմվել սլատշաճ արձանագրություններ կամ դրանցում առկա են զգալի անհամասլատասխանություններ,
* երբ ազատազրկված անձը լիարժեքորեն չի տեղեկացվել իր իրավունքների մասին՝ ազատազրկման առաջին իսկ սլահից եւ ցանկացած հարցաքննությունից առաջ,
* երբ ազատազրկված անձին մերժել են փաստաբանի ներգրավումը,
* երբ օտարերկրացի ազատազրկված անձին մերժել են հյուսլատոսի հետ հանդիսլելը,
* երբ ազատազրկված անձը չի ենթարկվել անհասլաղ բուժզննության, հետագայում նաեւ՝ կանոնավոր բուժզննության,
* երբ բժշկական եզրակացությունները չեն սլահվել ամբողջովին, կամ այդ փաստաթղթերի հետ կասլված անտեղի միջամտություն է եղել, կամ դրանք կեղծվել են,
* երբ հետաքննություն իրականացնող մարմինը ձերբակալված անձից ցուցմունքներ է վերցրել առանց փաստաբանի ներկայության,
* երբ ցուցմունքներ վերցնելու հանգամանքները սլատշաճ կերսլով չեն գրանցվել եւ հայտարարությունները չեն սղագրվել վկայություն տալու սլահին,
* երբ ցուցմունքները ժամանակի ընթացքում ոչ սլատշաճ ձեւով փոփոխվել են,
* երբ ազատազրկման ցանկացած սլահի, առանց հիմնավոր սլատճառի կասլել են ազատազրկված անձի աչքերը, ծածկել նրա գլուխը, փակել բերանը, ձեռնաշղթա կամ զսլման այլ միջոցներ կիրառել կամ հանել նրա հագուստը,
* երբ *bona fide* (բարեխիղճ) իրավասլաշտսլան կազմակերսլություններին, այցելություններ իրականացնող մարմինների կամ փորձագետների անկախ այցերն ազատազրկման վայրեր արգելվել են, հետաձգվել կամ այլ կերսլ միջամտվել:

Ռ-ն ընդդեմ Ֆրայերի, Նիկոլի, Լորի EWCA Crim 825, Վերաքննիչ դատարանի քրեական բաժին, Թագավորական դատարան, 2002 թ-ի մարտի 19, երեքշաբթի (Մեծ Բրիտանիա)

1998 թ.-ի մարտի 15-ին Ուորմվուդ-Սքրաբս բանտի բանտարկյալը մեկուսացման մեջ գտնվելու ընթացքում լուրջ եւ շարունակական հարձակումների էր ենթարկվել բանտի անձնակազմի երեք ներկայացուցիչների կողմից:

Բանտարկյալը, որ տվյալ դեպքում տուժող է հանդիսանում, տարվել էր խուզարկության, որի ընթացքում նրան մերկացրել էին, այնուհետեւ տարել նրան մեկուսացման բաժին: Սկզբում նրա դեմքին էին հարվածել, հետո բռնելով նրա վզից, ձեռքերից եւ ոտքերից խցից տեղափոխել էին բանտի մասնաշենքի կենտրոն եւ գցել նրան հատակին: Նրա վրա երկու անգամ հարձակվել էին եւ այդ ընթացքում հարվածել ոտքերով եւ ձեռքերով, ընդ որում՝ նա շարունակել էր մնալ հատակին այնքան, մինչեւ նրա մոտ արյունահոսություն էր սկսվել: Դրանից հետո նրան կրկին տարել էին խուց եւ հետեւից հրել-խփել խցի պատին: Հետագայում բանտի ծառայողները կեղծ բողոք էին կազմել բանտարկյալի վերաբերյալ, որի հիման վրա նրան տեղափոխել էին մենախուց: Այդ բողոքների պատճառով նա կորցրել էր դատավճիռը մեղմացնելու հնարավորությունը: Մի շարք այլ բանտարկյալներ բողոքել էին նմանօրինակ վերաբերմունքից գրեթե նույն այդ ժամանակահատվածում, եւ, ի վերջո, բանտի 27 աշխատողների մեղադրանքներ էին առաջադրվել 13 առանձին բողոքների հիման վրա դաժան վերաբերմունքի եւ հարձակումների վերաբերյալ, որոնցից մի քանիսը կարող էին որակվել որպես խոշտանգում:

2001 թ-ի սեպտեմբերի 14-ին բանտի անձնակազմի երեք ծառայող դատապարտվել էին այդ գործի հիման վրա 3,5-ից 4 տարի ազատազրկման: Վերաքննիչ դատարանը անփոփոխ էր թողել վճիռը եւ փաստել, որ գործում առկա էին «հատուկ ծանրացուցիչ հանգամանքներ», ներառյալ հարձակումների ծանրությունը եւ այն փաստը, որ այդ հարձակումները միակը չէին եղել, այլ կրել էին շարունակական եւ կրկնվող բնույթ: Դատարանը նաեւ փաստել էր, որ «Բանտարկյալները իրավունք ունեն օրենքով պաշտպանված լինել բանտի աշխատողների հարձակումներից: Հասարակությունը իրավունք ունի վերահսկելու բանտային ծառայողների ծանրաբեռնող պարտականությունների կատարումը: Այդ պարտականությունները ծանր են: Բողոքարկուները կարող էին ընդունել իրենց կատարածի համար պատասխանատվությունը ամենավաղ փուլում: Սակայն փոխարենը նրանք փորձ կատարեցին կեղծ մեղադրանքների եւ կարգապահական միջոցներով փրկել իրենց դրությունը»:

Քրեական հետապնդում իրականացնելու պարտավորությունը

5.16 Խոշտանգումների դեմ կոնվենցիայի 5-րդ հոդվածը մասնակից պետություններից պահանջում է ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել հաստատելու նրա իրավասությունը 4-րդ հոդվածում մատնանշված հանցագործությունների նկատմամբ, հետեւյալ դեպքերում.

ա) երբ հանցագործությունները կատարվել են նրա իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում կամ տվյալ պետությունում գրանցված ծովային նավի կամ օդանավի վրա,

բ) երբ ենթադրյալ հանցագործը տվյալ պետության քաղաքացի է,

գ) երբ զոհը տվյալ պետության քաղաքացի է եւ տվյալ պետությունը նպատակահարմար է գտնում իր իրավասությունը տարածել նրա վրա:

5.17 Այնուհետեւ հոդվածը պետություններից պահանջում է «ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն հաստատելու իր իրավասությունն այնպիսի հանցագործությունների դեպքում, երբ ենթադրյալ հանցագործը գտնվում է իր իրավասության տակ գտնվող ցանկացած տարածքում, եւ պետությունը, 8-րդ հոդվածի համաձայն, նրան չի վերադարձնում սույն հոդվածի 1-ին կետում նշված պետություններից որեւէ մեկին»: Այդ պարտավորությունը կախված չէ հանցագործության կատարման վայրից, տուժողի եւ ենթադրյալ հանցագործի ազգությունից: Կոնվենցիայի 7-րդ հոդվածը սահմանում է. «Մասնակից պետությունը, որի իրավասությանը ենթակա տարածքում բացահայտվել է 4-րդ հոդվածում նշված հանցագործություններից որեւէ մեկի կատարման մեջ կասկածվող անձը, բացի 5-րդ հոդվածում նախատեսված հանցագործին չվերադարձնելու դեպքերից, տվյալ գործը դատական հետապնդման համար հանձնում է իր իրավասու մարմիններին հետաքննության համար»: Խոշտանգումների դեմ կոնվենցիայի համաձայն, «հետապնդելու եւ հանձնելու» պարտավորությունը տարածվում է այն տարածքի վրա, որը գտնվում է տվյալ պետության իրավասության տակ, այդ թվում՝ այն տարածքները, որոնք վերահսկում է տվյալ պետությունը: Խոշտանգումների կանխարգելման եւ կիրառման համար պատիժ նախատեսող միջամերիկյան կոնվենցիան նույնպես պահանջում է մասնակից ցանկացած պետությունից հետապնդման ենթարկել կամ հանձնել այն մարդկանց, որոնց գտել են «իր իրավասության տակ գտնվող տարածքում», «անկախ այն բանից, թե որտեղ է կատարվել հանցագործությունը եւ թե ինչ ազգություն ունի տուժողը կամ ենթադրյալ հանցագործը»:[9]

5.18 Ժնեւի չորս կոնվենցիաները նույնպես պետություններից պահանջում են կիրառել համընդհանուր իրավասությունը Կոնվենցիայի «լուրջ խախտումների» դեպքում, եւ դրա վերաբերյալ գործերը քննել ազգային դատարաններում: Կոնվենցիաները մասնակից պետություններից պահանջում են հետախուզել այն անձանց, որոնք մեղադրվում են Կոնվենցիայի դրույթների լուրջ խախտումներ կատարելու կամ դրանց վերաբերյալ հրահանգներ տալու մեջ: Դրանք են խոշտանգումները եւ անմարդկային վերաբերմունքը կամ նման գործողությունները չկանխարգելելը: Ժնեւի կոնվենցիաների համաձայն, «հետախուզումը եւ հետապնդումը» սահմաններ չունեն:

5.19 Այն պետությունները, որոնք չեն վավերացրել կոնվենցիաներից ոչ մեկը, կարող են կիրառել համընդհանուր իրավասության սկզբունքները օտարերկրացի ենթադրյալ հանցագործի՝ այդ պետության իրավասության տակ գտնվող տարածքում գտնվելիս, քանի

9 Խոշտանգումների կանխարգելման եւ դրանք կիրառման համար պատիժ սահմանող միջամերիկյան կոնվենցիա, հոդված 12

որ ընդհանուր եւ սովորութային միջազգային իրավունքը խոշտանգումների դեպքում թույլ է տալիս կիրառել համընդհանուր իրավասությունը: Դատավորները եւ դատախազները հատկապես կարեւոր դեր ունեն խոշտանգումների կիրառման կամ այլ օժանդակող հանցանքների համար կասկածվող անձանց քրեական հետապնդման ենթարկելու պարտավորության կատարման գործում:

Արդար դատաքննություններ

5.20 Դատավորները եւ դատախազները պետք է երաշխավորեն, որ խոշտանգումների կամ դրանց օժանդակող հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց հանդեպ դատաքննությունն իրականացվի ազգային եւ միջազգային իրավունքի համապատասխան, ընդ որում՝ պահպանելով կասկածյալի իրավունքների եւ իրականացվի տուժողի եւ նրա ընտանիքի շահերի լիարժեք պաշտպանությունը: Կասկածյալները պետք է իրավաբանական խորհրդատվության եւ իրենց ընտրությամբ իրավաբանական օգնության իրավունք ունենան քրեական վարույթի բոլոր փուլերում: Ազգային դատարանները պետք է նաեւ ապահովեն տուժողի, վկայի եւ նրանց ընտանիքների պաշտպանությունը, ներառյալ նրանց անվտանգության ապահովումը: Պաշտպանության նման միջոցները չպետք է կասկածի տակ դնեն կասկածյալի արդար դատաքննության իրավունքը, ներառյալ վկայի խաչաձեւ հարցաքննությունը: Թեպետ այդ իրավունքի իրականացումը չպետք է այնպես լինի, որ սպառնալիքներ ուղղվեն ենթադրվող տուժողի կամ վկայի նկատմամբ եւ նրանք չպետք է կրկին վնասվեն:

5.21 Այն դեպքերում, երբ դատաքննությունը անց է կացվում համընդհանուր իրավասության համապատասխան, պետք է կազմակերպել վկայի տեղափոխումը մի երկրից մյուսը կամ հեռուստակամուրջ կազմակերպել նրա հետ եթե դա հնարավոր է, որպեսզի նրանք կարողանան ցուցմունք տալ: Անհրաժեշտության դեպքում պետք է ապահովել թարգմանչական միջոցներով:

Անձեռնմխելիությունը, համաներումները եւ քրեական հետապնդման վաղեմության ժամկետները

5.22 Դատական մարմինները իրենց իրավասության շրջանակներում եւ միջազգային պարտավորությունների համաձայն պարտավոր են հետաքննել, արդարադատության առաջ կանգնեցնել եւ պատժել խոշտանգումներ կատարողներին: Ոչ ոք չի կարող հավակնել այդ պատասխանատվությունից ազատ լինելու արտոնություն ունենալուն իր պաշտոնական դիրքի պատճառով: Համաներումները եւ նման այլ միջոցները, որոնք կարող են պատասխանատվությունից, դատարանի առաջ կանգնելուց եւ դատապարտված լինելուց ազատել մարդու իրավունքների այնպիսի խախտումներ կատարած անձանց, ինչպիսիք են խոշտանգումները, չեն համապատասխանում մարդու իրավունքների ոլորտում պետությունների պարտավորություններին, այդ թվում՝ մարդու իրավունքների կոպիտ խախտումների դեպքերը հետաքննելու եւ պատասխանատվություն կրող անձանց քրեական հետապնդման ու պատժի ենթարկելու պարտավորությանը:

5.23 Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը նշում է, որ «Սույն Կանոնադրությունը հավասարապես կիրառվում է բոլոր անձանց նկատմամբ՝ առանց պաշտոնական դիրքով պայմանավորված տարբերակման: Մասնավորապես, պետության կամ կառավարության գլխի, Կառավարության կամ խորհրդարանի անդամի, ընտրված

ներկայացուցչի կամ կառավարության պաշտոնատար անձի պաշտոնական դիրքը ոչ մի դեպքում անձին չի ազատում սույն Կանոնադրության համաձայն քրեական պատասխանատվությունից եւ ինքնին դատավճռի մեղմացման հիմք չի հանդիսանում»:[10] Ազգային կամ միջազգային իրավունքով նախատեսված անձեռնմխելիությունը կամ դատավարական հատուկ նորմերը, որոնք կարող են կապված լինել անձի պաշտոնական դիրքի հետ, չպետք է խոչընդոտեն Դատարանին՝ այդ անձանց նկատմամբ իր իրավազորությունն իրականացնելիս:[11] Կանոնադրությունն այնուհետեւ սահմանում է, որ «դատարանին ընդդատյա հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չի կիրառվում»:[12] Թեպետ Ժնեւյան չորս կոնվենցիաների երկրորդ արձանագրությունը պահանջում է, որ պետությունները «հնա-րավորինս լայն համաներում շնորհեն» զինված հակամարտության մասնակիցներին հակամարտության ավարտից հետո, դա չպետք է ընկալվի որպես մտադրություն, որով անձեռնմխելիություն է ապահովվում ռազմական հանցագործություններին հավասարեցված գործողությունների դեպքում:[13]

5.24 Մարդու իրավունքների հանձնաժողովը նաեւ փաստել է. «Հանձնաժողովը նշում է, որ որոշ պետություններ համաներում են հայտարարել խոշտանգումների կիրառման դեպքերի նկատմամբ: Համաներումները հիմնականում անհամատեղելի են նման գործողություններ հետաքննելու, իրենց իրավասության շրջանակներում նման գործողություններից ազատ լինելու երաշխավորման եւ ապագայում այդ գործողությունները բացառելու պետության պարտավորության հետ: Պետությունները չպետք է մարդկանց զրկեն արդյունավետ պաշտպանության միջոցների իրավունքից, այդ թվում՝ փոխհատուցումից եւ հնարավոր լիարժեք վերականգնումից»:[14] Հանձնաժողովն ընդգծել է, որ նման համաներումները նպաստում են մարդու իրավունքների խախտումներ կատարած հանցագործների համար անպատժելիության մթնոլորտի ստեղծմանը եւ վտանգում մարդու իրավունքների հանդեպ հարգանքի եւ իրավունքի գերակայությունը վերականգնելու ջանքերը:[15] Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովի Վիեննայի հռչակագիրը պետություններին կոչ է անում «վերացնել այն օրենսդրությունը, որ հանգեցնում է մարդու իրավունքների լուրջ ոտնահարումների համար, ինչպիսիք են խոշտանգումները, պատասխանատվություն կրող անձանց նկատմամբ անպատժելիությանը եւ հետապնդել նման ոտնահարումները՝ այդպիսով ապահովելով իրավունքի գերակայության ամուր հիմքերը»: [16]

5.25 Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը փաստել է, որ «համաներման դրույթների, վաղեմության ժամկետի կամ քրեական պատասխանատվության վերացման այլ միջոցների կիրառությունն անթույլատրելի է որպես հետաքննության եւ պատասխանատուներին պատժելը կանխարգելելու միջոց մարդու իրավունքների կոպիտ խախտումների դեպքում, ինչպիսիք են խոշտանգումը, ոչ լիարժեք դատարանի կազմով դատաքննությունը, արտադատարանային կամ կամայական մահապատիժները եւ անձանց անհետացումը, այսինքն՝ այն ամենը, ինչը, միջազգային իրավունքի համաձայն, արգելված է որպես չսահմանափակվող իրավունքների կոպիտ խախտում»: [17]

10 Միջազգային քրեական դատարանի կանոնադրության հոդված 27 (1)

11 Նույն փաստաթուղթը, հոդված 27 (2)

12 Նույն փաստաթուղթը, հոդված 29

13 1949 թ-ի Ժնեւի կոնվենցիաների 1977 թ-ի II լրացուցիչ արձանագրության հոդված 6.5

14 Մարդու իրավունքների հանձնաժողովի ընդհանուր մեկնաբանություն 20, պարբերություն15

15 Մարդու իրավունքների հանձնաժողովի եզրափակիչ դիտարկումներ, Արգենտինա, 1995 թ-ի,ապրիլի 5, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add.46; A/50/40, պարբերություն 146

16 Վիեննայի հռչակագիր եւ գործողությունների ծրագիր, Մարդու իրավունքների համաշխարհային համաժողով, Վիեննա 1993թ., հունիսի 14-25-ը, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/CONF.157/23 1993թ. Հուլիսի 12, պարբերություն 60

17 *Բարիոս Ալտոսի գործը ((Չումբիպումա Ագուիրը եւ մյուսներն ընդդեմ Պերույի)*, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարան, որոշում 14, 2001 թ-ի մարտ, պարբերություն 41

5.26 Այն դեպքերում, երբ դատարանը կարող է վարվել իր հայեցողությամբ, պետք է զերծ մնա այն օրենքների կատարումից, որոնք հակասում են պետության միջազգային պարտավորություններին եւ խախտում են միջազգային օրենսդրությամբ պաշտպանված մարդու իրավունքները՝ նման օրենքները հայտարարելով ուժը կորցրած եւ անվավեր:

5.27 Ճշմարտությունը պարզելու նպատակ ունեցող հանձնաժողովները կարեւոր դեր ունեն անցյալի վերաբերյալ հավաստի ժամանակագրություն կազմելու հարցում, եւ տուժողին հնարավորություն են տալիս պատմել իր պատմությունն ու ստանալ համարժեք փոխհատուցում: Այն երկրներում, որտեղ նման հանձնաժողովներ են ստեղծվում, դրանք պետք է հետեւեն որոշակի ընթացակարգի, պարզեն ճշմարտությունը, նպաստեն տուժողի փոխհատուցմանը եւ հետագայում նման հանցանքները կանխարգելելու հանձնարարականներ մշակեն: Այդ հանձնաժողովները նաեւ պետք է համագործակցեն դատարանների հետ՝ հանցագործներին արդարադատության ենթարկելու նպատակով, այլ ոչ օգտագործվեն որպես այլընտրանք՝ դատարանին:

Գործ No. 8686/2000 «Սիմոնը, Ջուլիոն, Դել Կերոն, մինչեւ 10 տարեկան երեխաների առեւանգում», գրանցվել է Ազգային քրեական դատարանի N7 դատարանում եւ N4 Դաշնային ուղղիչ հիմնարկում 2001 թ-ի մարտի 6-ին (Արգենտինա)

2001թ.-ի մարտին Արգենտինայի դաշնային դատավորը սահմանեց, որ Պունտոյի վերջնական օրենքը եւ Պատշաճ հնազանդության մասին օրենքը, որոնք ռազմական վարչակարգի ընթացքում անձեռնմխելիություն էին շնորհում մարդու իրավունքների ոտնահարումների համար հետապնդումից, հակասահմանադրական են եւ անվավեր: Այս որոշումը ուղղակիորեն կապված էր 1978 թ.-ին Խոսե Լիբերիո Պոբլետե Ռոայի, նրա կնոջ՝ Գերտրուդա Մարթա Խլասցիկի եւ նրանց դստեր «անհետացման» առնչությամբ քրեական հետապնդումների հետ: 2001 թ.-ի նոյեմբերին Դաշնային վերաքննիչ դատարանը հաստատեց այդ որոշումը:

Գործ No. 13.445/1999 «Վիդելան, Ջորջ Ռաֆաելը եւ մյուսները, ապօրինի չհրաժարվելու», գրանցվել է Ազգային քրեական դատարանի N14 դատարանում եւ N 7 Դաշնային ուղղիչ հիմնարկում 2001թ-ի հուլիսի 20-ին, (Արգենտինա)

2001թ.-ի հունիսին եւ հուլիսին դաշնային դատավորը հրապարակեց դատական երեք որոշում, որոնց համաձայն մեղադրանք է առաջադրվել եւ կալանք պահանջվել Արգենտինայի, Չիլիի, Պարագվայի եւ Ուրուգվայի մի շարք նախկին զինծառայողների նկատմամբ՝ «Կոնդոր գործողություն» անվանումը ստացած քրեական դավադրության մեջ ներգրավվելու մեղադրանքով, որի արդյունքում պարբերաբար մարդիկ են անհետացել: Այդ որոշման մեջ դատավորը դատաքննությունը նշանակել էր ըստ էության եւ որպես խափանման միջոց սահմանել կալանք նախկին նախագահ Խորխե Ռաֆաել Վիդելայի նկատմամբ: Դատավորը նաեւ նախնական կալանք էր պահանջել Չիլիի նախկին նախագահ Ավգուստո Պինոչետի նկատմամբ մինչեւ նրա հանձնման վերաբերյալ որոշումը: 2001թ.-ի դեկտեմբերին մեկ այլ որոշումով դատավորը նախնական կալանք էր պահանջել Բոլիվիայի նախկին նախագահ Հյուգո Բանզեր Սուարեզի նկատմամբ՝ մինչեւ նրան հանձնելու մասին որոշումը:

Պատիժ

5.28 Խոշտանգումների համար սպատիժը պետք է նախատեսված լինի ազգային օրենսդրությամբ: Սակայն Խոշտանգումների դեմ կոնվենցիան փաստում է, որ մասնակից յուրաքանչյուր պետություն «սահմանում է համապատասխան պատիժներ այդօրինակ հանցանքների համար՝ հաշվի առնելով դրանց բնույթի ծանրությունը»:[18] Այդ հանցագործությունները, ներառյալ՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնությունները, հաճախ չարաշահումներ են պաշտոնյաների կողմից եւ դավաճանում են հասարակության վստահության քվեն: Այն դեպքերում, երբ դա իրենց հայեցողության շրջանակներում է, դատավորները եւ դատախազները պետք է երաշխավորեն, որ խոշտանգումների գործողությունները որակվեն հենց այդպիսիք: Եթե օրենսդրությունը չի նախատեսում նման հանցագործություն, կամ եթե առկա փաստերը չեն համապատասխանում միջազգային սահմանումներից ավելի նեղ՝ ազգային սահմանումներին, ապա պետք է կիրառել այն օրենքը, որ վերաբերում է հաջորդ՝ ավելի ծանր հանցագործության կատեգորիային: Դա արվում է այն նպատակով, որ դատարանը հնարավորություն ունենա այնպիսի վճիռ կայացնել, որ համարժեք է հանցանքի ծանրությանը եւ կանխել քրեական հանցագործության վաղեմության ժամկետների վաղաժամ կիրառումը:

Տուժողների փոխհատուցումը

5.29 Դատավորներն ու դատախազները ազգային օրենսդրության շրջանակներում պետք է ապահովեն խոշտանգումներից եւ այլ ապօրինի գործողություններից տուժած անձանց ծանոթացումը բարոյական եւ ֆիզիկական տառապանքի դիմաց փոխհատուցում պահանջելու իրենց իրավունքին եւ նպաստեն, որ այդ անձինք կարողանան օգտվել այդ իրավունքից: Խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի զոհերն իրավունք ունեն իմանալ ճշմարտությունը իրենց հետ կատարվածի մասին, տեսնել մեղավորներին արդարադատության առաջ եւ փոխհատուցում ստանալ իրենց կրած վնասի դիմաց:

5.30 Մարդու իրավունքների կոպիտ խախտումների զոհերի ռեստիտուցիայի, փոխհատուցման եւ վերականգման հարցերով հատուկ զեկուցող Շերիֆ Բասսիոունին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովին ուղղված իր վերջնական զեկույցում առաջարկել է մարդու իրավունքներին առնչվող միջազգային օրենսդրության եւ մարդասիրական իրավունքի խախտումների զոհերի դատական պաշտպանության եւ փոխհատուցման հիմնական սկզբունքների եւ ուղենիշների նախագիծ (Վան Բովեն-Բասսիոունիի սկզբունքներ):[19] Վան Բովեն-Բասսիոունիի սկզբունքները, որոնք տեղ են գտել այս ձեռնարկի Առաջին Հավելվածում, ճանաչում են փոխհատուցման հետեւյալ ձեւերը.

* **Ռեստիտուցիա.** քայլեր պետք է ձեռնարկվեն վերականգնելու տուժողի այն վիճակը, որ կար մինչեւ բռնության կատարվելը, ներառյալ նրա օրինական իրավունքների, սոցիալական կարգավիճակի, ընտանեկան կյանքի, բնակավայրի, սեփականության եւ աշխատանքի վերականգնումը:
* **Փոխհատուցում.** քայլեր պետք է ձեռնարկվեն բռնությունների արդյունք հանդիսացող, տնտեսապես գնահատելի ցանկացած վնաս փոխհատուցելու համար՝ լինի դա ֆիզիկական կամ հոգեկան վնաս, էմոցիոնալ տառապանք, կրթական հնարա-

18 ՄԱԿ-ի Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա 1984թ., հոդված 4

19 ՄԱԿ-ի փաստաթուղթ E/CN.4/2000/62, 2000թ. հունվարի 18

վորությունների, եկամուտների կորուստ, իրավաբանական եւ/կամ բժշկական ծախսեր:

* **Վերականգնում.** քայլեր պետք է ձեռնարկվեն, անհրաժեշտության դեպքում, բժշկական եւ հոգեբանական խնամք ապահովելու, ինչպես նաեւ իրավաբանական եւ սոցիալական ծառայություններ մատուցելու համար:
* **Բավարարում եւ նման հանցանքների կրկնության բացառման երաշխիքներ.** քայլեր պետք է ձեռնարկվեն խախտումները դադարեցնելու, ճշմարտությունը հասարակության հայտնելու, պատասխանատվության մասին հայտարարելու եւ ներողություն հայցելու, խախտումների փաստերը հրապարակելու, դատական եւ վարչական պատժամիջոցներ կիրառելու եւ կանխարգելիչ միջոցներ, այդ թվում՝ մարդու իրավունքների վերաբերյալ ուսուցումներ ապահովելու համար:

5.31 Երբեմն տուժողները երկարատեւ եւ թանկարժեք բուժման կարիք են ունենում: Երբեմն իրենց հետ կատարվածի պատճառով նրանք ի վիճակի չեն լինում աշխատել կամ իրենց կյանքը արմատապես փոխված են համարում: Եթե խոշտանգումները պատճառվել են պետական պաշտոնյայի կողմից կամ նրա գիտությամբ, պետությունը պարտավոր է հնարավորինս լիարժեք փոխհատուցում ապահովել: Իրենց լիազորությունների շրջանակներում դատավորները եւ դատախազները պարտավոր են ապահովել խոշտանգումների զոհերի փոխհատուցումը, որը հաշվի կառնի այն հանցագործության ծանրությունը եւ բնույթը, որին նրանք ենթարկվել են: Եթե տուժողը խոշտանգումների արդյունքում մահացել է, փոխհատուցում պետք է ստանան նրա խնամակալության տակ գտնվող մարդիկ:

5.32 Անպատժելիության հարցերով հատուկ զեկուցող Լուի Ջոյնը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովին ուղղված 1997 թ-ի իր զեկույցում մշակել է անպատժելիության դեմ պայքարի միջոցով մարդու իրավունքների պաշտպանության եւ տարածման սկզբունքների ժողովածու (Ջոյնի Սկզբունքներ):[20] Այդ սկզբունքները ներառում են.

* **Սկզբունք 33. Իրավունքներ եւ պարտականություններ, որոնք բխում են փոխհատուցելու պարտավորությունից:** Մարդու իրավունքների ցանկացած խախտում տուժողին (կամ նրա խնամակալության տակ գտնվողներին) փոխհատուցման իրավունք է տալիս, ինչը պարտավորեցնում է պետությանը փոխհատուցել, իսկ տուժողին հնարավորություն է տալիս փոխհատուցում պահանջել քրեական օրենքը խախտողից:
* **Սկզբունք 34. Փոխհատուցման ընթացակարգերը:** Բոլոր տուժողների համար պետք է մատչելի լինեն անհապաղ տրամադրվող պաշտպանության միջոցները՝ քրեական, քաղաքացիական, վարչական կամ կարգապահական վարույթների միջոցով: Այդ իրավունքից օգտվելիս նրանց համար պետք է ապահովվի պաշտպանություն սպառնալիքներից եւ հետապնդումներից: Փոխհատուցման իրավունքը ներառում է միջազգային ընթացակարգերի մատչելիությունը, եթե դրանք կիրառելի են:
* **Սկզբունք 35. Փոխհատուցման ընթացակարգերի հրապարակայնությունը:** *Ad hoc* ընթացակարգերը, որոնք տուժողներին հնարավորություն են տալիս իրականացնել իրենց փոխհատուցման իրավունքը, պետք է հնարավորինս հրապարակային լինեն՝ մասնավոր եւ պետական զանգվածային լրատվամիջոցների շնորհիվ: Այդ տարածումը պետք է իրականանա ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս, այդ թվում՝ հյուպատոսական ծառայությունների միջոցով եւ հատկապես այն երկրներում, ուր մեծ թվով տուժողներ են արտաքսվել:

20 ՄԱԿ-ի փաստաթուղթ E/CN.4/Sub.2/1997/20/Rev.1, 1997թ. Հոկտեմբերի 2

* **Սկզբունք 36. Փոխհատուցման իրավունքի շրջանակները**: Փոխհատուցման իրավունքը պետք է տարածվի տուժողի ստացած բոլոր վնասվածքների ու վնասների վրա, Այն պետք է ներառի ինչպես ռեստիտուցիայի, փոխհատուցման եւ վերականգնման իրավունքին առնչվող անհատական միջոցներ, այնպես էլ բավարարման ընդհանուր միջոցներ: Բռնի անհետացման դեպքում, երբ անհետացած անձի ճակատագիրը հայտնի է դառնում, անձի ընտանիքը կատարվածի մասին տեղեկացված լինելու անվիճելի իրավունք ունի, այդ անձի մահվան դեպքում, հայտնաբերելուց անմիջապես հետո նրա աճյունը պետք է վերադարձվի ընտանիքին անկախ այն բանից, թե արդյոք հանցագործները հայտնաբերվել են, մեղադրվել կամ կանգնել դատարանի առաջ:

Պ-ն ընդդեմ Մարկամանի եւ Ամորի, Սենթ Վինսենթ եւ Գրենադինյան կղզիներ, Բարձր Դատարան, 1999 թ-ի ապրիլի 13, [2000] 1 LRC 1, (1999) 2 CHRLD 430, (Սենթ Վինսենթ եւ Գրենադինյան կղզիներ)

Բանտարկյալ Պ-ն հաջողությամբ դիմել էր Բարձր Դատարանին բողոքով, որ բանտային հիմնարկների բարձրագույն պաշտոնատար անձը խախտել է խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող պատժի չենթարկվելու սահմանադրական իր իրավունքը, կարգադրելով ճիպոտով ծեծի ենթարկել, ոտնաշղթաներ հագցնել եւ երկար ժամկետով տեղափոխել մենախուց:

1997 թ-ի հուլիսին Դատարանը որոշեց, որ ճիպոտով ծեծը (որ կիրառվել էր որպես պատիժ՝ բանտի ծառայողի վրա հարձակման համար) հակասում է Սահմանադրությամբ նախատեսված խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի արգելքին: Հավանությամբ հղում կատարելով Զիմբաբվեում եւ Հարավային Աֆրիկայում ավելի վաղ քննարկված գործերի վրա՝ Դատավորը վճռեց, որ «նման ծեծը հակասում է քաղաքակրթության չափանիշներին, որոնց պետք է հետեւեն բանտային ծառայողները: Այն դաժան է դարձնում ոչ միայն ծեծի ենթարկված անձին, այլ նաեւ հասարակությանը, որը թույլ է տալիս նման պատժի կիրառումը: Այն հասարակության մեջ օրենքի հանդեպ ատելություն եւ դառնություն է սերմանում: Ճիպոտով ծեծը համապատասխանում է խոշտանգման սահմանմանը, որ ամրագրված է ՄԱԿ-ի Հանցագործությունների կանխարգելման եւ հանցագործների հետ վարվեցողության հռչակագրի 1-ին հոդվածում այն ճիպոտը, որն օգտագործվել է տղամարդկանց համար նախատեսված Սենթ Վինսենթի բանտում, այսօր պետք է տանել բանտային թանգարան եւ պահել այնտեղ խոշտանգման այլ գործիքների հետ, ինչպիսիք են հատուկ հարմարանքները, ճիպոտով ծեծի համար սյունը, ձեռքերի համար պտուտակները եւ վանդակները, որոնցում պահվում էին Վեսթ Ինդիայի ընդվզող բնակիչները՝ մինչեւ սովամահ լինելը»:

Դատարանը վճռեց, որ սահմանադրական իրավունքները խախտելու համար փոխհատուցելու պետական պարտավորությունը հիմնված է իր իսկ սխալ գործողությունների համար պետության հիմնական պատասխանատվության, այլ ոչ թե պաշտոնյաների կողմից կատարած իրավախախտումների համար փոխարինող պատասխանատվության վրա: Պետական ծառայողների կողմից կամայական եւ դաժան պահվածքի համար անհրաժեշտ է փոխհատուցում վճարել: Վնասները

գնահատելիս Դատարանը պետք է հաշվի առնի հայցվորի արժանապատվությանը եւ պատվին հասցված վնասը, բարոյական տառապանքը եւ հեղինակության կորուստը: Փոխհատուցման պատժիչ տուգանքի մասին որոշում կայացնելիս դատարանը պետք է հավասարակշռություն պահպանի պետության՝ օրենքը եւ կարգը պահպանելու եւ քաղաքացու՝ սահմանադրական իր իրավունքների խախտման չենթարկվելու մղցակցող իրավունքների միջեւ: Հաշվի առնելով ցավի եւ տառապանքի աստիճանը, որին ենթարկվել է հայցվորը, նրա արժանապատվությանը հասցրած վնասը, բարոյական տառապանքը, անհարմարությունը, ամոթը եւ նրան պատճառած նվաստացումը, Դատարանը փոխհատուցում է սահմանել: Սահմանադրական իրավունքները պահպանելու դատարանների լայն իրավասության համաձայն, դատարանները կարող են, մասնավորապես, դատական վարույթ սկսել պետական պաշտոնյաների դեմ, որոնք պատասխանատվություն են կրում սահմանադրական իրավունքները խախտելու համար, տուգանային պատժամիջոցներ կիրառել նրանց նկատմամբ կամ կարգապահական վարույթ սկսել: Պ-ի գործում ոչ բանտապետը, ոչ էլ պետությունը գրավոր ներողություն չէին հայտնել սահմանադրական իրավունքների խախտման համար: Այդ իսկ պատճառով դատարանը վնասի փոխհատուցում էր սահմանել: Բացի այդ, Դատարանը որոշել էր կարգապահական վարույթ սկսել բանտապետի նկատմամբ:

Հավելվածներ

109 Հավելված 1.
Միջազգային փաստաթղթերի ընտրանի

109 1. Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունն նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա, հոդվածներ 1-16

114 2. Միջազգային դաշնագիր քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների մասին, 7-րդ եւ 10-րդ հոդվածներ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա 3-րդ հոդված, Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիա, 5-րդ հոդված, Մարդու եւ ժողովուրդների աֆրիկյան խարտիա, 5-րդ հոդված

116 3. 1949 թ-ի Ժնեւի չորս կոնվենցիաների ընդհանուր 3-րդ հոդված

117 4. Հռոմի միջազգային քրեական դատարանի կանոնադրություն, 7-րդ եւ 8-րդ հոդվածներ

123 5. Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի վերաբերյալ Մարդու իրավունքների հանձնաժողովի ընդհանուր 20-րդ մեկնաբանություն

127 6. Որեւէ ձեւով ձերբակալված կամ կալանավորված բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածու

136 7. Ուղենիշներ դատախազների դերի վերաբերյալ (հատվածներ))

138 8. Դատական մարմինների անկախության հիմնական սկզբունքները (հատվածներ)

139 9. Փաստաբանների դերի վերաբերյալ հիմնարար սկզբունքներ (հատվածներ)

141 10. Խոշտանգումների գծով հատուկ զեկուցողի հանձնարարականները (հատվածներ)

146 11. Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների կոսլիտ խախտումների զոհերի ռեստիտուցիայի, փոխհատուցման եւ վերականգնման իրավունք, Հատուկ զեկուցող, պրոֆեսոր Մ. Շարիֆ Բասսիունիի ամփոփիչ զեկույցը

152 12. Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային եւ արժանապատվության նվաստացնող վերաբերմունքի եւ պատժի արդյունավետ հետաքննության եւ փաստագրման սկզբունքները (Ստամբուլի արձանագրություն)

155 Հավելված 2.
ԽԿԿ-ի Չափանիշները. քաղվածքներ

169 Հավելված 3.
Լրացուցիչ տեղեկություններ եւ կազմակերպություններ

175 Հավելված 4.
Մարդու իրավունքների որոշ փաստաթղթերի վավերացման կարգավիճակի աղյուսակ

Հավելված 1.
Միջազգային փաստաթղթերի ընտրանի

1.

Կոնվենցիա Խոշտանգումների Եւ Դաժան, Անմարդկային Կամ Արժանապատվությունը Նվաստացնող Վերաբերմունքի Ու Պատժի Այլ Ձեւերի Դեմ

Ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1984 թվականի դեկտեմբերի 10-ի 39/46 բանաձեւով եւ բաց է ստորագրելու, վավերացնելու եւ միանալու համար:
Ուժի մեջ է մտել 1987 թվականի հունիսի 26-ին՝ 27 (1) հոդվածի համաձայն:

Հոդված 1

1. Համաձայն սույն Կոնվենցիայի նպատակների, «խոշտանգում» սահմանումը նշանակում է ցանկացած գործողություն, որի միջոցով պետական պաշտոնյա անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ եւ գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որեւէ անձի մտածված կերպով հասցնում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաեւ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անբաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատահականորեն:
2. Այս հոդվածը չի վնասում միջազգային որեւէ պայմանագրի կամ որեւէ ազգային օրենսդրության, որոնք բովանդակում են կամ կարող են բովանդակել դրույթներ առավել ընդարձակ կիրառման մասին:

Հոդված 2

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է արդյունավետ օրենսդրական, վարչական, դատական կամ այլ միջոցներ՝ իր իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում խոշտանգումների դեպքերը կանխելու համար:
2. Ոչ մի բացառիկ իրադրություն, ինչպիսին էլ այն լինի՝ պատերազմի առկայություն կամ պատերազմի վտանգ, ներքին քաղաքական անկայունություն կամ ցանկացած այլ արտակարգ իրավիճակ, չի կարող հանդիսանալ խոշտանգումների արդարացում:
3. Վերադաս պետի կամ պետական իշխանության հրամանը չի կարող համարվել խոշտանգումների արդարացում:

Հոդված 3

1. Ոչ մի մասնակից պետություն չպետք է որեւէ անձի արտաքսի, վերադարձնի (refouler) կամ հանձնի մեկ այլ պետության, եթե կան լուրջ հիմքեր ենթադրելու, որ այնտեղ նրան կարող են սպառնալ բանտային խոշտանգումները:
2. Նման հիմքերի առկայությունը որոշելու համար իրավասու իշխանությունները նկատի են առնում գործին առնչվող բոլոր հանգամանքները, համապատասխան դեպքերում՝ նաեւ տվյալ պետության մեջ մարդու իրավունքների կոպիտ, աղաղակող եւ զանգվածային խախտումների պրակտիկան:

Հոդված 4

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որպեսզի խոշտանգումների բոլոր դեպքերը դիտվեն իբրեւ հանցագործություններ՝ իր քրեական օրենսդրության համաձայն: Նույնը վերաբերում է խոշտանգման ենթարկելու փորձին, ինչպես նաեւ խոշտանգմանը գործակցություն կամ մասնակցություն ունեցած ցանկացած անձի գործողություններին:
2. Յուրաքանչյուր մասնակից պետություն սահմանում է համապատասխան պատիժներ այդօրինակ հանցանքների համար՝ հաշվի առնելով դրանց բնույթի ծանրությունը:

Հոդված 5

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել հաստատելու համար նրա իրավասությունը 4-րդ հոդվածում մատնանշված հանցագործությունների նկատմամբ՝ հետեւյալ դեպքերում.

ա) երբ հանցագործությունները կատարվել են նրա իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում կամ տվյալ պետությունում գրանցված ծովային կամ օդային նավի վրա,

բ) երբ ենթադրյալ հանցագործը տվյալ պետության քաղաքացին է,

գ) երբ զոհը տվյալ պետության քաղաքացին է, եւ եթե տվյալ պետությունը նպատակահարմար է գտնում տարածել իր իրավասությունը նրա վրա:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն համանման կերպով ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն հաստատելու համար իր իրավասությունն այնպիսի հանցագործությունների դեպքում, երբ ենթադրյալ հանցագործը գտնվում է իր իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում, եւ պետությունը 8-րդ հոդվածի համաձայն, նրան չի վերադարձնում սույն հոդվածի 1-ին կետում նշված պետություններից որեւէ մեկին:
3. Սույն կոնվենցիան չի բացառում ներքին օրենսդրությանը համապատասխանող ցանկացած քրեական իրավասության իրականացումը:

Հոդված 6

1. Ցանկացած մասնակից պետություն, որի տարածքում գտնվում է 4-րդ հոդվածում մատնանշված հանցագործություններից որեւէ մեկի կատարման մեջ կասկածվող անձը, իր տրամադրության տակ եղած լրատվությունը քննարկելուց հետո, համոզվելով, որ հանգամանքներն այդ են պահանջում, կալանավորում է նրան կամ ձեռնարկում է նրա ներկայությունն ապահովող իրավական այլ միջոցներ: Կալանելը կամ նմանօրինակ միջոցառումները իրականացվում են տվյալ պետության օրենսդրության համապատասխան, սակայն կարող են տեւել միայն այնքան ժամանակ, որն անհրաժեշտ է քրեական-դատավարական կամ հանձնման գործողություններ ձեռնարկելու համար:
2. Այդ պետությունն անհապաղ կատարում է փաստերի նախնական հետաքննություն:
3. Սույն հոդվածի 1-ին կետի հիման վրա կալանված ցանկացած անձի ցույց է տրվում աջակցություն՝ անհապաղ կապ հաստատել այն պետության մոտակա համապատասխան

ներկայացուցչի հետ, որի քաղաքացին է համարվում ինքը, կամ, եթե նա քաղաքացիություն չունեցող անձ է՝ այն պետության ներկայացուցչի հետ, որտեղ նա սովորաբար բնակվում է:

4. Երբ պետությունը, սույն հոդվածի համապատասխան, կալանում է որեւէ անձի, ապա անհապաղ տեղեկացնում է 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված պետություններին այդ անձի կալանման եւ այն հանգամանքների մասին, որոնք հիմք են ծառայել նրան ձերբակալելու համար: Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ նախնական հետաքննություն անցկացնող պետությունն իր ստացած տվյալների մասին շտապ հայտնում է վերոհիշյալ պետություններին եւ մատնանշում՝ մտադիր է արդյոք իրականացնել իր իրավասությունը, թե ոչ:

Հոդված 7

1. Մասնակից պետությունը, որի իրավասությանը ենթակա տարածքում բացահայտվել է 4-րդ հոդվածում նշված հանցագործություններից որեւէ մեկի կատարման մեջ կասկածվող անձը, 5-րդ հոդվածում նախատեսված՝ հանցագործին չվերադարձնելու դեպքերում, տվյալ գործը դատական հետապնդման համար հանձնում է իր իրավասու մարմիններին:
2. Այս մարմինները որոշում են կայացնում այն նույն կարգով, ինչպես լուրջ բնույթի ցանկացած սովորական հանցագործության դեպքում՝ այդ պետության օրենսդրության համաձայն: 5-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված դեպքերում դատական հետապնդման համար անհրաժեշտ ապացույցներին ներկայացվող պահանջները եւ դատապարտումը երբեք չպետք է լինեն պակաս խիստ, քան նրանք, որոնք կիրառվում են 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված դեպքերում:
3. Ցանկացած անձի համար, որի նկատմամբ քննություն է կատարվում՝ կապված 4-րդ հոդվածում մատնանշված հանցագործություններից որեւէ մեկի հետ, երաշխավորվում է արդարացի վերաբերմունք՝ հետաքննության բոլոր աստիճաններում:

Հոդված 8

1. 4-րդ հոդվածում մատնանշված հանցագործությունները, իբրեւ հանձնմանը հանգեցնող հանցագործություններ, ենթակա են մտցվելու հանձնման մասին մասնակից պետությունների միջեւ գոյություն ունեցող ցանկացած պայմանագրի մեջ: Մասնակից պետությունները պարտավորվում են նման հանցագործությունները, իբրեւ հանձնմանը հանգեցնող հանցագործություններ, ներառել հանձնման մասին իրենց միջեւ կնքված ցանկացած պայմանագրում:
2. Եթե հանձնումը պայմանագրի առկայությամբ պայմանավորող մասնակից պետությունը մեկ այլ մասնակից պետությունից, որի հետ ինքը չունի պայմանագիր, խնդրագիր է ստանում հանձնման մասին, նա կարող է սույն Կոնվենցիան դիտել իբրեւ այդպիսի հանցագործությունների դեպքում հանձնման իրավական հիմք: Հանձնումն իրականացվում է այն պետության օրենսդրությամբ նախատեսված այլ պայմանների համապատասխան, որին ուղղված է հանձնման խնդրագիրը:
3. Մասնակից պետությունները, որոնք չեն պայմանավորում հանձնումը պայմանագրի առկայությամբ, իրենց միջեւ եղած հարաբերություններում նման հանցագործությունները դիտում են իբրեւ հանձնմանը հանգեցնող հանցագործություններ այն պետության օրենսդրությամբ նախատեսված պայմանների համաձայն, որին ուղղված է հանձնման խնդրագիրը:
4. Այդպիսի հանցագործությունները մասնակից պետությունների միջեւ հանձնման նպատակով քննարկվում են այնպես, ինչպես եթե դրանք կատարված լինեին ոչ միայն իրենց կատարման վայրում, այլ նաեւ այն պետությունների տարածքներում, որոնք պետք է հաստատեն իրենց իրավասությունը 5-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան:

Հոդված 9

1. Մասնակից պետություններն ավելի լայն աջակցություն են ցույց տալիս միմյանց 4-րդ հոդվածում թվարկված հանցագործություններից որեւէ մեկի վերաբերյալ ձեռնարկվող քրեական-դատավարական գործերի առնչությամբ, ներառյալ դատական հետաքննության համար անհրաժեշտ բոլոր ապացույցների հատկացումը, որոնք կան իրենց տրամադրության տակ:
2. Մասնակից պետությունները կատարում են իրենց պարտավորությունները սույն հոդվածի 1-ին կետի համաձայն, հիմնվելով փոխադարձ իրավական օգնության մասին ցանկացած պայմանագրի վրա, որ կարող է կնքվել նրանց միջեւ:

Հոդված 10

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որպեսզի խոշտանգումների արգելքին վերաբերող ուսումնական նյութերն ու տեղեկատվությունն ամբողջովին մտցվեն իրավապահ մարմինների, քաղաքացիական, ռազմական, բժշկական անձնակազմի, պետական պաշտոնատար անձանց եւ այլոց նախապատրաստական ծրագրերում, ովքեր կարող են կապ ունենալ ձերբակալության, կալանքի կամ բանտարկության ցանկացած ձեւին ենթարկված մարդկանց կալանելու, հարցաքննելու կամ նրանց հետ վերաբերվելու հետ:
2. Յուրաքանչյուր մասնակից պետություն խոշտանգումների արգելքը մտցնում է ցանկացած այդպիսի անձի պարտականություններին ու գործառնություններին վերաբերող կանոնների կամ հրահանգների մեջ:

Հոդված 11

Յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում խոշտանգումների որեւէ դեպք թույլ չտալու համար պարբերաբար քննարկում է հարցաքննության առնչվող կանոնները, հրահանգները, մեթոդներն ու պրակտիկան, ինչպես նաեւ ձերբակալության պայմաններն ու այն անձանց հանդեպ վերաբերմունքը, ովքեր ենթարկվել են ցանկացած ձեւի ձերբակալության, կալանքի կամ բանտարկության:

Հոդված 12

Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որպեսզի իր իրավասու մարմիններն անհապաղ եւ անաչառ հետաքննություն անցկացնեն, երբ առկա է բավարար հիմք ենթադրելու, թե խոշտանգում է կիրառվել իր իրավասության ենթակա ցանկացած տարածքում:

Հոդված 13

Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որպեսզի ամեն մի անձ, ով պնդում է, թե ինքը ենթարկվել է խոշտանգումների, այդ պետության իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում ունենա տվյալ պետության իրավասու իշխանություններին բողոք ներկայացնելու եւ նրանց կողմից նմանօրինակ բողոքը անհապաղ եւ անաչառ կերպով հետաքննելու իրավունք: Ձեռնարկվում են միջոցներ, ապահովելու համար հայցվորի եւ վկաների պաշտպանությունը նրանց բողոքի կամ վկայական ցուցմունքի հետ կապված վատ վերաբերմունքի կամ ահաբեկման ամեն մի ձեւից:

Հոդված 14

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավական համակարգում ապահովում է, որպեսզի խոշտանգումների զոհը ստանա փոխհատուցում եւ ունենա իրավական սանկցիաներով ամրապնդված արդարացի եւ համարժեք փոխհատուցման իրավունք, ներառյալ առավել լիակատար արդարացման միջոցներ: Խոշտանգումների պատճառով

զոհի մահվան դեպքում արդարացման փոխհատուցման իրավունքը տրվում է նրա խնամքի տակ գտնվողներին:

2. Սույն հոդվածում ոչինչ չի շոշափում զոհի կամ այլոց իրավունքները ազգային օրենսդրության համաձայն գոյություն ունեցող փոխհատուցման հարցում:

Հոդված 15

Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որպեսզի որեւէ դատական հարցաքննության ընթացքում իբրեւ ապացույց չօգտագործվի որեւէ հայտարարություն, որը, ինչպես պարզվել է, արվել է խոշտանգման ազդեցության տակ, բացի այն դեպքերից, երբ դա խոշտանգելու մեջ մեղադրվող անձի դեմ այդ հայտարարությունն արվելու ապացույց է հանդիսանում:

Հոդված 16

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում պարտավորվում է կանխել դաժան, անմարդկային եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի մյուս ձեւերը, որոնք չեն մտնում 1-ին հոդվածում ներկայացվող խոշտանգում սահմանման մեջ, երբ այդպիսի գործողությունները կատարվում են պետական պաշտոնատար անձի կամ պաշտոնապես հանդես եկող մեկ այլ անձի կողմից կամ նրանց հրահրմամբ, գիտությամբ եւ լուռ համաձայնությամբ: Մասնավորապես, 10-րդ, 11-րդ, 12-րդ եւ 13-րդ հոդվածներում նշված պարտավորությունները կիրառվում են խոշտանգման մասին հիշատակությունը դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձեւերի մասին հիշատակության փոխարինմամբ:

2. Սույն Կոնվենցիայի դրույթները չեն վնասում ցանկացած այլ միջազգային փաստաթղթի կամ ազգային օրենսդրության դրույթներին, որոնք արգելում են դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքն ու պատիժը, կամ վերաբերում են հանձնմանը կամ արտաքսմանը:

2.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳԻՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 Ա (XXI) բանաձեւի համաձայն եւ բաց է ստորագրելու, վավերացնելու եւ միանալու համար: Ուժի մեջ է մտել 1976 թվականի մարտի 23-ին՝ 49 հոդվածին համաձայն:

Հոդված 7

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես ոչ մի անձ չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվի բժշկական կամ գիտական փորձերի:

Հոդված 10 (1)

Ազատազրկված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի եւ մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության հարգման իրավունք:

ԿՈՆՎԵՆՑԻԱ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(4-ը նոյեմբերի, 1950թ., Հռոմ)

Հոդված 3.

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Ստորագրվել է Մարդու իրավունքների մասնագիտացված համաժողովին, Սան Խոսե, Կոստա Ռիկա, 1969 թ-ի նոյեմբերի 22-ին:

Հոդված 5

1. Յուրաքանչյուր ոք ունի իր ֆիզիկական, հոգեկան եւ բարոյական ամբողջականության հարգման իրավունք:
2. Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող պատժի կամ վերաբերմունքի: Իրենց ազատությունից զրկված բոլոր անձանց պետք է վերաբերվել՝ հարգելով մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունը:
3. Պատժի չի կարող ենթարկվել որեւէ այլ անձ, բացի հանցագործություն կատարած անձանցից:

4. Մեղադրված անձինք, բացառությամբ հատուկ հանգամանքների, սկսած ձերբակալման պահից, պետք է առանձին պահվեն դատապարտված անձանցից, նրանց հանդեպ վերաբերմունքը պետք է համապատասխանի իրենց դատապարտված չլինելու կարգավիճակին:
5. Քրեական վարույթ իրականացնելու ընթացքում անչափահասները պետք է առանձնացվեն չափահասներից, եւ նրանց հանդեպ դատավարությունները պետք է իրականացվեն մասնագիտացված դատարաններում՝ հնարավորինս արագ, եւ նրանց հետ պետք է վարվել՝ հաշվի առնելով նրանց անչափահասի կարգավիճակը:
6. Ազատությունից զրկելու ձեւով պատիժը որպես հիմնական նպատակը բանտարկյալների վերափոխումն է եւ սոցիալական վերահարմարեցումը:

ՄԱՐԴՈՒ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՖՐԻԿՅԱՆ ԽԱՐՏԻԱ

Ընդունվել է Աֆրիկյան միաբանության կազմակերպության կողմից Բանջուլում, 1981 թ-ի հունիսի 27-ին

Հոդված 5

Յուրաքանչյուր ոք ունի մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության եւ իր իրավական կարգավիճակի ճանաչման իրավունք: Արգելվում են մարդուն շահագործելու եւ նվաստացնելու բոլոր ձեւերը, մասնավորապես՝ ստրկությունը, ստրկավաճառությունը, խոշտանգումները, դաժան, անմարդկային եւ արժանապատվությունը նվաստացնող պատիժը եւ վերաբերմունքը:

3.

1949 թ-ի ԺՆԵՎԻ ՉՈՐՍ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԴՎԱԾ 3

Ընդունվել է 1949 օգոստոսի 12-ին Պատերազմի զոհերի պաշտպանությանն ուղղված միջազգային կոնվենցիաների մշակման դիվանագիտական համաժողովի կողմից, ժնեւ, 1949 ապրիլի 21-ից օգոստոսի 12-ը:

Հոդված 3

Միջազգային բնույթ չկրող եւ Բարձր Պայմանավորվող Կողմերից մեկի տարածքում ծագող զինված կոնֆլիկտի դեպքում, կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերից յուրաքանչյուրը պարտավոր կլինի որպես նվազագույնը, կիրառել հետեւյալ դրույթները.

1. Այն անձինք, որոնք անմիջականորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին, ներառյալ զինված ուժերի կազմից այն անձինք, որոնք զենքը վար են դրել, ինչպես նաեւ նրանք, որոնք դադարել են պատերազմական գործողություններին մասնակցելուց հիվանդության, վիրավորվելու, բռնվելու կամ ցանկացած այլ պատճառով, պետք է բոլոր հանգամանքներում օգտվեն մարդասիրական վերաբերմունքից՝ առանց որեւէ խտրականության ռասայի, մաշկի գույնի, կրոնի կամ հավատի, սեռի, ծագման կամ գույքային դրության եւ ցանկացած համանման այլ չափանիշների պատճառներով: Այդ նպատակով վերը նշված անձանց նկատմամբ մշտապես արգելվում են ու ամենուրեք կարգելվեն հետեւյալ գործողությունները.

a) ոտնձգությունը կյանքի եւ ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ, մասնավորապես, ամեն տեսակի սպանությունները, խեղումները, դաժան վերաբերմունքը, տանջահարությունը եւ խոշտանգումները,

b) պատանդ վերցնելը,

c) ոտնձգությունը մարդկային արժանապատվության նկատմամբ, մասնավորապես, վիրավորական եւ նվաստացուցիչ վերաբերմունքը,

d) դատապարտելը եւ պատիժ կիրառելը առանց նախնական դատական վճռի՝ կայացված պատշաճ ձեւով կազմավորված դատարանի կողմից, քաղաքակիրթ ազգերի շրջանում անհրաժեշտ ճանաչված դատական երաշխիքների առկայությամբ:

2. Վիրավորներին եւ հիվանդներին կջոկեն եւ նրանց ցույց կտրվի օգնություն: Անաչառ մարդասիրական կազմակերպությունը, այնպիսին, ինչպիսին Կարմիր խաչի միջազգային կոմիտեն է, կարող է իր ծառայություններն առաջարկել կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերին: Դրանից բացի, կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը կձգտեն հատուկ համաձայնագրերի միջոցով գործողության մեջ դնել սույն կոնվենցիայի բոլոր մնացյալ դրույթները կամ դրանց մի մասը:

Նախորդ դրույթների կիրառումը չի շոշափի կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերի իրավաբանական կարգավիճակը:

4.

ՀՌՈՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընդունվել է 1998 թ-ի հուլիսի17-ին Հռոմում:

Հոդված 7
Մարդկության դեմ ուղղված հանցագործություններ

1. Սույն Կանոնադրության նպատակների համար «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» նշանակում է ստորեւ նշվող գործողություններից յուրաքանչյուրը, որոնք կատարվում են իբրեւ քաղաքացիական բնակչության դեմ ուղղված լայնածավալ կամ կանոնավոր հարձակում, եթե նման հարձակումը տեղի է ունենում գիտակցված.

ա) սպանություն,

բ) բնաջնջում,

գ) ստրկացում,

դ) բնակչության բռնագաղթ կամ բռնի տեղահանություն,

ե) բանտարկություն կամ ֆիզիկական ազատությունից զրկում այլ խիստ միջոցներով՝ միջազգային իրավունքի հիմնարար նորմերի խախտմամբ,

զ) խոշտանգում,

է) բռնաբարություն, սեքսուալ ստրկացում, պոռնկության հարկադրում, հարկադրական հղիություն, հարկադրական ամլացում կամ համեմատելի ծանրության սեքսուալ բռնության այլ ձեւեր,

ը) նույնականացված ցանկացած խմբի կամ հանրույթի հետապնդում քաղաքական, ռասայական, ազգային, էթնիկական, մշակութային, կրոնական, սեռային, ինչպես նախատեսված է 3-րդ կետում, կամ այլ դրդապատճառներով, որոնք միջազգային իրավունքով ճանաչված են անընդունելի՝ կապված սույն կետում նշված ցանկացած գործողության կամ Դատարանին ընդդատյա ցանկացած հանցագործության հետ,

թ) մարդկանց բռնի անհետացում,

ժ) ապարտեիդի հանցագործություն,

ի) մեծ տանջանքներ կամ մարմնական լուրջ վնասվածքներ պատճառող, կամ հոգեկան կամ ֆիզիկական առողջությունը քայքայող նմանաբնույթ այլ անմարդկային միտումնավոր գործողություններ:

2. 1-ին կետի նպատակների համար.

ա) «քաղաքացիական բնակչության դեմ ուղղված հարձակում» նշանակում է գործողությունների ընթացք, որը ներառում է քաղաքացիական բնակչության դեմ ուղղված 1-ին կետում նշված գործողությունների բազմակի կատարում, որոնք ձեռնարկվում են պետության կամ կազմակերպության՝ նման հարձակում իրականացնելուն ուղղված քաղաքականություն վարելու կամ այդ քաղաքականությանն աջակցելու նպատակով,

բ) «բնաջնջումը» ներառում է կյանքի պայմանների դիտավորյալ ստեղծում, inter alia սննդամթերք եւ դեղորայք ձեռք բերելու հնարավորությունից զրկում, որը ուղղված է բնակչության մասնակի ոչնչացմանը,

գ) «ստրկացում» նշանակում է անձի նկատմամբ սեփականության իրավունքի հետ կապված որեւէ կամ ողջ իրավազորության իրականացում եւ ընդգրկում է նաեւ նման իրավազորության իրականացումը մարդկանց, մասնավորապես, կանանց ու երեխաների առեւտրի ընթացքում,

դ) «բնակչության բռնագաղթ կամ բռնի տեղահանություն» նշանակում է արտաքսման կամ այլ հարկադիր գործողությունների միջոցով համապատասխան անձանց բռնի տեղափոխություն իրենց օրինական բնակության տարածքից՝ առանց միջազգային իրավունքով թույլատրելի հիմքերի,

ե) «խոշտանգում» նշանակում է կալանքի կամ մեղադրյալի հսկողության տակ գտնվող անձին դիտավորյալ կերպով ֆիզիկական կամ մտավոր սուր ցավ կամ տառապանք պատճառելը. խոշտանգում չէ այն ցավը կամ տառապանքը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջանում է օրինական պատժամիջոցներից,

զ) «հարկադրական հղիություն» նշանակում է որեւէ կնոջ անօրինական ազատազրկումը, որը հղիացել է բռնի՝ այս կամ այն ազգաբնակչության էթնիկական կազմը փոփոխելու կամ միջազգային իրավունքի այլ կոպիտ խախտումներ կատարելու նպատակով: Սույն սահմանումը որեւէ կերպ չպետք է մեկնաբանվի իբրեւ հղիության վերաբերյալ ազգային օրենքների վրա ազդեցություն,

է) «հետապնդում» նշանակում է որեւէ խմբին կամ հանրույթին պատկանելու պատճառով հիմնարար իրավունքներից դիտավորությամբ եւ կոպիտ կերպով զրկելը՝ ի հակադրություն միջազգային իրավունքի,

ը) «ապարտեիդի հանցագործություն» նշանակում է 1-ին կետում նշված գործողությունների հետ նույնաբնույթ անմարդկային գործողություններ, որոնք կատարվում են ռասայական մի խմբի կողմից ռասայական մեկ այլ խմբի կամ խմբերի նկատմամբ կանոնավոր ճնշման եւ գերակայության ստեղծված ռեժիմի համատեքստում՝ իրագործված այդ ռեժիմի պահպանման նպատակով,

թ) «մարդկանց բռնի անհետացում» նշանակում է մարդկանց կալանավորում, ձերբակալում կամ առեւանգում՝ պետության կամ քաղաքական կազմակերպության կողմից կամ նրանց թույլտվությամբ, աջակցությամբ կամ համաձայնությամբ՝ չընդունելով դա իբրեւ ազատազրկում կամ հրաժարվելով այդ մարդկանց ճակատագրի կամ գտնվելու վայրի մասին տեղեկություն տալուց՝ երկար ժամանակով օրենքով պաշտպանվելու հնարավորությունից նրանց զրկելու համար:

3. Սույն Կանոնադրության նպատակների համար «սեռ» տերմինը հասարակության համատեքստում, վերաբերում է երկու՝ արական եւ իգական սեռերին: «Սեռ» տերմինը չունի վերոհիշյալից տարբերվող որեւէ այլ իմաստ:

Հոդված 8
Պատերազմական հանցագործություններ

1. Դատարանին ընդդատյա են պատերազմական հանցագործությունները, մասնավորապես, եթե դրանք կատարվել են որպես ծրագրի կամ քաղաքականության մաս կամ նման հանցագործությունների լայնածավալ իրականացման դեպքում:

2. Սույն Կանոնադրության նպատակների համար՝ «պատերազմական հանցագործություններ» նշանակում է.

ա) 1949թ. օգոստոսի 12-ի Ժնեւի կոնվենցիաների լուրջ խախտումներ, այն է՝ Ժնեւի համապատասխան կոնվենցիայի դրույթների համաձայն պաշտպանվող անձանց կամ սեփականության դեմ կատարված ներքոհիշյալ գործողություններից յուրաքանչյուրը.

i) դիտավորյալ սպանությունը,

ii) խոշտանգումը կամ անմարդկային վերաբերմունքը, ներառյալ կենսաբանական փորձերը,

iii) դիտավորությամբ ծանր տառապանքներ պատճառելը կամ մարմնական լուրջ վնասվածք հասցնելը, կամ առողջությունը լրջորեն վնասելը,

iv) գույքի անօրինական, անիմաստ եւ խոշորածավալ ոչնչացումն ու յուրացումը՝ չպայմանավորված ռազմական անհրաժեշտությամբ,

v) ռազմագերուն կամ պաշտպանված այլ անձին՝ հակառակորդ պետության զինված ուժերում ծառայելուն հարկադրելը,

vi) ռազմագերուն կամ պաշտպանված այլ անձին՝ անաչառ եւ բնականոն դատական քննության իրավունքից զրկելը,

vii) անօրինական բռնագաղթը կամ տեղահանությունը, կամ անօրինական ազատազրկումը,

viii) պատանդներ վերցնելը,

բ) միջազգային իրավունքի շրջանակներում գործող՝ միջազգային զինված ընդհարումների ժամանակ կիրառվող օրենքների եւ սովորույթների այլ լուրջ խախտումները, այն է՝ հետեւյալ ցանկացած գործողությունը՝

i) դիտավորությամբ կատարված հարձակումները ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող քաղաքացիական բնակչության, որպես այդպիսին, կամ առանձին քաղաքացիների նկատմամբ,

ii) դիտավորությամբ կատարված հարձակումները քաղաքացիական, այսինքն՝ այնպիսի օբյեկտների վրա, որոնք ռազմական նպատակակետ չեն,

iii) դիտավորությամբ կատարված հարձակումները մարդասիրական օգնության աշխատանքներին ներգրավված անձնակազմի, օբյեկտների, նյութերի, ստորաբաժանումների կամ փոխադրամիջոցների, կամ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության համաձայն ներգրավված խաղաղարար առաքելությունների նկատմամբ, քանի դեռ նրանք, ըստ զինված ընդհարումների վերաբերյալ միջազգային իրավունքի, ունեն պաշտպանության իրավունք, որից օգտվում են քաղաքացիական բնակչությունը կամ քաղաքացիական օբյեկտները,

iv) դիտավորությամբ կատարված այնպիսի հարձակումը, երբ հարձակումն իրականացնողը հստակ գիտակցում է, որ այն կհանգեցնի քաղաքացիական բնակչության պատահական մահվան կամ վնաս հասցնելուն, կամ կվնասի քաղաքացիական օբյեկտները, կամ լայնածավալ, տեւական ու լուրջ վնաս կպատճառի շրջակա միջավայրին, որն ակնհայտորեն անհամատեղելի կլինի կոնկրետ եւ անմիջականորեն ակնկալվող ռազմական ընդհանուր առավելությանը,

v) հարձակումն անպաշտպան եւ ռազմական նպատակակետ չհանդիսացող քաղաքների, գյուղերի, կացարանների կամ շինությունների վրա կամ դրանց ռմբակոծությունը՝ անկախ դրանց կատարման միջոցներից,

vi) մարտիկի սպանությունը կամ նրան վիրավորելը, որը, զենքը վայր դնելով կամ պաշտպանության միջոցներ այլեւս չունենալով, անվերապահորեն անձնատուր է եղել,

vii) բանագնացի դրոշի, հակառակորդի դրոշի կամ զինվորական տարբերանշանների եւ հակառակորդի կամ Միավորված ազգերի կազմակերպության համազգեստի, ինչպես նաեւ Ժնեւի կոնվենցիաներով սահմանված տարբերակիչ խորհրդանշանների ոչ պատշաճ օգտագործումը, ինչը հանգեցնում է անձի մահվան կամ նրան պատճառում ֆիզիկական լուրջ վնասվածք,

viii) գրավող պետության կողմից իր քաղաքացիական բնակչության մի մասի ուղղակի կամ անուղղակի տեղափոխումը գրավյալ տարածք կամ գրավյալ տարածքի բնակչության կամ նրա մի մասի արտաքսումը կամ տեղափոխումն այդ տարածքի սահմանների ներսում կամ դրանից դուրս,

ix) դիտավորությամբ կատարված հարձակումները՝ կրոնական, կրթական, մշակութային, գիտական կամ բարեգործական նպատակների ծառայող շենքերի, պատմական հուշարձանների, հոսպիտալների եւ այն վայրերի վրա, ուր կենտրոնացած են հիվանդներ ու վիրավորներ, պայմանով, որ նշված օբյեկտները ռազմական նպատակակետեր չեն,

x) հակառակորդ կողմի իշխանության ներքո գտնվող անձանց ֆիզիկական խեղումը կամ նրանց ենթարկումը բժշկական կամ գիտական տարաբնույթ փորձերի, որոնք չեն արդարացվում տվյալ անձի բժշկական, ատամնաբուժական կամ հիվանդանոցային բուժման անհրաժեշտությամբ եւ իրականացվում են ոչ ի շահ նրա, եւ որոնք հանգեցնում են տվյալ անձի կամ անձանց մահվան կամ լրջորեն սպառնում են նրանց առողջությանը,

xi) հակառակորդ պետությանը կամ նրա բանակին պատկանող անձանց դավադրաբար սպանելը կամ վիրավորելը,

xii) հայտարարելը, թե գթություն չի լինի,

xiii) հակառակորդի ունեցվածքի ոչնչացումը կամ զավթումը, եթե նման ոչնչացումը կամ զավթումն անհետաձգելիորեն թելադրված է ռազմական անհրաժեշտությամբ,

xiv) դատարանում հակառակորդ կողմի քաղաքացիների իրավունքները եւ հայցերը չեղյալ, կասեցված կամ անթույլատրելի հայտարարելը,

xv) հակառակորդ կողմի քաղաքացիներին իրենց երկրի դեմ ուղղված ռազմական գործողություններին մասնակցելուն հարկադրելը, եթե, նույնիսկ, նախքան պատերազմը նրանք ծառայության մեջ են գտնվել պատերազմող կողմում,

xvi) քաղաքի կամ բնակավայրի կողոպուտը, նույնիսկ եթե այն վերցվել է գրոհով,

xvii) թույն կամ թունավոր զենք կիրառելը,

xviii) հեղձուցիչ, թունավոր կամ այլ գազեր եւ համանման հեղուկներ, նյութեր կամ միջոցներ կիրառելը,

xix) մարդու մարմնում հեշտությամբ պայթող կամ տափակող գնդակներ օգտագործելը, ինչպիսին են, օրինակ, թաղանթավոր գնդակները, որոնց կարծր թաղանթն ամբողջությամբ չէ, որ ծածկում է միջուկը կամ ունի կտրտվածքներ,

xx) այնպիսի զենքեր, ռազմամթերք եւ տեխնիկա, ինչպես նաեւ պատերազմ վարելու այնպիսի մեթոդներ կիրառելը, որոնք առաջ են բերում չափազանց մեծ վնասվածքներ ու ավելորդ տանջանքներ, կամ որոնք իրենց էությամբ ընտրողական չեն՝ ի խախտումն զինված ընդհարումների միջազգային իրավունքի, պայմանով, որ նման զենքերը, ռազմամթերքները, տեխնիկան եւ պատերազմ վարելու մեթոդները, համընդհանուր արգելման առարկա են եւ ներառված են սույն Կանոնադրության հավելվածում՝ 121-րդ եւ 123-րդ հոդվածների համապատասխան դրույթների համաձայն կատարված փոփոխությունների միջոցով,

xxi) մարդկային արժանապատվության դեմ ուղղված ոտնձգությունը, մասնավորապես, վիրավորական եւ նվաստացուցիչ վերաբերմունքը,

xxii) բռնաբարությունը, սեքսուալ ստրկությունը, պոռնկության հարկադրելը, հարկադրական հղիությունը, ինչպես սահմանված է 7-րդ հոդվածի 2 կետի զ) ենթակետում, հարկադրական ամլացումը կամ ժնեւի կոնվենցիաների կոպիտ խախտում հանդիսացող սեքսուալ այլ բռնությունները,

xxiii) քաղաքացիական անձի կամ այլ պաշտպանյալ անձի ներկայության օգտագործումը՝ որոշակի վայրեր, տարածքներ կամ զինված ուժեր ռազմական գործողություններից անձեռնմխելի դարձնելու համար,

xxiv) դիտավորյալ կատարված հարձակումները շենքերի, հյութերի, բժշկական հաստատությունների եւ փոխադրամիջոցների, ինչպես նաեւ անձնակազմի վրա, որոնք միջազգային իրավունքին համապատասխան կրում են Ժնեւի կոնվենցիաների տարբերանշանները,

xxv) դիտավորությամբ քաղաքացիական անձանց սովի մատնելը՝ իբրեւ պատերազմ վարելու միջոց, նրանց զրկելով գոյատեւելու համար անհրաժեշտ միջոցներից, ներառյալ Ժնեւի կոնվենցիաներով նախատեսված օգնություն տրամադրելուն դիտավորությամբ խոչընդոտելը,

xxvi) մինչեւ տասնհինգ տարեկան երեխաներին ազգային զինված ուժեր զինվորական ծառայության զորակոչելը կամ հավաքագրելը, կամ ռազմական գործողություններին նրանց ակտիվ մասնակցությունն օգտագործելը:

գ) գ) Միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների դեպքում՝ 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնեւի չորս կոնվենցիաների համար ընդհանուր 3-րդ հոդվածի լուրջ խախտումները, այն է՝ հետեւյալ գործողություններից յուրաքանչյուրը՝ իրականացված ռազմական գործողություններին գործուն մասնակցություն չցուցաբերած անձանց դեմ, ներառյալ այն զինվորականները, ովքեր վայր են դրել զենքը, ինչպես եւ նրանք, ովքեր շարքից դուրս են եկել հիվանդության, վիրավորվելու, ձերբակալվելու կամ ցանկացած այլ պատճառով.

i) i) կյանքի եւ ֆիզիկական անձեռնմխելիության դեմ ուղղված ոտնձգությունը, մասնավորապես, բոլոր տեսակի սպանությունները, խեղումները, դաժան վերաբերմունքը եւ խոշտանգումները,

ii) անձի արժանապատվության դեմ ուղղված ոտնձգությունը, մասնավորապես, վիրավորական եւ նվաստացուցիչ վերաբերմունքը,

iii) պատանդ վերցնելը,

iv) դատավճիռ կայացնելը եւ այն ի կատար ածելը՝ առանց սահմանված կարգով ստեղծված դատարանի կողմից՝ համընդհանուր կերպով անհրաժեշտ ճանաչված բոլոր դատական երաշխիքների պահպանմամբ նախորդ դատական որոշման կայացման:

դ) 2-րդ կետի (գ) ենթակետը կիրառվում է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների նկատմամբ եւ, այդպիսով, չի կիրառվում ներքին հուզումների եւ լարվածությունների նկատմամբ, ինչպիսին են, օրինակ, հասարակական անկարգությունները, բռնության առանձին եւ պատահական դեպքերը կամ նման բնույթի այլ գործողություններ:

ե) Միջազգային բնույթ չունեցող զինված ընդհարումների ժամանակ կիրառվող՝ միջազգային իրավունքի շրջանակներում գործող օրենքների եւ սովորույթների այլ լուրջ խախտումներ, այն է՝ հետեւյալ գործողություններից յուրաքանչյուրը.

i) դիտավորությամբ կատարված հարձակումները քաղաքացիական բնակչության վրա, որպես այդպիսին, կամ ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող առանձին քաղաքացիական անձանց վրա,

ii) դիտավորյալ կատարված հարձակումները շենքերի, հյութերի, բժշկական հաստատությունների եւ փոխադրամիջոցների, ինչպես նաեւ անձնակազմի վրա, որոնք միջազգային իրավունքին համապատասխան կրում են Ժնեւի կոնվենցիաների տարբերանշանները,

iii) դիտավորությամբ կատարված հարձակումները՝ մարդասիրական օգնության աշխատանքներին ներգրավված անձնակազմի, օբյեկտների, հյութերի, ստորաբաժանումների կամ փոխադրամիջոցների, կամ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության համաձայն ներգրավված խաղաղարար առաքելությունների վրա, քանի դեռ նրանք, ըստ զինված ընդհարումների միջազգային իրավունքի, ունեն պաշտպանության իրավունք, որից օգտվում են քաղաքացիական անձինք կամ քաղաքացիական օբյեկտները,

iv) դիտավորությամբ կատարված հարձակումները՝ կրոնական, կրթական, մշակութային, գիտական կամ բարեգործական նպատակներին ծառայող շենքերի, պատմական հուշարձանների, հոսպիտալների եւ այն վայրերի վրա, ուր կենտրոնացած են հիվանդներ եւ վիրավորներ, պայմանով, որ նշված օբյեկտները ռազմական նպատակակետեր չեն,

v) քաղաքի կամ բնակավայրի կողոպուտը, եթե, նույնիսկ, այն վերցվել է գրոհով,

vi) բռնաբարությունը, սեքսուալ ստրկությունը, պոռնկության հարկադրելը, հարկադրական հղիությունը, ինչպես այն սահմանված է 7-րդ հոդվածի 2-րդ կետի (զ) ենթակետում, հարկադրական ամլացումը եւ սեքսուալ բռնության այլ ձեւեր, որոնք նույնպես Ժնեւի չորս կոնվենցիաների համար ընդհանուր 3-րդ հոդվածի լուրջ խախտումներ են,

vii) մինչեւ տասնհինգ տարեկան երեխաներին զինված ուժեր կամ խմբեր զինվորական ծառայության զորակոչելը կամ հավաքագրելը, կամ ռազմական գործողություններին նրանց ակտիվ մասնակցությունն օգտագործելը,

viii) ընդհարման հետ կապված պատճառներով քաղաքացիական բնակչության տեղահանման հրաման արձակելը, եթե միայն դա չի պահանջվում համապատասխան քաղաքացիական բնակչության անվտանգության նկատառումներով, կամ ռազմական բնույթի անհետաձգելի անհրաժեշտությամբ,

ix) հակառակորդի մարտիկին դավադրությամբ սպանելը կամ վիրավորելը,

x) հայտարարելը, թե գթություն չի լինի,

xi) հակառակորդ կողմի իշխանության ներքո գտնվող անձանց ֆիզիկական խեղումը կամ նրանց ենթարկումը բժշկական կամ գիտական տարաբնույթ փորձերի, որոնք չեն արդարացվում տվյալ անձի բժշկական, ատամնաբուժական կամ հիվանդանոցային բուժման անհրաժեշտությամբ եւ իրականացվում են ոչ ի շահ նրա, եւ որոնք հանգեցնում են տվյալ անձի կամ անձանց մահվան կամ լրջորեն սպառնում են նրանց առողջությանը,

xii) հակառակորդի ունեցվածքի ոչնչացումը կամ զավթումը, բացառությամբ, երբ նման ոչնչացումը կամ զավթումն անհետաձգելիորեն թելադրված են ռազմական անհրաժեշտությամբ:

զ) 2-րդ կետի (ե) ենթակետը կիրառվում է միջազգային բնույթ չունեցող զինված ընդհարումների նկատմամբ եւ, այդպիսով, չի կիրառվում ներքին հուզումների եւ լարվածությունների նկատմամբ, ինչպիսին են, օրինակ, հասարակական անկարգությունները, բռնության առանձին եւ պատահական դեպքերը կամ նման բնույթի այլ գործողություններ: Այն կիրառվում է պետություններից որեւէ մեկի տարածքում տեղի ունեցող զինված ընդհարումների նկատմամբ, երբ առկա է տեւական զինված ընդհարում կառավարական ուժերի եւ կազմակերպված զինված խմբավորումների կամ հենց այդ խմբավորումների միջեւ:

3. 2-րդ կետի (գ) եւ (ե) ենթակետերում շարադրված որեւէ դրույթ չի շոշափում կառավարության պատասխանատվությունը՝ բոլոր օրինական միջոցներով պետության մեջ պահպանելու կամ վերականգնելու օրենքն ու կարգը կամ պաշտպանելու պետության միասնությունը եւ տարածքային ամբողջականությունը:

5.

Մարդու իրավունքների հանձնաժողովի Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի Ընդհանուր մեկնաբանություն N 20

Հոդված 7, 44-րդ նստաշրջան, 1992թ., Մարդու իրավունքների պայմանագրային մարմինների կողմից ընդունված Ընդհանուր մեկնաբանությունների եւ ընդհանուր հանձնարարականների ժողովածու, ՄԱԿ-ի փաստաթուղթ HRI/GEN/1/Rev.1. at 30

1. Այս ընդհանուր մեկնաբանությունը փոխարինում է N7 ընդհանուր մեկնաբանությանը (16-րդ նստաշրջան, 1982 թ.)՝ անդրադառնալով դրան ու հետագա զարգացում տալով:
2. Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածի դրույթների նպատակն է պաշտպանել ինչպես անձի արժանապատվությունը, այնպես էլ նրա ֆիզիկական եւ հոգեբանական անձեռնմխելիությունը: Մասնակից պետության պարտականությունն է ապահովել յուրաքանչյուրի պաշտպանությունը՝ օրենսդրական կամ այլ միջոցներով, որոնք կարող են անհրաժեշտ լինել 7-րդ հոդվածով արգելված գործողությունների դեմ՝ կատարվեն դրանք իրենց պաշտոնական դիրքերից գործող մարդկանց, իրենց պաշտոնական իրավասություններից դուրս գործող մարդկանց կամ մասնավոր անձանց կողմից: 7-րդ հոդվածում ամրագրված արգելքը լրացվում է Դաշնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված պոզիտիվ պահանջներով, որտեղ ասվում է. «Ազատազրկված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի եւ մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության հարգանքի իրավունք»:
3. 7-րդ հոդվածի տեքստը սահմանափակում չի թույլատրում: Հանձնաժողովը եւս վերահաստատում է, որ անգամ Դաշնագրի 4-րդ հոդվածում հիշատակված՝ պետության մեջ արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ 7-րդ հոդվածից որեւէ շեղում չի թույլատրվում, եւ նրա դրույթները պետք է շարունակեն մնալ ուժի մեջ: Հանձնաժողովը նշում է նաեւ, որ ոչ մի արդարացում կամ մեղմացուցիչ հանգամանք չի կարող օգտագործվել որպես 7-րդ հոդվածը որեւէ պատճառով խախտելու արդարացում՝ներառյալ վերադաս ատյանի կամ պետական իշխանության մարմնի կողմից հրամանը:
4. Դաշնագիրը չի պարունակում որեւէ սահմանում 7-րդ հոդվածում շարադրված հասկացությունների վերաբերյալ ճիշտ այնպես, ինչպես հանձնաժողովն անհրաժեշտ չի համարում կազմել արգելված գործողությունների ցանկ կամ ընդգծված տարբերություններ դնել պատժի կամ վերաբերմունքի տարբեր ձեւերի միջեւ. տարբերությունները կախված են ցուցաբերվող վերաբերմունքի բնույթից, նպատակից եւ խստությունից:
5. 7-րդ հոդվածում առկա արգելքը վերաբերում է ոչ միայն զոհին ֆիզիկական ցավ, այլեւ հոգեբանական տառապանք պատճառող գործողություններին: Հանձնաժողովի կարծիքով, բացի դրանից, արգելքը պետք է տարածվի նաեւ մարմնական պատժի վրա՝ ներառելով չափազանց մեծ պատժի կիրառումը, ինչը կարող է կարգադրվել որպես պատժամիջոց կատարած հանցագործության համար կամ որպես դաստիարակչական կամ կարգապահական միջոց: Այդ կապակցությամբ տեղին է ընդգծել, որ 7-րդ հոդվածը պաշտպանում է, մասնավորապես, երեխաներին, աշակերտներին եւ կրթական ու բժշկական հաստատությունների հիվանդներին:

6. Հանձնաժողովը նշում է, որ կալանավորված կամ ազատազրկված անձին երկար ժամանակ բանտախցում միայնակ սահելը կարող է դասվել 7-րդ հոդվածով արգելված գործողությունների շարքը: Ինչպես հանձնաժողովը սահմանել էր իր ընդհանուր մեկնաբանություն N 6-ում (16), Դաշնագրի 6-րդ հոդվածն ընդհանուր առմամբ վերաբերում է մահապատժի վերացմանը, օգտագործելով այնպիսի արտահայտություններ, որոնք պարզորոշ ցույց են տալիս, որ նման վերացումը ցանկալի է: Բացի այդ, երբ մասնակից պետություններից որեւէ մեկը ծանր հանցագործությունների համար մահապատիժ է կիրառում, այն ոչ միայն պետք է խստորեն սահմանափակվի 6-րդ հոդվածի դրույթների համաձայն, այլեւ պետք է իրականացվի այնպիսի եղանակով, որ հնարավորինս քիչ ֆիզիկական եւ հոգեբանական տառապանքներ պատճառի:

7. 7-րդ հոդվածն ուղղակիորեն արգելում է բժշկական կամ գիտական փորձեր կատարել՝ առանց տվյալ անձի ազատ արտահայտված համաձայնության: Հանձնաժողովը նշում է, որ մասնակից պետությունների ներկայացրած զեկույցներում տվյալ հարցի մասին սովորաբար քիչ տեղեկություններ են նշվում: Պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել այս դրույթի պահպանումն ապահովելու անհրաժեշտությանն ու միջոցներին: Հանձնաժողովը նշում է նաեւ, որ նման փորձերից հատուկ պաշտպանության կարիք ունեն այն անձինք, որոնք ի վիճակի չեն գիտակցված համաձայնություն տալ եւ, մասնավորապես նրանք, որոնք որեւէ ձեւով գտնվում են կալանքի տակ կամ անազատ վիճակում: Նման անձինք չպետք է ենթարկվեն բժշկական կամ գիտական որեւէ տեսակի փորձերի, որ կարող է վնաս հասցնել նրանց առողջությանը:

8. Հանձնաժողովը նշում է, որ 7-րդ հոդվածի իրականացման համար բավարար չէ նման վերաբերմունքի կամ պատժի արգելումը կամ դա հանցագործություն որակելը: Մասնակից պետությունները պետք է Հանձնաժողովին տեղեկացնեն օրենսդրական, վարչական, դատական եւ այլ միջոցների մասին, որոնք իրենք կիրառում են իրենց իրավասության տակ գտնվող ողջ տարածքում՝ խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման եւ պատժելու նպատակով:

9. Հանձնաժողովի կարծիքով, մասնակից պետությունները չպետք է անձանց ենթարկեն խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի վտանգին՝ մի այլ երկրի հանձնման, արտաքսման կամ բռնի կերպով վերադարձնելու ճանապարհով: Մասնակից պետություններն իրենց զեկույցներում պետք է նշեն, թե ինչ միջոցառումներ են նրանք ձեռնարկել այդ ուղղությամբ:

10. Հանձնաժողովը պետք է տեղեկացված լինի, թե ինչպես են մասնակից պետությունները բնակչության մեջ համապատասխան տեղեկություններ տարածում 7-րդ հոդվածով արգելված խոշտանգումների եւ նման այլ վերաբերմունքի մասին: Իրավապահ մարմինների անձնակազմը, բուժանձնակազմը, ոստիկանության աշխատակիցները եւ այլ անձինք, ովքեր մասնակցում են որեւէ ձեւով ձերբակալման, կալանքի կամ ազատազրկման ենթարկված անձանց հսկողության կամ բուժման գործընթացներին, պետք է ստանան համապատասխան հրահանգավորում եւ ուսուցում: Մասնակից պետությունները պետք է Հանձնաժողովին տեղեկացնեն իրականացվող հրահանգավորման եւ ուսուցման մասին եւ թե ինչպես են 7-րդ հոդվածով արգելված գործողությունները կազմում կիրառական եւ բարոյագիտական (էթիկայի) նորմերի չափորոշիչների անբաժանելի մասը, որոնց պետք է հետեւեն նշված անձինք:

11. Ի հավելումն նկարագրված քայլերի, որոնք յուրաքանչյուրի համար 7-րդ հոդվածով արգելված գործողությունների դեմ ընդհանուր պաշտպանություն են ապահովում, մասնակից պետությունը պետք է մանրամասն տեղեկություններ տրամադրի առանձնապես խոցելի անձանց հատուկ պաշտպանության համար նախատեսվող երաշխիքների մասին: Պետք է նշել, որ մշտական վերահսկողությունը ինչպես հարցաքննության կանոնների, հրահանգների, մեթոդների եւ գործելակերպի, այնպես էլ բանտարկության պայմանների եւ որեւէ ձեւով ձերբակալության, կալանքի կամ ազատազրկման ենթարկված անձանց նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի նկատմամբ շատ արդյունավետ միջոց է խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի դեպքերի կանխարգելման համար: Կալանքի տակ գտնվող անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար պետք է ապահովել, որպեսզի կալանավորված անձինք պահվեն պաշտոնապես ճանաչված կալանավայրերում, կալանավորների անուններն ու կալանքի վայրերը, ինչպես նաեւ նրանց կալանավորման համար պատասխանատու անձանց անունները լրացվեն գրանցման մատյաններում, որոնք մատչելի ու հասանելի կլինեն շահագրգիռ բոլոր անձանց՝ ներառյալ կալանավորների հարազատների ու ընկերների համար: Նույն նպատակով պետք է արձանագրել անցկացված բոլոր հարցաքննությունների ժամանակն ու վայրը՝ բոլոր ներկա գտնվողների անունների հետ մեկտեղ, եւ այդ տեղեկությունները նույնպես պետք է մատչելի լինեն դատական կամ վարչական քննություններ անցկացնելիս: Քայլեր պետք է նախատեսվեն նաեւ կալանավորներին հաղորդակցման իրավունքից զրկելու դեմ: Այդ կապակցությամբ մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի կալանավայրերը զերծ լինեն որեւէ տեսակի սարքավորումներից, որոնք կարող են կիրառվել խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի համար: Կալանավորների իրավունքների պաշտպանության համար պահանջվում է նաեւ, որպեսզի բժիշկներն ու փաստաբաններն ունենան արագ եւ կանոնավոր տեսակցության իրավունք նրանց հետ եւ, համապատասխան հսկողության ներքո, հետաքննության շահերից ելնելով, ընտանիքի անդամների հետ նույնպես:

12. 7-րդ հոդվածի պահանջների խախտումները չխրախուսելու համար կարեւոր է, որպեսզի օրենքով արգելվեն դատավարությունների ժամանակ որպես ընդունելի ապացույցներ այնպիսի հայտարարությունների կամ խոստովանությունների օգտագործումը, որոնք կորզվել են խոշտանգումների կամ այլ արգելված վերաբերմունքի միջոցով:

13. Մասնակից պետություններն իրենց զեկույցները ներկայացնելիս պետք է նշեն իրենց քրեական օրենսդրության այն դրույթները, որոնք պատիժ են նախատեսում խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի համար, հատկապես այն պատժամիջոցները, որոնք կիրառվում են այդպիսի գործողությունների նկատմամբ՝ անկախ այն բանից, թե դրանք կատարվել են պետական պաշտոնյաների կամ պետության անունից հանդես եկող այլ անձանց, թե մասնավոր անձանց կողմից: Նրանք, ովքեր խախտում են 7-րդ հոդվածը՝ խրախուսելով, կարգադրելով, հանդուրժելով կամ կատարելով նման արգելված գործողություններ, պետք է ենթարկվեն պատասխանատվության: Հետեւաբար, նրանք, ովքեր հրաժարվում են նման հրամանները կատարելուց, չպետք է պատժվեն կամ ենթարկվեն որեւէ անբարյացակամ վերաբերմունքի:

14. 7-րդ հոդվածը սկսած է դիտարկել սույն Դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի հետ փոխկապակցված: Իրենց զեկույցներում մասնակից պետությունները պետք է նշեն, թե ինչպես է իրենց իրավական համակարգն արդյունավետ կերպով երաշխավորում 7-րդ հոդվածով արգելված բոլոր գործողությունների անհապաղ դադարեցումը, ինչպես նաեւ համապատասխան փոխհատուցումը: 7-րդ հոդվածով արգելված դաժան վերաբերմունքի դեմ բողոքարկելու իրավունքը պետք է սահմանված լինի ներպետական օրենսդրությամբ: Բողոքները պետք է իրավասու մարմինների կողմից հետաքննվեն անհապաղ եւ անկողմնակալ կերպով, այնպես, որ դատական պաշտպանությունն արդյունավետ իրականացվի: Մասնակից պետությունների զեկույցները պետք է կոնկրետ տեղեկություն տրամադրեն դաժան վերաբերմունքի զոհ դարձած անձանց նկատմամբ դատական պաշտպանություն իրականացնելու եւ այն ընթացակարգի վերաբերյալ, որին պետք է հետեւեն հայց ներկայացնողները, նաեւ վիճակագրական տվյալներ այն մասին, թե ինչ թիվ են կազմել բողոքները եւ ինչպես են վերաբերվել այդ բողոքներին:

15. Հանձնաժողովը նշել է, որ մասնակից որոշ պետություններ համաներում են շնորհել խոշտանգումների գործողությունների պարագայում: Համաներումները ընդհանուր առմամբ հակասում են նման գործողությունները հետաքննելու, իրենց իրավազորության սահմաններում նման գործողություններից ազատ լինելու եւ դրանց կրկնումը բացառելու պետության պարտավորությանը: Պետությունները չեն կարող անհատներին զրկել արդյունավետ պաշտպանության միջոցներից, այդ թվում՝ փոխհատուցման եւ հնարավորինս լիարժեք վերականգնման իրավունքից:

6.

ՈՐԵՎԷ ՁԵՎՈՎ ՁԵՐԲԱԿԱԼՎՈՂ ԿԱՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հաստատվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1988թ. դեկտեմբերի 9-Ի 43/173 բանաձեւով

Սկզբունքների ժողովածուի կիրառման ոլորտը

Սույն Սկզբունքները կիրառվում են բոլոր այն անձանց պաշտպանելու համար, որոնք ձերբակալվում կամ կալանավորվում են որեւէ ձեւով:

Տերմինների օգտագործումը

Սկզբունքների ժողովածուի նպատակների համար

ա) «ձերբակալություն» բառը նշանակում է անձի ձերբակալում՝ որեւէ իրավախախտում կատարելու կասկածանքով կամ որեւէ մարմնի որոշմամբ,

բ) «ձերբակալված անձ» բառերը նշանակում են ցանկացած անձ, որն անձնական ազատությունից զրկվել է կատարած իրավախախտման համար դատապարտված չլինելու հետեւանքով,

գ) «կալանված անձ» բառերը նշանակում են ցանկացած անձ, որն անձնական ազատությունից զրկվել է՝ կատարած որեւէ իրավախախտման համար դատապարտվելու հետեւանքով,

դ) «ձերբակալում» բառը նշանակում է ձերբակալված անձի վիճակ, որի բնորոշումը բերված է վերը,

ե) «կալանք» բառը նշանակում է բանտարկված անձի վիճակ, որի բնորոշումը բերված է վերը,

զ) «դատական կամ այլ մարմին» բառերը նշանակում են օրենքին համապատասխան դատական կամ այլ մարմին, որի կարգավիճակն ու դիրքն ապահովում են իրավասության, անաչառության եւ անկախության առավելագույնս կայուն երաշխիքներ:

Սկզբունք 1

Որեւէ ձեւով ձերբակալված կամ կալանավորված բոլոր անձինք մարդասիրական վերաբերմունքի եւ մարդ անհատին բնորոշ արժանապատվության հարգման իրավունք ունեն:

Սկզբունք 2

Կալանավորումը, ձերբակալումը կամ բանտարկությունը կատարվում է միայն օրենքի դրույթներին խստիվ համապատասխան եւ իրավասու պաշտոնատար անձանց կամ այդ նպատակի համար օրենքով լիազորված անձանց կողմից:

Սկզբունք 3

Որեւէ ձեւով ձերբակալվող կամ կալանվող անձանց շահերից ելնելով՝ չի թույլատրվում իրավունքին, կոնվենցիաներին, կանոններին կամ սովորույթներին համապատասխան որեւէ պետության մեջ ճանաչվող կամ գոյություն ունեցող մարդու իրավունքների ոչ մի սահմանափակում կամ որեւէ նսեմացում այն հիման վրա, թե այդ իրավունքները չեն ճանաչվում կամ նվազ ծավալով են ճանաչվում սույն Սկզբունքների ժողովածուում:

Սկզբունք 4

Որեւէ ձեւով ձերբակալումը կամ բանտարկությունը եւ մարդու իրավունքները շոշափող բոլոր միջոցները ձերբակալված կամ բանտարկված անձանց նկատմամբ պետք է իրականացվեն որոշման միջոցով կամ ենթակա են դատական կամ այլ մարմնի արդյունավետ վերահսկողությանը:

Սկզբունք 5

1. Սույն սկզբունքները կիրառվում են բոլոր անձանց նկատմամբ, տվյալ պետության ցանկացած տարածքի սահմաններում՝ առանց որեւէ խտրականության՝ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ հավատի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագման, գույքային, դասային կամ այլ դրության առումով:
2. Օրենքի շրջանակներում կիրառվող եւ հատկապես կանանց, առանձնապես հղի կանանց եւ ծծմայրերի, ինչպես նաեւ երեխաների, դեռահասների, զառամյալների, հիվանդների կամ հաշմանդամների իրավունքներն ու հատուկ իրավիճակը պաշտպանելու համար նախատեսված միջոցները խտրական չեն համարվում: Նման միջոցների անհրաժեշտության ու կիրառման հարցը միշտ ենթակա է դատական կամ այլ մարմնի քննարկման:

Սկզբունք 6

Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող ոչ մի անձ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարվեցողության կամ պատժի այլ ձեւերի:

Ոչ մի հանգամանք չի կարող արդարացում հանդիսանալ խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարվեցողության կամ պատժի այլ ձեւերի համար:

Սկզբունք 7

1. Պետությունները պետք է օրենսդրական կարգով արգելեն սույն Սկզբունքների բովանդակած իրավունքներին ու պարտականություններին հակասող ամեն տեսակ գործողությունները, համապատասխան պատժամիջոցների ենթարկեն նման գործողությունների համար եւ գանգատների անաչառ հետաքննություն անցկացնեն:
2. Պաշտոնատար անձինք, որոնք հիմքեր ունեն համարելու, որ տեղի է ունեցել կամ կարող է սույն Սկզբունքների ժողովածուի խախտում տեղի ունենալ, պետք է այդ մասին հաղորդեն վերադաս իշխանություններին եւ, երբ դա անհրաժեշտ է, ուրիշ համապատասխան իշխանությունների կամ մարմինների, որոնց վրա դրության հսկողության կամ շտկման լիազորություններ են դրված:
3. Ցանկացած այլ անձ, որը հիմք ունի համարելու, որ տեղի է ունեցել կամ կարող է տեղի ունենալ սույն Սկզբունքների ժողովածուի խախտում, իրավունք ունի այդ մասին հաղորդելու մեղսակից պաշտոնատար անձանց նկատմամբ վերադաս ատյաններին, ինչպես նաեւ համապատասխան այլ իշխանությունների կամ մարմինների, որոնց վրա դրության հսկողության կամ շտկման լիազորություններ են դրված:

Սկզբունք 8

Ձերբակալված անձանց նկատմամբ կիրառվում է չդատապարտված անձանց նրանց իրավիճակին համապատասխանող ռեժիմ: Դրա հետեւանքով նրանք միշտ, երբ դա հնարավոր է, տեղավորվում են կալանավորված անձանցից առանձին:

Սկզբունք 9

Անձին կալանավորող, նրան ձերբակալող կամ գործի հետաքննություն անցկացնող իշխանությունները իրականացնում են միայն օրենքով իրենց տրամադրվող լիազորությունները, եւ այդ լիազորությունների իրականացումը կարող է գանգատարկվել դատական կամ այլ մարմնում, որ նախատեսված է օրենքով:

Սկզբունք 10

Կալանավորման ժամանակ յուրաքանչյուր կալանավորվածի հաղորդվում են նրա կալանավորման պատճառներն ու անհապաղ հաղորդվում է նրան ներկայացվող ցանկացած մեղադրանք:

Սկզբունք 11

1. Անձը չի կարող կալանքի տակ գտնվել առանց դատական կամ այլ մարմնի կողմից շտապ կարգով ունկնդրվելու արդյունավետ հնարավորության ընձեռման: Ձերբակալված անձն իրավունք ունի ինքը հանդես գալու ի պաշտպանություն իրեն կամ օգտվելու դատապաշտպանի օգնությունից, ինչպես դա նախատեսված է օրենքով:
2. Ձերբակալված անձին կամ նրա դատապաշտպանին, եթե այդպիսին կա, անհապաղ լրիվ տեղեկություն է տրվում ձերբակալման ցանկացած որոշման, ինչպես նաեւ ձերբակալման պատճառների մասին:
3. Դատական կամ այլ մարմինը պետք է լիազորություններ ունենա անհրաժեշտության դեպքում կալանքը շարունակելու հիմքը քննարկելու համար:

Սկզբունք 12

1. Պատշաճ կերպով արձանագրության մեջ գրանցվում են՝

ա) կալանավորման պատճառները,

բ) տվյալ անձի կալանավորման ժամանակն ու այն ժամանակը, երբ տվյալ անձը տարվել է կալանավայր, ինչպես նաեւ դատական կամ այլ մարմնի առջեւ առաջին անգամ հայտնվելու ժամանակը,

գ) իրավապահ մարմինների համապատասխան պաշտոնատար անձանց ազգանունները,

դ) կալանավայրի վերաբերյալ ստույգ տվյալները:

2. Այդ արձանագրությունները ձերբակալվածին կամ, եթե այդպիսին կա, նրա դատապաշտպանին են ներկայացվում օրենքով կարգագրված կարգով:

Սկզբունք 13

Ցանկացած անձի կալանավորման պահին եւ ձերբակալման կամ կալանավորման սկզբում կամ դրանից հետո շատ չանցած, կալանավորման, ձերբակալման կամ բանտարկման համար պատասխանատու մարմինը համապատասխանաբար իրազեկ է պահում եւ պարզաբանում է նրա իրավունքները եւ թե նա ինչպես կարող է իրականացնել այդ իրավունքները:

Սկզբունք 14

Այն անձը, որը բավականաչափ լավ չի հասկանում կամ խոսում նրա կալանավորման, ձերբակալման կամ բանտարկության համար պատասխանատու իշխանությունների կողմից օգտագործվող լեզվով, իրավունք ունի հնարավորինս արագ ստանալ իրեն հասկանալի լեզվով տեղեկություններ, որոնք նշված են 10, 11 (կետ 2), 12 (կետ 1) եւ 13 սկզբունքներում, եւ թարգմանչի օգնություն ստանալ, եթե անհրաժեշտ է՝ ձրի, նրա կալանավորումից հետո իրավաբանական քննության կապակցությամբ:

Սկզբունք 15

Չնայած այն բացառություններին, որ բովանդակում են 16 սկզբունքի (4) կետը եւ 18 սկզբունքի 3 կետը, ձերբակալված կամ կալանավորված անձին կարող են մերժել կապ ունենալու արտաքին աշխարհի եւ մասնավորապես իր ընտանիքի կամ դատապաշտպանի հետ մի քանի օրից ոչ ավելի ժամանակահատվածում:

Սկզբունք 16

1. Կալանավորվելուց հետո շատ չանցած եւ ամեն անգամ ձերբակալության կամ բանտարկության մի վայրից մեկ ուրիշը փոխադրվելուց հետո ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձն իրավունք ունի դիմել իրավասու մարմնի, խնդրելով իր ընտանիքի անդամներին կամ իր ընտրությամբ համապատասխան այլ անձանց տեղյակ պահելու իր կալանավորման, ձերբակալման կամ բանտարկվելու կամ էլ իր տեղափոխության եւ այն վայրի մասին, որտեղ նա պահվում է:
2. Եթե ձերբակալված կամ կալանավորված անձը օտարերկրացի է, նրան պետք է անհապաղ հաղորդվի համապատասխան միջոցներով այն պետության հյուպատոսության կամ դիվանագիտական ներկայացուցչության հետ կապվելու իր իրավունքի մասին, որի քաղաքացին է նա, կամ որը այլ կերպ իրավասու է նման հաղորդում ստանալու՝ միջազգային իրավունքին համապատասխան, կամ իրավասու միջազգային կազմակերպության հետ, եթե նա գաղթական է կամ որեւէ այլ կերպ գտնվում է միջկառավարական կազմակերպության պաշտպանության ներքո:
3. Եթե ձերբակալված կամ բանտարկված անձը անչափահաս է կամ ի վիճակի չէ գիտակցել իր իրավունքները, ապա հիշյալ իրավասու մարմինն իր նախաձեռնությամբ տեղեկացման պարտավորություն է ստանձնում, որ հիշատակված է սույն սկզբունքում: Առանձնակի ուշադրություն պետք է դարձվի ծնողներին եւ խնամակալներին տեղյակ պահելուն:
4. Սույն սկզբունքում հիշատակված ցանկացած ծանուցում պետք է ուղարկվի կամ թույլատրվի անհապաղ իրավասու մարմնի կողմից: Իրավասու մարմինը, սակայն, կարող է ծանուցումը հետաձգել ավելի խելամիտ ժամանակ, եթե այդ են պահանջում հետաքննության բացառիկ հանգամանքները:

Սկզբունք 17

1. Ձերբակալված անձն իրավունք ունի իրավաբանական օգնություն ստանալ դատապաշտպանի կողմից: Կալանքից հետո շատ չանցած նա իրավասու մարմնի կողմից իրազեկ է պահվում իր իրավունքի մասին, եւ նրան խելամիտ հնարավորություններ են ընձեռվում այդ իրավունքն իրականացնելու համար:
2. Եթե ձերբակալված անձը դատապաշտպան չունի իր ընտրությամբ, նա, բոլոր դեպքերում, երբ դա պահանջում են արդարադատության շահերը, իրավունք ունի օգտվելու դատական կամ այլ մարմնի կողմից նշանակված դատապաշտպանի ծառայությունից՝ առանց նրա պատասխանատվության վարձատրման, եթե այդ անձնավորությունը բավականաչափ դրամական միջոցներ չունի:

Սկզբունք 18

1. Ձերբակալված կամ բանտարկված անձն իրավունք ունի կապվելու եւ խորհրդակցելու դատապաշտպանի հետ:
2. Ձերբակալված կամ բանտարկված անձին անհրաժեշտ ժամանակ ու պայմաններ են տրամադրվում իր դատապաշտպանի հետ խորհրդակցելու համար:

3. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձին դատապաշտպանի այցելելու, առանց հապաղման կամ գրաքննության եւ լիակատար գաղտնիության պայմաններում նրա հետ խորհրդակցելու եւ կապի մեջ լինելու նրա իրավունքը չի կարող առժամանակ չեղյալ հայտարարվել կամ սահմանափակվել, բացի բացառիկ հանգամանքներից, որոնք սահմանվում են օրենքով կամ նախատեսված են օրենքին համապատասխան կանոններով, երբ դատական կամ այլ մարմնի կարծիքով, դա անհրաժեշտ է անվտանգությունը եւ կարգուկանոնը պահպանելու համար:
4. Իր դատապաշտպանի հետ ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի տեսակցությունները կարող են տեղի ունենալ այնպիսի պայմաններում, որոնք իրավապահ մարմինների պաշտոնատար անձին թույլ են տալիս տեսնել նրանց, բայց չլսել:
5. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի կապը իր դատապաշտպանի հետ չի կարող օգտագործվել որպես վկայություն՝ մեղադրվող կամ կալանքի տակ գտնվող անձի դեմ, եթե նա առնչություն չունի կատարվող կամ մտահղացվող հանցագործության հետ:

Սկզբունք 19

Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձին մասնավորապես իրավունք է տրվում ընտանիքի անդամների այցելության եւ նրանց հետ նամակագրության, ինչպես նաեւ արտաքին աշխարհի հետ հարաբերություն ունենալ՝ օրենքի բովանդակած եւ օրենքին համապատասխան կանոններով սահմանված խելամիտ պայմանների ու սահմանափակումների համաձայն:

Սկզբունք 20

Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի խնդրանքով նա պահվում է, եթե դա հնարավոր է, նրա բնակության սովորական վայրից խելամիտ հեռավորության վրա գտնվող ձերբակալման կամ բանտարկության վայրում:

Սկզբունք 21

1. Արգելվում է չարաշահել ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի վիճակը՝ նրան խոստովանության կամ որեւէ այլ ինքնամերկացման կամ ցանկացած այլ անձի դեմ ցուցմունքներ տալ հարկադրելու նպատակով:
2. Ոչ մի ձերբակալված անձ հարցաքննության ժամանակ չպետք է բռնության, սպառնալիքների կամ հետաքննության այնպիսի եղանակների ենթարկվի, որոնք խախտում են որոշումներ ընդունելու կամ դատողություններ անելու նրա ունակությունը:

Սկզբունք 22

Ոչ մի ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձ չպետք է նույնիսկ իր համաձայնությամբ որեւէ բժշկական կամ գիտական փորձի ենթարկվի, որոնք կարող են վնասել նրա առողջությանը:

Սկզբունք 23

1. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի հարցաքննման կամ հարցաքննությունների միջեւ ընկած ընդմիջումների տեւողությունը, ինչպես նաեւ հարցաքննությունն անցկացնող պաշտոնատար անձանց եւ մյուս ներկաների ազգանունները գրանցվում են եւ հաստատվում այն ձեւով, որպիսին կարող է կարգագրված լինել օրենքով:
2. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը կամ նրա դատապաշտպանը, երբ դա նախատեսված է օրենքով, թույլտվություն ունեն առնչվելու այն տեղեկություններին, որոնց մասին ասվում է սույն սկզբունքի 1 կետում:

Սկզբունք 24

Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձին հնարավորություն է ընձեռվում սպառած բուժզննում անցնել ձերբակալության կամ բանտարկության վայր ժամանելուց հետո ամենակարճ ժամկետում. հետագայում նրան բուժսպասարկում եւ բուժում է տրամադրվում ամեն անգամ, երբ դրա անհրաժեշտությունը ծագում է: Բուժսպասարկումն ու բուժումը տրամադրվում են անվճար:

Սկզբունք 25

Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը կամ նրա դատապաշտպանը ձերբակալության կամ կալանքի վայրում անվտանգության եւ կարգուկանոնի պահպանման համար անհրաժեշտ խելամիտ պայմանների կատարման պայմանով միայն իրավունք ունեն դիմել դատական կամ այլ մարմին՝ կրկնական բուժզննման կամ բժշկական եզրակացության խնդրանքով կամ խնդրագրով:

Սկզբունք 26

Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի բուժզննման փաստը, բժշկի ազգանունը եւ այդ զննման արդյունքները պատշաճ կերպով գրանցվում են արձանագրությունում: Թույլատրվում է առնչվելը այդ արձանագրությանը: Նման թույլտվության եղանակները սահմանվում են ազգային օրենսդրության համապատասխան նորմերով:

Սկզբունք 27

Այս սկզբունքները չպահպանելը, ապացույցներ ստանալու դեպքում, ուշադրության է առնվում՝ ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի դեմ նման ապացույցների թույլտվությունը որոշելիս:

Սկզբունք 28

Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձն իրավունք ունի, եթե դա պետական աղբյուրներից է, առկա միջոցների սահմաններում ստանալ խելամիտ քանակությամբ ուսումնական, գեղարվեստական եւ լրատվական նյութեր՝ ձերբակալության կամ կալանքի վայրերում անվտանգությունը եւ կարգուկանոնն ապահովող տրամաբանական պայմանների պահպանմամբ:

Սկզբունք 29

1. Համապատասխան օրենքների եւ կանոնների խստիվ կիրառմանը հետեւելու նպատակով կանոնավոր կերպով կալանավայրեր են այցելում որակյալ եւ բավականաչափ փորձառու անձինք, որոնք նշանակվում եւ պատասխանատու են իրավասու իշխանությունների առջեւ՝ ի տարբերություն այն իշխանությունների, որոնց անմիջական տնօրինության ներքո են գտնվում ձերբակալության կամ բանտարկության վայրերը:
2. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը իրավունք ունի ազատորեն եւ լիակատար գաղտնիության պայմաններում շփվելու այն անձանց հետ, որոնք ձերբակալության կամ բանտարկության վայրեր են այցելում 1 կետին համապատասխան՝ նման վայրերում անվտանգության եւ կարգուկանոնի ապահովման համար անհրաժեշտ խելամիտ պայմանների պահպանմամբ:

Սկզբունք 30

1. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի վարվելակերպի բնույթը, որն իրենից կարգապահական իրավախախտում էր ներկայացնում ձերբակալման կամ կալանավորման ժամանակ, հնարավոր կարգապահական պատժի տեսակն ու տեւողությունը, ինչպես նաեւ այն իշխանությունները, որոնց իրավասության մեջ է մտնում նման պատիժ նշանակելը, պետք է ճշտիվ սահմանված լինեն պատշաճ կերպով հրապարակված օրենքներում կամ օրենքին համապատասխան հաստատված կանոններով:
2. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձն իրավունք ունի ունկնդրվել՝ կարգապահական պատժամիջոցներ դրվելուց առաջ: Նա իրավունք ունի գանգատարկել նման միջոցները վերադաս իշխանությունների առջեւ:

Սկզբունք 31

Համապատասխան իշխանությունները միջոցներ են ձեռնարկում, ազգային օրենսդրությանը համապատասխան, անհրաժեշտության դեպքում օգնություն ապահովել ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձանց ընտանիքների անդամներին, որոնք գտնվում են նրանց խնամքի տակ, հատկապես անչափահաս անձանց, եւ առանձնակի ուշադրություն են դարձնում առանց հսկողության մնացած երեխաների պատշաճ խնամապալոթյանը:

Սկզբունք 32

1. Ձերբակալված անձը կամ նրա դատապաշտպանը իրավունք ունեն ցանկացած ժամանակ, ներքին օրենսդրությանը համապատասխան, քննություն հարուցել դատական կամ այլ մարմնի առջեւ՝ վիճարկելու համար տվյալ անձի ձերբակալման օրինականությունը՝ անհապաղ նրա ազատ արձակմանը հասնելու նպատակով, եթե այդ ձերբակալումը անօրինական է:
2. 1 կետում հիշատակված քննությունը պետք է լինի պարզ, արագ եւ անվճար այն անձանց համար, ովքեր համապատասխան միջոցներ չունեն: Ձերբակալումն իրականացնող իշխանությունները պետք է, առանց չարդարացված ձգձգումների, ձերբակալված անձին ներկայացնեն նրա գործը քննող մարմնին:

Սկզբունք 33

1. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը կամ նրա դատապաշտպանն իրավունք ունեն ձերբակալման կամ կալանավայրի կառավարման համար պատասխանատու մարմին եւ ավելի բարձր ատյաններ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ գանգատները քննարկելու կամ պաշտպանության միջոցներ տրամադրելու լիազորված համապատասխան մարմիններ ուղարկել խնդրագիր կամ գանգատ տվյալ անձի նկատմամբ վարվեցողության վերաբերյալ, մասնավորապես խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ մարդկային արժանապատվությունը նվաստացնող այլ վարվելաձեւի դեպքում:
2. Այն դեպքերում, երբ ո›չ ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը, ո›չ նրա դատապաշտպանը հնարավորություն չունեն իրականացնել նրա իրավունքները 1 կետին համապատասխան, նման իրավունք կարող է իրականացնել ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի ընտանիքի անդամը կամ որեւէ այլ անձ, որն իրազեկ է այդ գործին:
3. Ապահովվում է խնդրագրի կամ գանգատի գաղտնիությունը, եթե այդ մասին խնդրում է խնդրագիր կամ գանգատ տվողը:

4. Յուրաքանչյուր խնդրագիր կամ գանգատ անհապաղ քննարկվում է, եւ պատասխանը տրվում է առանց չարդարացված ձգձգման: Այդ խնդրագրի կամ գանգատի մերժման կամ չարդարացված ձգձգման դեպքում խնդրագիր կամ գանգատ տվողը կարող է այն ուղարկել դատական կամ այլ մարմին: Ինչպես ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը, այնպես էլ ցանկացած խնդրագիր կամ գանգատ տվող, 1 կետին համապատասխան, չեն կարող հալածանքների ենթարկվել՝ խնդրագիր կամ գանգատ տալու համար:

Սկզբունք 34

Եթե ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը մահանում է կամ անհետանում ձերբակալվելիս կամ բանտարկվելիս, ապա դատական կամ այլ մարմին հետաքննություն է անցկացնում կա›մ իր նախաձեռնությամբ, կա›մ տվյալ անձի ընտանիքի անդամի կամ տվյալ գործի մասին տեղեկություններ ունեցող ցանկացած անձի խնդրանքով: Եթե դա արդարացված է հանգամանքներով, ապա նման հետաքննությունն անցկացվում է նույնպիսի արարողակարգային հիման վրա, ամեն անգամ, երբ մահը կամ անհետացումը տեղի է ունենում ձերբակալության կամ բանտարկության ժամկետի լրանալուց հետո շատ չանցած: Նման հետաքննության արդյունքները կամ դրա մասին զեկուցագիրը տրամադրվում է խնդրագրով, եթե դա վնաս չի հասցնում անցկացվող քրեական հետաքննությանը:

Սկզբունք 35

1. Պետական պաշտոնատար անձի գործողությունների կամ զանցառությունների հետեւանքով պատճառված վնասը՝ ի խախտումն սույն սկզբունքների բովանդակած իրավունքների, ենթակա է հատուցման՝ պատասխանատվության կիրառվող նորմերի համաձայն, որոնք նախատեսված են ներքին օրենսդրությամբ:
2. Տեղեկատվությունը, որ պահանջվում է գրանցել սույն սկզբունքների համաձայն, տրամադրվում է այն արարողակարգերին համապատասխան, որոնք ազգային օրենսդրությամբ նախատեսվում են սույն սկզբունքին համապատասխան վնասահատուցման հայցերի ներկայացման դեպքում օգտագործելու համար:

Սկզբունք 36

1. Քրեական հանցագործության կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող ձերբակալված անձը անմեղ է համարվում եւ իրավունք ունի, որ իր հետ որպես այդպիսին վարվեն այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղավորությունը օրենքի համաձայն չի ապացուցված դռնբաց դատավարության ընթացքում, որի ժամանակ նա ունի իր պաշտպանության համար անհրաժեշտ բոլոր երաշխիքները:
2. Հետաքննության եւ դատաքննության անցկացման ժամանակամիջոցում նման անձի կալանավորումը կամ ձերբակալությունը կատարվում է միայն օրենքով սահմանված հիմունքներով եւ պայմաններին ու արարողակարգերին համապատասխան: Արգելվում է նման անձի նկատմամբ սահմանափակումներ մտցնելը, որոնց անմիջական անհրաժեշտությունը չկա ձերբակալման կամ քննության կամ արդարադատության իրականացման ընթացքի համար խոչընդոտների վերացման կամ կալանքի վայրում անվտանգության եւ կարգուկանոնի պահպանման նպատակների տեսակետից:

Սկզբունք 37

Քրեական մեղադրանքով ձերբակալված անձը կալանավորվելուց հետո շատ չանցած ներկայացվում է օրենքով սահմանված դատական կամ այլ մարմնի: Այդ մարմինը սկսեք է անհապաղ որոշում կայացնի ձերբակալման օրինականության ու անհրաժեշտության մասին: Ոչ ոք չի կարող հետաքննության կամ դատաքննության ժամանակամիջոցում ձերբակալվել՝ առանց այդ մարմնի գրավոր որոշման: Ձերբակալված անձը, երբ նրան տեղափոխեն նման մարմին, իրավունք ունի հանդես գալ հայտարարությամբ՝ ձերբակալության ընթացքում իր հետ վարվեցողության կապակցությամբ:

Սկզբունք 38

Քրեական մեղադրանքով ձերբակալված անձը իրավունք ունի դատաքննության անցկացման՝ խելամիտ ժամկետում, կամ ազատ արձակման նախքան դատը:

Սկզբունք 39

Բացառությամբ օրենքով նախատեսված հատուկ դեպքերի, եւ եթե դատական կամ ուրիշ մարմին այլ որոշում չի ընդունի արդարադատություն իրականացնելու օգտին, քրեական մեղադրանքով ձերբակալված անձին հնարավորություն է ընձեռվում, դատավարության ընթացքում, ազատ արձակվելու այն պայմաններով, որոնք կարող են սահմանվել օրենքին համապատասխան: Այդ մարմինը ձերբակալման անհրաժեշտության հարցը պահում է տեսադաշտում:

Ընդհանուր դրույթ

Սույն սկզբունքների ժողովածուում ոչ մի բան չպետք է մեկնաբանվի ցանկացած իրավունքի սահմանափակման կամ դրանից շեղման իմաստով, ինչպես այն սահմանված է Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում:

7.

Ուղենիշներ դատախազների դերի վերաբերյալ (քաղվածքներ)

Ընդունվել է Հանցագործությունների կանխարգելման եւ հանցագործների հետ վարվեցողության վերաբերյալ ՄԱԿ-ի 8-րդ Կոնգրեսին, 1990թ.

Դատախազների դերը քրեական դատավարություններում

10. Դատախազների գործունեությունը պետք է հստակորեն տարանջատված լինի դատական պարտականությունների կատարումից:

11. Քրեական դատավարությունների ժամանակ դատախազները պետք է ակտիվ դերակատարում ունենան, ներառյալ դատական հետապնդման գործընթացը, եւ որտեղ թույլատրվում է օրենքով կամ համատեղելի է տեղական գործելակերպին, հանցագործության հետաքննության, նման հետաքննությունների օրինականության վերահսկողության, դատական որոշումների կատարման վերահսկման եւ որպես պետության շահերի ներկայացուցիչներ իրենց այլ պարտականությունների կատարման ժամանակ:

12. Դատախազները պետք է, համաձայն օրենքի, իրենց պարտականությունները կատարեն արդարացիորեն, հետեւողականորեն ու առանց հետաձգման, հարգեն եւ պաշտպանեն մարդու արժանապատվությունը եւ ապահովեն մարդու իրավունքները՝ դրանով իսկ իրենց ավանդը բերելով քրեական արդարադատության համակարգի պատշաճ գործընթացին ու անխափան գործունեությանը:

13. Իրենց պարտականությունները իրականացնելու ընթացքում դատախազները պետք է.

ա) Անաչառորեն կատարեն իրենց պարտականությունները եւ խուսափեն քաղաքական, սոցիալական, կրոնական, մշակութային, սեռի հատկանիշով, կամ որեւէ այլ հիմքի վրա բոլոր տեսակի խտրական վերաբերմունք դրսեւորելուց.

բ) Պաշտպանեն պետական շահերը, գործեն օբյեկտիվորեն, ինչպես հարկն է հաշվի առնեն կասկածյալի եւ տուժածի վիճակը եւ ուշադրություն դարձնեն բոլոր առնչվող հանգամանքների վրա, անկախ նրանից՝ շահեկան են դրանք արդյոք կասկածյալի համար, թե ոչ.

գ) Պաշտպանեն իրենց գործունեության տիրույթում գտնվող գործերի գաղտնիությունը, եթե միայն իրենց պարտականությունների կատարումը կամ արդարադատության շահերը չեն պահանջում հակառակը.

դ) Ուշադիր լինեն տուժածների կարծիքների եւ խնդրանքների նկատմամբ, երբ շոշափվում են վերջիններիս անձնական շահերը, եւ ապահովեն, որպեսզի տուժածները տեղեկացված լինեն՝ Հանցագործությունների զոհերի եւ իշխանության չարաշահման նկատմամբ արդարադատության նկատմամբ հիմնարար սկզբունքների հռչակագրի համաձայն իրենց իրավունքների մասին:

14. Դատախազները չպետք է նախաձեռնեն կամ շարունակեն դատական հետապնդումը կամ պետք է բոլոր ջանքերը կիրառեն դադարեցնելու համար դատաքննությունը, եթե անկողմնակալ դատաքննությունը ցույց է տվել, որ մեղադրանքն անհիմն է:

15. Դատախազները պետք է պատշաճ ուշադրություն դարձնեն պետական պաշտոնյաների կողմից կատարված հանցագործությունների դատական հետապնդման վրա, մասնավորապես՝ կաշառակերության, իշխանության չարաշահման, մարդու իրավունքների կոպիտ ոտնահարման եւ միջազգային օրենքներով ճանաչված այլ հանցագործությունների վրա եւ, որտեղ թույլատրվում է օրենքով կամ համատեղելի է տեղական գործելակերպին, նման օրինախախտումների հետաքննության վրա:

16. Երբ դատախազների տրամադրության տակ կասկածյալների դեմ այնպիսի ապացույցներ են, որոնք, դատախազների գիտությամբ կամ ողջամիտ դատողությամբ, ձեռք են բերվել մարդու իրավունքների կոպիտ խախտում հանդիսացող անօրինական մեթոդներով, հատկապես՝ ներառելով խոշտանգումներ կամ դաժան անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ կամ այլ չարաշահումներ մարդու իրավունքների նկատմամբ, նրանք պետք է հրաժարվեն նման ապացույցներն օգտագործել որեւէ այլ անձի դեմ, քան նրանց, ովքեր նման մեթոդներ են կիրառել կամ համապատասխան կերպով տեղեկացնեն դատարանին, որպեսզի անհրաժեշտ բոլոր քայլերը ձեռնարկվեն դատական պատասխանատվության ենթարկելու այդ մեթոդներն օգտագործած անձանց:

8.

Դատական համակարգի անկախության հիմնարար սկզբունքներ (քաղվածքներ)

Ընդունվել է ՄԱԿ-ի Հանցագործության կանխարգելմանը եւ օրինախախտների նկատմամբ վերաբերմունքին նվիրված յոթերորդ կոնգրեսում եւ հավանության է արժանացել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985 թ-ի նոյեմբերի 29-ի 40/32 եւ 1985 թ-ի դեկտեմբերի 13-ի 40/146 բանաձեւերով:

Դատական համակարգի անկախությունը

1. Դատական համակարգի անկախությունը երաշխավորվում է պետության կողմից եւ հաստատվում է Սահմանդրությունում կամ երկրի օրենքներում: Բոլոր պետական կամ այլ հիմնարկները պարտավոր են հարգել եւ պահպանել դատական համակարգի անկախությունը:
2. Դատական մարմինները իրենց տրամադրության տակ եղած գործերը վճռում են անաչառ կերպով՝փաստերի հիման վրա եւ օրենքի համաձայն, առանց որեւէ սահմանափակման, անհարկի ազդեցության, հարկադրանքի, ճնշման, սպառնալիքի կամ ուղղակի կամ անուղղակի միջամտության՝ ում կողմից եւ ինչ պատճառով էլ որ դա տեղ գտնի:
3. Դատական մարմինները իրավասություններ ունեն դատական բնույթի բոլոր հարցերի նկատմամբ եւ բացառիկ իրավունք ունեն որոշելու, թե իրենց հանձնված գործը ըստ սահմանված օրենքի գտնվում է արդյոք իրենց իրավասությունների շրջանակներում:
4. Չպետք է կատարվի որեւէ անտեղի կամ ապօրինի միջամտություն արդարադատության գործընթացին եւ դատարանների կողմից կայացրած վճիռները ենթակա չեն վերանայման: Այս սկզբունքը չի խոչընդոտում համաձայն օրենքի վճիռների դատական վերանայմանը կամ իրավասու մարմինների կողմից դատավճիռների մեղմացմանը:
5. Յուրաքանչյուր ոք ունի սահմանված իրավական ընթացակարգեր կիրառող սովորական դատարանների կամ դատական ատյանների կողմից դատաքննության իրավունք: Չպետք է ստեղծվեն հարկ եղած ձեւով սահմանված ընթացակարգերը չկիրառող դատական ատյաններ՝ սովորական դատարանների կամ դատական մարմինների իրավասությունները փոխարինելու նպատակով:
6. Դատական համակարգի անկախության սկզբունքը դատական մարմիններին տալիս է իրավունք եւ պահանջում է նրանցից ապահովել դատաքննության արդարացի վարումը եւ հարգել կողմերի իրավունքները:
7. Մասնակից պետությունը պարտավոր է համապատասխան միջոցներ ապահովել, հնարավորություն տալով, որպեսզի դատական համակարգը պատշաճ կերպով իրականացնի իր գործառույթները:

9.

Փաստաբանի դերի վերաբերյալ հիմնարար սկզբունքները (քաղվածքներ)

Ընդունվել է Հանցագործության կանխարգելման եւ օրինախախտների հանդեպ վերաբերմունքի ՄԱԿ-ի ութերորդ կոնգրեսի կողմից, 1990թ.

Փաստաբանի եւ իրավաբանական ծառայությունների մատչելիություն

1. Բոլոր անձինք իրավունք ունեն դիմել իրենց ընտրած փաստաբանի օգնությանը՝ իրավունքների պաշտպանության եւ քրեական վարույթի բոլոր փուլերում իրենց պաշտպանությունը իրականացնելու համար:
2. Պետություններն իրենց լիազորության տակ գտնվող բոլոր տարածքներում պետք է փաստաբանների հավասար մատչելիության արդյունավետ ընթացակարգեր եւ ճկուն մեխանիզմներ երաշխավորեն բոլոր անձանց համար առանց ռասայի, գույնի, էթնիկ ծագման, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, սեփականության, դասակարգային, տնտեսական կամ այլ կարգավիճակի խտրականության:
3. Պետությունները պետք է ապահովեն բավարար ֆինանսական միջոցների տրամադրումն իրավաբանական անվճար ծառայության համար անապահով եւ, եթե անհրաժեշտ է, անբարենպաստ այլ վիճակում գտնվող անձանց դեպքում: Փաստաբանների մասնագիտացված միությունները պետք է համագործակցեն նման ծառայությունների, միջոցների եւ այլ ռեսուրսների կազմակերպման ու տրամադրման գործում:
4. Պետությունները եւ փաստաբանների մասնագիտացված միությունները պետք է աջակցեն հասարակության տեղեկացմանն օրենքով նախատեսված իրենց իրավունքների եւ պարտականությունների, նաեւ հիմնարար ազատությունների պաշտպանության գործում փաստաբանների կարեւոր դերի վերաբերյալ: Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի անապահով եւ անբարենպաստ այլ պայմաններում գտնվող անձանց իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու եւ անհրաժեշտության դեպքում փաստաբանի օգնությանը դիմելու գործում:

Հատուկ երաշխիքներ քրեական արդարադատության հարցերում

5. Պետությունները պետք է ապահովեն, որ իրավասու մարմիններն անձանց տեղեկացնեն իրենց ընտրությամբ փաստաբանի օգնությանը դիմելու իրավունքի մասին կալանավորումից, ձերբակալությունից կամ նրանց նկատմամբ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրանք առաջադրելուց անմիջապես հետո:
6. Ցանկացած դեպքում, եթե դա բխում է արդարադատության շահերից, բոլոր անձինք պետք է իրավունք ունենան դիմելու փաստաբանի, որը որակավորումն ու փորձառությունը համապատասխանում են մեղսագրվող հանցագործության բնույթին՝ արդյունավետ իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար, նաեւ անվճար, եթե չկան նման ծառայությունների դիմաց վճարելու ֆինանսական բավարար հնարավորություններ:

7. Բացի դրանից, կառավարությունները ապահովում են, որ բոլոր ձերբակալված կամ կալանավորված անձինք, անկախ այն բանից, թե արդյոք նրան քրեական հանցագործություն կատարելու մեղադրանք ներկայացվել է, անհապաղ ստանան փաստաբանի հետ հանդիպելու հնարավորություն, համենայն դեպս, ոչ ուշ, քան ձերբակալվելու կամ կալանավորվելու պահից քառասուներեք ժամ անց:

8. Ձերբակալված, կալանավորված կամ բանտարկված բոլոր անձանց տրամադրվում են պատշաճ հնարավորություններ, ժամանակ ու պայմաններ՝ փաստաբանի այցելության, նրա հետ առնչվելու ու խորհրդակցելու համար, առանց ձգձգման, միջամտության կամ գրաքննության՝ լիակատար գաղտնիության պահպանմամբ: Նման խորհրդատվություններ կարող են անցկացվել իրավապահ մարմինների պաշտոնակատար անձանց ներկայությամբ, բայց առանց նրանց կողմից լսվելու հնարավորության:

10.

Խոշտանգումների գծով հատուկ զեկուցողի հանձնարարականներ (քաղվածքներ)

Հատուկ զեկուցող Սըր Նայջել Ռոդլիի զեկույցը, ներկայացված Մարդու իրավունքների հանձնաժողովի 2002թ.-ի դեկտեմբերի 17-ի 2001/62, E/CN.4/2003/68 բանաձեւի համաձայն, Հավելված 1

Հատուկ զեկուցողը Մարդու իրավունքների հանձնաժողովին ներկայացված իր զեկույցում (տես E/CN.4/2001/66) ներառել է 1994թ.-ին իր կողմից կազմված հանձնարարականների վերանայված տարբերակը (տես E/CN.4/1995/34): Ինչպես արդեն նշվել էր, այդ հանձնարարականները կարող են վերածվել մեկ հիմնական հանձնարարականի՝ անսպատժելիության դեմ ֆակտո եւ դե յուրե վերացմանը: Նա կոչ է անում պետություններին հաշվի առնել այդ հանձնարարականները խոշտանգումների կանխարգելմանն ուղղված իրենց ջանքերը գործադրելիս: Հանձնարարականների վերանայված տարբերակը հետեւյալն է.

(a) Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի մասնակից չհանդիսացող երկրները պետք է ստորագրեն եւ վավերացնեն կամ միանան այդ կոնվենցիաներին: Խոշտանգումները պետք է ամրագրվեն որպես հանցագործություն ազգային օրենսդրության մեջ եւ վերագրվեն առանձնակի ծանր հանցագործությունների շարքին: Այն երկրներում, որտեղ օրենսդրությունը իշխանությանը չի տալիս խոշտանգումները դատական կարգով հետապնդելու եւ պատժելու իրավազորություն, նման օրենսդրության ընդունումը պետք է առաջնային լինի՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է կատարվել հանցագործությունը եւ ինչ ազգության են պատկանում իրավախախտները կամ տուժողները (համընդհանուր իրավազորություն):

(b) Պետությունները պետք է ստորագրեն եւ միանան կամ վավերացնեն Հռոմի միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը, ինչը թույլ կտա արդարադատության առաջ կանգնեցնել խոշտանգումներ իրականացնողներին ցեղասպանության, ռազմական հանցագործությունների եւ մարդկության դեմ հանցագործությունների համատեքստում՝ միաժամանակ ապահովելով նման հանցագործություններ քննելու հարցում ազգային դատարանների իրավազորությունը համընդհանուր իրավազորության հիմքով:

(c) Երկրի բարձրագույն իշխանությունները պարտավոր են հրապարակայնորեն դատապարտել խոշտանգումների բոլոր տեսակները, երբ էլ դրանք կատարվեն: Բարձրագույն իշխանությունները, մասնավորապես իրավապահ մարմինների գործունեության համար պատասխանատուները, պետք է հրապարակավ հայտարարեն, որ ազատազրկման վայրի աշխատակազմը, որն իր պարտականությունները իրականացրել է հիմնարկում բռնություն տեղի ունեցած ժամանակ, անհատապես պատասխանատվություն են կրելու տեղի ունեցած չարաշահումների համար: Տվյալ հանձնարարականներն ուժի մեջ մտնելու համար իշխանությունները պետք է առանց նախազգուշացման այցելություններ կատարեն ոստիկանական բաժիններ, նախնական կալանքի վայրեր, պատժիչ հիմնարկներ, որտեղ նման վերաբերմունքը տարածված երեւույթ է: Անհրաժեշտ է հասարակության իրազեկմանն

ուղղված քարոզարշավներ իրականացնել կալանավորման եւ ձերբակալության ընթացքում իրավունքների, ինչպես նաեւ իրավասյան մարմինների վերաբերմունքի մասին բողոքներ ներկայացնելու հնարավորության մասին:

(d) Հարցաքննությունները պետք է տեղի ունենան բացառապես պաշտոնական կենտրոններում, եւ ազատազրկման գաղտնի վայրերը պետք է արգելվեն օրենքով: Գաղտնի կամ ոչ պաշտոնական վայրում անձին պահելը պետք է քրեորեն պատժելի լինի ցանկացած պաշտոնյայի համար: Ազատազրկված անձից ոչ պաշտոնական վայրում ստացված ցանկացած ապացույց, որ չի հաստատվել ազատազրկված անձի կողմից պաշտոնական վայրում հարցաքննության ժամանակ, չպետք է ընդունվի դատարանի կողմից որպես ապացույց: Ոչ մի ինքնախոստովանական ցուցմունք, որ արվել է ազատազրկված անձի կողմից փաստաբանի կամ դատավորի բացակայությամբ, չպետք է ապացուցողական արժեք ունենա դատարանի համար, բացի այն դեպքերից, երբ այն օգտագործվում է որպես ապացույց այն անձանց դեմ, որոնք մեղադրվում են խոստովանությունը ապօրինի միջոցներով կորզելու համար: Լուրջ ուշադրություն է պետք հատկացնել հարցաքննության սենյակներում տեսա- ու ձայնագրություն ապահովմանը:

(e) Ազատազրկման վայրերի կանոնավոր վերահսկողությունը, հատկապես, երբ այն իրականացվում է որպես այցելությունների համակարգի մի մաս, խոշտանգումների կանխարգելման ամենաարդյունավետ միջոցներից մեկն է: Անկախ ոչ կառավարական կազմակերպությունները պետք է մուտքի իրավունք ունենան ազատազրկման վայրեր, այդ թվում՝ ոստիկանական բաժիններ, նախնական կալանքի կենտրոններ, անվտանգության ծառայության վայրեր, վարչական կալանքի տարածքներ եւ բանտեր՝ անձանց պահելու պայմանները եւ նրանց նկատմամբ վերաբերմունքը վերահսկելու նպատակով: Վերահսկողություն իրականացնելիս աշխատանքային խմբի անդամները պետք է ազատազրկված անձանց հետ առանձին զրույցների հնարավորություն ունենան: Աշխատանքային խումբը պետք է զեկույցներ հրապարակի այցելությունների արդյունքների վերաբերյալ: Բացի այդ, պաշտոնական մարմինները նույնպես պետք է վերահսկողություն իրականացնեն, պաշտոնական աշխատանքային խմբերը պետք է կազմված լինեն դատական ու իրավասյան մարմինների ներկայացուցիչներից, փաստաբաններից եւ բժիշկներից, ինչպես նաեւ անկախ փորձագետներից եւ քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչներից: Օմբուդսմենը եւ ազգային կամ մարդու իրավունքների կառույցները պետք է ազատազրկման վայրեր մուտքի իրավունք ունենան՝ ազատազրկման պայմանները վերահսկելու նպատակով: Ըստ ներկայացված պահանջի, ազատազրկման վայրեր մուտքի իրավունք պետք է շնորհվի նաեւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեին:

(f) Խոշտանգումներն առավել հաճախակի են ինկոմունիկադո ազատազրկման ժամանակ: Առանց արտաքին աշխարհի հետ կապի ազատազրկումը պետք է անօրինական համարվի, եւ նման ազատազրկման մեջ գտնվող անձինք պետք է անհապաղ ազատ արձակվեն: Ձերբակալության ժամի եւ վայրի, ինչպես նաեւ ձերբակալությունն իրականացրած իրավասյան մարմնի ներկայացուցչի վերաբերյալ տեղեկությունները պետք է մանրամասն գրանցվեն, նմանատիպ տվյալներ պետք է գրանցվեն նաեւ անձին փաստացի արգելանքի տակ վերցնելու վերաբերյալ: Օրենքով պետք է ամրագրել ձերբակալությունից հետո 24 ժամվա ընթացքում փաստաբանի ներգրավման հնարավորությունը: Անվտանգությունն ապահովող անձնակազմը, որ չի պահպանում նման դրույթը, պետք է պատժվի: Բացառիկ դեպքերում, եթե առկա է անվտանգության վերաբերյալ իրական անհանգստություն եւ եթե փաստաբանի հետ հաղորդակցության սահմանափակումը հաստատված է դատարանի

կողմից, պետք է փաստաբանների միության կողմից առաջարկված անկախ փաստաբանի հետ հանդիպելու հնարավորություն տրվի: Բոլոր հանգամանքներում, ազատազրկված անձի հարազատը 18 ժամվա ընթացքում պետք է տեղեկացված լինի ձերբակալության փաստի եւ վայրի մասին: Ձերբակալության ժամանակ անձը պետք է բուժզննություն անցնի, եւ բուզննությունները պետք է պարբերաբար կրկնվեն եւ պարտադիր լինեն ազատազրկման մեկ այլ վայր տեղափոխելու ժամանակ: Յուրաքանչյուր հարցաքննություն պետք է անցկացվի բոլոր ներկա գտնվողների անձը հաստատելուց հետո: Բոլոր հարցաքննությունները պետք է արձանագրվեն եւ գերադասելի է, որ տեսա- եւ ձայնագրվեն: Չարձանագրված հարցաքննություններից ստացված ապացույցները դատական վարույթում պետք է բացառվեն: Աչքերը փակելու եւ գլուխը ծածկելու պրակտիկան հաճախ անհնարին է դարձնում խոշտանգումների հետապնդումը, քանի որ տուժողներն ի վիճակի չեն լինում ճանաչել իրենց խոշտանգողներին: Այսպիսով, աչքեր փակելը եւ գլուխ ծածկելը պետք է արգելվի: Օրինական ձերբակալված անձինք չպետք է պահվեն իրենց հարցաքննության ենթարկող անձանց կամ քննիչների վերահսկողության տակ գտնվող հիմնարկներում ավելի երկար, քան օրենքը նախատեսում է նախնական կալանքի դատական սանկցիա ստանալու համար, ու այդ ժամկետն, ամեն դեպքում, չպետք է գերազանցի 48 ժամը: Նրանք պետք է համապատասխանաբար տեղափոխվեն այլ մարմնի իրավասության տակ գտնվող նախնական կալանքի վայր, որից հետո քննիչների կամ հարցաքննողների հետ չվերահսկված շփումներն արգելվում են:

(g) Վարչական կալանքը հաճախ դատական վերահսկողությունից դուրս է թողնում կալանավորներին: Վարչական կալանքի տակ գտնվող անձինք պետք է պաշտպանության նույն մակարդակն ունենան, ինչ քրեական հանցագործության համար կասկածվող ազատազրկված անձինք: Միաժամանակ, պետությունները պետք է ձգտեն վարչական կալանքը վերացնելուն, ինչը պահանջվում է միջազգային համապատասխան չափանիշներով:

(h) Անհրաժեշտ է մշակել այնպիսի դրույթներ, որոնց համաձայն ազատազրկված անձը հնարավորություն կունենա վիճարկելու ազատազրկման օրինականությունը, օրինակ habeas corpus եւ amparo: Այդ ընթացակարգերը պետք է գործեն արագ:

(i) Պետությունները պետք է բանտարկյալների միջեւ բռնությունները կանխարգելելու արդյունավետ քայլեր ձեռնարկեն՝ նման դեպքերի վերաբերյալ զեկույցները հետաքննելու, մեղավորների հետապնդման ու պատժի ենթարկելու, խոցելի անձանց պաշտպանություն առաջարկելու միջոցով՝ բացառելով նրանց նկատմամբ դաժան վերաբերմունքի վտանգը: Անհրաժեշտ է ուսուցողական ծրագրեր մշակել բանտային անձնակազմերի համար, որոնցում հատուկ ուշադրություն կհատկացվի բանտարկյալների միջեւ բռնության կանխարգելման արդյունավետ քայլերի անհրաժեշտությանը, դատական պաշտպանության հնարավորությանը, ինչպես նաեւ նրանց կտրամադրվեն պաշտպանություն իրականացնելու համապատասխան միջոցներ: Որեւէ ձեւով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի համաձայն (1), բանտարկյալները պետք է անջատ պահվեն՝ հաշվի առնելով հետեւյալ գործոնները. սեռը, տարիքը, հանցագործության ծանրությունը, առաջին անգամ հանցագործություն կատարելը կամ կրկնահանցագործ լինելը, նախնական կալանք կրող լինելն ու դատապարտյալ լինելը:

(j) Երբ ազատազրկված անձը կամ նրա ազգականը կամ փաստաբանը խոշտանգումների մասին բողոք են ներկայացնում, անհրաժեշտ է նախաքննություն անցկացնել, եւ եթե նույնիսկ բողոքն ակնհայտորեն լավ չի հիմնավորված, դեպքի հետ առնչություն ունեցող պաշտոնյաները պետք է ժամանակավորապես դադարեցնեն իրենց պարտականությունների

կատարումը՝ մինչեւ հետաքննության արդյունքների ի հայտ գալն ու դրան հետեւող իրավական կամ կարգապահական վարույթը: Այն դեպքերում, երբ ամբաստանյալը խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի մասին հայտարարություններ է անում դատավարության ժամանակ, մեղադրող կողմը պարտավորվում է ապացուցել, որ խոստովանությունը ձեռք է բերվել ոչ ապօրինի, այդ թվում՝ խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի ճանապարհով: Լուրջ ուշադրություն է պետք դարձնել նաեւ խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի վկաների պաշտպանության ծրագրերի ստեղծմանը, որը պետք է տարածվի նաեւ քրեական անցյալ ունեցող անձանց վրա: Այն դեպքերում, երբ ներկայիս բանտարկյալները վտանգի տակ են, նրանց պետք է տեղափոխել այլ հիմնարկ, որտեղ նրանց անվտանգությունն ապահովելու հատուկ քայլեր կձեռնարկվեն: Այն բողոքը, որ համարվել է լավ հիմնավորված, պետք է հանգեցնի տուժողի կամ նրա հարազատների փոխհատուցմանը: Ձերբակալության, կալանավորման կամ պատիժը կրելու ժամանակ կամ ազատվելուց անմիջապես հետո մահվան բոլոր դեպքերի կապակցությամբ պետք է նախաքննություն անցկացվի դատական կամ այլ անաչառ մարմնի կողմից: Այն անձը, որի առնչությամբ խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի կիրառման համար հավաստի պատասխանատու լինելու ապացույցներ կան, պետք է կանգնի դատարանի առաջ եւ, մեղավոր ճանաչվելու դեպքում, պատժվի: Օրենսդրական ակտերը, որոնք խոշտանգումների համար քրեական պատասխանատվությունից ազատում են նախատեսում, ինչպիսիք են համաներումները, վնասի փոխհատուցման մասին օրենքները եւ այլն, պետք է անվավեր ճանաչվեն: Եթե խոշտանգումները տեղի են ունեցել պաշտոնական վայրերում, այդ վայրի պատասխանատու պաշտոնյաները պետք է կարգապահական տույժի ենթարկվեն կամ այլ կերպ պատժվեն: Ռազմական դատարանները չպետք է օգտագործվեն խոշտանգումների մեջ մեղադրվող անձանց նկատմամբ դատավարություն համար: Անհրաժեշտ է ստեղծել բողոքներ ստացող եւ ստացված բողոքների հիման վրա հետաքննություն իրականացնող ազգային անկախ մարմին, ինչպիսիք են ազգային հանձնաժողովները կամ օմբուդսմենը, որոնք օժտված կլինեն նախաքննություն եւ/կամ հետապնդում իրականացնելու լիազորություններով: Խոշտանգումների վերաբերյալ բողոքները պետք է անհապաղ ընթացք ստանան, եւ դրանց հիման վրա պետք է անցկացվի հետաքննություն անկախ մարմնի կողմից, որ կապված չէ ենթադրվող տուժողի գործի քննությունը եւ հետապնդումը իրականացնող մարմինների հետ: Բացի այդ, դատաբժշկական ծառայությունը պետք է գտնվի դատական համակարգի կամ այլ անկախ մարմնի, այլ ոչ այնպիսի պետական մարմնի իրավասության տակ, ինչպիսիք են ոստիկանությունը կամ քրեակատարողական համակարգը: Պետական դատաբժշկական փորձաքննության ծառայությունները չպետք է դատական քննության համար բժշկական ապացույցներ տրամադրելու մենաշնորհ ունենան: Այս դեպքում պետությունները պետք է ղեկավարվեն Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արդյունավետ հետաքննության եւ փաստագրման սկզբունքներով(2), որոնք օգտակար գործիք են խոշտանգումների դեմ պայքարում:

(k) Ոստիկանների եւ անվտանգության ծառայության անձնակազմի համար անհրաժեշտ է վերապատրաստման դասընթացներ եւ ձեռնարկներ նախատեսել, անհրաժեշտության դեպքում աջակցություն պետք է ցուցաբերի ՄԱԿ-ի խորհրդատվական ծառայությունների եւ տեխնիկական աջակցության ծրագիրը: Իրավապահ եւ անվտանգության ծառայու-

քյունների ներկայացուցիչներին անհրաժեշտ է ծանոթացնել եւ ուսուցանել Բանտարկյալների հետ վարվեցողության ճվազագույն ստանդարտ կանոնները (3), Իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց վարքի կանոնները (4), Իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից ուժի եւ հրազենի օգտագործման վերաբերյալ հիմնարար սկզբունքները (5) եւ Որեւէ ձեւով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուն, եւ այս փաստաթղթերը պետք է թարգմանվեն համապատասխան պետական լեզուներով: Դասընթացների ժամանակ հատուկ շեշտադրում պետք է արվի այն սկզբունքի վրա, որ խոշտանգումների արգելքը բացարձակ է եւ չի կարող մասնակիորեն վերացվել, ինչպես նաեւ գոյություն ունի խոշտանգումներ իրականացնելու վերաբերյալ վերադասի հրամանին չենթարկվելու պարտականություն: Պետությունները պետք է պետական երաշխիքներ ապահովեն իրենց ընդունած միջազգային չափանիշների համար եւ իրավապահ մարմինների ներկայացուցիչներին ծանոթացնեն այն կանոնների հետ, որոնք անհրաժեշտ է կիրառել:

(l) Բժշկական ոլորտի աշխատակիցներին պետք է ծանոթացնեն բժշկական անձնակազմի, հատկապես բժիշկների դերի վերաբերյալ բժշկական էթիկայի սկզբունքներին՝ Ձերբակալված, կալանավորված եւ դատապարտված անձանց՝ խոշտանգումներից եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանության հարցում (6): Պետությունները եւ բժշկական մասնագիտական միությունները պետք է խիստ միջոցներ ձեռնարկեն բժշկական այն անձնակազմի դեմ, որն անմիջականորեն կամ անուղղակի կերպով դեր է ունեցել խոշտանգումների ժամանակ: Այդ արգելքը պետք է տարածվի այնպիսի պրակտիկայի վրա, ինչպիսին է ազատազրկված անձի զննությունը «հարցաքննության համար պիտանելիությունը» որոշելու նպատակով եւ դաժան վերաբերմունք կամ խոշտանգում ներառող գործընթացները, ինչպես նաեւ դաժան վերաբերմունքի ենթարկված անձին բուժօգնություն ցուցաբերելը հետագա չարաշահումներին դիմանալու համար: Այլ դեպքերում բուժանձնակազմի կողմից համապատասխան բուժօգնություն ցուցաբերելուց հրաժարումը պետք է պատժվի:

Ծանոթագրություն

1. Գլխավոր ասամբլեայի 43/173 բանաձեւ, հավելված
2. Տես՝ Գլխավոր ասսամբլեայի բանաձեւ 55/89, հավելված.
3. Ընդունվել է Հանցագործությունների կանխարգելմանը եւ իրավախախտների նկատմամբ վերաբերմունքին նվիրված ՄԱԿ-ի առաջին կոնգրեսում, Ժնեւ 1955թ.
4. Գլխավոր ասամբլեայի բանաձեւ 34/169, հավելված
5. Ընդունվել է Հանցագործությունների կանխարգելմանը եւ իրավախախտների նկատմամբ վերաբերմունքին նվիրված ՄԱԿ-ի ութերորդ կոնգրեսում, Հավանա, 1990թ.
6. Գլխավոր ասամբլեայի բանաձեւ 37/194, հավելված

11.

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների կոպիտ խախտումների զոհերի նախնական իրավական կարգավիճակի վերականգնման (ռեստիտուցիա), փոխհատուցման եւ վերականգման իրավունքը, հատուկ զեկուցող պրոֆեսոր Շերիֆ Բասսիոունիի եզրափակիչ զեկույցը

Ներկայացվել է Հանձնաժողովի 1999/33 բանաձեւի համաձայն, Մարդու իրավունքների հանձնաժողով, 56-րդ նստաշրջան, նախնական օրակարգի 11.d կետ, 2000 թ-ի հունվարի 18, (E/CN.4/2000/62)

I. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՐԳԵԼՈՒ, ՀԱՐԳԱՆՔՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել, հարգանք ապահովել եւ իրականացնել մարդու իրավունքների միջազգային օրենսդրությունը եւ մարդասիրական իրավունքի նորմերը, այդ թվում նրանք, որոնք

(a) Ամրագրված են միջազգային պայմանագրերում, որոնց մասնակից է հանդիսանում պետությունը,

(b) Նախատեսված են սովորութային իրավունքով,

(c) Ներառված են ազգային օրենսդրության մեջ:

Այդ պահանջը հաշվի առնելով՝ պետությունները պարտավոր են ազգային օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային իրավական պարտավորվածություններին հետեւյալ ճանապարհով.

(a) ներառել մարդու իրավունքների եւ մարդասիրական իրավունքի միջազգային նորմերն իրենց ազգային օրենսդրության մեջ կամ այլ կերպ ապահովել այդ նորմերի կատարումը ազգային իրավական համակարգում,

(b) ընդունել համապատասխան եւ արդյունավետ դատական ու վարչական ընթացակարգեր եւ այլ միջոցներ, որոնք կապահովեն արդարադատությանը հասնելու արդար, արդյունավետ եւ արագ մատչելիություն,

(c) ապահովել համարժեք, արդյունավետ եւ արագ փոխհատուցում ստորեւ ներկայացված սահմանումների համաձայն,

(d) երաշխավորել, որ ազգային եւ միջազգային նորմերի միջեւ տարբերության դեպքում կիրառվում է այն նորմը, որը պաշտպանության առավելագույն աստիճան է ապահովում:

II. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

Մարդու իրավունքների միջազգային իրավունքի եւ մարդասիրական իրավունքի պահպանման, պահպանությունը երաշխավորելու եւ պարտադրաբար իրականացնելու պարտավորությունը, ի շարս այլոց, ներառում է նաեւ պետության պարտականությունը՝

(a) ձեռնարկել համապատասխան իրավական եւ վարչական միջոցներ՝ խախտումները կանխարգելելու համար,

(b) ապահովել խախտումների հետաքննություն եւ, անհրաժեշտության դեպքում, միջոցներ ձեռնարկել օրինախախտների դեմ՝ ազգային եւ միջազգային իրավունքի ընթացակարգերի համաձայն,

(c) ապահովել արդարադատության հավասար եւ արդյունավետ մատչելիություն տուժողների համար, անկախ այն փաստից, թե ով է կրելու վերջնական պատասխանատվությունը,

(d) տրամադրել տուժողներին պաշտպանության համապատասխան միջոցներ եւ

(e) Տրամադրել տուժողներին փոխհատուցում կամ նպաստել փոխհատուցում ստանալուն:

III. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ, ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ, ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՆ

Մարդու իրավունքների միջազգային օրենսդրության եւ մարդասիրական իրավունքի նորմերի խախտումները, որոնք միջազգային իրավունքի համաձայն հանդիսանում են հանցագործություն, նախատեսում են դատական հետապնդում խախտումները կատարելու մեջ մեղադրվող անձանց նկատմամբ, պատիժ՝ դատական կարգով ճանաչված խախտումների համար մեղավորներին, համագործակցություն եւ աջակցություն պետություններին եւ համապատասխան միջազգային դատական մարմիններին այդ խախտումների հետաքննության եւ հետապնդման գործում:

Այդ նպատակի համար պետությունները պետք է իրենց ազգային օրենսդրության մեջ ներառեն միջազգային իրավունքով ճանաչված հանցագործությունների նկատմամբ համընդհանուր իրավասություն ապահովող համապատասխան դրույթներ եւ համապատասխան օրենքներ, որոնք նպաստում են հանցագործների հանձնմանը այլ պետությանը եւ միջազգային դատական մարմիններին, ապահովում են իրավաբանական օգնություն եւ համագործակցության այլ տեսակներ՝ միջազգային արդարադատություն հաստատելու համար, ներառյալ աջակցություն տուժողներին եւ պաշտպանություն տուժած վկաներին:

IV.ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Վաղեմության ժամկետները չպետք է կիրառվեն մարդու իրավունքի միջազգային օրենսդրության եւ մարդասիրական իրավունքի նորմերի խախտման համար դատական հետապնդման դեպքում:

Վաղեմության ժամկետներն այլ խախտումների կամ քաղաքացիական հայցերով գործերի դեպքում չպետք է անհարգի կերպով սահմանափակեն տուժողի հնարավորությունը գործ վարել իրավախախտի դեմ եւ չպետք է կիրառվեն այն ժամանակահատվածում, երբ չեն գործում մարդու իրավունքների միջազգային օրենսդրության եւ մարդասիրական իրավունքի նորմերի խախտումների դեպքում արդյունավետ պաշտպանության միջոցները:

V. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻՑ ՏՈՒԺՈՂՆԵՐԸ

Անձը համարվում է «տուժող», եթե մարդու իրավունքների միջազգային օրենսդրության եւ մարդասիրական իրավունքի նորմերի խախտում հանդիսացող գործողությունների կամ բացթողումների արդյունքում անձն անհատապես կամ համատեղ վնաս է կրել, ներառյալ ֆիզիկական եւ հոգեկան վնասը, էմոցիոնալ տառապանքը, տնտեսական կորուստը կամ եթե խախտվել են անձի հիմնարար իրավական իրավունքները: «Տուժող» կարող է նաեւ հանդիսանալ անմիջապես տուժողից կախում ունեցող անձը, տուժողի ընտանիքի անմիջական անդամը կամ հարազատը, ինչպես նաեւ

անձը, որը տուժողին օգնություն ցուցաբերելու կամ հետագա խախտումները կանխելու ընթացքում ենթարկվել է ֆիզիկական, հոգեկան կամ տնտեսական վնասի: «Տուժողի» կարգավիճակը չպետք է կախված լինի տուժողի եւ օրինախախտի միջեւ առկա կամ անցյալում եղած հարաբերություններից, ինչպես նաեւ այն փաստից, թե արդյոք իրավախախտը հայտնաբերվել է, բերման է ենթարկվել, մեղադրվել է կամ դատապարտվել:

VI. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՏՈՒԺՈՂԻ ՀԱՆԴԵՊ

Պետությունը պարտավոր է կարեկցանքով վարվել տուժողի հետ, հարգել նրա արժանապատվությունը եւ մարդու իրավունքները: Երբ դա տեղին է, նման վերաբերմունք պետք է ցուցաբերեն նաեւ հասարակական եւ միջկառավարական կազմակերպությունները եւ մասնավոր ընկերությունները: Անհրաժեշտ է համապատասխան միջոցներ ձեռնարկել տուժողների եւ նրանց ընտանիքների անվտանգությունը եւ մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը երաշխավորելու համար: Պետությունները պետք է ապահովեն, որպեսզի ազգային օրենքները բռնություններից եւ տրավմաներից տուժածների համար հատուկ խնամք եւ վերաբերմունք նախատեսեն, որը թույլ կտա արդարադատություն եւ փոխհատուցում ապահովման իրավական եւ վարչական ընթացակարգերի ընթացքում խուսափել կրկին տրավմա ստանալուց:

VII. ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՏՈՒԺՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Մարդու իրավունքների միջազգային օրենսդրության եւ մարդասիրական իրավունքի խախտումների դեպքում պաշտպանության միջոցները ներառում են տուժողի

(a) արդարադատության մատչելիության,

(b) վնասի փոխհատուցման,

(c) թույլ տված խախտումների վերաբերյալ փաստացի տեղեկությունների մատչելիության իրավունքը:

VIII. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՏՈՒԺՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Արդարադատության մատչելիության տուժողի իրավունքը ներառում է դատական, վարչական կամ այլ բոլոր հնարավոր հանրային ընթացակարգերը, որոնք սահմանված են ազգային եւ միջազգային օրենսդրությամբ: Արդարադատության մատչելիության եւ արդար ու անաչառ վարույթի անհատական կամ հավաքական իրավունքը երաշխավորելու պարտավորությունը, որ բխում է միջազգային իրավունքից, պետք է ամրագրվի ազգային օրենսդրության մեջ: Այդ նպատակով պետությունները պարտավոր են.

(a) տարբեր պետական եւ մասնավոր մեխանիզմների միջոցով քաղաքացիներին տեղեկացնել մարդու իրավունքների միջազգային օրենսդրության եւ մարդասիրական իրավունքի խախտումների դեպքում պաշտպանության բոլոր միջոցների մասին,

(b) միջոցներ ձեռնարկել տուժողի համար անհարմարությունները նվազեցնելու նպատակով, պաշտպանել նրա, ինչպես նաեւ նրա ընտանիքի անդամների եւ վկաների մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը եւ երաշխավորել պաշտպանությունը ահաբեկումներից ու հնարավոր վրեժից՝ դատական, վարչական կամ այլ վարույթներից առաջ, դրանց ընթացքում եւ դրանց ավարտից հետո,

(c) տրամադրել տուժողներին բոլոր համապատասխան դիվանագիտական եւ իրավական միջոցները, ապահովել դատական պաշտպանության եւ մարդու իրավունքների միջազգային օրենսդրության ու մարդասիրական իրավունքի նորմերի խախտումների դիմաց փոխհատուցման իրավունքը իրականացնելու հնարավորությունը:

Ի հավելումն արդարադատության անհատական մատչելիությանը, անհրաժեշտ է մշակել դրույթներ, որոնք հնարավորություն կտան տուժողների խմբերին եւս ներկայացնել փոխհատուցման վերաբերյալ իրենց համատեղ բողոքները եւ հայցերը ու ստանալ համատեղ փոխհատուցում:

Համարժեք, արդյունավետ եւ արագ պաշտպանության իրավունքը մարդու իրավունքների միջազգային օրենսդրության եւ մարդասիրական իրավունքի նորմերի խախտումների դեպքում ներառում է բոլոր հնարավոր միջազգային ընթացակարգերը, որոնցում անձը իրավունակ է, եւ որոնք պետք է կիրառվեն առանց նախապայմանների ազգային պաշտպանության միջոցների նկատմամբ:

IX. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՏՈՒԺՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Համարժեք, արդյունավետ եւ արագ փոխհատուցման հիմնական նպատակն է աջակցություն ցուցաբերել արդարադատությանը՝ մարդու իրավունքների միջազգային օրենսդրության եւ մարդասիրական իրավունքի նորմերի խախտումների դիմաց հատուցելու միջոցով: Փոխհատուցումը պետք է համարժեք լինի խախտումների ծանրությանը եւ պատճառված վնասին: Ազգային օրենսդրության եւ միջազգային իրավունքից բխող պարտավորությունների համաձայն, պետությունը պետք է փոխհատուցում ապահովի տուժողին՝ իր գործողությունների կամ անգործության համար, որոնք հանդիսանում են մարդու իրավունքների միջազգային օրենսդրության եւ մարդասիրական իրավունքի նորմերի խախտում:

Այն դեպքերում, երբ պետությունը չի մասնակցել խախտումների կատարմանը, խախտումների համար պատասխանատու կողմը պետք է փոխհատուցում տրամադրի տուժողին կամ պետությանը, եթե պետությունը արդեն իսկ փոհատուցում է տրամադրել տուժողին:

Այն դեպքում, երբ պատասխանատվություն կրող կողմն ի վիճակի չէ կամ չի կամենում կատարել այդ պարտավորությունը, պետությունը պետք է ջանքեր գործադրի փոխհատուցում ապահովելու այն անձանց համար, որոնք ֆիզիկապես կամ հոգեպես տուժել են, եւ խախտումների արդյունքում վնաս է պատճառվել նրանց առողջությանը եւ նրանց ընտանիքներին, հատկապես այն անձանց, որոնք գտնվել են մահացած, ֆիզիկապես կամ հոգեպես հաշմանդամ դարձած տուժողի խնամակալության տակ: Այդ նպատակով պետությունները պետք է ստեղծեն տուժողների համար փոխհատուցման հիմնադրամներ, ինչպես նաեւ գտնեն այդ հիմնադրամները լրացնելու այլ միջոցներ: Պետությունը հարկադրաբար իրականացնում է խախտումների համար պատասխանատվություն կրող անհատների կամ կազմակերպությունների դեմ փոխհատուցում տրամադրելու դատական որոշումները: Այն դեպքերում, երբ պետությունը կամ կառավարությունը, որի իշխանության օրոք կատարվել են խախտումները, այլեւս գոյություն չունեն, պետության կամ կառավարության իրավահաջորդները պարտավոր են տրամադրել փոխհատուցում:

X. ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ազգային օրենսդրության եւ միջազգային պարտավորությունների համաձայն, ինչպես նաեւ հաշվի առնելով անհատական հանգամանքները՝ պետությունները պետք է ապահովեն մարդու իրավունքների միջազգային օրենսդրության եւ մարդասիրական իրավունքի նորմերի խախտումներից տուժած անձանց համար փոխհատուցման հետեւյալ ձեւերը. նախնական իրավական կարգավիճակի վերականգնում (ռեստիտուցիա), հատուցում, վերականգնում, բավարարում եւ նման խախտումների չկրկնվելու երաշխիքներ:

Ռեստիտուցիան պետք է բոլոր հնարավոր դեպքերում վերականգնի տուժողի վիճակը, որը նա ուներ մարդու իրավունքների միջազգային օրենսդրության եւ մարդասիրական իրավունքի նոր-

մերի խախտումներից առաջ: Ռեստիտուցիան ներառում է ազատության, իրավական իրավունքների, սոցիալական կարգավիճակի, ընտանեկան կյանքի եւ սեփականության վերադարձի վերականգնում:

Հատուցումը պետք է տրամադրվի ցանկացած տնտեսապես գնահատվող վնասի դիմաց, որը տեղի է ունեցել մարդու իրավունքների միջազգային օրենսդրության եւ մարդասիրական իրավունքի խախտումների հետեւանքով, ինչպիսիք են՝

(a) ֆիզիկական կամ հոգեկան վնաս, այդ թվում՝ ցավ, տառապանք կամ էմոցիոնալ ճնշում,

(b) կորցրած հնարավորություններ, այդ թվում՝ կրթության,

(c) նյութական վնասներ եւ վաստակի կորուստ, այդ թվում՝ հնարավոր վաստակի կորուստ,

(d) հեղինակությանը կամ արժանապատվությանը հասցված վնաս,

(e) իրավաբանական կամ փորձագիտական օգնության, դեղամիջոցների եւ բժշկական, հոգեբանական ու սոցիալական ծառայության համար պահանջվող գումար:

Վերականգնումը պետք է ներառի բժշկական եւ հոգեբանական խնամքը, ինչպես նաեւ իրավական եւ սոցիալական ծառայություններ:

Բավարարումը եւ նման հանցագործությունների չկրկնվելու երաշխիքները պետք է ներառեն հետեւյալ բոլոր կետերը կամ կետերից որոշները՝ կախված հանգամանքներից.

(a) շարունակվող խախտումների դադարեցում,

(b) փաստերի ստուգում եւ ճշմարտության հանրային լիարժեք բացահայտում այնպես, որ այդ բացահայտումը հետագայում անիմաստ վնաս չպատճառի կամ սպառնալիք չհանդիսանա տուժողի, վկայի կամ այլ ներգրավված կողմերի անվտանգությանը,

(c) սպանված կամ անհետացած անձանց մարմնի որոնում, աջակցություն մահացածի անձը հաստատելու եւ ընտանիքների ու համայնքների մշակութային ավանդույթների համաձայն հողարկավորությունն իրականացնելու ընթացքում,

(d) պաշտոնական հայտարարություն կամ դատական որոշում՝ տուժած անձի կամ նրա հետ սերտ առնչություն ունեցող անձանց արժանապատվության, հեղինակության, իրավաբանական եւ սոցիալական իրավունքների վերականգնման մասին,

(e) ներողություն, այդ թվում՝ փաստերի հրապարակավ ճանաչում եւ պատասխանատվության ընդունում,

(f) դատական կամ վարչական սանկցիաներ՝ խախտումների իրականացման համար պատասխանատու անձանց նկատմամբ,

(g) հոգեհանգիստ եւ հարգանքի տուրք տուժածներին,

(h) տեղի ունեցած խախտումների ճշգրիտ եւ հավաստի հաշվետվությունների ներառում մարդու իրավունքների միջազգային օրենսդրության եւ մարդասիրական իրավունքի վերաբերյալ դասընթացների ու բոլոր մակարդակների կրթական նյութերում,

(i) խախտումների կրկնման կանխարգելում հետեւյալ միջոցներով.

(j) արդյունավետ քաղաքացիական վերահսկողության ապահովում ռազմական եւ անվտանգության ուժերի նկատմամբ,

(k) զինվորական դատարանների իրավասության սահմանափակում՝ նրանց իրավասության տակ թողնելով միայն զինված ուժերի անդամների կողմից գործած ռազմական հանցագործությունները,

(l) դատական համակարգի անկախության ամրապնդում,

(m) իրավաբանական, լրատվական եւ առնչվող այլ ոլորտներում գործող անձանց եւ իրավապաշտպանների պաշտպանություն,

(n) որպես առաջնայնություն մարդու իրավունքների վերաբերյալ դասընթացների իրականացում եւ զարգացում հասարակության բոլոր հատվածների, հատկապես ռազմական եւ անվտանգության ծառայությունների եւ իրավապահ մարմինների ներկայացուցիչների համար,

(o) աջակցություն վարվեցողության կանոնների եւ էթիկական նորմերի, մասնավորապես միջազգային նորմերի պահպանությանը պետական ծառայողների, այդ թվում՝ իրավապահ մարմինների, ուղղիչ հիմնարկների, լրատվության, բժշկական ոլորտի, հոգեբանության, սոցիալական ծառայությունների եւ ռազմական անձնակազմի, ինչպես նաեւ տնտեսական ձեռնարկությունների աշխատակազմերի կողմից:

(p) Կոնֆլիկտների կարգավորման եւ կանխարգելող միջամտության մոնիտորինգի մեխանիզմների ստեղծում:

XI. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

26. Պետությունները պարտավոր են միջոցներ մշակել լայն հասարակությանն ու հատկապես մարդու իրավունքների միջազգային օրենսդրության եւ մարդասիրական իրավունքի խախտումներից տուժողներին այս սկզբունքներում ամրագրված իրավունքների եւ դատական պաշտպանության միջոցների, ինչպես նաեւ տուժողի համար մատչելի բոլոր հնարավոր իրավական, բժշկական, հոգեբանական, սոցիալական եւ վարչական ծառայությունների մասին տեղեկացնելու համար:

XII. ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

27. Այս սկզբունքների կիրառումը եւ մեկնաբանությունը պետք է համապատասխանի մարդու իրավունքների միջազգային ճանաչված նորմերին՝ առանց որեւէ բացասական տարբերակումների, որոնք հիմնված կլինեն ռասայի, գույնի, սեռի, սեռական կողմնորոշման, տարիքի, լեզվի, դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագման, սեփականատիրության կարգավիճակի, ծննդավայրի, ընտանիքի կամ այլ կարգավիճակի կամ հաշմանդամության վրա:

12.

Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արդյունավետ հետաքննության եւ փաստագրման սկզբունքները (Ստամբուլի արձանագրություն)

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, Նյու Յորք եւ Ժնեւ, 2001թ.

Մարդու իրավունքների հանձնաժողովն իր 2000/43 բանաձեւում եւ Գլխավոր ասամբլեան իր 55/89 բանաձեւում ուշադրություն են դարձրել եւ քաջալերել պետություններին հաշվի առնել այս սկզբունքները որպես խոշտանգումների դեմ պայքարի օգտակար գործիք:

1. Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի (այսուհետեւ՝ խոշտանգումներ կամ այլ դաժան վերաբերմունք) արդյունավետ հետաքննության եւ փաստագրման նպատակները ներառում են հետեւյալը՝

i) Փաստերի հստակեցում եւ տուժողի ու նրա ընտանիքի առաջ պատասխանատու անձանց եւ պետության պատասխանատվության հաստատում ու ճանաչում,

ii) Կրկնահանցագործության կանխարգելման միջոցների սահմանում,

iii) Աջակցություն հետաքննության արդյունքում բացահայտված պատասխանատու անձանց նկատմամբ հետապնդման եւ, եթե անհրաժեշտ է, կարգապահական սանկցիաների կիրառման իրականացմանը: Պետության կողմից վնասի լիարժեք փոխհատուցման անհրաժեշտության ընդգծում, այդ թվում՝ արդար եւ համարժեք ֆինանսական հատուցում եւ բժշկական խնամքի եւ վերականգնման համար անհրաժեշտ միջոցների տրամադրում:

2. Պետությունները պետք է ապահովեն խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի մասին բողոքների եւ զեկույցների արագ ու արդյունավետ հետաքննումը: Նույնիսկ արտահայտված բողոքի բացակայության դեպքում անհրաժեշտ է նախաքննություն իրականացնել, եթե առկա են ցուցանիշներ, որոնք նշում են խոշտանգման կամ դաժան վերաբերմունքի կիրառման հավանականության մասին: Հետաքննություն իրականացնող մարմինը, որ պետք է անկախ լինի կասկածվող հանցագործներից եւ այն կառույցներից, որտեղ նրանք ծառայում են, պետք է լինի իրավազոր եւ անաչառ: Նրանք պետք է հնարավորություն ունենան կամ լիազորված լինեն ներգրավելու անաչառ բժշկական կամ այլ փորձագետների: Նման հետաքննություն իրականացնելու մեթոդները պետք է համապատասխանեն մասնագիտական ամենաբարձր չափանիշներին, եւ բացահայտված փաստերը պետք է հրապարակվեն:

3.(a) Հետաքննություն իրականացնող մարմինը պետք է նախաքննության համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները ստանալու լիազորություն եւ պարտավորություն ունենա: Հետաքննություն իրականացնող անձինք պետք է իրենց տրամադրության տակ ունենան բոլոր անհրաժեշտ բյուջետային եւ տեխնիկական միջոցները՝ արդյունավետ հետաքննություն իրականացնելու համար: Նրանք նաեւ պետք է լիազորված լինեն պարտավորեցնելու խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի համար մեղադրվող պաշտոնյաներին՝ ներկայանալու եւ վկայություն տալու համար: Նույն սկզբունքը պետք է կիրառվի ցանկացած

վկայի նկատմամբ: Այս նպատակով հետաքննություն իրականացնող մարմինը պետք է լիազորված լինի ծանուցում ուղարկել վկաներին, այդ թվում՝պաշտոնյաներին, որոնք ենթադրաբար ներգրավված են եղել, եւ պահանջել, որ նրանք ցուցմունք տան:

3.(b) Խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի ենթադրվող տուժողները, հետաքննություն իրականացողները եւ նրանց ընտանիքները պետք է պաշտպանված լինեն բռնություններից, ահաբեկումներից կամ սպառնալիքների այլ ձեւերից, որոնք կարող են առաջանալ հետաքննության առնչությամբ: Այն անձինք, որոնք կասկածվում են խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի կիրառման մեջ, պետք է հեռացվեն իրենց ղեկավար պաշտոններից, ինչպես նաեւ բողոքների, վկաների եւ նրանց ընտանիքների, հետաքննություն իրականացնողների նկատմամբ անմիջական կամ անուղղակի իշխանության եւ ազդեցության հնարավորությունից:

4. Խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի ենթադրյալ տուժողները եւ նրանց օրինական ներկայացուցիչները պետք է տեղեկացված լինեն եւ հնարավորություն ունենան մասնակցելու լսումներին, տեղեկություն ստանան հետաքննության վերաբերյալ եւ ապացույցներ ներկայացնելու իրավունք ունենան:

5.(a) Այն դեպքերում, երբ հետաքննության սահմանված կարգը համապատասխան չէ անբավարար փորձագիտության կամ հնարավոր կողմնակալության, կամ չարաշահումների ակնհայտ օրինակների կամ այլ էական պատճառներով, պետությունը պետք է ապահովի, որ հետաքննությունն իրականացվի նախաքննության անկախ հանձնաժողովի միջոցով կամ նմանօրինակ այլ ընթացակարգով: Այդ հանձնաժողովի անդամները պետք է ընտրվեն իրենց ճանաչված անաչառության, կոմպետենտության եւ անկախության հիման վրա: Մասնավորապես, նրանք պետք է անկախ լինեն ցանկացած կասկածվող հանցագործներից եւ այն կառույցներից կամ մարմիններից, որոնցում նրանք ծառայում են: Հանձնաժողովը պետք է լիազորված լինի ստանալ նախաքննության համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները եւ հնարավորություն ունենա նախաքննություն անցկացնել այս սկզբունքների պահանջներին համապատասխան: Որոշ հանգամանքների առկայության դեպքում եւ մասնագիտական էթիկայից ելնելով տեղեկությունները կարող են գաղտնի պահվել: Այս պահանջները պետք է պահպանվեն:

5.(b) Ողջամիտ ժամկետներում կազմված գրավոր զեկույցը պետք է ներառի նախաքննության ծավալը, ապացույցների գնահատման մեթոդները եւ ընթացակարգերը, ինչպես նաեւ եզրակացությունները եւ հանձնարարականները, որոնք հիմնված են հայտնաբերված փաստերի եւ գործող օրենսդրության վրա: Վերջնական զեկույցները պետք է հրապարակվեն: Զեկույցում պետք է մանրամասն նկարագրվեն հայտնաբերված իրադարձությունները եւ այդ հայտնաբերումները հիմնավորող ապացույցները, թվարկվեն ցուցմունքներ տված վկաների անունները, բացառությամբ նրանց, ում ինքնությունը անվտանգության նկատառումներով գաղտնի է պահվել: Պետությունը ողջամիտ ժամկետներում պետք է արձագանքի հետաքննության զեկույցին եւ նշի այն քայլերը, որոնք ձեռնարկելու է ի պատասխան:

6.(a) Բժշկական փորձագետները, որոնք ներգրավված են խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի նախաքննության մեջ, պետք է մշտապես գործեն էթիկայի բարձրագույն չափանիշներին համապատասխան եւ, մասնավորապես, մինչեւ բուժզննություն սկսելը պետք է ստանան տուժողի համաձայնությունը՝ ստացված տեղեկությունների հիման վրա: Բուժզննությունը պետք է համապատասխանի բժշկական պրակտիկայի ընդունված

չափանիշներին: Մասնավորապես, բուժզննությունը պետք է իրականացվի փակ դռների հետեւում՝ բժշկական փորձագետի վերահսկողությամբ եւ իրավասյան մարմինների կամ պետական պաշտոնյաների բացակայությամբ:

6.(b) Բժշկական փորձագետը պետք է անհապաղ մշակի ճշգրիտ գրավոր զեկույց: Զեկույցը պետք է ներառի առնվազն հետեւյալը.

i) Հարցաքննության հանգամանքները. սուբյեկտի անուն-ազգանունը, բուժզննությանը ներկա բոլոր անձանց ազգանունները եւ պաշտոնները, ճշգրիտ ժամը եւ ամսաթիվը, վայրը, հաստատության ուղղվածությունն ու հասցեն (որտեղ հնարավոր է՝ նշելով սենյակը), որտեղ անց է կացվել բուժզննությունը (օրինակ՝ ազատազրկման վայր, հիվանդանոց, տուն եւ այլն), սուբյեկտի հետ կապված հանգամանքները բուժզննության ընթացքում (օրինակ՝ զսպման միջոցների ցանկացած տեսակը անձին բերելու ժամանակ կամ զննության ընթացքում, անվտանգության ծառայությունների ներկայությունը զննությանը, բանտարկյալին ուղեկցող անձանց սպահելածեւը, զննությանը ենթարկվող անձի հասցեին հնչող սպառնալիքները եւ այլն) եւ առնչություն ունեցող այլ գործոններ:

ii) Նախապատմություն. սուբյեկտի հետ տեղի ունեցածի մանրամասն նկարագրություն, որը նա տվել է հարցաքննության ընթացքում, այդ թվում՝ խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի ենթադրվող մեթոդները, ժամը եւ բոլոր ֆիզիկական կամ հոգեբանական ախտանիշների վերաբերյալ բողոքները:

iii) Ֆիզիկական եւ հոգեբանական զննություն. կլինիկական հետազոտմամբ հայտնաբերված ֆիզիկական եւ հոգեբանական փաստերի արձանագրում, այդ թվում՝ ախտորոշիչ թեսթերի եւ, եթե հնարավոր է, վնասվածքների գունավոր լուսանկարների ներառում զեկույցում:

iv) Եզրակացություն. հայտնաբերված ֆիզիկական եւ հոգեբանական բնույթի գործոնների եւ հնարավոր խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի միջեւ կապի վերաբերյալ մեկնաբանություններ: Անհրաժեշտ բժշկական եւ հոգեբանական ցանկացած տեսակի բուժման եւ հետագա բուժզննության վերաբերյալ հանձնարարականների տրամադրում:

v) Հեղինակային վկայական. զեկույցում պետք է հստակ նշված լինի բուժզննությունն իրականացրած անձանց տվյակները, եւ այն պետք է ստորագրված լինի:

6.(c) Եզրակացությունը պետք է գաղտնի բնույթ կրի եւ փոխանցվի սուբյեկտին կամ նրա օրինական ներկայացուցչին: Սուբյեկտի եւ նրա ներկայացուցիչների կարծիքը բուժզննության վերաբերյալ պետք է ճշտվի եւ արձանագրվի եզրակացության մեջ: Եզրակացությունը, եթե դա անհրաժեշտ է, պետք է գրավոր տեսքով տրամադրվի խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի հետաքննությունը իրականացնող մարմնին: Պետությունը նաեւ պարտավոր է ապահովել այդ անձանց եզրակացության փոխանցման անվտանգությունը: Եզրակացությունը չպետք է մատչելի լինի այլ անձանց համար, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է սուբյեկտի համաձայնությունը կամ նման փոխանցումը պահաջելու իրավասություն ունեցող դատարանի որոշումը:

Հավելված 2.
ԽԿԿ-ի Չափանիշները. քաղվածքներ

ԽԿԿ-ի հաշվետվությունների «հիմնական» բաժիններ

(Խոշտանգումների եւ անմարդկային եւ դաժան վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե, ԽԿԿ չափանիշներ, ԽԿԿ-ի հաշվետվությունների «հիմնական» բաժիններ, Եվրախորհուրդ, 2001թ.-ի հոկտեմբեր, CPT/Inf/E (2002))

I. Ոստիկանությունում արգելանքի տակ պահելը

(քաղվածք 12 -րդ ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (2002) 15])

33. Հասարակության բնականոն ընթացքի համար կարեւոր է, որ ոստիկանությունն ունենա հանցագործության կատարման մեջ կասկածվող կամ այլ կատեգորիաների անձանց բերման ենթարկելու, ժամանակավորապես ձերբակալելու եւ հարցաքննելու իրավասություն: Սակայն նման լիազորություններն իրենց բնույթով սպառնալիքի եւ ֆիզիկական չարաշահումների վտանգ են պարունակում: ԽԿԿ-ի աշխատանքի էությունն այդ ռիսկերի նվազեցման ուղիներ փնտրելն է՝ առանց ոստիկանության կողմից իր լիազորություններն իրականացնելու անհարկի խոչընդոտների: Մի շարք երկրներում հուսադրող փոփոխություններ են նկատվել ոստիկանության ազատազրկման վայրերի ոլորտում, սակայն ԽԿԿ-ի կողմից հայտնաբերված փաստերը ընդգծում են, որ դեռեւս անհրաժեշտ է պահպանել զգոնությունը:

34. Կասկածյալների հարցաքննությունն առանձնահատուկ խնդիր է եւ հատուկ նախապատրաստում է պահանջում այն բավարար ձեւով իրականացնելու համար: Առաջինը եւ կարեւորագույնն այն է, թե հստակ ինչ նպատակ ունի հարցաքննությունը. այդ նպատակը պետք է լինի ճշգրիտ եւ հավաստի տեղեկություններ ստանալը՝ հետաքննության մեջ գտնվողի վերաբերյալ ճշմարտությունը պարզելու, այլ ոչ թե մեկից խոստովանություն ստանալու նպատակով, որը հարցաքննողի աչքերում արդեն իսկ մեղավոր է: Ի հավելումն համապատասխան նախապատրաստում ապահովելուն, իրավապահ մարմինների պաշտոնյաների համար վերոհիշյալ նպատակին հասնելուն մեծապես կնպաստի քրեական գործով կասկածյալների հարցաքննության ընթացքում վարվեցողության կանոնակարգի մշակումը:

35. Տարիներ շարունակ ԽԿԿ-ի պատվիրակությունները տարբեր երկրներում զրուցել են ազատազրկված բազմաթիվ անձանց հետ, որոնք հավաստի գանգատներ են ներկայացրել հարցաքննությունների ժամանակ ոստիկանության ծառայողների կողմից իրենց նկատմամբ ֆիզիկական բռնությունների կամ այլ ձեւի սպառնալիքների եւ ահաբեկումների վերաբերյալ: Ակնհայտ է, որ քրեական արդարադատության համակարգը, որ առաջնային ապացույց է համարում խոստովանությունը, դրանով իսկ նախադրյալներ է ստեղծում հանցագործության հետաքննության մեջ ներգրավված պաշտոնյաների համար՝ հաճախ պարտադիր արդյունքներ ստանալու ճնշման տակ կիրառելով ֆիզիկական եւ հոգեբանական ճնշումներ: Խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի այլ տեսակների կանխարգելման առումով չափազանց կարեւոր է մշակել հանցագործությունների բացահայտման այնպիսի մեթոդներ, որոնք թույլ են տալիս

նվազեցնել կախումը խոստովանություններից եւ հարցաքննությունների միջոցով ստացված այլ ապացույցներից ու տեղեկություններից:

36. Ոստիկանության հարցաքննությունների էլեկտրոնային ձայնագրումը (տեսագրումը) ազատազրկված անձանց հանդեպ դաժան վերաբերմունքի դեմ լրացուցիչ կարեւոր երաշխիք է: ԽԿԿ-ն գոհունակությամբ է նշում, որ նման համակարգի ներմուծման հարցը քննարկող երկրների թիվն ավելանում է: Տեխնիկական նման միջոցները կարող են ապահովել հարցաքննության լիարժեք եւ հավաստի ձայնագրում/տեսագրումը՝ դյուրին դարձնելով դաժան վերաբերմունքի մասին ցանկացած մեղադրանքի հետաքննությունը: Դա բխում է երկու կողմերի շահերից՝ թե ոստիկանության կողմից դաժան վերաբերմունքի ենթարկված անձի, եւ թե դաժան վերաբերմունքի ու հոգեբանական ճնշման կիրառման մեջ ներգրավված լինելու վերաբերյալ անհիմն մեղադրանքների արժանացած ոստիկանության ծառայողի շահերից: Ոստիկանության հարցաքննությունների էլեկտրոնային տեսա- եւ ձայնագրումը նաեւ նվազեցնում է նախկին ցուցմունքները մեղադրյալի կողմից հերքելու հնարավորությունը:

37. ԽԿԿ-ն բազմաթիվ առիթներ է ունեցել շատ երկրներում հայտնաբերելու հարցաքննության սենյակներ, որոնք վախեցնող բնույթ են ունեցել, օրինակ՝ ամբողջովին սեւ երանգով ձեւավորված սենյակներ՝ հարցաքննվողի աթոռին ուղղված լուսավորության սարքերով: Նման սենյակներ ոստիկանությունում չպետք է լինեն:

    Բացի բավարար լուսավորությունից, օդափոխությունից եւ ջեռուցումից, հարցաքննության սենյակներում պետք է լինեն նույնանման աթոռներ հարցաքննության բոլոր մասնակիցների համար: Հարցաքննություն իրականացնող ծառայողը չպետք է գերիշխող դիրք ունենա (օրինակ՝ ավելի բարձր նստած լինի) կամ կասկածյալից հեռացված դիրքում գտնվի: Բացի այդ, գույնային երագները պետք է չեզոք լինեն:

38. Որոշ երկներում ԽԿԿ-ն առնչվել է ոստիկաանությունում ազատազրկված անձի աչքերը կապելու պրակտիկային, մասնավորապես, հարցաքննության ժամանակ: ԽԿԿ-ի պատվիրակությունները ոստիկանական ծառայողներից ստացել են նման պրակտիկայի նպատակների տարբեր եւ երբեմն իրարամերժ բացատրություններ: Տարիների ընթացքում հավաքած տեղեկություններից ելնելով՝ ԽԿԿ-ի համար ակնհայտ է, որ շատ երկրներից, եթե չասել մեծամասնությունում, անձանց աչքերը կապում են, որպեսզի նրանք չկարողանան մատնանշել իրավապահ մարմինների այն ծառայողներին, որոնք ենթարկել են իրենց դաժան վերաբերմունքի: Նույնիսկ այն դեպքերում, երբ ֆիզիկական բռնություն չի կիրառվել, անձի աչքերը կապելը, հատկապես հարցաքննության ժամանակ, ճնշում գործադրելու տեսակ է, եւ անձի վրա ունեցած ազդեցության առումով կարող է որակվել որպես հոգեբանական դաժան վերաբերմունք: ԽԿԿ-ն առաջարկում է արգելել ոստիկանության ազատազրկման վայրերում անձանց աչքերը կապելու պրակտիկան:

39. ԽԿԿ-ի համար արտասովոր չէ կասկածելի առարկաների հայտնաբերումը ոստիկանության տարբեր շենքերում եւ սենյակներում, ինչպիսիք են փայտե ձողերը, բեյսբոլի բիտաները, ցախավելները, մետաղյա ձողերը, էլեկտրական հաստ լարերի կտորները, կեղծ հրազենները եւ դանակները: Այդ առարկաների առկայությունը բազմիցս հաստատել է ԽԿԿ-ի պատվիրակությունների կողմից ստացված տեղեկություններն այն մասին, որ այդ հաստատություններում պահվող անձինք սպառնալիքներ են ստացել եւ նրանց հանդեպ բռնություն է կիրառվել այդ առարկաների օգտագործմամբ: Թվարկված առարկաների վերաբերյալ ոստիկանության ծառայողների կողմից առավել հաճախ հնչող բացատրությունն այն է, որ այդ առարկաները առգրավվել են կասկածյալներից եւ կօգտագործվեն որպես ապացույց: Այն փաստը, որ նշված

առարկաները չեն ունեցել սլիտակներ եւ հաճախ գցած են եղել սենյակներում (երբեմն սլահված են եղել սլահարաններում կամ վարագույրների հետեւում), կարող է միայն թերահավատություն ներշնչել նման բացատրությունների վերաբերյալ: Ոստիկանության որոշ ծառայողների ոչ սլատշաճ վարվեցողության վերաբերյալ ենթաղրություններն ու անձնակազմի եւ ազատազրկված անձանց համար վտանգի աղբյուրները վերացնելու համար սլետք է, որ որսլես ասլացույց առգրավված առարկաները սլիտակավորվեն, արձանագրվեն եւ սլահվեն հատուկ սլահեստում: Մնացած բոլոր հիշատակված տեսակի առարկաները սլետք է հեռացվեն ոստիկանական շենքերից:

40. Իր գործունեության սկզբից ԽԿԿ-ն հատուկ նշանակություն է տալիս ոստիկանության կողմից ձերբակալված անձանց երեք իրավունքներին. ազատազրկված անձանց ձերբակալության փաստի մասին իր ընտրությամբ, երրորդ կողմին (ընտանիքի անդամ, ընկեր, հյուսլատոսարան) տեղեկացնելու իրավունքը. փաստաբանի ծառայություններից օգտվելու իրավունքը եւ բժշկի ծառայություններից օգտվելու իրավունքը, որ ընդգրկում է նաեւ ազատազրկված անձի ցանկությամբ իր ընտրած բժշկի մոտ հետազոտման իրավունքը (ի լրումն ոստիկանական մարմինների կողմից հրավիրված բժշկի կատարած որեւէ բժշկական հետազոտության):

Շատ երկրներում քայլեր են ձեռնարկվել այս իրավունքները ներկայացնելու եւ ամրասլնդելու համար՝ հաշվի առնելով ԽԿԿ հանձնարարականները: Մասնավորասլես, փաստաբան ունենալու իրավունքը ոստիկանությունում արգելանքի տակ գտնվելու ժամանակ ներկայումս տրամադրվում է ԽԿԿ-ի կողմից այցելվող երկրների մեծամասնությունում: Այն երկներում, որտեղ այս իրավունքը չի գործում, արդեն իսկ նախատեսվում է դրա ներմուծումը:

41. Սակայն մի շարք երկրներում առկա է անձին ոստիկանությունում արգելանքի տակ վերցնելու առաջին իսկ սլահից նրան փաստաբան տրամադրելու մասին ԽԿԿ-ի հանձնարարականը կատարելու ակնհայտ դժկամություն: Որոշ երկրներում ոստիկանության կողմից ձերբակալված անձինք իրենց այդ իրավունքից կարող են օգտվել ոստիկանությունում որոշ ժամանակ անցկացնելուց հետո, մի շարք այլ երկրներում այդ իրավունքը ուժի մեջ է մտնում միայն այն սլահից, երբ անձը սլաշտոնապես «կասկածյալ» է հայտարարվում:

ԽԿԿ-ն բազմիցս նշել է, որ, իր փորձից ելնելով, ազատազրկմանը անմիջականորեն հետեւող ժամանակահատվածը ամենավտանգավորն է սլառնալիքների եւ դաժան վերաբերմունքի կիրառման առումով: Հետեւաբար, ոստիկանություն բերված անձանց համար այդ ժամանակահատվածում փաստաբան ունենալու հնարավորությունը դաժան վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիքներից մեկն է: Այդ հնարավորությունը զսլող միջոց կիանդիսանա այն անձանց համար, որոնք մտաղիր էին դաժան վերաբերմունք դրսեւորել ազատազրկված անձի հանդեսլ: Բացի այդ, փաստաբանը կարող է համապատասխան գործողություններ ձեռնարկել, եթե դաժան վերաբերմունքն արդեն իսկ տեղի է ունեցել: ԽԿԿ-ն հաստատում է, որ ոստիկանական հետաքննության իրավական շահերը սլաշտսլանելու համար կարող է անհրաժեշտություն լինել հետաձգելու ազատազրկված անձի՝ իր ընտրությամբ փաստաբան ունենալու իրավունքը: Սակայն դա չսլետք է բերի այդ իրավունքի սահմանափակմանը ողջ հարցաքննության ընթացքում: Այդ դեսլքերում սլետք է ասլահովել մեկ այլ անկախ փաստաբանի ներգրավումը:

Փաստաբան ունենալու իրավունքը սլետք է ներառի նրա հետ առանձին զրուցելու հնարավորությունը: Անձը սլետք է նաեւ հնարավորություն ունենա հարցաքննվել փաստաբանի ներկայությամբ: Բնականաբար, դա չսլետք է խոչընդոտի ձերբակալված անձին հրատապ հարցերի վերաբերյալ ոստիկանության կողմից հարցաքննության իրականացումը, նույնիսկ փաստաբանի բացակայության դեսլքում (որը կարող է անհասլաղ մատչելի չլինել), կամ բացառել հարցաքննության ընթացքը խանգարող փաստաբանի փոխարինումը: ԽԿԿ-ն նաեւ նշել է,

որ փաստաբանի մատչելիության իրավունքը պետք է ունենան ոչ միայն քրեական հանցագործություն կատարելու մեջ կասկածվողները, այլեւ ցանկացած անձ, որն օրենքով պարտավորված է ներկայանալ եւ մնալ ոստիկանության շենքում, օրինակ, որպես «վկա»: Բացի այդ, փաստաբան ունենալու իրավունքի լիարժեք իրականացման համար այդ իրավունքը պետք է ապահովել նաեւ փաստաբանական ծառայության դիմաց վճարելու հնարավորություն չունեցող անձանց համար:

42. Ոստիկանությունում արգելանքի տակ գտնվող անձանց նկատմամբ պետք է պաշտոնապես ճանաչվի բժշկի մատչելիության իրավունքը: Այլ կերպ ասած, անհապաղ պետք է բժիշկ հրավիրվի այն դեպքերում, երբ անձը պահանջում է բժշկական քննություն, ոստիկանության ծառայողները պետք է չխուսափեն այդ պահանջները կատարելուց: Ավելին, բժշկին դիմելու իրավունքը պետք է ներառի ազատազրկման մեջ գտնվող անձի իրավունքը բուժզննություն անցնել իր ընտրությամբ բժշկի մոտ (ի հավելումն ոստիկանության կողմից հրավիրված բժշկի կողմից բուժզննության): Ոստիկանությունում արգելանքի տակ գտնվող անձի բոլոր բուժզննությունները պետք է կատարվեն իրավապահ մարմինների լսելիության եւ տեսանելիության շրջանակներից դուրս, եթե բժիշկն այլ կերպ չի պահանջում: Նաեւ կարեւոր է, որ ոստիկանությունում արգելանքից ազատված անձը, որ չի բերվել դատարանի առաջ, իրավունք ունենա բժշկական տեղեկանք պահանջել դատական բժշկից:

43. Չերբակալության փաստի վերաբերյալ երրորդ կողմին տեղեկացնելու ձերբակալված անձի իրավունքը պետք է երաշխավորվի ոստիկանությունում արգելանքի տակ վերցվելու առաջին իսկ պահից: Անկասկած, ԽԿԿ-ն ընդունում է, որ այս իրավունքի իրականացումը կարող է ենթադրել որոշակի բացառություններ, որոնք ուղղված են ոստիկանական հետաքննության օրինական շահերի պաշտպանությանը: Սակայն այդ բացառությունները պետք է հստակ սահմանված լինեն եւ խիստ ժամանակային սահմանափակումներ ունենան, իսկ դրանց կիրառման դեպքում պետք է որոշակի երաշխիքներ ապահովվեն (օրինակ՝ ձերբակալության մասին տեղեակացնելու հետ կապված ուշացումները պետք է արձանագրվեն նշելով պատճառը, բացի այդ, պահանջվում է գործի հետ առնչություն չունեցող վերադաս պաշտոնյայի կամ դատախազի հավանությունը):

44. Իրենց ազատությունից զրկված անձանց իրավունքները կորցնում են իրենց արժեքը, եթե այդ անձինք տեղյակ չեն իրենց իրավունքների մասին: Հետեւաբար, շատ կարեւոր է, որ ոստիկանությունում արգելանքի տակ գտնվող անձանց անհապաղ տեղեկացնեն իրենց իրավունքների մասին՝ իրենց հասկանալի լեզվով: Այս դրույթը երաշխավորելու համար ոստիկանությունում արգելանքի տակ գտնվող անձանց առաջին իսկ պահից պետք է տրամադրեն իրենց իրավունքների մասին հստակ տեղեկացնող հուշաթերթիկներ: Անձը պետք է արձանագրություն ստորագրի իրավունքներին ծանոթանալու մասին:

Բազմաթիվ առիթներով ԽԿԿ-ն ընդգծել է դատական մարմինների եւ դատախազության դերը ոստիկանությունում դաժան վերաբերմունքի դեմ պայքարի գործում:

45. Օրինակ, ոստիկանության կողմից ձերբակալված անձինք, որոնց համար կալանք է նախատեսվում, պետք է ֆիզիկապես բերվեն դատավորի առաջ, որը քննելու է այդ հարցը: Նման պրակտիկան դեռեւս չի կիրառվում մի շարք երկրներում, որոնք այցելել է ԽԿԿ-ն: Անձին դատարանի առաջ բերելը հնարավորություն կտա կասկածյալին ժամանակին բողոք ներկայացնել դաժան վերաբերմունքի մասին: Եթե նույնիսկ նման բողոքը բացակայում է, դատավորը հնարավորություն կունենա ժամանակին քայլեր ձեռնարկել, եթե առկա են դաժան վերաբերմունքի այլ ցուցանիշներ (օրինակ՝ տեսանելի վնասվածքներ, անձի ընդհանուր տեսքը եւ հոգեկան վիճակը):

Բնականաբար, դատավորը պարտավոր է համապատասխան քայլեր ձեռնարկել, եթե առկա են հետքեր, որոնք խոսում են ոստիկանության կողմից հնարավոր դաժան վերաբերմունքի մասին: Այս առումով, ցանկացած դեպքում, երբ ոստիկանությունում արգելանքի տակ գտնվելուց հետո դատարանի առաջ բերված կասկածյալը հայտարարում է դաժան վերաբերմունքի մասին, դատավորը պետք է գրանցի այս հայտարարությունը, նշանակի դատաբժշկական փորձաքննություն եւ միջոցներ ձեռնարկի բողոքը պատշաճ քննելու համար: Նման մոտեցում պետք է ցուցաբերվի անկախ այն փաստից, թե արդյոք անձի վրա կան վնասվածքների տեսանելի հետքեր: Նույնիսկ դաժան վերաբերմունքի մասին բողոքի բացակայության դեպքում դատավորը պետք է դատաբժշկական փորձաքննություն պահանջի ցանկացած այն դեպքում, երբ առկա են այլ հիմքեր կասկածելու, որ դատարանի առաջ բերված անձը կարող է լինել դաժան վերաբերմունքի զոհ:

Իրավապահ մարմինների կողմից դաժան վերաբերմունքի մասին բոլոր բողոքների մանրակրկիտ քննությունը դատական կամ այլ մարմինների կողմից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ պատժի սահմանումը, զգալի զսպող ազդեցություն կունենա: Եւ հակառակը, եթե համապատասխան մարմինները նման բողոքների դեպքում արդյունավետ քայլեր չձեռնարկեն, իրավապահ մարմինների մոտ համոզմունք կձեւավորվի, որ նման գործողությունները անպատժելի են:

46. Երբեմն կարող է առաջանալ նախնական կալանքում գտնվող անձի լրացուցիչ հարցաքննության անհրաժեշտություն ոստիկանության կողմից: ԽԿԿ-ն գտնում է, որ դաժան վերաբերմունքի կանխարգելման նկատառումներով, գերադասելի կլինի, որ նման հարցաքննությունը տեղի ունենա քրեակատարողական, այլ ոչ ոստիկանական հաստատություններում: Նախնական կալանքում գտնվող անձի վերադարձը ոստիկանական հիմնարկ հետագա հարցաքննության համար պետք է հնարավոր լինի միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Անվիճելի է նաեւ այն, որ բացառիկ հանգամանքներում ոստիկանություն բերված նախնական կալանքի տակ գտնվող անձը պետք է օգտվի 40-րդ եւ 43-րդ կետերում նշված երեք իրավունքներից:

47. Ոստիկանությունում արգելանքի տակ գտնվելու տեւողությունը պետք է հնարավորինս կարճատեւ լինի: Ոստիկանական հիմնարկներում արգելանքի տակ գտնվելու ֆիզիկական պայմանները պետք է համապատասխանեն որոշ տարրական նյութական ապահովման պահանջներին:

Ոստիկանությունում գտնվող բոլոր խցերը պետք է ունենան պահվող մարդկանց քանակին համապատասխան չափեր (1), լուսավորում (այսինքն՝ բավարար կարդալու համար, բացառելով քնելու ժամերը) եւ օդափոխում: Գերադասելի է, որ խցերը սարքավորված լինեն հանգստի միջոցներով (օրինակ՝ հատակին ամրացված լինեն աթոռ կամ նստարան), իսկ գիշերը այնտեղ անցկացնող անձանց պետք է տրամադրվեն մաքուր ներքնակներ եւ վերմակներ:

Արգելանքի ենթարկված անձինք անհրաժեշտության դեպքում իրենց բնական պահանջները պետք է բավարարեն մաքուր եւ պատշաճ պայմաններում՝ ունենալով լվացվելու հարմարանքներ: Նրանք պետք է խմելու ջրի ազատ հնարավորություն ունենան, սնունդ ստանան համապատասխան ժամերին, եւ ամեն օր առնվազն մեկ անգամ լրիվ կերակուր (այսինքն՝ ավելի էական կերակուր, քան բուտերբրոտն է):

Ոստիկանությունում 24 կամ ավելի ժամ արգելանքի տակ պահվող անձինք հնարավորության դեպքում պետք է կարողանան ամեն օր դրսում զբոսնել:

ԽԿԿ այցելած ոստիկանական հիմնարկները չեն համապատասխանում այս նվազագույն չափանիշներին: Դա հատկապես վնասակար է այն անձանց համար, որոնք հետագայում

կանգնում են դատարանի առաջ: Հաճախ այդ անձինք կանգնում են դատարանի առաջ չկահավորված եւ կեղտոտ խցում մեկ կամ ավելի օր անցկացնելուց հետո՝ հնարավորություն չունենալով սնունդ ընդունել, լողանալ եւ հանգստանալ:

48. Արգելանքի տակ գտնվող անձանց մասին հոգ տանելու ոստիկանության պարտավորությունը ներառում է նաեւ նրանց անվտանգության ու ֆիզիկական ամբողջականության երաշխավորումը: Հետեւաբար, ազատազրկման վայրերի պատշաճ վերահսկողությունը կազմում է ոստիկանության հոգ տանելու պարտականության մի մասը: Համապատասխան քայլեր պետք է ձեռնարկվեն, որպեսզի արգելանքի տակ գտնվող անձինք հնարավորություն ունենան հաղորդակցվել անձնակազմի հետ:

    Մի շարք դեպքերում ԽԿԿ-ն հայտնաբերել է, որ խցերը հեռու են գտնվում ծառայողի սենյակից կամ նրանց գտնվելու կետերից եւ չկան այնպիսի միջոցներ, որոնք հնարավորություն կտան անձին ծառայողի ուշադրությունը հրավիրել (օրինակ՝ կանչի կոճակ): Նման պայմաններում վտանգ կա, որ տարբեր տեսակի միջադեպերի դեպքում (բռնություններ ազատազրկվածների միջեւ, ինքնասպանության փորձեր, հրդեհ եւ այլն) արձագանքը կարող է ժամանակավրեպ լինել:

49. ԽԿԿ-ն նաեւ իր մտահոգությունն է հայտնել որոշ երկրներում դիտարկված այն պրակտիկայի առնչությամբ, երբ ոստիկանական համակարգում մասնագիտացված յուրաքանչյուր բաժին (թմրանյութերի դեմ պայքարի, կազմակերպված հանցավորության դեմ պայքարի, հակաահաբեկչական) ունի ազատազրկման իր սեփական վայրը, որտեղ աշխատում են այդ բաժնի ծառայողները: Կոմիտեն գտնում է, որ նման մոտեցումը պետք է բացառել եւ ունենալ ձերբակալվածներին պահելու կենտրոնացված հիմնարկ, որում կաշխատեն ազատազրկված անձանց հետ վարվելու վերաբերյալ նախապատրաստում անցած ծառայողներ: Նման մոտեցումը բարենպաստ կլինի խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի կանխարգելման համար: Բացի այդ, մասնագիտացված բաժիններին ազատազրկման պարտականությունից ազատելը կարող է առավելություններ տալ կառավարման եւ նյութական ապահովման տեսանկյունից:

50. Վերջապես, ոստիկանական հաստատությունների վերահսկողությունն անկախ մարմինների կողմից կարող է էապես օգնել ոստիկանությունում պահվող անձանց նկատմամբ դաժան վերաբերմունքի կանխարգելմանը եւ ընդհանուր առմամբ ազատազրկման պայմանների բարելավմանը: Նման մարմնի կողմից այցելությունների արդյունավետության համար դրանք պետք է լինեն կանոնավոր եւ առանց նախազգուշացման, ու այդ մարմինները պետք է հնարավորություն ունենան առաձին զրուցել ազատազրկված անձանց հետ: Այդ մարմինները պետք է հետազոտեն ազատազրկված անձանց նկատմամբ վերաբերմունքին առնչվող բոլոր խնդիրները՝ ձերբակալության արձանագրություն, ազատազրկված անձին իր իրավունքները բացատրելու եւ այդ իրավունքներից օգտվելու մասին տեղեկություններ (մասնավորապես 40-րդ եւ 43-րդ պարբերություններում նշված երեք իրավունքները), կասկածյալների հարցաքննության կարգի վերաբերյալ կանոնների պահպանումը եւ ազատազրկման նյութական պայմանները:

    Այդ մարմինների կողմից հայտնաբերված փաստերը պետք է ներկայացվեն ոչ միայն ոստիկանությանը, այլ նաեւ ոստիկանությունից անկախ այլ մարմիններին:

III. Իրավապահ մարմինների անձնակազմի պատրաստումը

Քաղվածք 2-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (92) 3]

59. ԽԿԿ-ն ցանկանում է ընդգծել, թե ինչպիսի մեծ նշանակություն ունի իրավապահ անձնակազմի[1] պատրաստումը (որը պետք է ներառի մարդու իրավունքների հարցերի ուսուցումը՝ տես նաեւ Միացյալ Ազգերի Կազմակերպության խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա, հոդված 10): Ակնհայտ է, որ ազատազրկված անձի նկատմամբ դաժան վերաբերմունքի դեմ գոյություն չունի ավելի լավ երաշխիք, քան պատշաճ ձեւով պատրաստված ոստիկանության կամ բանտի աշխատակիցը: Բարձր որակավորում ունեցող աշխատակիցները կկարողանան հաջողությամբ կատարել իրենց պարտականությունները, առանց դաժան վերաբերմունքի դրսեւորման եւ պաշտպանել ոստիկանությունում ու բանտերում պահվող անձանց իրավունքների պաշտպանության հիմնական երաշխիքները:

60. Այս առումով, ԽԿԿ-ն գտնում է, որ իրավապահ անձնակազմի կադրերի ընտրության ժամանակ հիմնական չափանիշ պետք է հանդիսանա մարդկանց հետ շփվելու կարողությունը եւ ուսուցման ընթացքում զգալի շեշտ պետք է դրվի, մարդու արժանապատվության հարգանքի վրա հիմնված, միջանձնական շփման հմտությունների զարգացման վրա: Այդպիսի հմտություններին տիրապետելը ոստիկանին, կալանավայրի կամ ուղղիչ հիմնարկի աշխատակցին հաճախ հնարավորություն կտա լիցքաթափել իրավիճակը, որը հակառակ դեպքում կարող է վերածվել բռնության եւ, ավելի լայն իմաստով, կրերի լարվածության նվազեցմանը եւ կյանքի որակի բարձրացմանը ոստիկանական բաժանմունքներում, կալանավայրերում եւ ուղղիչ հիմնարկներում՝ ի օգուտ բոլոր շահագրգռված կողմերի[2]:

1 Այս հաշվետվությունում «իրավապահ անձնակազմ» հասկացությունը ընդգրկում է ոստիկանության եւ ուղղիչ հիմնարկների ծառայողներին:

2 ԽԿԿ-ն քաջալերում է ազգային իշխանություններին հնարավորություններ ստեղծել ընդգրկելու մարդու իրավունքների պաշտպանության հասկացությունները գործնական մասնագիտական վերապատրաստման ծրագրերի մեջ, որոնք ուղղված են մեծ վտանգ պարունակող իրավիճակների հաղթահարմանը, ինչպիսիք են՝ քրեական հանցանքի մեջ կասկածվող անձանց ձերբակալումը եւ հարցաքննումը. սա կլինի ավելի արդյունավետ, քան մարդու իրավունքների մասին առանձին դասընթացները:

VII. Ազատազրկված անչափահասներ

Քաղվածք 9-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (99) 12]

Նախնական դիտողություններ

20. ԽԿԿ-ն իր նախորդ մի քանի Ընդհանուր հաշվետվություններում ձեւակերպել է այն չափանիշները, որոնցով առաջնորդվում է իր աշխատանքի մեջ ազատազրկման տարբեր վայրերում, այդ թվում՝ ոստիկանական բաժանմունքներում, բանտերում, ազատազրկված ներգաղթողներին պահելու կենտրոններում, ինչպես նաեւ հոգեբուժարաններում:

    Կոմիտեն վերոհիշյալ չափանիշները անհրաժեշտ չափով կիրառում է եւ ազատազրկման պայմաններում գտնվող անչափահասների, այսինքն՝ 18 տարին չլրացած անձանց նկատմամբ: Այնուամենայնիվ, անկախ նրանց ազատազրկման պատճառներից, անչափահաս օրինախախտները ավելի անպաշտպան են, քան մեծահասակները: Դրա հետեւանքով հատուկ ուշադրություն է պետք նրանց ֆիզիկական եւ հոգեկան բարօրությունը համարժեք կերպով պաշտպանելու համար: Ընդգծելու համար այն նշանակությունը, որ նա տալիս է ազատազրկման պայմաններում անչափահասների նկատմամբ դաժան վերաբերմունքի հարցերին, ԽԿԿ-ն որոշել է իր 9-րդ Ընդհանուր հաշվետվության այս գլուխը նվիրել այդ բնագավառում իր գործունեության մի քանի կոնկրետ կողմերին:

    Հաջորդող բաժիններում նախքան ուշադրությունը այն պայմանների վրա կենտրոնացնելը, որոնք անհրաժեշտ է ստեղծել հատուկ անչափահասների համար նախատեսված ազատազրկման կենտրոններում, Կոմիտեն կներկայացնի դաժան վերաբերմունքի դեմ մի քանի երաշխիքներ, որոնք նրա կարծիքով պետք է կիրառվեն բոլոր ազատազրկված անչափահասների նկատմամբ: Այսպիսով, Կոմիտեն հույս ունի ազգային իշխանություններին հստակ կերպով ցույցադրել իր հայացքները, թե ինչպես պետք է վարվել նշված անձանց հետ: Ինչպես եւ նախորդ տարիներին, Կոմիտեն գոհունակությամբ կընդունի իր Ընդհանուր հաշվետվության այս հիմնական բաժնի վերաբերյալ դիտողությունները:

21. Հենց սկզբից Կոմիտեն կուզենար ընդգծել, որ տվյալ բնագավառում նրա մշակած բոլոր չափորոշիչները պետք է դիտել որպես հավելում միջազգային մյուս փաստաթղթերում պարունակվող սկզբունքների ամբողջությանը՝ ներառյալ Միացյալ Ազգերի Կազմակերպության Երեխայի իրավունքների կոնվենցիան (1989 թ.), Միացյալ Ազգերի Կազմակերպության Անչափահասների նկատմամբ արդարադատության կիրառման նվազագույն չափորոշիչ կանոնները (1985 թ. Պեկինյան կանոնները), Միացյալ Ազգերի Կազմակերպության Ազատազրկված անչափահասների պաշտպանության կանոնները (1990 թ.) եւ Միացյալ Ազգերի Կազմակեր-պության Անչափահասների հանցագործության կանխարգելման ղեկավար սկզբունքները (1990 թ. Ռիյադյան սկզբունքները):

    Կոմիտեն կուզենար նաեւ արտահայտել իր հավանությունը վերոհիշյալ փաստաթղթերում ամրագրված այն հիմնարար սկզբունքին, որ անչափահասների ազատազրկումը պետք է կիրառել միայն որպես ծայրահեղ միջոց եւ ամենակարճ ժամկետով (տե՛ս Երեխայի իրավունքների կոնվենցիայի 37 b. հոդվածը, ինչպես նաեւ Պեկինյան կանոնների 13 եւ 19 կանոնները):

Երաշխիքներ անչափահասների նկատմամբ դաժան վերաբերմունքի դեմ

22. Նկատի առնելով ԽԿԿ-ի մանդատը՝ անչափահասների ազատազրկման վայրերը կատարած այցելությունների ժամանակ նրա գլխավոր առաջնահերթ խնդիրն է բացահայտել, ենթարկվել են արդյոք նրանք դիտավորյալ դաժան վերաբերմունքի: Կոմիտեի տրամադրության տակ եղած տվյալները վկայում են, որ իր այցելած հիմնարկների մեծ մասում այդպիսի երեւույթները համեմատաբար սակավ են հանդիպում:

23. Այնուամենայնիվ, ինչպես եւ չափահասների դեպքում, ակներեւաբար դիտավորյալ դաժան վերաբերմունքի վտանգին անչափահասները ենթարկվում են ոստիկանական հիմնարկներում ավելի, քան ազատազրկման մյուս վայրերում: Իրոք, ԽԿԿ-ի պատվիրակությունները բազմիցս ստացել են անհերքելի վկայություններ այն մասին, որ անչափահասները եղել են ոստիկանության ներկայացուցիչների կողմից խոշտանգումների կամ այլ կարգի դաժան վերաբերմունքի ենթարկված անձանց մեջ:

    Այդ կապակցությամբ ԽԿԿ-ն ընդգծել է, որ ձերբակալվելուց հետո հատկապես սկզբնական շրջանում խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի վտանգը առավելագույնն է: Հետեւաբար, կարեւոր է, որ բոլոր ազատազրկված անձինք (այդ թվում եւ անչափահասները), ոստիկանության կողմից ձերբակալվելու առաջին իսկ պահից իրավունք ունենան հայտնելու իրենց ազգականին կամ որեւէ երրորդ անձի իրենց ազատազրկման փաստի մասին, ինչպես նաեւ հնարավորություն ունենան դիմելու փաստաբանի ու բժշկի օգնությանը:

    Բացի նշված երաշխիքներից եւ դրանց հետ մեկտեղ որոշ իրավական համակարգեր պնդում են, որ անչափահասներին ներհատուկ անպաշտպանության պատճառով պետք է լրացուցիչ նախազգուշական միջոցներ ձեռք առնել: Դա ենթադրում է ոստիկանական ծառայողների վրա պաշտոնական պարտականություն դնել, որ իրենք համապատասխան անձանց հայտնեն անչափահասի ձերբակալման մասին (անկախ այն բանից, դիմել է անչափահասը այդպիսի խնդրանքով, թե ոչ): Կարող են լինել եւ դեպքեր, երբ ոստիկանները իրավունք չունենան հարցաքննել անչափահասին առանց համապատասխան անձի եւ/կամ փաստաբանի ներկայության: ԽԿԿ-ն ողջունում է այդպիսի մոտեցումը:

24. ԽԿԿ-ի այցելած մի շարք հիմնարկներում նրա անդամները առիթ են ունեցել լսելու, որ անձնակազմի մեջ բավական տարածված պրակտիկա է անչափահասի վատ պահելու դեպքում «դաստիարակչական ապտակը»: Կոմիտեն գտնում է, որ դաժան վերաբերմունքի կանխման նպատակով ֆիզիկական պատժի բոլոր ձեւերը պետք է պաշտոնապես արգելվեն եւ պրակտիկայում չկիրառվեն: Իրենց վատ պահող արգելանքի կամ կալանքի տակ գտնվող անչափահասների հետ պետք է վարվել հրահանգված կարգապահական նորմերի համապատասխան:

25. Կոմիտեի աշխատանքի փորձը նաեւ ցույց է տալիս, որ այն դեպքերում, երբ առկա է անչափահասների նկատմամբ դաժան վերաբերմունք, ավելի հաճախ դա արդյունք է չարաշահումներից ձերբակալվածների համարժեք պաշտպանության համակարգի բացակայության, քան տառապանք պատճառելու դիտավորյալ ցանկության: Նման չարաշահումների կանխարգելմանն ուղղված յուրաքանչյուր ռազմավարության կարեւոր տարրն է այն սկզբունքի պահպանումը, որի համաձայն անչափահասները պետք է տեղավորվեն մեծահասակներից առանձին:

    Այդ սկզբունքը չպահպանելու օրինակները, որոնց հանդիպել է ԽԿԿ-ն, ներառում էին դեպքեր, երբ հասուն տղամարդիկ հաճախ դիտավորյալ տեղավորված էին անչափահաս պատանիների հետ նույն խցերում այն նպատակով, որ նրանք պահպանեն կարգուկանոնը այդ խցերում. անչափահաս աղջիկները տեղավորված էին հասուն կանանց հետ միասին. անչափահաս հոգեկան հիվանդները գտնվում էին քրոնիկական հիվանդ մեծահասակների հետ նույն սենյակում:

Կոմիտեն ընդունում է բացառիկ պայմանների առկայությունը (օրինակ՝ երեխաներն ու ծնողները պահվում են որպես ազատազրկված ներգաղթողներ), որի դեպքում միանգամայն աներկբայո-րեն, անչափահասների շահերից ելնելով, օրինաչափ է նրանց չբաժանել որոշ չափահասներից: Սակայն անչափահասներին իրենց հետ ազգակցական կապ չունեցող մեծահասակների հետ տեղավորելը անխուսափելիորեն հանգեցնում է ճնշումների եւ շահագործման:

26. Անձնակազմի՝ տարբեր սեռերի մարդկանցից կազմված լինելը եւս մի երաշխիք է ազատազրկման վայրերում հատկապես անչափահասների նկատմամբ դաժան վերաբերմունքի դեմ: Որպես աշխատակից երկու սեռերի ներկայացուցիչների առկայությունը կարող է նպաստավոր ազդեցություն թողնել ազատազրկման վայրում հոգեբանական բարենպաստ մթնոլորտ եւ նորմալ իրավիճակի զգացողություն ստեղծելու վրա:

    Տարբեր սեռերի մարդկանցից բաղկացած անձնակազմը կարող է նաեւ ավելի արդյունավետ կերպով լուծել այնպիսի նրբանկատ հարցեր, ինչպես, ասենք, խուզարկություններն են: Այս կապակցությամբ ԽԿԿ-ն կուզենար ընդգծել, որ անկախ տարիքից, ազատազրկված անձինք պետք է խուզարկվեն միայն իրենց սեռի ներկայացուցիչների կողմից, եւ ամեն մի խուզարկություն, որը պահանջում է հագուստները հանել, պետք է կատարվի հակառակ սեռի աշխատակիցների տեսադաշտից դուրս. այդ սկզբունքները a fortiory պետք է կիրառել անչափահասների նկատմամբ:

27. Վերջապես, մի շարք այցելված հիմնարկներում ԽԿԿ-ն բացահայտել է, որ անչափահասների հետ անմիջական շփման մեջ գտնվող անձնակազմը միանգամայն բացահայտ մահակներ է կրում: Նման պրակտիկան չի կարող նպաստել անձնակազմի եւ բանտարկյալների միջեւ դրական փոխհարաբերությունների զարգացմանը: Գերադասելի է, որ նշված հիմնարկների անձնակազմը ընդհանրապես մահակներ չկրի: Իսկ եթե այնուամենայնիվ անձնակազմի համար մահակներ կրելը անհրաժեշտ է, ապա ԽԿԿ-ն խորհուրդ է տալիս, որ դա արվի ոչ այդքան բացահայտ:

VIII. Ազատազրկված կանայք

Քաղվածք 10-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (2000) 13]

Նախնական դիտողություններ

21. ԽԿԿ-ն իր նախորդ մի քանի ընդհանուր հաշվետվություններում ձեւակերպել է այն չափանիշները, որոնցով նա առաջնորդվում է իր աշխատանքի մեջ ազատազրկման տարբեր վայրերում, այդ թվում՝ ոստիկանական բաժանմունքներում, բանտերում, ազատազրկված ներգաղթողների պահման կենտրոններում, հոգեբուժարաններում, ինչպես նաեւ անչափահաս անձանց կալանավայրերում:

    Բնական է, որ Կոմիտեն վերոհիշյալ չափանիշները կիրառում է ազատազրկված եւ՛ կանանց, եւ՛ տղամարդկանց նկատմամբ: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններում ազատազրկված կանայք այնուամենայնիվ կազմում են ազատազրկված անձանց համեմատաբար փոքր մասը: Կանանց կալանքի տակ պահելու համար առանձին հատկացումներ կատարելը պետությունների համար կապված է մեծ ծախսերի հետ: Կանայք (երբեմն տնից եւ իրենց խնամքի տակ գտնվող երեխաներից հեռու) հաճախ պահվում են ի սկզբանե տղամարդկանց համար նախատեսված ոչ մեծ թվով շինություններում (որտեղ կարող են պահվել եւ տղամարդիկ): Այս պարագաներում անհրաժեշտ է հատուկ ջանքեր գործադրել ազատազրկված կանանց անվտանգ եւ բարեկեցիկ միջավայրում պահելու ապահովման համար:

    Ընդգծելով ազատազրկված կանանց նկատմամբ վատ վերաբերմունքի կանխման կարեւորությունը՝ ԽԿԿ-ն որոշեց 10-րդ Ընդհանուր հաշվետվության այս գլուխը նվիրել տվյալ բնագավառում իր կողմից հետապնդվող որոշ կոնկրետ խնդիրներին: Կոմիտեն հուսով է, որ այսպիսով նա հնարավորություն կտա ազգային իշխանություններին ստույգ պատկերացումներ կազմել Կոմիտեի տեսակետների մասին՝ ինչ վերաբերում է ազատազրկված կանանց հետ վարվեցողությանը: Ինչպես եւ նախորդ տարիներին, ԽԿԿ-ն գոհունակությամբ կընդունի իր Ընդհանուր հաշվետվության այս հիմնական բաժնի վերաբերյալ դիտողությունները:

22. Ի սկզբանե, պետք է ընդգծել, որ սույն գլխում շարադրված խնդիրների վերաբերյալ ԽԿԿ-ի մտահոգությունները առկա են անկախ նրանից, թե ինչ բնույթի կալանավայրի մասին է խոսքը: ԽԿԿ-ի փորձը ցույց է տալիս, որ ազատազրկված կանանց ֆիզիկական եւ/ կամ հոգեբանական վիճակին սպառնացող վտանգը կարող է ավելի մեծ լինել իրենց ձերբակալմանն անմիջապես հաջորդող ժամանակահատվածում: Հետեւաբար, պետք է հատուկ ուշադրություն դարձնել, որ այդ ժամանակահատվածում ապահովվեն ներքոհիշյալ բաժիններում շարադրված չափանիշները:

    Կոմիտեն ցանկանում է հատուկ նշել, որ այս բնագավառում իր կողմից մշակվող ստանդարտները պետք է դիտվեն որպես լրացում այն ստանդարտներին, որոնք ամրագրված են այլ միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում, Միացյալ Ազգերի Կազմակերպության Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում, Միացյալ Ազգերի Կազմակերպության Կանանց դեմ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիայում եւ Միացյալ Ազգերի Կազմակերպության Ցանկացած ձեւի կալանքի կամ բանտարկության մեջ գտնվող բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների հավաքածուի մեջ:

Անձնակազմի համալրումը տարբեր սեռի ներկայացուցիչներով

23. Ինչպես ընդգծված է ԽԿԿ-ի 9-րդ Ընդհանուր հաշվետվությունում, անձնակազմի համալրումը տարբեր սեռի ներկայացուցիչներով ուղղիչ հիմնարկներում հանդիսանում է դաժան վերաբերմունքի դեմ ուղղված կարեւոր երաշխիք: Տղամարդկանցից ու կանանցից բաղկացած անձնակազմի առկայությունը կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ ինչպես պահելու բնույթի, այնպես էլ նորմալ մթնոլորտի ստեղծման վրա:

    Անձնակազմի համալրումը տարբեր սեռի ներկայացուցիչներով նաեւ թույլ է տալիս կատարել անձնակազմի համապատասխան տեղաբաշխումներ՝ տվյալ սեռի համար յուրահատուկ հանձնարարականներ կատարելիս (ինչպես օրինակ՝ խուզարկություն կատարելիս): Այս համատեքստում ԽԿԿ-ն ցանկանում է նորից ընդգծել, որ ազատազրկված անձինք պետք է խուզարկվեն միայն նույն սեռի ծառայողների կողմից, եւ յուրաքանչյուր խուզարկություն, որը պահանջում է հագուստը հանել, պետք է կատարվի հակառակ սեռի տեսադաշտից դուրս:

Ազատազրկված կանանց անջատ բնակեցումը

24. Պետության կողմից ազատազրկված անձանց նկատմամբ ցուցաբերող հոգատարության պարտավորությունը ներառում է՝ պարտավորություն պաշտպանելու նրանց այլ անձանցից, ովքեր փորձում են նրանց վնաս հասցնել: ԽԿԿ-ն ժամանակ առ ժամանակ հանդիպել է կանանց միջեւ անվայել վերաբերմունքի դեպքերի: Այնուամենայնիվ, կանանց նկատմամբ տղամարդկանց կողմից դաժան վերաբերմունքի (մասնավորապես սեռական հետապնդումների, այդ թվում՝ նաեւ խոսքային վիրավորանքների) դեպքերը ավելի հաճախակի են տեղի ունենում, հատկապես, երբ չի ապահովվում ազատազրկված կանանց անջատ ապրելատեղը, որը մեծ մասամբ հսկվում է կին ծառայողների կողմից:

    Որպես սկզբունք, ազատազրկված կանայք պետք է պահվեն այնպիսի ապրելատեղերում, որոնք ֆիզիկապես առանձնացված են նույն հիմնարկում պահվող տղամարդկանցից: Այնուամենայնիվ, որոշ պետություններ սկսել են միջոցներ ձեռնարկել զույգերին (որոնցից յուրաքանչյուրը ազատազրկված է) միասին տեղավորելու ուղղությամբ եւ/կամ, որպեսզի ուղղիչ հիմնարկներում այս կամ այն չափով համատեղ պահվեն տարբեր սեռի ներկայացուցիչները: ԽԿԿ-ն ողջունում է այսպիսի առաջադեմ քայլերը այն պայմանով, որ նրանք կատարվեն տվյալ ազատազրկված անձանց համաձայնությամբ, նրանց զգուշավոր ընտրությամբ եւ համապատասխան հսկողությամբ:

Գործունեությամբ զբաղվելու հավասար հնարավորություններ

25. Ազատազրկված կանայք պետք է հնարավորություն ունենան զբաղվելու իմաստալից գործունեությամբ (աշխատանք, վերապատրաստում, կրթություն, սպորտ եւ այլն) տղամարդ բանտարկյալների հետ հավասար հիմունքներով: Ինչպես նշել է Կոմիտեն իր վերջին Ընդհանուր հաշվետվությունում, ԽԿԿ-ի պատվիրակությունները չափից ավելի հաճախ հանդիպում են դեպքերի, երբ ազատազրկված կանայք զբաղվում են այնպիսի գործունեությամբ, որը իրենց համար համարվում է «համապատասխան» (օրինակ՝ կարը կամ ձեռքի աշխատանքը) այն դեպքում, երբ տղամարդկանց հնարավորություն է տրվում ստանալու շատ ավելի բարձր մասնագիտական բնույթի ուսուցում:

    ԽԿԿ-ի տեսակետից այսպիսի խտրական մոտեցումը կարող է ծառայել միայն կանանց սոցիալական դերի մասին գոյություն ունեցող կարծրատիպերի ուժեղացմանը: Ավելին, հանգամանքներից ելնելով, ռեժիմով նախատեսված գործունեության ձեւերից հավասար հիմունքներով կանանց օգտվելու հնարավորության մերժումը կարող է դասվել որպես արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք:

Նախածննդյան եւ հետծննդյան խնամք

26. Ամեն ջանք պետք է գործադրվի, որպեսզի բավարարվեն ազատազրկված հղի կանանց սննդի յուրահատուկ դիետիկ պահանջմունքները: Նրանք պետք է ստանան պրոտեինով հարուստ եւ թարմ մրգերից ու բանջարեղենից բաղկացած սնունդ:

27. Պարզ է, որ երեխաները չպետք է ծնվեն ուղղիչ հիմնարկներում, եւ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, սովորաբար ազատազրկված հղի կանանց անհրաժեշտ պահին տեղափոխում են հանրային հիվանդանոցներ:

    Միևչդեռ, երբեմն, ԽԿԿ-ն հանդիպում է այնպիսի դեպքերի, երբ հղի կանանց գինեկոլոգիական զննման կամ ծննդաբերության ժամանակ նեղում կամ գամում են մահճակալին կամ որեւէ կահույքի: Այսպիսի մոտեցումը լիովին անընդունելի է եւ կարող է, իհարկե, որակավորվել որպես անմարդկային եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Հնարավոր է եւ պետք է գտնել անվտանգության պահանջները բավարարող այլ միջոցներ:

28. Ուղղիչ հիմնարկներում շատ կանայք երեխաների եւ այլոց հիմնական խնամողներն են, իսկ ազատազրկումը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ վերջիններիս վրա3:

    Այս կոնտեքստում նորածինների եւ մանուկների իրենց մայրերի հետ մնալու հարցը, եթե դա առկա է, եւ դրա ժամկետը չափազանց բարդ խնդիրներ են: Պարզ է, որ ազատազրկման վայրը նորածինների եւ մանուկների համար հարմար միջավայր չէ, մինչդեռ մայրերի եւ երեխաների բռնի բաժանումը նույնպես խիստ անցանկալի է:

29. ԽԿԿ-ի տեսակետից, բոլոր դեպքերում երեխայի բարեկեցությունը պետք է լինի ղեկավար սկզբունք: Սա մասնավորապես ենթադրում է, որ ազատազրկման վայրում նախածննդյան եւ հետծննդյան խնամքը պետք է համարժեք լինի տվյալ հասարակության մեջ ազատության պայմաններում տրվող խնամքին: Այսպիսի պայմաններում նորածինների եւ մանուկների նկատմամբ վարվեցողությունը պետք է վերահսկվի սոցիալական աշխատանքի եւ երեխաների զարգացման հարցերով զբաղվող մասնագետների կողմից: Նպատակը պետք է լինի երեխայի համար այնպիսի միջավայր ստեղծելը, որը զերծ է բանտին բնորոշ հատկանիշներից, ինչպիսիք են, օրինակ՝ համազգեստը, բանալիներից առաջացած աղմուկը: Անհրաժեշտ է նաեւ այնպիսի միջոցներ ձեռնարկել, որոնք կապահովեն ուղղիչ հիմնարկներում երեխաների շարժողական եւ ճանաչողական ունակությունների բնական զարգացումը:

    Իրենց պահելու վայրերում նրանք մասնավորապես պետք է ունենան խաղալու եւ վարժություններ կատարելու համապատասխան հարմարություններ, իսկ հնարավորության դեպքում կարողանան դուրս գալ հիմնարկից եւ ապրել սովորական կյանքով՝ այդ պատերից դուրս:

    Միաժամանակ, աջակցելով ուղղիչ հիմնարկից դուրս գտնվող ընտանիքի անդամների մասնակցությանը երեխայի խնամքին, կարելի է նպաստել այդ հոգսի թեթեւացմանը (օրինակ՝ երեխայի հոր կողմից): Այն դեպքում, երբ դա հնարավոր չէ, պետք է քննարկվի մսուրային պայմանների հնարավորությունը: Այդպիսի նախաձեռնությունները կարող են նպաստել ազատազրկված կանանց ավելի լայն մասնակցությանը աշխատանքին եւ ուղղիչ հիմնարկներում իրականացվող այլ միջոցառումներին, քան դա հնարավոր կլիներ այլ պայմաններում:

Հիգիենայի եւ առողջության խնդիրները

30. Կոմիտեն ցանկանում է նաեւ Կողմերի ուշադրությունը հրավիրել հիգիենայի եւ առողջության հետ կապված մի շարք խնդիրների վրա: Ազատազրկված կանանց պահանջները, այդ առումով, զգալիորեն տարբերվում են տղամարդկանց պահանջներից:

3 Տե՛ս նաեւ բանտերում մայրերի եւ մանուկների վերաբերյալ՝ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1469 (2000) հանձնարարականը:

31. Կանանց հիգիենայի յուրահատուկ պահանջները պետք է բավարարվեն համապատասխան ձեւով: Կարեւոր նշանակություն ունեն սանիտարական եւ լվացվելու միջոցներից անմիջապես օգտվելու հնարավորությունը, արյունով աղտոտված իրերի անվտանգ թափումը, այնպիսի հիգիենիկ իրերով ապահովվածությունը, ինչպիսիք են սանիտարական միջադիրները եւ տամպոնները:

    Առաջին անհրաժեշտության պարագաների բացակայությունը համարժեք է նվաստացնող վերաբերմունքի:

32. Էական նշանակություն ունի նաեւ այն հանգամանքը, որ ազատազրկված անձանց բուժսպասարկման մակարդակը համապատասխանի տվյալ հասարակությունում ազատության պայմաններում գտնվող հիվանդանոցների բուժսպասարկման մակարդակին:

    Ինչ վերաբերում է ազատազրկված կանանց, ապա բժշկական սպասարկման համարժեքության սկզբունքի իրագործման ապահովումը պահանջում է, որ բուժսպասարկումը կատարվի կանանց հիվանդությունների, այդ թվում՝ գինեկոլոգիայի գծով հատուկ ուսուցում ստացած բժիշկների եւ բուժքույրերի կողմից:

    Բացի դրանից, ազատազրկված կանայք պետք է նույն չափով, ինչ չափով դա առկա է տվյալ հասարակությունում ազատության պայմաններում գտնվող կանանց համար, ընդգրկվեն կանանց համար բնորոշ բժշկական պրոֆիլակտիկ հետազոտություններում, ինչպիսիք են՝ կրծքագեղձի եւ արգանդի վզիկի քաղցկեղի ախտորոշումը:

    Բժշկական սպասարկման համարժեքության սկզբունքը պահանջում է, որ ազատազրկման վայրում պաշտպանվի կնոջ մարմնական ամբողջականության իրավունքը: Այսպես կոչված «հաջորդ առավոտ» հաբերը կամ/եւ հղիությունը ուշ շրջանում դադարեցնելու այլ միջոցները ազատազրկված կանանց համար պետք է նույն պայմաններով մատչելի լինեն, ինչպես դա մատչելի է ազատության մեջ ապրող կանանց համար:

33. Որպես սկզբունք, կանայք, որոնք բուժման կուրսը սկսել են ազատազրկումից առաջ, պետք է հնարավորություն ունենան շարունակելու այն ազատազրկման պայմաններում: Այս համատեքստում պետք է ջանքեր տարվեն, որ ազատազրկման վայրերում կանանց համար անհրաժեշտ համապատասխան դեղամիջոցները մատչելի լինեն:

    Ինչ վերաբերում է, մասնավորապես, հակաբեղմնավորիչ դեղամիջոցներին, ապա դրանք պետք է նշանակվեն ոչ միայն բեղմնավորումը կանխարգելելու, այլ նաեւ բժշկական նպատակներով (օրինակ՝ դաշտանի ցավերը մեղմացնելու համար): Այն փաստը, որ կնոջ կալանքի տակ գտնվելը ինքնըստինքյան խիստ նվազեցնում է հղիության հավանականությունը, չի կարող այդպիսի դեղամիջոցներ չտրամադրելու բավարար պատճառ դառնալ:

Հավելված 3.
Լրացուցիչ տեղեկություններ եւ կազմակերպություններ

Միջկառավարական կազմակերպություններ (IGO)

Մարդու եւ ժողովուրդների իրավունքների Աֆրիկյան հանձնաժողով

90 Kairaba Avenue
P.O.Box 673
Բանժուլ
Գամբիա
Հեռ.՝ +220 392962; 372070
Ֆաքս՝ +220 390764
Էլ.փոստ՝ idoc@achpr.org
http://www.achpr.org/

Եվրոպայի խորհուրդ

F - 67075 Ստրասբուրգ, Սեդեքս
Ֆրանսիա
Հեռ.՝ +33-3-88 41 20 18
Ֆաքս՝ +33-3-88 41 27 30
http://www.echr.coe.int/

Մարդու իրավունքների Միջամերիկյան հանձնաժողով

Մարդու իրավունքների Միջամերիկյան հանձնաժողով
1889 F St., NW
Վաշինգտոն, O.K.,
ԱՄՆ,2006
Հեռ.՝ + 1-202-458 6002
Ֆաքս՝ + 1-202-458 3992
Էլ,փոստ՝ cidhoea@oas.org
http://www.cidh.oas.org/

Մարդու իրավունքների Միջամերիկյան դատարան

Մարդու իրավունքների Միջամմերիկյան դատարան
Apdo 6906-1000
Սան Խոսե Կոստա Ռիկա
Հեռ.՝ +506-234 0581, +506-225 3333
Ֆաքս՝ +506-234 0584
Էլ.փոստ՝ corteidh@sol.racsa.co.cr
http://www1.umn.edu/humanrts/iachr/iachr.html

Մարդու իրավունքների Միջամերիկյան ինստիտուտ

A.P. 10.081-1000
Սան Խոսե, Կոստա Ռիկա
Հեռ.՝+ 506-234 0404
Ֆաքս՝ + 506-234 0955
Էլ.փոստ՝ instituto@iidh.ed.cr
http://www.iidh.ed.cr/

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ

OHCHR-UNOG
CH 1211 Ժնեւ, Շվեյցարիա
Հեռ.՝ +41-22-917 9000
Ֆաքս՝ +41-22-917 0099
Էլ.փոստ՝ webadmin.hchr@unog.ch
http://www.unhchr.ch/

Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն

Ժողովրդավարական ինստիտուտների եւ մարդու իրավունքների Գրասենյակ

Ալեյե Ույազդովսկի, 19
00-557 Վարշավա
Լեհաստան
Հեռ.՝ +48-22-520 06 00
Ֆաքս՝ +48-22-520 06 05
Էլ.փոստ՝ office@odihr.osce.waw.pl
http://www.osce.org/odihr/

Հասարակական կազմակերպություններ (NGO) եւ մասնագիտացված միավորումներ

Փոխհատուցում (Redress)

3-րդ հարկ
87 Vauxhall Walk
Լոնդոն SE11 5HJ
Անգլիա
Հեռ.՝ +44 207 7793 1777
Ֆաքս՝ +44 207 7793 1719
Էլ.փոստ՝ redresstrust@gn.apc.org
Web URL: www.redress.org

Բժիշկները հանուն մարդու իրավունքների (PHR)

100 Boylston St.
Suite 702
Բոստոն, MA 02116
ԱՄՆ
Հեռ.՝ +1-617-695 0041
Ֆաքս՝ +1-617-695 0307
Էլ.փոստ՝ phrusa@igc.apc.org
http://www.phrusa.org

Դատավորների միջազգային ընկերակցություն

Palazzo di Giustizia
Piazza Cavour
00193 Հռոմ
Իտալիա
Հեռ.՝ +39 066 883 2213
Ֆաքս՝ + 39 066 87 1195
Էլ.փոստ՝ secretariat@iaj-uim.org
http://www.iaj-uim.org

Իրավաբանների միջազգային հանձնաժողով

P.O.Box 216
81a Avenue de Chatelaine
1219 Ժնեւ
Շվեյցարիա
Հեռ.՝ +41 22 979 3800
Ֆաքս՝ +41 22 979 3801
Էլ.փոստ՝ info@icj.org
http://www.icj.org

Խոշտանգումների կանխարգելման ընկերակցություն (Association for prevention of torture, APT)

Route de Ferney 10
Փոստ.արկղ 2267
CH-1211 Ժնեւ 2
Շվեյցարիա
Հեռ. +41-22-734 2088`
Ֆաքս` +41-22-734 5649
Էլ.փոստ` apt@apt.ch
http://www.apt.ch/

Խոշտանգումների կանխարգելման համաշխարհային կազմակերպություն (OMCT)

Միջազգային քարտուղարություն
PO Box 35 - 37 Rue de Varembu
CH1211 Ժնեւ CIC 20
Շվեյցարիա
Հեռ.` + 41-22 -733 3140
Ֆաքս` + 41-22 -733 1051
Էլ.փոստ` omct@omct.org
http://www.omct.org/

Խոշտանգումների զոհերի վերականգնման կենտրոն (IRCT)

P,O,Box 2107
DK-1014 Կոպենհագեն
Դանիա
Հեռ.` + 45-33-76 06 00
Ֆաքս` + 45-33-76 05 00
Էլ.փոստ` irct@irct.org
http://www.irct.org (Պարունակում է հասցեներ եւ այլ տեղեկություններ մի շարք երկրներում խոշտանգումների զոհերի վերականգնման կենտրոնների հետ կապերի համար)

Կարմիր Խաչի միջազգային կոմիտե (ICRC)

19 Avenue de la Paix
CH 1202 Ժնեւ
Շվեյցարիա
Հեռ.` + 41-22-734 60 01
Ֆաքս` + 41-22-733 20 57 (Public Information Centre)
Էլ.փոստ` webmaster.gva@icrc.org
http://www.icrc.org/

Համաշխարհային բժշկական ընկերակցություն (WMA)

PO box 63
01212 Ferney-Voltaire Cedex
Ֆրանսիա
Հեռ.՝ +33-4-50 40 75 75
Ֆաքս՝ +33-4-50 40 59 37
Էլ.փոստ՝ info@wma.net
http://www.wma.net/

Մարդու իրավունքների իրավաբանների կոմիտե (LCHR)

333 Seventh Avenue, 13 rd Floor
Նյու Յորք, NY10001
ԱՄՆ
Հեռ.՝ +1-212-845 5200
Ֆաքս՝ + 1-212-845 5299
Էլ.փոստ՝ lchrbin@lchr.org
http://www.lchr.org/

Մարդու իրավունքների միջազգային ծառայություն (ISHR)

1 Rue de Varembe
P.O.Box 16
Ch-1211 Ժնեւ CIC
Շվեյցարիա
Հեռ.՝ +41-22-733 5123
Ֆաքս՝ +41-22-733 0826

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիա (FIDH)

17 Passage de la Main d'Or
75011 Փարիզ, Ֆրանսիա
Հեռ.՝ + 33-1-43 55 25 18
Ֆաքս՝ +33-1-43 55 18 80
Էլ.փոստ՝ fidh@csi.com
http://www.fidh.imaginet.fr/

Մարդու իրավունքների հելսինկյան ֆեդերացիա

Rummelhardtg.2/18
A-1090 Վիեննա
Ավստրիա
Հեռ.՝ + 43-1-408 88 22
Ֆաքս՝ + 43-1-408 88 22-50
Էլ.փոստ՝ office@ihr-hr.org
http://www.ihf-hr.org/

Միջազգային համաներում (Amnesty International)

Միջազգային քարտուղարություն
1 Իսքըն փողոց
Լոնդոն WC1X 8DJ
ՄԹ
Հեռ.՝ +44 20 7413 5500
Ֆաքս՝ +44 20 7956 1157
Էլ.փոստ՝ amnestyis@amnesty.org
http://www.amnesty.org/

Միջազգային բանտային բարեփոխում (PRI)

Unit 114, The Chandlery
50 Westminster Bridge Rd
Լոնդոն SE1 7QY
Անգլիա
Հեռ.՝ +44 171 721 7678
Ֆաքս՝ + 44 171 721 8785
Էլ.փոստ՝ Headofsecretariat@pri.org.uk
http://www.penalreform.org

Փաստաբանների միջազգային կոլեգիա

271 Regents St
Լոնդոն W1B 2AQ
Անգլիա
Հեռ.՝ +44 20 7629 12 06
Ֆաքս՝ +44 20 7409 046
http://www.ibanet.org

Human Rights Watch

350 Fifth Avenue, 34 th Floor
Նյու Յորք, NY
10118-3299 ԱՄՆ
Հեռ.՝ + 1-212-290 4700
Ֆաքս՝ +1-212-736 1300
Էլ.փոստ՝ hrwnyc@hrw.org
http://www.hrw.org/

Հավելված 4.
Մարդու իրավունքների որոշ փաստաթղթերի վավերացման կարգավիճակի աղյուսակ

Մարդու իրավունքների որոշ միջազգային պայմանագրերի վավերացման կարգավիճակը 2002 թ-ի օգոստոսի 21-ի դրությամբ

(1) (Միջազգային դաշնագիր քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին (CCPR)

(2) Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին միջազգային կոնվենցիա (CERD)

(3) Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին Կոնվենցիա (CEDAW)

(4) Կոնվենցիա խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի տեսակների դեմ (CAT)

(5) Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիա (CRC)

Ստորեւ բերված պետությունների աղյուսակում ներկայացված է, թե որոնք են վավերացրել (նշված է միանալու ամսաթիվը՝ վավերացում, միացում կամ իրավահաջորդություն) կամ ստորագրել (նշված է «s»-ով եւ ստորագրման ամսաթիվը) ՄԱԿ-ի վերը նշված մարդու իրավունքների պայմանագրերին:

ԵՐԿԻՐ	CCPR	CERD	CEDAW	CAT	CRC
Աղրբեջան	13.08. 92	16.08. 96	10.07. 83	16.08. 96	13.08. 92
Ալբանիա	04.10 91	11.05 94	11.05 94	11.05 94	27.02 92
Ալժիր	12.09. 89	14.02.72	22.05.96	12.09.89	16 .04.93
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	08 .06.92	21.11.94	*17 07. 80 (s)*	21.10. 94	*16.02. 92 (s)*
Անդորա	*05 .08.02 (s)*	*05.08.02 (s)*	15.01.97	*05.08.02 (s)*	02.01. 96
Անգոլա	10 .01. 92		17.09. 86		06.12.90
Անտիգուա Եւ Բարբուդա	25.10.88	01 .08. 89	19.07. 93	06.10. 93	
Ավստրալիա	13.08.80	30.09.75	28.07.83	08.08. 89	17.12. 90
Ավստրիա	10.09.78	09.05.72	31.03.82	29.07.87	06.08. 92
Արաբական Միացյալ Էմիրություններ		20.06.74			03 .01.97
Արգենտինա	08.08. 86	02.10.68	15.07.85	24.09.86	05.12. 90
Աֆղանստան	24. 01. 83	06.07.83	14 08 80	01 04 87	28.05 94
Բահամներ		05.08. 75	06.10.93		20.02.91
Բահրեյն		27.03.90	18.06.02	06.03.98	13.02.92
Բանգլադեշ	07.09.00	11.06.79	06.11.84	05.10.98	03.08. 90
Բարբադոս	05.01.73	08.11.72	16.10.80		09.10.90
Բելառուսիա	12.11.73	08.04.69	04.02.81	13.03.87	02.10.90
Բելգիա	21.04.83	07.08. 75	10.07.85	25.06.99	16.12. 91
Բելիզ	10.01.96	14.11.01	16.05.90	17.03.86	02 .05. 90
Բենին	12.03.92	30.11.01	12.03.92	12.03.92	03.08. 90
Բոլիվիա	12 .08. 82	22.09.70	08.06.90	12.04.99	26.06.90
Բոսնիա Եւ Հերցոգովինա	01.09.93	16.07.93	01.09.93	01.09.93	01.09. 93
Բոթսվանա	08.09.00	20.02.74	13.08. 96	08.09.00	14.03.95
Բրազիլիա	24.01.92	27.03.68	01.02.84	28.09.89	25.09. 90
Բրունեյ Դառուսալամ					27.12.95
Բութան		*26.03.73 (s)*	31.08. 81		01 .08. 90
Բուլղարիա	21.09.70	08.08. 66	08.02.82	16.12.86	03.06.91
Բուրկինա Ֆասո	04.01.99	18.07.74	14.10.87	04.01.99	31.08. 90
Բուրունդի	09.05.90	27.10.77	08.01.92	18.02.93	19.10.90
Գաբոն	21.01.83	29.02.80	21.01.83	08.09.00	09.02 94
Գայանա	15.02.77	15.02.77	17.07.80	19.05.88	14.01. 91
Գամբիա	22.03.79	29.12.78	16.04.93	23.10.85	08.08 90
Գանա	08.09.00	08.09.66	02.01.86	08.09.00	05.02 90
Գերմանիա	17.12.73	16.05.69	10.07.85	01.10.90	06.03 92
Գրենադա	06.09.91	*17.12.81 (s)*	31.08. 90		05.11.90
Գվատեմալա	06.01.92	18.01.83	12 .08. 82	05.01.90	06.06.90
Գվինեա	24.01.78	14.03.77	09.08. 82	10.08. 89	13.07.90
Գվինեա-Բիսաու	*12.09.00 (s)*	*12.09.00 (s)*	23.08. 85	*12.09.00 (s)*	21.08.90
Դանիա	06.01.72	09.12.71	21.04.83	27.05.87	19 .07.91
Դոմինիկա	17.06.93		15.09.80		13.03 91
Դոմինիկյան Հանրապետություն	04.01.78	25.05.83	02.09.82	04.02.85	11.06.91

ԵՐԿԻՐ	CCPR	CERD	CEDAW	CAT	CRC
Եգիպտոս	14.01.82	01.05.67	18.09.81	25.06.86	06.07.90
Եթովպիա	11.06.93	23.06.76	10.09.81	13.03.94	14.05.91
Եմեն	09.02.87	18.10.72	30.05.84	05.11.91	01.05.91
Զամբիա	10.04.84	04.02.72	21.06.85	07.10.98	0612. 91
Զիմբաբվե	13.05.91	13.05.91	14.05.91		11.09.90
Էկվադոր	06.03.69	22.09.66	09.11.81	30.03.88	23.03 90
Էլ Սալկվադոր	30.11.79	30.11.79	19.08.81	17.06.96	10.07.90
Էրիտրեա	23.01.02	01.08.01	05.09. 95		03.08 94
Էստոնիա	21.10.91	21.10.91	21.10.91	21.10.91	21.10.91
Թաիլանդ	29.10.96		09.08.85		27.03. 92
Թունիս	18.03.69	13.01.67	20.09.85	23.09.88	31.01.92
Թուրքիա	*15.08. 00 (s)*	*13.10.72 (s)*	20.12.85	02.08. 88	04.04.95
Թուրքմենստան	01.05.97	29.09.94	01.05.97	25.06.99	20.09. 93
Ինդոնեզիա		25.06.99	13.09.84	28.10.98	05.09.90
Իրանի Իսլամական Հանրապետություն	24.06.75	29.08. 68			13.07.94
Իռլանդիա	08.12.89	29.12.00	23.12.85	11.04.02	28.09. 92
Իսլանդիա	22.08.79	13.03.67	18.06.85	23.10.96	28.10.92
Իսրայել	03.10.91	03.01.79	03.10.91	03.10.91	03.10.91
Իսպանիա	27.04.77	13.09.68	05.01.84	21.10.87	06.12. 90
Իրաք	25.01.71	14.01.70	13.08. 86		15.06.94
Իտալիա	15.09.78	05.01.76	10.06.85	12.01.89	05.09. 91
Լաոսի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն	*07.12.00 (s)*	22.02.74	14.08. 81		08.05. 91
Լատվիա	14.04.92	14.04.92	15.04.92	14.04.92	15.04.92
Լեսոտո	09.09.92	04.11.71	22.08.95	13.11.01	10.03. 92
Լիբանան	03.11.72	12.11.71	21.04.97	05.10.00	14.05. 91
Լիբերիա	*18.04.67 (s)*	05.11.76	17.07.84		04.06.93
Լիբիայի Արաբական Ջամահիրիա	15.05.70	3-07-68	16.05.89	16.05.89	16.04.93
Լիխտենշտեյն	10.12.98	01.03.00	22.12.95	02.11.90	22.12. 95
Լեհաստան	18.03.77	05.12.68	30.07.80	26.07.89	07.06.91
Լատվիա	20.11.91	10.12.98	18.01.94	01.02.96	31.01.92
Լյուքսենբուրգ	18.08. 83	01.05.78	02.02.89	29.09.87	07.03. 94
Խորվաթիա	12.10.92	12.10.92	09.09.92	12.10.92	12.10.92
Կամբոջա	26.05.92	28.10.83	15.10.92	15.10.92	15.10.92
Կանադա	19.05.76	14.10.70	10.12.81	24.06.87	13.12. 91
Կանաչ Հրվանդանի Կղզիներ	06.08. 93	03.10.79	05.12.80	04.06.92	04.06.92
Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն	08.05.81	16.03.71	21.06.91		23.04.92
Կիպրոս	02.04.69	21.04.67	23.07.85	18.07.91	07.02. 91
Կիրիբատի					11.12.95
Կոնգո	05.10.83	11.07.88	26.07.82		14.10.93

ԵՐԿԻՐ	CCPR	CERD	CEDAW	CAT	CRC
Կոլումբիա	29.10.69	02.09.81	19.01.82	08.12.87	28.01.91
Կոմորյան Կղզիներ		*22.09.00 (s)*	31.10.94	*22.09.00 (s)*	23.06.93
Կոստա Ռիկա	29.11.68	16.01.67	04.04.86	11.11.93	21.08. 90
Կուկի Կղզիներ					06.06.97
Կուբա	15.02.72	17.07.80	17.05.95	21.08. 91	
Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն	14.09.81		21.02.01		21.09. 90
Կորեայի Հանրապետություն	10.04.90	05.12.78	27.12.84	09.01.95	20.11. 91
Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն	01.11.76	21.04.76	17.10.86	18.03.96	28.09. 90
Հայաստան	23.06.93	23.06.93	13.09.93	13.09.93	23.06.93
Հաիթի	06.02.91	19.12.72	20.07.81		09.06.95
Հասարակածային Գվինեա	25.09.87		23.10.84		15.06.92
Հարավսլավիա	12.03.01	12.03.01	26.02.82	12.03.01	03.01.91
Հարավային Աֆրիկա	10.12.98	10.12.98	15.12.95	10.12.98	16.06.95
Հնդկաստան	10.04.79	03.12.68	09.07.93	*14.10.97 (s)*	11.12. 92
Հոլանդիա	11.12.78	10.12.71	23.07.91	21.12.88	06.02. 95
Հորդանան	28.05.75	30.05.74	01.07.92	13.11.91	24.05. 91
Հոնդուրաս	25.08. 97		03.03.83	05.12.96	10.08 90
Հունաստան	05.05.97	18.06.70	07.06.83	06.10.88	11.05 93
Հունգարիա	17.01.74	01.05.67	22.12.80	15.04.87	08.10.91
Ղազախստան		26.08. 98	26.08.98	26.08. 98	12.08. 94
Ղրղըզստան	07.10.94	05.09.97	10.02.97	05.09.97	07.10.94
Ճապոնիա	21.06.79	15.12.95	25.06.85	29.06.99	22.04.94
Մադագասկար	21.06.71	07.02.69	17.03.89	*01.10.01 (s)*	19.03. 91
Մալազիա			05.07.95		17.02.95
Մալավի	22.12.93	11.06.96	12.03.87	11.06.96	03.01.91
Մալդիվներ		24.04.84	01.07.93		11.02.91
Մալի	16.07.74	16.07.74	10.09.85	26.02.99	21.11. 90
Մալթա	13.10.90	27.05.71	08.03.91	13.09.90	30.11. 90
Մարոկկո	03.05.79	18.12.70	22.06.93	21.06.93	21.06.93
Մարշալյան Կղզիներ				05.10.93	
Մավրիտանիա		13.12.88	10.05.01		16.05.91
Մավրիկիա	12.12.73	30.05.72	09.07.84	09.12.92	26.07.90
Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն Եւ Հյուսիսային Իռլանդիա	20.05.76	07.03.69	07.04.86	08.12.88	16.12. 91
Մեքսիկա	23.03.81	20.02.75	23.03.81	23.01.86	21.11. 90
Միկրոնեզիայի Ֆեդերալ Նահանգներ					05.05.93
Մոնակո	28.08.97	27.09.95		06.12.91	21.06.93
Մոնղոլիա	18.11.74	06.08.69	20.07.81	24.01.02	06.07.90
Մոզանբիկ	21.07.93	18.04.83	16.04.97	14.09.99	26.04.94
Մոլդովա	26.01.93	26.01.93	01.07.94	28.11.95	26.01.93

ԵՐԿԻՐ	CCPR	CERD	CEDAW	CAT	CRC
Մյանմար		22.07.97		15.07.91	
Յամայկա	03.10.75	04.06.71	19.10.84		14.05. 91
Նախկին Հարավսլավական Հանրապետություն Մակեդոնիա	18.01.94	18.01.94	18.01.94	12.12.94	02.12. 93
Նամիբիա	28.11.94	11.11.82	23.11.92	28.11.94	01.10.90
Նաուրու	*12.11.01 (s)*	*12.11.01 (s)*		*12.11.01 (s)*	27.07.94
Նեպալ	14.05.91	30.01.71	22.04.91	14.05.91	14.09.90
Նիգեր	07.03.86	27.04.67	08.10.99	05.10.98	30.09. 90
Նիգերիա	29.07.93	16.10.67	13.06.85	28.06.01	19.04.91
Նիկարագուա	12.03.80	15.02.78	27.10.81	15.04.85 (s)	05.10.90
Նիուէ				20.12.95	
Նոր Զելանդիա	28.12.78	22.11.72	10.01.85	10.12.89	06.04.93
Նորվեգիա	13.09.72	06.08.70	21.05.81	09.07.86	08.01.91
Շվեդիա	06.12.71	06.12.71	02.07.80	08.01.86	29.06.90
Շվեյցարիա	18.06.92	29.11.94	27.03.97	02.12.86	24.02. 97
Շրի Լանկա	11.06.80	18 .02.82	05.10.81	03.01.94	12.07.91
Չադ	09.06.95	17.08.77	09.06.95	09.06.95	02.10.90
Չեխական Հանրապետություն	21.02.93	22.02.93	22.02.93	01.01.93	22.02. 93
Չիլի	10.02.72	20.10.71	08.12.89	30.09.88	13.08. 90
Չինաստան	05.10.98	29.12.81	04.11.80	04.10.88	03.03. 92
Պակիստան		21.09.66	12.03.96		12.11.90
Պալաու Կղզիներ				04.08.95	
Պանամա	08.03.77	16.08. 67	29.10.81	24.08. 87	12.12. 90
Պապուա Նոր Գվինեա		27.01.82	12.01.95		02.03.93
Պարագվայ	10.06.92	13.09.00	06.04.87	12 .12 90	25.09. 90
Պերու	28.04.78	29.09.71	13.09.82	07.07.88	05.09. 90
Պորտուգալիա	15.06.78	24.08.82	30-07-80	09.02.89	21.09. 90
Ջիբութի			02.12.98		06.12.90
Ռուանդա	16.04.75	16.04.75	02.03.81		24.01.91
Ռումինիա	9.12.74	15.09.70	07.01.82	18.12.90	28.09. 90
Ռուսաստանի Ֆեդերացիա	16.10.73	04.02.69	23.01.81	03.03.87	17.08. 90
Սան Կիտներ Եւ Նեւիս			25.04.85		24.07.90
Սան Լյուսի		14.02.90	08.10.82		16.06.93
Սան Վինցենտի Եւ Գրենադիններ	09.11.81	09.11.81	05.08.81	01.08.01	26.10.93
Սամոա		25.09.92		29.11.94	
Սան Մարինո	18.10.85	12.03.02			25.11. 91
Սան Թոմ Եւ Պրինսիպե	*31.10.95 (s)*	*06.09.00 (s)*	*31.10.95 (s)*	*06.09.00 (s)*	14.05 91
Սաուդյան Արաբիա	23.09.97	08.09.00	23.09.97	26.01.96	
Սեյշելներ	05.05.92	07.03.78	06.05.92	05.05.92	07.09. 90
Սենեգալ	13.02.78	19.04.72	05.02.85	21.08.86	01.08. 90
Սիեռա Լիոնե	23.08.96	02 .08.67	11.11.88	25.04.01	18.06.90

ԵՐԿԻՐ	CCPR	CERD	CEDAW	CAT	CRC
Սինգապուր			05.10.95		05.10.95
Սիրիական Արաբական Հանրապետություն	21.04.69	21.04.69			15.07.93
Սլովակիա	28.05.93	28.05.93	28.05.93	28.05.93	28.05. 93
Սլովենիա	06.07.92	06.07.92	06.07.92	16.07.93	06.07.92
Սողոմոնյան Կղզիներ		17.03.82	06.05.02		10.04.95
Սոմալի	24.01.90	26.08.75		24.01.90	*09.05. 02 (s)*
Սվազիլենդ		07.04.69			08.09.95
Սուդան	18.03.76	21.03.77		*04.06.86 (s)*	03.08. 90
Սուրինամ	28.12.76	15.03.84	02.03.93		02.03. 93
Վատիկան		01.05.69		26.06.02	20.04.90
Վրաստան	03.05.94	02.06.99	26.10.94	26.10.94	02.06.94
Վանուատու			08.09.95		07.07.93
Վենեսուելա	10.05.78	10.10.67	02.05.83	29.07.91	14.09. 90
Վիետնամ	24.09.82	09.07.82	17.02.82		28.02. 90
Տաջիկստան	04.01.99	11.01.95	26.10.93	11.01.95	26.10.93
Տանզանիայի Միացյալ Հանրապետություն	11.06.76	27.10.72	20.08.85		11.06.91
Տոգո	24.05.84	01.09.72	26.09.83	18.11.87	01.08. 90
Տոնգա	16.02.72			06.11.95	
Տրինիդատ Եւ Տոբագո	21.12.78	04.10.73	12.01.90		06.12. 91
Տուվալու		06.10.99		22.09.95	
Ուգանդա	21.06.95	21.11.80	23.07.85	03.11.86	17.08. 90
Ուկրաինա	12.11.73	07.03.69	12.03.81	24.02.87	28.08. 91
Ուրուգվայ	01.04.70	30.08.68	09.10.81	24.10.86	20.11. 90
Ուզբեկստան	28.11.95	28.09.95	19.07.95	28.09.95	29.07.94
Փղոսկրի Ափ	26.03.92	04.01.73	18.12.95	18.12.95	04,02. 91
Քաթար	22.07.76		11.01.00	04.04.95	
Քենիա	01.05.72	13.10.01	09.03.84	21.02.97	31.07.90
Քուվեյթ	21.05.96	15.10.68	02.09.94	08.03.96	21.10.91
Օման				09.12.96	
Ֆիլիպիններ	23.10.86	15.09.67	05.08.81	18.06.86	21.08.90
Ֆինլանդիա	19.08.75	14.07.70	04.09.86	30.08.89	21.06.91
Ֆիջի	11.01.73	28.08.95		13 .08.93	
Ֆրանսիա	04.11.80	28.07.71	14.12.83	18.02.86	08.08 90

Թեմային առնչվող լրացուցիչ գրականություն

Միջազգային համաներում (Amnesty International), *Վերջ անպատժելիությանը. Արդարադատություն խոշտանգումների զոհերի համար (End Impunity: Justice for the Victims of Torture,* ACT/40/024/2001)

Միջազգային համաներում (Amnesty International), Ձեռնարկ արդար դատաքննության վերաբերյալ (Fair Trials Manual, POL 30/02/98)

Ինկե Բյուրֆին (խմբագիր), Խոշտանգումների կանխարգելում, Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի եւ ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ հանձնաժողովի նախադեպերի ժողովածու, Մարդու իրավունքների հոլանդական ինստիտուտ (SIM) եւ Բաց հասարակության ինստիտուտ, 2001թ.

Ակեն Բուլսբա, ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիան եւ իրավակիրառման հեռանկարները, Martinus Nijhoff հրատարակչություն, 1999թ.

Մալքոլմ Էվանս եւ Ռոդ Մորգան, Խոշտանգումների կանխարգելում, Խոշտանգումների եւ անմարդկային եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիայի վերլուծություն, Clarendon Press, 1998թ.

Քամիլ Գիֆարդ, Խոշտանգումների մասին զեկուցելու ձեռնարկ, Էսեքսի համալսարանի մարդու իրավունքների կենտրոն, 2000թ.

Նայջել Ռոդլի, Բանտարկյալների հետ վարվեցողությունը միջազգային իրավունքի համաձայն (երկրորդ հրատարակություն), Clarendon Press, 1999թ.

Աննա-Լենա Սվենսոն Մաքարթնի, Մարդու իրավունքները արդարադատություն իրականացնելիս՝ Մարդու իրավունքների ձեռնարկ դատավորների, դատախազների եւ իրավաբանների համար, (Մասնագիտական ուսուցում, սերիա # 9), ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը Փաստաբանների միջազգային ընկերակցության հետ համատեղ, 2003թ.

Լիհ Վենլանդ, Տեղեկագիր ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայով նախատեսված պետության պարտավորությունների վերաբերյալ, Խոշտանգումների կանխարգելման ընկերակցություն, 2002թ.

Նշումների համար